

ԺՈՋԵՑ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԵՄԻԱ ԲՅՈՍՈՒՐԵՅԱՆԻ
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ԱՂԲՅՈՒՐ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԵՒ
ԱՐԵՒՍՏԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
(17-րդ դարի 3-րդ փառորդ)

2193578

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԺՈՋԵՖ ԱՎԵՏԻՍՅԱՆ


ԵՐԵՄԻԱ ՔՅՈՍՏՈՒՐՃՅԱՆԻ
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՂԲՅՈՒՐ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
(17-րդ դարի 3-րդ քառորդ)

501505

*Եկիրում եմ
Մեծ եղևոնը ապրած եղևախաջի ծնողներին՝
Մարգար և Խանուժ Ավետիսյաններին*



ԵՐԵՒԱՆ 2016



ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ա 791

JOSEPH AVETISYAN
Historiographic Works of Yeremia Qyomurdjyan
as a Source
of History of Ottoman Empire and Western Armenians
(3-rd quarter of 17-th cent.)
Yerevan 2016

ЖОЗЕФ АВЕТИСЯН
Историографические Труды Еремии Кемюрджяна
как Источник
по Истории Османской Империи и Западных Армян
(третья четверть XVII в.)
Ереван 2016

- Ա791 *Ժողեֆ Ավետիսյան Մ.*
*Երեմիա Քյոմուրճյանի Պատմագրական Աշխատությունները
որպես աղբյուր Օսմանյան Կայսրության և Արևմտահայության
Պատմության (17-րդ դարի 3-րդ քառորդ), /Ժողեֆ Ավետիսյան;
Հայրենակցական Միությունների Խորհուրդ, «Բնօրրան» հանդես. -
Երևան, Հեղ. հրատ. 2016, - 182 էջ:*
*Աշխատությունը գրվել է անցյալ դարի 70-80-ականներին:
Հրատարակվում է անփոփոխ կերպով՝ պահպանելով գիտական
էթիկան:*

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-0-1692-4

© Ավետիսյան ժ., 2016

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Օսմանյան կայսրության բռնատիրության շրջանակում հայերի հետ միասին իրենց գոյության համար մաքառող տասնյակ ժողովուրդների պատմությունը դարեր շարունակ միահյուսված է ընթացել կայսրության պատմության հետ, հետեւաբար սուլթանության պատմության համակողմանի եւ խորությամբ ուսումնասիրման, բազում խնդիրների լուսաբանման համար թուրքական աղբյուրների հետ կարեւորություն են ներկայացնում նաեւ հպատակ ժողովուրդների սկզբնաղբյուրները, այդ թվում եւ հայկական բազմատեսակ, բազմաբովանդակ աղբյուրները (հիշատակարաններ, ժամանակագրություններ, պատմական ողբեր, ուղեգրություններ, հայոց պատմություններ), որոնցից մշտապես օգտվում է հայրենական թուրքագիտությունը, եւ որոնց նկատմամբ հետաքրքրություն է ցուցաբերում նաեւ թուրք պատմագրությունը:

17-րդ դարի երրորդ քառորդը հանդիսանում է Օսմանյան կայսրության պատմության առավել բարդ մի շրջան: Թուրքական ագրեսիաները սկսում են դժվարությամբ հաղթահարել եվրոպական վերակազմակերպված եւ կայսրությանը հաճախ դաշնակցությամբ դիմադրող ուժերին եւ հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի սկզբնափայլերը: Պատերազմները դառնում են շարունակական, բռնությունը՝ ավելի դժամ:

Կայսրության ֆինանսներն ու տնտեսությունը պատերազմների միջոցով կարգավորելու օսմանյան տիրակալների ավանդական քաղաքականությունը եւ այդուհետ թալանի, ռազմավարի նվազումը, բնականաբար, խորացնում են կայսրության դարասկզբից իսկ նկատվող տնտեսական ճգնաժամը: Ռազմաֆեոդալական կառույցը փրկելու միջոցների որոնման, ֆինանսական, տնտեսական վիճակը բարվոքելու նպատակով դրամի արժեքազրկման, հողի եւ պաշտոնի վաճառքի, հպատակ ազգերին նորանոր հարկերով հարկադրելու քաղաքականությունը տերություն մեջ ստեղծում է անկայուն դրություն՝

խռովութիւններ են բռնկուլում մայրաքաղաքում, ոտքի են կանգնում կենտրոնախուշ տրամադրութիւններով ֆեոդալներ, ավելի անմխիթար է դառնում ենթակա ազգերի վիճակը:

Օսմանյան կայսրութեան պատմութեան 17-րդ դարի երրորդ քառորդին բնորոշ այս կարեւոր պրոպեմների վերաբերյալ հայկական աղբյուրների շարքում հատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում 17-րդ դարի հայ պատմիչ, հայ թուրքագիտութեան դպրոցի հիմնադիր Երեմիա Չիլերի Քյոմուրճյանի ուղղակի կայսրութեան պատմութեանը նվիրված պատմագրական երկերը:

Երեմիա Քյոմուրճյանը (1637-1695 թթ.), ծնվելով, ապրելով եւ գործելով Օս. կայսրութեան մայրաքաղաքում, ժամանակաշրջանի եղելութիւններին մեծ մասի ականատես վկան է: Նրա հաղորդումներն ու մեկնաբանութիւնները նկատելի հավաստիութեամբ եւ անկողմնակալութեամբ, հնարավորութիւն են տալիս ավելի ամբողջական եւ ճիշտ եզրահանգումների հասնել հետազոտող ժամանակաշրջանում թուրքեւլրոպական՝ վենետիկյան, հունդարական, ավստրիական, լիհական ու ուկրաինական, վալախական փոխհարաբերութիւնների, կայսրութեան հասարակական, տնտեսական կյանքի, հպատակ քրիստոնյա ազգերի իրավական ու տնտեսական դրութեան վերաբերյալ, հատկապես վերջին հարցում համոզիչ փաստերով մերժողական պատասխան տալով այժմյան թուրքական պատմագրութեան կողմից առաջ քաշվող կեղծ քաղաքական այն հարցին, թե հպատակ քրիստոնյա ազգերը կայսրութիւնում դտել են ազգային ու տնտեսական զարգացման, գործունեութեան լավագույն եւ նախանձելի պայմաններ:

Հայ բանասիրութիւնը բազմիցս անդրադարձել է Երեմիա Քյոմուրճյանին, գրվել են նրա կենսագրականի, գործունեութեան մասին արժեքավոր աշխատութիւններ, ու հայ պատմագիտութիւնն էլ հայ ազատագրական շարժման, պոլսահայ դաղութի պատմութեան էջերը ուսումնասիրելիս առիթներով դիմել է նրա որոշ նյութերին, այնուամենայնիւ առաջին անգամ է համակողմանիորեն քննութեան առնվում հայ պատմագրութեան, ինչպես եւ թուրքագիտութեան մեջ Երեմիա Քյոմուրճյանի մեր կողմից հրատարակված «Պատմութիւն համառօտ Դժ տարւոյ օսմանցոց թագաւորացի» եւ պատմական այլ արժեքավոր երկերի հավաստի նյութերի հիմքով 17-րդ դարի երրորդ քառորդում Օսմանյան կայսրութեան քաղաքական, հասարակական,

տնտեսական հարաբերությունները, հպատակ՝ ոչ մուսուլման ժողովուրդների իրավական, տնտեսական վիճակը:

Առաջին անգամ է հետազոտվում նաև Երեմիա Քյոմուրճյանի պատմական երկերի մինչև երկուսուկուս ակնատեսի դրված մասերի աղբյուրների հարցը՝ բացահայտելով նրանց հնարավոր աղբյուրները, նրանցից օգտվելու Երեմիա Քյոմուրճյանի մեթոդները ու եզանակները, որոնք բնութագրում են նրան որպես հմուտ գիտնական պատմաբանի:

Առաջին անգամ է նույնպես հայացք նետվում «Երեմիա Քյոմուրճյանը Հայ մատենագիտության մեջ» խնդրին՝ իմի բերելով եւ դասակարգելով շուրջ 250 տարիների Քյոմուրճյանագիտության ձեռքբերումները:

Նորահայտ նյութերը հնարավորություն են տվել ճշգրտել եւ լրացումներ կատարել 17-րդ դարի Հայ մատենագիտության ամենապայծառ ներկայացուցիչ Երեմիա Քյոմուրճյանի ընդգրկուն կենսագրականում եւ գրական ժառանգության վերաբերյալ:

* * *

Մատենագիտական ակնարկ

Երեմիա Քյոմուրճյանը 17-րդ դարի Հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչներից է, բազմակողմանիորեն զարգացած մի գործիչ, մատենագիր եւ բանաստեղծ, որի գրական ժառանգությունը ուսումնասիրողներից մեկը այսպես է բնութագրել նրան. «Միակողմանի չէր իր կրթութիւնը, հմուտ էր եկեղեցական գիտութիւններու, ներհուն՝ պատմագիտութեան, ծանօթ՝ բազմաթիւ լեզուներու, յատկապէս հայերէնի, թուրքերէնի եւ յունարէնի, նաև եւրոպական լեզուներու, հետաքրքիր՝ ներքին եւ արտաքին ազգային, միջազգային քաղաքական իրադարձութիւններու» [7, էջ 59]:

Ժամանակակիցները Երեմիա Քյոմուրճյանին ճանաչել են որպես «գիտնական», «պատմիչ», «թարգմանիչ» [69, էջ 366] «թարգմանիչ գրոց գրի», «բանաստեղծ», «վարպետ գրչութեան», «վեհիմաստ եւ մաքրամիտ», «սրբանունդ եւ բարեգործ», «ողջախոհ իբրեւ տատրակ եւ միամիտ իբրեւ զազանի» [1, Մատ. 8455, էջ 139բ]:

Միքայիլ Չամչյանը, անդրադառնալով 17-րդ դարի պոլսահայության ներքին կյանքի հարցերին, հիշել է Երեմիա Քյոմուրճյանին իբրեւ ժամանակակիցների մոտ հեղինակություն ունեցող, զարգացած

մտավորականի՝ «ծանօթ ի դրունս մեծամեծաց եւ պատուեալ առաջի Յունաց եւ Լատինացոց, գոլով տեղեակ լեզուի նոցա» [121, էջ 723]: Նա Ե. Քյոմուրճյանի գրական ժառանգության մեջ առանձնացրել է «Պատմութիւն անցից իւրոյ ժամանակի» երկը, որը նրա համար եղել է սկզբնաղբյուր պատմության համապատասխան ժամանակաշրջանը շարադրելիս՝ «յորմէ առեալ եւ մեր աւանդեցաք ինչ-ինչ ի ԼԲ (32) գլխոյ մինչ ցայսօր» [121, էջ 723]:

Գարեգին Զարբհանալյանը [67; 68], այնուհետեւ Լեոն [86], Վահրամ Թորգոմյանը [55], Ներսես Ակիւնյանը [7], Մեսրոպ Նշանյանը [60] եւ ուրիշներ [85; 100; 125] խոսել են Երեմիա Քյոմուրճյանի հասարակական-տպագրական գործունեության մասին: Գ. Զարբհանալյանը նշել է, որ Երեմիա Քյոմուրճյանը «ամենէն աւելի նոյն արուեստին բարգաւաճանաց հետամուտ եղողն է», հետեւելով Արգարի օրինակին հաստատել է տպարան Կ. Պոլսում ու «այլ եւ այլ գրքեր ալ հրատարակել» [67, էջ 330], Լեոն Երեմիա Քյոմուրճյանի տպագրական գործունեությունը մի այնպիսի երկրում, «ուր բարքերը կատարյալ վայրենացման են հասնում, ուր սանձարձակ կրքերը, հալածանքները, փոխադարձ մատնությունները տակն ու վրա են անում» [86, էջ 367], համարում է հերոսական քայլ, մեծ հեղաշրջման սկիզբ, «ազգօգուտ մի բան», «մի համոզմունք հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող բացերը վերացնելու» [84, էջ 359]: Ըստ Լեոյի՝ Երեմիա Քյոմուրճյանի տպագրական գործունեությունը, թեեւ կարճատեւ, հիշատակության արժանի է, որովհետեւ նրա կողմից կենդանություն ստացած տպագրության գաղափարը 17-րդ դարում ծաղկեց Կ. Պոլսում, ուստի «ամենայն իրավունքով այդ գործունեության նախահայրը Քյոմուրճյանը պիտի համարվի» [84, էջ 368]:

Լեոյի այս կարծիքը բաժանել է Վ. Թորգոմյանը՝ գնահատելով այն որպէս մեծ երեւույթ պոլսահայության կյանքում, որ «առանց Երեմիայի Կ. Պոլսոյ մէջ տպագրական գործը ... յարութիւն պիտի չառնէր, եւ այնտեղի հայութիւնն իսպառ պիտի մնար այն խաւարաբորբ տղիտութեամբ, որ հայ մամուլը միայն կրցաւ հալածել» [55, էջ 180], տեսնելով դրա մեջ ազդի ապագա զարթոնքը: Ն. Ակիւնյանը նույնպէս Երեմիա Քյոմուրճյանի տպարանը եւ տպագրական գործունեությունը գնահատել է որպէս «ազգօգուտ գործ», որով կարող էին մարել ազգակործան վեճերը [7, էջ 49]: Ինչ վերաբերում է տպարանի խա-

փանձան պատճառներին, նա ենթադրել է, որ Երեմիայի տպարանը հավանաբար մրցակից է դիտվել Մարսելի Ոսկանի տպարանի եւ վտանգել նրանց գրքերի վաճառքին Արեւելքում, կամ էլ փակվել է «ուրիշ աւելի կարեւոր, բայց անհայտ պատճառներով» [7, էջ 53]: Ըստ Գ. Զարբհանայանի՝ Երեմիա Քյոմուրճյանի տպարանը փակվել է «անհարթ եւ անարուեստ տպագրութեան ու տձեւ եւ դժուարընթեռնելի տառերի անօգտազործելիութեան պատճառով», որոնք պիտանի եղան երկու փոքրածավալ գրքեր լույս ընծայման համար միայն [68, էջ 166]: Մ. Նշանյանի կարծիքով տպարանը խափանվել է, որովհետեւ «փոխանակ շահաբեր ձեռնարկ մը ըլլալու, ընդհակառակը նյութական վնասներ պատճառած էր Երեմիային» [60, Առաջաբան, էջ Ծէ]:

Ռափայել Պատկանյանը 1880 թ. «Փորձ»-ում հրատարակել է Հայ պատմագիրներին երկասիրութեանց ցուցակ [130], ուր, 49-րդ համարի տակ նշելով Երեմիա Քյոմուրճյանին պատմագիր, առանձնացրել է նրա «Հայոց Պատմութիւն»-ը որպէս արժեքավոր աղբյուր «ժամանակակից անցքերի վրա», որոնք «Ժէ (17) դարու ընթացքում յուզում էին Պարսկաստանն ու Տաճկաստանը», եւ ցանկացել է տեսնել այդ աշխատութեան հրատարակումը [130, էջ 36]:

Ա. Տեր-Հովհաննիսյանի համար Երեմիա Քյոմուրճյանը մի գործիչ է, որն աշխատել է խառնակ ժամանակներում պայքարող երկու կողմերին՝ Եղիազար Այնթապցու եւ Հակոբ Զուղայեցու խմբակցութիւններին հաշտեցնել հանուն ժողովրդի եւ Հայ եկեղեցու միասնութեան, որովհետեւ այն համարել է վտանգավոր իր ազգի ապագայի համար [114]:

Լեոյի բնորոշմամբ Երեմիա Քյոմուրճյանը եղել է ժամանակի «հաշտարար իգին», աշխատել է Կ.Պոլսի եւ Երուսաղեմի պատրիարքութիւններին աթոռներին տիրելու համար մի կողմից հոգեւորականների, մյուս կողմից հոգեւորականների եւ մի խումբ աշխարհականների միջեւ մղվող պայքարը, Եղիազար Այնթապցու հակաթոռ կաթողիկոսութեան հետեւանքով պոլսահայութեան մեջ տիրող խառնակ մթնոլորտը «մեղմացնել, հաշտեցնող դեր կատարել, շտտերին համոզել, թե ինչ դժբախտութիւններ են ծնեցնում անսահման ու անվերջ գտու-թիւնները» [86, էջ 370]: Ըստ Լեոյի՝ Երեմիան ժամանակի այն անհատներից է եղել, որն ունեցել է մարգարեական հետեւութիւններ անհելու բացառիկ ընդունակութիւն, կարողացել է իր հեղինակութեամբ ազդել միջավայրի վրա, «փոխել նրա մեջ շատ բան» եւ դրան նա հասել

է ոչ միայն խոսքի ընդունակութեամբ, այլև՝ «գրչի շնորհքով» [84, էջ 358]: Երեմիան ոչ միայն առաջին Հայ գրողն է, որ կրել է իր մեջ նոր ժամանակների եվրոպական հասկացողութեամբ գրական ճաշակ եւ պահանջներ [84, էջ 359], որ նրա ստեղծագործութունների մեջ գտնվում են «սպագա Հայ առօրյա հրապարակախոսութեան բողբոջները» [86, էջ 377]: Լեոն Երեմիա Քյոմուրճյանի երկերից արժեքավոր է համարել հատկապես «Տարեգրական պատմութիւն»-ը, իսկ «Օրագրութիւն»-ը ձեւի տեսակետից նոր երեւույթ մեր գրականութեան պատմութեան մեջ [84, էջ, 361]:

Մաղաքիա Օրմանյանը, քննութեան առնելով Երեմիա Քյոմուրճյանի դավանական համոզմունքները, նկատել է նույնպես, ինչպես Լեոն, Քյոմուրճյանի «եւրոպական զարգացման եւ առաւելութեանց» քաջատեղյակ լինելը, սակայն որպէս «անկեղծ եւ հաւատարիմ հայադաւան, երբէք բան մը զոհած չէ ազգային եկեղեցոյ ինքնութենէն եւ յատկութիւններէն, բայց եւ հակառակ եղած չէ անոնցմէ օգտուելէ եւ միջասահման ընթացք եւ գործունէութիւն մը ունեցած է ծայրայեղութիւններէ խորշելով, ոչ հռոմէադաւանութեան յարելով եւ ոչ հայադաւանութենէ հեռանալով» [153, էջ 2866-2867]: Վ. Թորգոմյանի համար եւս Երեմիա Քյոմուրճյանը տիպար է «անկեղծ ազգասիրութեան, նախանձախնդիր ազգային յառաջադիմութեան, ջերմ ուսումնասէր եւ կրոնասէր» մի անձնավորութեան, «ազգային նուիրական շահերուն հզօր պաշտպան» [55, էջ 136-137]: Վ. Թորգոմյանը հրատարակել է 1913-1932 թթ. «Ստամպոլոյ պատմութիւն»-ը [55]:

Հակոբոս Տաշյանը, ուսումնասիրելով Ալեքսանդրի պատմութեան Հայերեն թարգմանութիւնը, անդրադարձել է Երեմիա Քյոմուրճյանի կողմից կատարված պատմութեան թուրքերեն թարգմանութեան փաստին՝ գտնելով, որ եթե թուրքերենի թարգմանութիւնը գտնվի՝ «կրնայ լաւ ծառայութիւն ընել Հայ բնագրին աղաւաղութիւններն ուղղելու», սակայն թուրքերեն թարգմանութիւնը գտնելու Հ. Տաշյանի ջանքերը անցել են սպարդոյուն [142, էջ, 179-180]¹:

Տրդատ Պալյանի համար Քյոմուրճյանը առաջին հերթին տաղերգու երգիչ է, որն ունի բազում տաղեր ու երգեր աշխարհիկ լեզվով, հրատարակել է Ե. Քյոմուրճյանի «Երանհալ կոյս սուրբ Տալիթա Մարիամ» տաղը: Տ. Պալյանին Հայտնի է եղել Ե. Քյոմուրճյանի «Համառօտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի» ստեղծագործութեան իտալերեն

Թարգմանությունը, «որուն մէջ նեղուցի երեւելի գեղերուն այժմեան անուններուն հետ նաեւ գրած է եղեր հին անուններն ալ»: Տ. Պալյանը հիշատակում է նաեւ Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն ի ժամանակի անցքերուն վերաբերեալ» ստեղծագործությունը, որը նա տեսել է 1885 թ. Յոպպէ գերմանական հյուպատոս Սիմէոն Մուրատեանի մոտ [125; 126, էջ 611-612]:

Ղեւոնդ Ալիշանը վկայել է, որ Երեմիա Քյոմուրճյանը եղել է «հանճարեղ եւ աշխոյժ գրիչ մի», «ծանօթ արեւելեան եւ յատկապէս օսմանեանց պատմութեանց, որոց թէ նախորդաց թէ իր ժամանակցաց վրայօք շատ տեղեկութիւն գրած է», հեղինակ է նաեւ նահատակաց պատմությունների՝ «թէ ի Յայսմաուրաց եւ թէ յայլ գրոց, այլ եւ ի լրոյ՝ եւ ի տեսոյ քաղեալ եւ հաւաքեալ» [4, էջ 138]²:

Ս. Երեմյանը փորձել է արժեքավորել Երեմիա Քյոմուրճյանի ամենակարեւոր պատմական երկերից «Տարեգրական պատմութիւնը»՝ նշելով, որ այն աղբյուր է եղել Մ. Չամչյանի, Ղ. Ինճիճյանի, Գ. Այվազովսկու եւ Գ. Զարբհանյանի աշխատությունների համար: Նա նպատակ է ունեցել հրատարակել այդ սկզբնաղբյուրը [45]:

Արշակ Չոպանյանի ծառայությունը մեծ է Երեմիա Քյոմուրճյանի տաղերի հրատարակման եւ նրա բանաստեղծությունների գնահատման գործում: Նա «Անահիտ»-ում լույս է ընծայել Երեմիա Քյոմուրճյանի հինգ տաղերը (երեքը՝ «Ի վերայ ջրոյ» խորագրով, «Երգ սիրոյ», «Ի վերայ սիրոյ եւ ուրախութեան») [122, էջ 189-198], իսկ «Հայ էջեր»-ում խոսելով ժողովրդական եւ աշուղական բանաստեղծության ակունքների, աշուղ-բանաստեղծների մասին, նա Երեմիա Քյոմուրճյանին դասել է ոչ-աշուղ բանաստեղծների շարքը, թեեւ նրա բանաստեղծությունը համարել է աշուղական [123, էջ Ժէ]: Այս միտքը նա արտահայտել է նաեւ «Հայրեններու Բուրաստան»-ում. Երեմիա Քյոմուրճյանի «քերթուածներուն մէջ երեւան կուգայ միջնադարեան աշուղածեւ բանաստեղծութեան հետեւութեամբ անձնադրոջմ քերթութիւն մը, որ իր յաջող մասերուն մէջ գեղեցիկ է», - գրել է նա [124, էջ 33]:

Ն. Ակիւնյանը հիմնավորապէս ուսումնասիրել է Երեմիա Քյոմուրճյանի կյանքն ու գրական գործունեությունը՝ 20-րդ դարի «բանասիրական մտքին» ներկայացնելով 17-րդ դարի «ամենէն կատարեալ», «ամենամագն» բանաստեղծներից մեկին: Ն. Ակիւնյանը ունի արժեքավոր գիտարկումներ նրա ստեղծագործությունների բովանդակության,

լեզվի, տաղաչափության հարցերի շուրջ: Ըստ նրա՝ Երեմիա Քյոմուր-
ճյանի ստեղծագործություններին հարազատ է հայրենների ու քու-
չակյան քառյակների չափը, որ Երեմիա Քյոմուրճյանը գտնվել է հայ
գանձարանների ու տաղարանների ազդեցության տակ, «որուն նմա-
նութեան կը ձգտի» [7, էջ, 171]: Ն. Ակիմյանը հրատարակել է «Երեմիա
Ջէլէպոյ գանձ եւ ողբ ի վերայ Յակոբ կաթողիկոսի» քերթվածը [8]:

Մեսրոպ Նշանյանը հրատարակել է Երեմիա Քյոմուրճյանի «Օրա-
գրութիւն»-ը՝ կենսագրական ներածականով եւ հավելվածով, որտեղ
առաջին անգամ ներկայացված են նրա թղթերը, ուղերձները, գանձերը,
ողբերը [1, Երուս. թիվ 1042, 1058, 1059 գրչագրերից], այն համոզումով,
որ դրանք «կու գան լոյսեր սփռելու Երեմիայի ապրած ժամանակին եւ
իր ու Քեոմուրճեան գերդաստանին անդամոց կեանքին վրայ», լուսա-
բանելու «ականաւոր հայուն կեանքը՝ առանց մթին կամ անձանօթ
անկիւն մը մնացած ըլլալու» [60, Առաջ. էջ ԺԵ]:

Մ. Նշանյանը դեռեւս 1913 թ. «Շողոկաթ»-ում «Օրագրութիւն Երեմիա
Ջէլէպի Քէօմիւրճեանի» հոդվածով [119, էջ 47-65] խոսել է Օրագրության
աղբյուրային արժեքի մասին, որ այն «կը նպաստէ լուսարանելու մութի
եւ անյայտութեան մէջ թաքնուած այդ ժամանակաշրջանի պատմական
կարեւոր եղելութիւնները, երեւան բերելու ազգային ու քաղաքական
գործիչներու նոր անուններ, ծանօթացնելու պոլսահայ բարբը, սովորու-
թիւնները, ըմբռնումները, ընտանեկան կենցաղը» [119, էջ 48] եւ
նկատել է նաեւ, որ «Օրագրութիւնը» պետք է լինի Վենետիկյան ձե-
ռագրի՝ «Տարեգրական պատմութիւն» երկի նախատիպը, նրա հիմքը:
Նա անդրադարձել է Մ. Չամչյանի «Հայոց պատմութիւն» եւ Երեմիա
Քյոմուրճյանի «Տարեգրական պատմութիւն» երկերի կապին, «Տարե-
գրական Պատմութեան» Մ. Չամչյանի Հայոց պատմության համար
աղբյուր լինելու հարցին եւ որպէս ասվածի վկայություն բերել է 8
հարազատորեն համապատասխանող համադրություններ [119, էջ 89]:

Հակոբ Օշականը վերլուծել է Երեմիա Քյոմուրճյանի ստեղծագործու-
թյունը եւ մատնանշել նրա՝ ժամանակի գրական շարժման ներկայացուցիչ-
ներից մեկի «տեղը, դերը, նկարագիրը, արժէքը հայ դպրութեանց պատ-
մութեան մէջ»: Նա Երեմիա Քյոմուրճյանին համարել է ժամանակակից-
ների մեջ ամենագրագետ անձը, որի «թերութիւնները ժամանակի հետ
մեռած են արդէն, բայց անոր արժանիքները կը շարունակեն աճիլ,
որ պոլսահայ գաղութին պատմութեան մէջ անիկա անկիւնաքար է մը

աւելի է», որի գրական սկզբունքները որդեգրել են արեւմտահայ նոր գրականութեան եւ Մխիթարյան երկու հատվածները՝ Վենետիկի եւ Վիեննայի ներկայացուցիչները³:

Հ. Օշականը, անդրադառնալով Մ. Նշանյանի կողմից «Օրագրութիւն» երկի հրատարակմանը, նշել է «Օրագրութեան» կարեւորութիւնը, որ այն «չտեմարան մըն է դէպքերու, որոնք առանց անոր պիտի պակասէին մեր պատմութեան համար» [111, 1939 թ., էջ 335], որ «Չէլէպլին անփոխարինելի, ականատես, ականջալուր վկայութիւն մըն է տասնեօթերորդ դարուն երկրորդ կէսին» [108, 1939 թ., էջ 367]: Հ. Օշականը այնուամենայնիւ «Օրագրութիւն»-ը համարել է «մատաղ տարիներու վաստակ, Չէլէպլինի զգօնութեանը համար արժանահաւատ վկայութիւն... բայց ոչ իմացականօրէն»: Չելեբիի աշխարհայացքի, պատմաբանի բնութագրումը, ըստ Հ. Օշականի, ամբողջականորեն կարող է տալ «Տարեգրական պատմութիւնը»: «Նման հարցումի մը վճռական պատասխանը իմ կարծիքով, կարելի է Տարեգրութիւնի հրատարակումէն վերջը» տալ, - գրում է Հ. Օշականը, [111, 1940 թ. էջ 71]:

Հասմիկ Սահակյանը, հետեւելով Հ. Օշականին, աշխատել է արժեքավորել Ե. Քյոմուրճյանի ստեղծագործութիւնները, գտնել բանաստեղծի տեղը հայ գրականութեան պատմութեան մեջ: Նա ընդգծել է Ե. Քյոմուրճյանի ստեղծագործութեան սերտ կապը միջնադարյան հայ բանաստեղծութեան հետ՝ թեմատիկայի եւ ոճի առումով եւ նկատել, ինչպես Հ. Օշականը, Գրիգոր Նարեկացու ազդեցութիւնը, Նարեկացուն նմանվելու Երեմիայի ձգտումը [133, էջ 82-84, 114-124]:

Հ. Սահակյանը փորձել է տալ նաեւ Երեմիա Քյոմուրճյանի հասարակական-քաղաքական հայացքների զարգացումը, որ «Քյոմուրճյանի աշխարհայացքի կազմավորման գործում ամենաուժեղին ազդակը հանդիսացել է թուրքական տիրապետութեան տակ ապրող հայութեան ծանր վիճակն ու ազգային ինքնութեան կորստի վտանգը» [133, էջ 15]: Դրանով պայմանավորվել է Երեմիայի աշխարհայացքի ամենահիմնական դիժը՝ հակաթուրքական դիրքորոշումը, որպէս նրա գործունեութեան շարժիչ ուժը: Երեմիա Քյոմուրճյանի հասարակական գործունեութիւնը ուղղված է եղել միայն մեկ նպատակի՝ պահպանել հայ ժողովրդի ինքնուրույնութիւնը անիշխանութեան այդ շրջանում [133, էջ 16, 20, 125]:

Հ. Սահակյանը իր գրքի հավելվածում հրատարակել է «Ի վերայ ջրոյ» խորագրով երեք եւ «Երգ սիրոյ» եւ «Ի վերայ սիրոյ եւ ուրախութեան»

տաղերը¹, մի հատված «Պատմութիւն Հրակիրզման Կոստանդնուպոլսոյ» երկից, «Գանձ ասացեալ Երեմիայի ի վերայ մօրն իւրոյ ՌՃԺԲ (1112) թվին հայոց», «Ազուլեցի խօճա Խօսրովի մահուան...» դանձերը եւ Ղրիմի վերաբերյալ գրվածքից մի հատված [133, էջ 129-163]: Լ. Սահակյանը 1962 թ. լույս է ընծայել Քյոմուրճյանի «Վասն էքմէքճի Առնաւուտ Տիմոյի ումեմն, որ սիրեաց զաղջիկ մի հրէի Մրգատայ անուն...» սիրային պոեմը ըստ Սատ. թիվ 7715 եւ 8780 ձեռագիր օրինակների [134, էջ 409-427]: Այս պոեմը հրատարակել է նաեւ Լ. Քյուրտյանը «Բազմավեպ»-ում (1967 թ.) հավաստիացնելով, որ այն լույս է ընծայվում առաջին անգամ, ըստ իր հավաքածոյի թիվ 44 ձեռագիր օրինակի՝ ենթադրելով, որ գրչութունը Երեմիային է, թեեւ գրիչը, տեղը, ժամանակը հայտնի չեն [149, էջ 78]:

Ը Քյուրտյանը մինչ այդ լույս է ընծայել նաեւ «Գովեստ առ սր. Ա[ստուա]ծածին ասացեալ Երեմիայի բանասիրէ» երկկլեզվյան տաղը՝ իրեն վերապահելով հրատարակման առաջնութունը [152, էջ 178], եւ Աբրահամ Չելեբիին նվիրված անխորագիր մի տաղ որպէս Քյոմուրճյանի հեղինակած երկ, քանի որ «տաղին լեզուն եւ ձօնուած անձը ատիկա կը հաստատէ»՝ հիշեցնելով, որ Աբրահամ Չելեբիին նվիրված մի նման տաղ հրատարակել է նաեւ Մ. Նշանյանը [60]:

Կարո Մելիք-Օհանջանյանը, ուսումնասիրութեան ենթարկելով «Պատմութիւն Փարէզի եւ Վեննայի» սիրավեպի հայերեն թարգմանութեան հանգամանքները, անտարբեր չի մնացել նրա թուրքերեն թարգմանութեան նկատմամբ՝ բարձր գնահատելով Երեմիա Քյոմուրճյան թարգմանչի արվեստը, որ Երեմիա Քյոմուրճյանը ոչ միայն հարազատ է մնացել բնագրին, այլ շատ ազատ է զգացել եւ, չգոհանալով ստեղծագործական թարգմանական աշխատանքից, դիմել է «նպատակադրված միջոցառումների՝ զարգացնելով հորինվածքը՝ բնագրին լրացնող «գեղեցկացնող» իր գրչին պատկանող քնարական հատվածներով», ուստի հեռացել է հայկական բանաստեղծական չափից: Թարգմանութունը ոճական առումով մոտեցել է արեւելյան սիրավեպի բարձրարվեստ շարադրանքին եւ կատարված է թուրքերեն լեզվին այնպիսի հարազատութեամբ եւ հմտութեամբ, որ մենք ստիպված ենք եզրակացնելու, թե Երեմիա Քյոմուրճյանը նկատի չի ունեցել միայն հայ թուրքախոս միջավայրը, այլեւ թուրք հասարակութունը: Հետեւաբար, ըստ նրա՝ Երեմիա Քյոմուրճյանը «կրճատել կամ խմբագրել է այն ամենը,

ինչ զուտ քրիստոնեական բնույթ է կրել եւ կարող է ոչ ցանկալի տպա-
վորութիւն թողնել մահմեդական աշխարհում» [99, էջ 67]⁵:

Արամ Տեր-Ղեւոնդյանը գնահատել է Հայ ժողովրդի պատմութիւնը այլ ժողովուրդներին ծանոթացնելու Երեմիա Քյոմուրճյանի ձգտումը [143]: Ա. Տեր-Ղեւոնդյանը աշխատել է պատասխանել Մ. Չամչյանի այն վկայութեանը, որ Երեմիա Քյոմուրճյանը ոմն թուրք գիտնականի խնդրանքով «Թարգմանեաց ի լեզու նոցա զպատմութիւն Խորենացւոյն քաղուածով ընդ նմին եւ զհամառօտ տեղեկութիւն ինչ ի վերայ Բագրատունեաց եւ Ռուբինեանց» [121, էջ 723]: Մանրագննին պրպտումները Ա. Տեր-Ղեւոնդյանին բերել են այն ենթադրութեան, որ Երեմիա Քյոմուրճյանը «Հայոց պատմութիւնը» թուրքերենի թարգմանած պետք է լինի ժամանակի հայտնի թուրք պատմիչ Մյունեջլիմ Բաշիի խնդրանքով, որը եւ թարգմանութիւնը օգտագործել է իր «Ջամի աղ-դուվալ» (Հավաքածո պետութիւնների պատմութեան) աշխատութեան մեջ: Այս փաստը նկատի ունենալով, Ա. Տեր-Ղեւոնդյանը Ե. Քյոմուրճյանի կողմից «Հայոց պատմութեան» թուրքերեն թարգմանութիւնը համարել է «կարեւոր երեւույթ մեր պատմագրութեան համար», «Հայոց պատմութիւնը հարեւան ժողովուրդներին ծանոթացնելու մի հետաքրքիր փորձ» [143, էջ 149]:

Երեմիա Քյոմուրճյանի հասարակական-քաղաքական համոզմունքները, քննութեան են առնվել Աշոտ Հովհաննիսյանի [92], Հակոբ Անասյանի [20], Հակոբ Սիրունու [137] աշխատութիւններում: Հակոբ Անասյանը իր «17-րդ դարի ազատագրական շարժումները Արեւմտյան Հայաստանում» աշխատութիւնում, քննարկելով 17-րդ դարի Արեւմտահայութեան շրջանում հայ ազատագրական մտքի սկզբնավորման ուղղութիւնների եւ արդյունքների հարցերը, արեւմտահայութեան ներքին կյանքում տեղի ունեցող բուռն իրադարձութիւնների, էջմիածնական ու Սասկան խմբավորումների պայքարի պատճառներն ու հետեւանքները, Եղիազար Այնթապցու հակաթոռ կաթողիկոսութիւնը կյանքի կոչող դրդապատճառները եւ նպատակները, անդրադարձել է Երեմիա Քյոմուրճյանի՝ «ժամանակի ամենակրթված մարդու» հասարակական գործունեութեանը: Հակոբ Անասյանը նկատել է, որ վերոհիշյալ հարցերում եւ հատկապես Եղիազար Այնթապցու գործունեութեան նկատմամբ Երեմիա Քյոմուրճյանը կողմնակալ մոտեցում է դրսեւորել եւ նրա տիրական ազդեցութեան տակ գտնվելով հետագա պատմիչները՝ Մ.

Չամչյանը, եկեղեցական պատմության ամենահեղինակավոր պատմիչ Մ. Օրմանյանը, Տեր Հովհաննիսյանը, Տիգրան Սավալանյանը եւ Լեոն չեն կարողացել բացատրել ժամանակի «Հասարակական Հսկայական շարժումը եւ Երեմիա Քյոմուրճյանի հետեւողությամբ Եղիազար Այնթապցու կաթողիկոսությունը համարել են փառասեր հոգեւորականի բնավորության, եսասիրության արդյունք [20, էջ 242-244]:

Աշոտ Հովհաննիսյանը, քննարկելով երկու բռնատիրությունների ներքո 17-րդ դարի Արեւելահայ (Իրանահայ) եւ Արեւմտահայ (Տաճկահայ) Հատվածների Հասարակական-քաղաքական տաղանապալի վիճակը եւ խոսելով եկեղեցականների վեճերի, չարաշահումների, էջմիածնի եւ Արեւմտահայոց հոգեւորականության հարաբերությունների շուրջ, դնահատել է «Ժամանակի պոլսահայ մտավորականության ամենից ակնազարկ Երեմիա Քյոմուրճյանի» գործունեությունը քառասյին այդ միջավայրում, որ վերոհիշյալ երեւույթները Երեմիա Քյոմուրճյանը ընկալել է որպէս հայ ժողովրդի, նրա եկեղեցու միասնությունը խորտակող արարքներ, ուստի նշավակել է եկեղեցական պետերին եւ նրանց նվիրակների «գոշաքաղությունը», դատապարտել ամբարտապան ազգայիններին, սակայն Երեմիա Քյոմուրճյանը այս կացությունից դուրս դալու «ելք չի որոնում պայքարող կողմերից որեւէ մեկի հաղթության մեջ», այլ, «լինելով դիտության եւ գրչի մարդ՝ Քյոմուրճյանը գրքի եւ դպրոցի մեջ որոնեց տգիտության մեջ թափալվող ազգի եւ եկեղեցու փրկությունը» [92, էջ 159, 160, 161]:

Ա. Հովհաննիսյանը, խոսելով հայ ազատագրական միտքը փայփայող Հակոբ Զուղայեցու գործունեության մասին եւ Քյոմուրճյանին համարելով նրա գործի համախոհներից, նրա քաղաքական համոզմունքների հարցում նկատում է. «Նա ի վիճակի չգտնվեց արդասավորելու քննադատական իր հայացքները նոր որեւէ ծրագրով նախագծել հայ ազատագրական շարժման համար նոր մի ճանապարհ, մատնանշելով հայ ժողովրդին նրա երազած Ավետոյաց երկրի ապահով ուղին: Առայժմ Քյոմուրճյանը եւս ոտք էր դնում խաբուսիկ այն արահետների վրա, որով իրենից առաջ ապարդյուն քայլել էին բազմաթիվ ուրիշները», «դիմուղղվում էր դեպի Հակոբ Զ ուղայեցու բռնած ճանապարհը», «բեւեռում էր ազգի միտքը տեսիլներով ողորկված հին հուսակայանի վրա» [92, էջ 220, 221, 222]:

Հակոբ Սիրունին «Պոլիսը եւ իր դերը» ուսումնասիրության մեջ՝

«Մարդ մը որ կը փրկէ իր դարը» առանձին ենթախորագրով Երեմիա Քյոմուրճյանին դիտում է իր դարի մեջ, նրան դասելով «չորս դարերի մեջ ամենահայտնի անձերի շարքը, որոնք կրնան պճնել իրենց շրջանը բացառիկ փառքով», որ Երեմիան «կրնայ սերունդի մը տեղը բռնել, եւ ի դուր չէ բացառիկ մեծարանքը, որ իր յիշատակին կ'ընծայուի երեք դարէ ի վեր ամէն կողմէ անխտիր», եւ նա իր հեղինակութեամբ հեռացրեց ժամանակի «դժնդակ տազնապները հայ ժողովուրդի գլխէն» [137, էջ 606, 608]:

Հ. Սիրունին եւս, անդրադառնալով Հակոբ Զ ուղայեցու պատվիրակութեան Կ. Պոլսի գործունեութեանը, նշել է, որ թեեւ Քյոմուրճյանի սերտ հարաբերութեանը Հակոբ Զ ուղայեցու հետ «իբրեւ թուրք մայրաքաղաքին մէջ ապրած ու սնած մարդ եւ ունենալով բնականաբար կապեր ալ թուրք իշխանութեանց հետ, կրնար դէմ ելած ըլլալ հայ ժողովրդի ազատութեան ձգտող որեւէ ձեռնարկի, եւ ուղղակի թէ անուղղակի նպաստած չըլլալ անոր» Ե. Քյոմուրճյանը [137, էջ 620]:

Թեւ Մ. Օրմանյանը, թեւ Ա. Հովհաննիսյանը ընդունել են Ե. Քյոմուրճյանի բերած մասնակցութիւնը Հակոբ Զ ուղայեցու պատվիրակութեան գործունեութեանը Պոլսում եւ Եվրոպա անցնելու ծրագրին: Ըստ Մ. Օրմանյանի՝ Երեմիա Քյոմուրճյանը այն միակ անձնավորութիւնն է եղել, որի հետ կարող էր խորհրդակցել կաթողիկոսը՝ «թէ օտարաց հետ յարաբերութեան մտնելու, թէ պետական զգուշաւորութիւնները կարգաւորելու եւ թէ աղբային կազմակերպութեան կէտերը ճշտելու համար» [153, էջ 2662]:

Հետեւաբար Հ. Սիրունու այդ խիստ ասված եզրակացութիւնը կարելի է հասկանալ հետեւյալ կերպ, որ Երեմիա Քյոմուրճյանը ոչ թե «կ'ընդիմանար հայ ժողովրդի ազատութեան ձգտող որեւէ ձեռնարկի» [137, էջ 620], այլ՝ տեղյակ լինելով հպատակ ժողովուրդներին ազատագրական ձգտումների նկատմամբ իշխանութիւններին մոտ տիրող թշնամական տրամադրութիւններին, կարող էր հուշել կաթողիկոսին առժամանակ հետաձգելու Եւրոպա մեկնումը, կարգավորելու Եղիազար Այնթապցու հետ իր հարաբերութիւնը, միավորելու ուժերը պատվիրակութեան արդյունավետ գործունեութեան համար:

Երեմիա Քյոմուրճյանը ուշադրութեան է արժանացել նաեւ հայ դրականութեան պատմութիւններում եւ մատենագիտական աշխատութիւններում [10; 11; 12; 13; 23; 17; 18; 34; 83; 63; 70; 72; 94; 120;

139; 145; 146; 187; 188], գրավել է նույնիսկ օտարազգի հայագետների հետաքրքրությունը: Վալերի Բըյուսովը ուսներեն է թարգմանել նրա «Ի վերայ սիրոյ եւ ուրախութեան» տաղը [155, էջ 233-236]: Հունգարացի հայագետ Շուլցը գերմաներեն մի հոդվածով հունգար եւ գերմանացի արեւելագետներին է ծանոթացրել Երեմիա Քյոմուրճյանին ու նրա ստեղծագործությունը [187]: Հ. Անդրեասյանը թուրքերեն է թարգմանել Քյոմուրճյանի «Ստամպուլոյ պատմութիւն»-ը՝ արժեքավորելով հարուստ ծանոթագրություններով [221]:

Ահա այս է խիստ սեղմ գծերով այն ամենը, ինչ երկու հարիւր եւ հիսուն տարիների ընթացքում ստեղծվել է Երեմիա Քյոմուրճյանի մասին: Եւ եթե Մ. Չամչյանից մինչեւ մեր դարի (20-րդ դ.) սկիզբը հեղինակները Երեմիա Քյոմուրճյանին անդրադարձել են անուղղակիորեն, ապա դարասկզբին նրա կյանքի ու գրական ժառանգության մասին գրվել են արժեքավոր ուսումնասիրություններ եւ հոդվածներ, որոնք սակայն ունեցել են գլխավորապես բանասիրական բնույթ: Եթե նույնիսկ պատմագիտական աշխատություններում Երեմիա Քյոմուրճյանը հիշատակվել է, ապա դա կապված է եղել այն բանի հետ, որ դրանցում քննություն է առնվել արեւմտահայության հասարակական, քաղաքական վիճակը, եւ հնարավոր չէր չըջանցել Երեմիա Քյոմուրճյանին:

ԵՐԵՄԻԱ ՔՅՈՄՈՐԾՅԱՆԻ
ԿՅԱՆՔԸ ԵՒ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ


1. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Երեմիա Քյոմործյանը ծնվել է 1637 թ., մայիսի 13/22 Կոստանդնուպոլսում⁶: Միք. Չամչյանից սկսած շատերն են անդրադարձել Երեմիա Քյոմործյանի կենսագրությունը: Վ. Թորգոմյանը, Ն. Ակինյանը եւ Մ. Նշանյանը այնպիսի համակողմանիություններ են ուսումնասիրել նրա կյանքի հանգամանքները, թեեւ ոչ սպառիչ, որ այսօր այդ հարցի մասին խոսելիս անհնարին է չկրկնել նրանց:

17-րդ դարի կեսերից պոլսահայություն շրջաններում քաջ հայտնի Քյոմործյան ընտանիքի ավագ ներկայացուցիչները, ապրելով ջնալիական ապստամբությունների եւ պարսկա-օսմանյան պատերազմների արհավիրքները, հավանաբար նախորդ դարի վերջերին կամ 17-րդ դարի սկզբներին գաղթում են Հայրենի Դարանաղյաց գավառից եւ հաստատվում նախ Գալիպոլիում, ապա Կոստանդնուպոլսում⁷: Եր. Քյոմործյանը ընտանիքի այդ գաղթի մասին հոր մահվան առթիվ գրած իր ողբում հաղորդում է.

«Սեռից տեսակից սա ի մեծ զարմից յազնուականից,
Նախ յԱրեւելից, ի պապանց տոհմից գան յԱրեւմտից,
Ի Դարանաղիս՝ ընակեալք ի շինիս անուամբ Սօճայից,
Անդ յորդոց յորդիս զարմ եւ զաւակից ըստ ժամանակից,
Յետոյ ճէլալից նեղութեանց վշտից չուեալ հայրն անտից
Գայ ի կողմանիս ի կէլիպօլիս՝ տեսեալ զծնունդն արուիս,
Մինչ նոր հանգստիւ նոր օթեւանից տրոհեալ եւ յաստից»
[60, էջ 626]:

Ինչպես երեւում է, Երեմիայի պապերը նախապես Արեւելյան շրջանից եկել են Արեւմտաք. Դարանաղյաց երկիրը⁸, բազմացել են «յորդոց յորդիս» եւ այնուհետեւ, «ճէլալից նեղութեանց վշտից» փախչելով, եկել



Գալիպոլի, ուր ծնվել է հայրը:

Երեմիա Քյոմուրճյանը երկու անգամ եւս հիշատակում է իր ստեղծագործութիւններում իրենց Արեւելյան կողմերից Դարանաղիք եկած լինելու մասին՝

«Երեմիաս Բիւզանդեցի, որ նախնիքդ է արեւելցի,

Զրկեալք իւրեանց Հայրենեաց կոչեցան Դարանաղեցի»

[1, Երուս. ձեռ. 892, էջ 263բ]:

«Երեմիա կոչեալ Դարանաղեցի նախնեաց պանդխտեաց արդ Բիւզանդեցի» [1, Երուս. ձեռ. 8780, էջ 16բ; Տե՛ս եւ 54]:

Քյոմուրճյանների Դարանաղիքից եկած լինելու մասին է գրում նաեւ 1640 թ. Կ. Պոլսում ընդօրինակված Հայսմավուրքի Սարգիս գրիչը իր հիշատակարանում. «...ԶԿամախայ երկրէն ի գեղջէն Ապուշտայ զՏէր Մարտիրոս քահանայն, որ բազում աշխատանք ունի վասն Այսմաւուրքիս, եւ վերակացուն նա էր»: Այսպիսով, ի հայտ են գալիս երկու տեղանուն, որոնց տեղադրութիւնը, սակայն, անհայտ է մնում Քյոմուրճյանի կենսագիրներին [95, էջ 97-98; 7, էջ 15]:

Ս. Ավգերյանը, Գ. Մրմրյանը, Վ. Թորգոմյանը եւ նրանց հետեւելով Հ. Սահակյանը Ե. Քյոմուրճյանի ընտանիքի բնակավայր են ցույց տալիս Ակնը (էկին) [30, էջ 9-10; 107, էջ 5; 55, էջ 140; 133, էջ 9]: Ն. Ակինյանը, սակայն, նկատել է, որ «Քէօմիւրճեանց սերումը Ակնէն ուղիղ է միայն մայրական գծին համար» [7, էջ 16-17]: Այդ մասին Երեմիա Քյոմուրճյանի Օրագրութիւնում եւս կարգում ենք. «Նոյեմբեր Գ(3) ԴՇ (չորեքշաբթի) աւուրն փոխեցաւ ի Քրիստոս Մահտեսի Ամբակում, որ էր քեռի մօր մերում, ու էր նա ի գիւղէն Նավրերոյ յԱկնա գաւառի, որդի Մարտիրոսի մեծագնեայ» [60, էջ 307], իսկ Հայսմավուրքի հիշատակարանում «Մահտեսի Ամբակումս բարեմիտ եւ հաւատարիմ այրս էր ի բնիկ յԱկնայ ձորակէն՝ ի գեղջէն որում Նավրէր կոչիւր» [139, էջ 403; Հմմտ. 7, էջ 21]:

Երեմիա Քյոմուրճյանը իր ստեղծագործութիւնները ստորագրում է «Երեմիա դպիր», «Երեմիայի բանասիրէ», «Երեմիայէ Բիւզանդեցւոյ», «Դարանաղեցի», «Երէմիա չնչին Դարանաղեցւոյ» ինչպես եւ թուրքերենին հարազատ եւ ընդունված «Քէօմիւրճի դատէ», «Քէօմիւրճի դատէ Երեմիա Չէլչպուն», «Քէօմուրճի դատէ Երէմիատէն», նույնիսկ «Քէօմիւրճի օղի»: Ամգեցին նրա հորը՝ Մարտիրոս քահանային հիշատակում է «Քէօմուրճի» անունով՝ «Քէօմուրճին մեռաւ տէի», իսկ

Երեմիային՝ «Քէօմուրճիդատէն» [60, էջ ԿԵ, ԿԸ]:

Կենսագիրներին հետաքրքրել է «Քէօմուրճեան» ազգանվան ծագման հարցը: Ն. Ակինյանը գտնում է, որ «Քէօմուրճեան անշուշտ գաղթականութեան մէջ ժառանգուած տոհմանուն է, Սարգիսի (Երեմիայի պապի հոր- Ժ.Ա.) գործադրած արուեստէն այսպէս կոչուած» [7, էջ 17]: Նույնն է կրկնում նաև Հ. Սահակյանը. «Քյոմուրճյան ազգանունը, որ նշանակում է Ածխագործյան, կենսագիրների վկայութեամբ գալիս է Երեմիայի պապերի արհեստից» [133, էջ 9]:

Թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբին իր «Գիրք ճանապարհորդութեան» [203] մեջ, Կամախի բերդը նկարագրելիս, վկայում է. «Եւրատ գետի գիմացի ափին, Քեմախից մեկ ժամվա հեռավորութեան վրա ընկած 700 տնից բաղկացած Քյոմուր գյուղում նստող աղահանքի էմինը նույնպես իշխողներից է: Շատ հայտնի է ճյուղից սպիտակ Կրըշէհիբի աղից ավելի համեղ աղը: ...Քյոմուր գյուղի⁹ կողքով, այգիների միջից հոսող Քյոմուրի գետակը սկիզբ է առնում Քերջասի լեռներից, անցնում Քեմախի բերդի մոտով» [73, էջ 132]:

Ինչպես հայտնի է, Սուլթան Մուհամմեդ Երկրորդը (1451-1481 թթ.), երբ գրավեց Կոստանդնուպոլիսը, «կասկածելով զապատամբելոյ յունաց, ի Պրուսայէ կամ ըստ այլոց ի զանազան կողմանց էած բնակեցոյց զհայս ի վեց զանազան տեղիս քաղաքին, որք եւ անուանեցան վեց ժողովուրդ, տաճկերէն՝ «Ալթը ճէմաէթ», որոնցից մեկը կոչվել է «Քէօմուրճի օտաւարը» [81, էջ 115]:

Այսպիսով, չբացատրելով ազգանվան ծագումը «գործադրուած արուեստէն այսպէս կոչուած», վերջին այս երկու տվյալները հնարավորութեամբ են տալիս ենթադրելու, որ «Քյոմուրճյան» ազգանվան ծագումը կարող է եւ կապված լինել տեղանուններից որեւէ մեկի հետ:

Առաջին, չկասկածելով Էվլիայի հավաստիացման վրա, պետք է կարծել, որ հիշյալ Ապուշտա կամ Խոճա գյուղերը շատ մոտ են գտնվել Քյոմուրճի Գոմեր բնակավայրին¹⁰ եւ գաղթականութեան ժամանակ Գալիպոլիում կամ Կոստանդնուպոլսում Երեմիայի նախահայրերը ճանաչվել են Քյոմուր գյուղի անունով: Նկատենք, որ Քյոմուրճյանն իրեն անվանում է նաև «Քէօմուր գատ» [1, Ղալաթիո Ձեռ 141]:

Երկրորդ. Շատ հավանական է, որ Քյոմուրճյան գերդաստանի մի ճյուղը, գալով Կոստանդնուպոլիս, մինչ Գում գալիքում հաստատվելը [55, էջ 8; 107, էջ 5]¹¹ ժամանակավորապես բնակված լինել «Քէօմուրճի

օտալար» թաղամասում¹² եւ ըստ այդմ՝ ճանաչվեր «Քէօմիւրճի» մակա-
նունով, որը հետագայում կարող էր վերածվել ազգանվան:

Երեմիա Քյոմուրճյանի հայրը եղել է Կ. Պոլսի սբ. Սարգիս եկեղեցու
ավագ քահանա Մարտիրոսը, որին որպես հեղինակավոր եւ ազնիվ
մարդու, Եղիազար Այնթապցին եւ Մարտիրոս Ղրիմեցին իրենց բացա-
կայութեան ժամանակ վստահել են նույնիսկ պատրիարքական աթոռի
գործերը [60, էջ 29, էջ 307-308; 139, էջ 403; 125, էջ 611], իսկ Փիլիպպոս
Աղբակեցի կաթողիկոսը, 1652 թ. Կ. Պոլիս այցելելով, նրան կարգել է
«վէքիլ եւ ավագերէց Սբ. Էջմիածնայ որպէս զի ի վերայ գանձանակին
լիցի», մի կարեւոր պարտականություն, որ հետագայում կատարել է
նաեւ ինքը՝ Երեմիա Քյոմուրճյանը [60, էջ 27-28, 38, 75, 139, 141, 142,
149, 166]:

Տեր Մարտիրոսը մահացել է խոր ծերութեան հասակում, 1681
թ.¹³: Երեմիայի մայրը՝ Յուդիտան մահացել է 1663 թ. [60, էջ 611]:
Քյոմուրճյանի երկու եղբայրները՝ Գեւրգը եւ Կոմիտասը, իրենց հոր
մահից հետ քահանայագործել են: Գեւորգը, ստանալով հոր Մարտիրոս
անունը, պաշտոնավարել է մինչեւ 1703 թ. եւ 60-ի մոտ տարիքում
կնքել մահկանացուն¹⁴: Կոմիտասը, որ եղբայրների մեջ կրտսերն էր,
նահատակվել է 1707 թ. հոկտեմբերի 25/5 նոյեմբեր ամսին [125, էջ
611-612] Պոլսում՝ գոհ գնալով պոլսահայութեան շրջանում ծայր առած
խմբակցությունների պայքարին¹⁵

Երեմիա Քյոմուրճյանը աշակերտել է սբ. Սարգիս եկեղեցու քահանա
Տեր Հովհաննեսին, որին կոչում է «վարպետն իմ Տէր Յովհաննէս»
եւ «ըստ հոգեկանին զՏէր Յովհաննէս քահանայն» [60, էջ 173; 7, էջ
109]: Տեր Հովհաննէսը նրան ուսուցանել է Սուրբ Գրոց պատմութիւն,
գրչական արվեստ, եկեղեցական երաժշտութիւն: Կենսագիրները,
նկատի ունենալով Ե. Քյոմուրճյանի գիտելիքների լայն շրջանակը,
ենթադրել են, որ նրա կրթութեամբ եւ դաստիարակութեամբ զբաղվել
են ժամանակի գիտուն վարդապետներից Քյոմուրճյան ընտանիքին
մոտ կանգնած Եղիազար Այնթապցին եւ Մարտիրոս Ղրիմեցին: Այդ
մասին Եղիազար Այնթապցին Երեմիայի հոր ուղարկած նամակում
կարդում ենք. «Փոխանակ իմ առաքեցի առ սրբութիւնդ զորդեակն իմ
եւ զծառայ քո ... զանձնածինն իմ եւ հոգեծինն քո զորդիդ ըստ հոգեոյ,
զոր սնուցանէր հաւատով ... եւ ի քէն պատուաստեցաւ իմաստն»: Իսկ
տարիներ հետո արդեն Քյոմուրճյանն է նշում. «Մանուկ մտնկավարժ էի

եւ քեզ նման հոգւոյ բարւոյ դիպեցայ համարեայ զիս յետին քո ետնեալ իրրու զաշակերտը» [60, էջ 436; 108, 1932, էջ 271]: Ենթադրվել է նաեւ, որ Երեմիան «մին էր Կղէմոս Գալանոսին աշակերտող երիտասարդներէն, որ կուսանէին Ղալաթիա յատուկ վարժարանի մը մէջ պատմութիւն եւ լատիներէն» [107, էջ 7; 75, էջ 241]: Երեմիայի կրթադաստիարակչական գործում մեծ հոգածություն է ցուցաբերել Երեմիայի հոգեհայրը՝ մոր քեռին. «Եւ եւս զստացողն մեր ... զպապն եւ ծնօղ հոգեպէս զՄահատէսի Ամբակումն, որք բազում երկասիրութեամբ երախտաւորեցաւ ի վերայ մանկահասակ տկար տեսութեան մերում տքնեցուցանել ի մարզարանս զրոց մակացութեան, որ վասն սիրոյ եւ աղօթից նոցա տէրն տէրանց առատաձիրս շնորհեաց» [7, էջ 109]¹⁶:

Երեմիա Քյոմուրճյանի առաջին ուսուցիչները նրան ուսուցանել են զբնութիւն արվեստը, թեւեւ նա իր ընդօրինակած Նարեկի հիշատակարանում համեստորեն վկայում է, որ ինքը զբնութիւն հատուկ ուսուցում չի ստացել՝ «զի չէր իմս արհեստ զգծագրութեան եւ ոչ ուսեալ ի վարժապետէ» [148, էջ 179-182; Տե՛ս «Երեւակ», էջ 604բ]: Բայց նա հմուտ է եղել այդ արհեստում, նույնիսկ իր գիտելիքները հաղորդել է ուրիշներին, որոնցից մեկն է եղել զբիշ Մարկոս Չմշկածագին, որն իր ընդօրինակած «Երգ Երգոցի» հիշատակարանում այդ մասին գրում է. «Թարմատար եւ ապիկար, տգէտ եւ անիմաստ, հողոյ եւ մոխրոյ հաւասար չնչին ծառայ Մարկոս երէցս, որ եմ Չրմշկէձեկու, եւ յոյժ ցանկացայ ուսանել զգիրս կատարեալս եւ ոչ կարացի ուսանել, բայց սակաւ ուսեալ եղէ վերակացութեամբն վեհիմաստ եւ մաքրամիտ, սրբասնունդ եւ բարեգործ որդի հարազատ քահանայապետին Տէր Մարտիրոսի, ողջախոհ իրրեւ զտատրակ եւ իրրեւ զՍահակ եւ զՄեսրոպը ինքն Երէմիա Չէլէպիս» [1, Մատ. Ձեռ. 8455, էջ 139բ]:

Երեմիա Քյոմուրճյանը 18 տարեկան հասակում սկսել է սովորել թուրքերեն. «Զի բազում անգամ ի մանկութենէ ի հետ հարկեալ ի ծնօղաց եւ շատ նախատինս կրեալ վասն բանիս, զի պիտանի էր հանապազ, եւ այժմու ձեռս արկաք բանին, միթէ Աստուած յառաջացուցէ» [60, էջ 137; տե՛ս եւ 119]: Թե ով է եղել նրա թուրքերենի ուսուցիչը, հայտնի չէ, բայց մի բան պարզ է, որ Ե. Քյոմուրճյանը թուրքերենին տիրապետել է գերազանց: Այդ են վկայում նրա թուրքերեն տաղերն ու նամակները, հայերենից թուրքերեն, թուրքերենից հայերեն թարգմանությունները: Նրան մատչելի են եղել նաեւ հունարենը¹⁷, լատիներենը¹⁸, պարսկերենը,

արաբերենը, եւ եբրայերենը¹⁹: Նա իր երաժշտական օժտվածութեամբ փորձել է եղանակավորել իր տաղերը..., ի դեպ՝ «Գիր յանդիմնութեան առ... ոմն» [60, Հավելված, էջ 501-502; 1, Երուս., ձեռ. 1059, էջ 67բ-68ա]:

Երեմիա Քյոմուրճյանի գիտելիքների համընդհանուր պաշարը, կրոնական եւ եկեղեցական պատրաստվածութիւնը նկատի ունենալով Եղիազար Այնթապցին առաջարկել է նրան ավագ սարկավագ ձեռնադրվել²⁰, սակայն առաջարկութիւնը մերժվել է եւ հոր՝ Մարտիրոսի եւ Երեմիայի կողմից. «Իձն (1856) ապրիլ 12, շաբաթ օրս վարդապետն ասէր տերտերիս, թե բեր, որ աւագ սարկաւագ օրհնեմ, նուաստիս համար, եւ տերտերս ոչ է տուեալ կամք, եւ իրիկունս ասաց ինձ տերտերս, եւ ես այլ չկամեցայ» [60, էջ 148]:

Երեմիա Քյոմուրճյանը 23 տարեկանում քարտուղարի պաշտոնն է վարել հայոց պատրիարքարանում եւ 1660-ականներից բերել իր մասնակցութիւնը արեւմտահայութեան հասարակական կյանքին՝ մշտապես հավատարիմ մնալով ժողովրդի եւ ազգային եկեղեցու շահերին, ազգակիցների խաղաղ գոյակցութեան շրջանակում տեսնելով ազգի անվտանգ գոյատեւութեան եւ մայր եկեղեցու միասնութեան պահպանման հնարավորութիւնները: Նա մեծ ջանք է թափել Եղիազար Այնթապցուն հետ պահել համազգային հոգեւոր եւ քաղաքական կյանքի համակեցութեանը վտանգող հակաթոռ կաթողիկոսութիւն ստեղծելու իր մտադրութիւններից:

Քյոմուրճյանը պաշտոնի եւ գործնական առիթներով շրջել է պատրիարքութեան ենթակա թեմերն ու առաջնորդութիւնները, եղել Երուսաղեմում, Հալեպում, Դամասկոսում, Բուրսայում, Էդիրնեում, Արմաշում, Կոնիայում, Անիում, Կարսում, Կարինում, Ղրիմում: 1685թ. եկել է Էջմիածին, ուր մնացել է մեկ տարի, այցելել սրբատեղիները, հանդիպել լուսավորչալ Զաքարիա սարկավագին, որը ի նշան իրենց բարեկամութեան, իր պատմութեան հիշատակարանում գրել է. «Յիշեցէք եւ զԲիւզանդացի պարոն Երեմիայ գիտնականն եւ զորդի նորա՝ զՄաղաքիա պատանի, զնկարիչ պատկերաց եւ զոսկածաղիկ արարող, որք են բուն բարեկամ ինձ՝ թշուառացեալ Զաքարէիս» [69, էջ 366; 1, Մատ. ձեռ. 158, էջ 360]: Ի դեպ, նրանց բարեկամութիւնը կարող էր սկսված լինել ավելի վաղ, երբ 1683-1684 թթ. Զաքարիան գտնվել է Կ. Պոլսում [42, էջ 16; 97, հտ. Բ, էջ 262-272]: Երեմիա Քյոմուրճյանը Էջմիածնում ծանոթացել է նաեւ նույն ժամանակ

էջմիածին Հրավիրված զարգանկարիչ Նաղաշ Հովնաթանի հետ [104, էջ 42-43] եւ այդ առիթով, ի նշան սկսված իրենց բարեկամության եւ սիրո՞՞ Քյոմուրճյանը հետադաշյում նվիրել է նրան ուղերձներ [60, էջ 571]: Այս ճանապարհորդությունները, ինչպես նկատել է Հ. Օշականը, նպաստել են Քյոմուրճյանի ստեղծագործության բազմազանությանը [111, «Սիոն», 1940, էջ 32]:

Երեմիա Քյոմուրճյանի կյանքի պայծառ, թեև կարճ տեւողությամբ ընթերցվող էջերը լրացված են նրա տպագրական գործունեության մասին: Տպարանը նա հիմնել է 1677 թ. ի հիշատակ Աբրո Չելեբիի, որը հղացել էր այն հիմնելու միտքը եւ Երեմիային տրամադրել նյութական միջոցներ: Նա նույնիսկ մերժել էր լսել Երեմիայի խնդրանքը՝ ինչ-ինչ պատճառներով Հրաժարվել տպարան հիմնելու մտքից՝ «Զի չէ պատեհ, այլ գործ պիտակ» [60, էջ 559-563]:

Աբրո Չելեբիին չի տեսել տպարանը, մահացել է 1675 թ., իսկ տպարանը գործել է 1677-1678 թթ.: Քյոմուրճյանը տպագրել է երկու գիրք՝ Ներսես Շնորհալու «Յիսուս որդի»-ն [117] եւ իր «Տեղեաց տնօրինականաց»-ը [59]: Երեմիա Քյոմուրճյանը տպարանով սկսել է լուսավորական մի գործունեություն, որը շարունակել է Գրիգոր Մարգվանցին՝ ստանալով Քյոմուրճյանից տպարանի ամբողջ գույքը եւ տպարանը վերականուցելով ու հասցնելով կատարելության [85, էջ 118]:

Երեմիա Քյոմուրճյանը ամուսնացել է 17 տարեկանում: Ունեցել է չորս զավակ՝ Ամբակումբ, Մաղաքիան, Հովսեփը եւ Սողոմեն: Վերջին երկուսը մահացել են պատանի հասակում²¹: Ավագ որդին 1680 թ. ձեռնադրվել է արեղա՝ Գրիգորիս անունով եւ մեկնել էջմիածին «ուսցի զկատարելութիւն ուսմանց» [60, հավելված՝ (Այս գիրքս յաղագս Յակորայ...); նաեւ «Տաճար» 1912, էջ 369-371]: 1691 թ. վերադարձել է Կ. Պոլիս եւ պաշտոնավարել սբ. Հրեշտակապետաց եկեղեցում: Մահացել է 1692 թ. հավանաբար սբ. Հրեշտակապետաց եկեղեցու հրդեհի ժամանակ ստացած այրվածքներից: Մեզ այդ ենթադրությունն են հանգեցնում Մինաս Ամբեցու մի հիշատակությունը, որ թողել է 1692 թ. նոյեմբերի 23-ին իր Օրագրության մեջ՝ «Նոյեմբերի ԻԳ (23) քունս փախաւ, զի լուսայ զայրումն Հրեշտակապետ եկեղեցւոյն եւ զմահ Քէօմիւրճի Գրիգորիս վարդապետին» [60, էջ 165] եւ այն, որ Գրիգորիսի մահը տեղի է ունեցել հրդեհի օրը՝ 1692 թ. օգոստոսի 6-ին [60, Ներած. էջ ձթ]:

Մաղաքիան ամենուրեք ընկերակցել է հորը, եղել է գրիչ եւ ծաղկող:

1700 թ. Երուսաղեմի միաբան Մինաս եւ Եղիազար վարդապետների հետ գնացել Հռոմ: 1701 թ., ըստ Ամդեցու Օրագրության՝ նրան հանգիստում ենք Երուսաղեմում [60, էջ, ՃԺԹ], իսկ 1702-ին՝ Ստամբուլում: Հավանաբար 1707 թ. հորեղբոր՝ Կոմիտասի նահատակությունից հետո հեռացել է Երկրից:

Երեմիա Քյոմուրճյանը կյանքի վերջին տարիներին պոլսահայության մեջ նոր ալիքով ծայր առած խառնակություններին վերջ տալու, պայքարող կողմերին հաշտեցնելու, խաղաղ եւ հաշտ կյանք ապահովելու ձգտումներից հոգնած. «Այլ ես ոչ կամիմ հնարս գտանել խաղաղութեան անգոսնիմ յանոպայ անձանց, յասել նոցա թէ ո կացոյց գբեզ իշխան եւ դատաւոր ի վերայ մեր, նմին իրի եւ անյոյս լեալ լռեցի ի խօսելոյ» [121, էջ 722], խաղաղութիւն է որոնել գրական գործունեության մեջ: Այս շրջանում է գրվել նրա «Համառօտ պատմութիւն Օսմանցոց թագաւորաց»-ը եւ այլ գործերը:

Երեմիա Քյոմուրճյանը իր մահկանացուն կնքել է 1695 թ., 58 տարեկանում, Կոստանդնուպոլսում, «Քէօմիւրճեան օղլու Երեմիայ Չէլէպին՝ եղբայր Տէր Կոմիտասին, հանգաւ 1695», - հիշատակել է Պաղտասար դպիրը [129; տե՛ս 97, էջ 343], նույնը արձանագրել է «Ստամպոլոյ պատմութեան» Վիեննայի ընդօրինակության գրիչը իր հիշատակարանում [1, Ձեռ. 779, էջ 8ա; 55, էջ 178-179]: Քյոմուրճյանի մահվան թվականը ավանդում է նաեւ նրա ժամանակակից Կ. Պոլսի Եփրեմ պատրիարքը իր հիշատակարաններից մեկում. «Զայս գիրքս յետ վախճանելոյ տեառն Մովսէսի (Բջնեցւոյ) աստուածաբանութեան բարունապետին անկեալ էր ի ձեռացէ ի ձեռք եւ եգեալ էին ի պատանդի, այսինքն ի գրաւի, ձեռամբ ըՍտամպոլցի Քեօմիւրճի Տէր Մարտիրոսի որդի Երեմեայ Չէլէպուն, զոր յայսմ ամի եղեւ հանգուցեալ, որում Տէրն ողորմեցի հոգւոց իւրում, վասն որոյ եւ ես ետու զգրամ պատանդին եւ հանեալ անտի դայս գիրքս եւ ստացայ... Զայս եղեւ ՌՃԽԴ (1144) թուականիս Հայոց ի յարքայանիստ մայրաքաղաք Կոստանդնուպոլիս» [1, Մատ. Ձեռ. 2503; 7, էջ 39]:

2. ԵՐԵՄԻԱ ՔՅՈՄՈՒՐԾՅԱՆԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Բազմաժանր է Երեմիա Քյոմուրճյանի գրական ժառանգությունը: Երեւանի Մաշտոցյան Մատենադարանում, Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի, Վենետիկի ու Վիեննայի մխիթարյանների գրապահոցներում եւ մասնավոր հավաքածուներում այսօր պահվում են նրա նամակների, ուղերձների, ներբողների, տաղերի, գանձերի, կոնդակների, կրոնական-հակաճառական, ջատագովական, տարեգրական ու պատմական երկերի եւ թարգմանությունների ձեռագրերը: Այդուամենայնիվ դա ամբողջը չէ, նրա մահից հետո ժառանգների թափառական կյանքն ու ողբերգական ճակատագիրը ոչ միայն նպաստել են նրա գրական ժառանգության տարածմանը, այլ պատճառ դարձել բազմաթիվ երկերի անդարձ կորստյան, որոնց մասին այսօր միայն տեղեկանում ենք հեղինակի երկերից եւ ժամանակով նրան մոտ հեղինակների կցկառուր հաղորդումներից:

Դրանով հանդերձ, պահպանվածն էլ բավարար է Երեմիա Քյոմուրճյանի գրական վաստակի մասին պատկերացում կազմելու համար: Նրա ժառանգությունը, ինչպիսի ասվեց, անձանոթ չի մնացել հայ բանասիրությունն ու պատմագրությունը: Նրա երկերի մեծ մասը, շնորհիվ Տ. Պալյանի, Վ. Թորգոմյանի, Հ. Քյուրտյանի, Մ. Նշանյանի, Ա. Չոպանյանի, Հ. Օշականի, Հ. Սահակյանի եւ նվաստիս, հրատարակված է: Սակայն կան եւ կարեւոր ստեղծագործություններ, որ դեռեւս մնում են անտիպ:

Երեմիա Քյոմուրճյանի գրական ժառանգության մասին առաջին տեղեկությունը ստանում ենք նրա «Հարցմանց գիրք»-ից [1, Մատ. Ձեռ. 72]: Հարց ու պատասխանի սկզբունքով կառուցված այս գործում «Որք են պատմագիրք հայոց» հարցին որպես պատասխան թվարկված հայոց 33 պատմիչների շարքում Երեմիա Քյոմուրճյանը հիշատակում է նաեւ իրեն եւ անվանը կցում մինչեւ 1681 թ. հեղինակած պատմական իր երկերի հետեւյալ ցանկը՝

ա. զՄաճարացն եւ
բ. զԳանտիոյն.
գ. զՍուտ Քրիստոսին եւ
դ. զՍուլթան Մէհէմէտիս.
ե. զՕսմանցոցն Պ/Վ/ Հատորս եւ
զ. զԼէնկ Թամուրին.
է. զԽալիֆիցն Պաղտատոյ եւ
ը. զՊարսիցն.
թ. զՀոռմայեցւոց եւ
ժ. զՅունաց.

ժա. զՆոր նահատակաց եւ
ժբ. զՀրակիղուծիւն Ստամբուլոյ.
ժգ. զԱմերիկային եւ
ժդ. զԱռնաւուտին.
ժե. զՀամառօտ Օսմանցուն.
ժզ. զԲագրատունեանցն եւ
ժէ. զԿիլիկեցւոյն Համառօտ.
ժը. զՄովսիսին Համառօտ եւ
ժթ. զՉուառուծիւն Հայոց եւ
ի. զԺամանակագիրս եւ
իա. զԱշխարհացոյց եւ

իբ. զԱրարողութիւնք ոմանց ազգաց եւ այլ բազում ըստ որում եւ սոյն մատենան մասնաւորապէս...:

Ն. Ակինյանը ժամանակին այս ցուցակը քաղել է, սակայն քաղվածքը Երեւանում մոռանալով չի կարողացել «ծանօթացնել ընթերցողներուն» [7, էջ 73], բայց նա նման մի ցուցակ հրատարակել է Անթիլիասի կաթողիկոսութեան գրապահոցում եղած մի գրչագրից՝ նշելով «Հետաքրքրական է ցանկս իր նոր անուններով: Առաջին անգամ հոս կը տեսնուի Ե. Չ. Քեօմիւրճեանի պատմական գրուածներու ցանկը, որ ուշադրութեան արժանի է: Այն Հանուած է, ինչպէս կերեւայ Երեմիայի մէկ հաւաքածոյ ձեռագրէ» [9, էջ 63-64; հմմտ. 6, էջ 309-311]՝ նկատի ունենալով, հափանաբար, հեղինակի «Հարցմանց գիրք»-ը: Երեմիա Քյոմուրճյանը պատմիչ է հիշատակվում նաեւ Ճահկեցու կազմած Հայոց պատմագիրներին ցուցակում [39, էջ 646-64; հմմտ. 18, էջ 611]:

Երեմիա Քյոմուրճյանի ժառանգութիւնը ընդհանուր ներկայացնում

են նաեւ Մ. Չամչյանն ու Մ. Թեոփիլյանցը: Ըստ Մ. Չամչյանի՝ Երեմիա Քյոմուրճյանը Հեղինակել է «զՊատմութիւն Օսմանցւոց թագաւորութեան ընդարձակ ի Հինգ գիրս եւ զՀամառօտութիւն նորին ի մի գիր եւ միւս եւս առանձին ոտանաւոր ի խնդրոյ Յակոբայ կաթողիկոսի, նոյնպէս զՊատմութիւն Ալէքսանդրի ոտանաւոր տաճկերէն: Թարգմանեաց եւ ի խնդրոյ զբարգիտացն տաճկաց ի լեզու նոցա զՊատմութիւն Խորենացւոյն քաղուածով, ընդ նմին եւ զՀամառօտ տեղեկութիւն ինչ ի Բագրատունեաց եւ Ռուբինեաց: Գրեաց եւ ի խնդրոյ դեսպանին Ալամանայ ի վերայ աշխարհաց Պարսից, Հնդկաց եւ Անատոլիոյ եւ ընդարձակ եւ ի վերայ Հայաստանու եւ ի վերայ թեմից իւրաքանչիւր կաթողիկոսարանաց եւ ամենայն վանօրէից, զորս եւ յանդիման արար ի պատկեր աշխարհացոյցի: Գրեաց եւ վիճաբանութիւն ընդդէմ Հրէից: Գրեաց եւ զբազումս եւ ճառս Հայերէն եւ տաճկերէն եւ ոտանաւորս յոգունս եւ զՊատմութիւն Տնօրինական տեղեաց Երուսաղէմի: Թարգմանեաց եւ զնոր կտակարանն ի Հայէ ի լեզու տաճկաց, նոյնպէս եւ ինչ-ինչ ի Հին կտակարանէ: Թարգմանեաց եւ բազում ինչ ի Յունաց եւ ի Լատինացւոց ի Հայս: Գրեաց եւ զԹուղթս բազումս զորաւոր բանիւք: Գրեաց եւ զՊատմութիւն անցից իւրոյ ժամանակի՝ ստուգութեամբ եւ Հաւատարմութեամբ», որոնց մեծ մասը գտնվել է Երեմիայի «մտերիմ ծանօթի ձէվաՀիրճի տիրացու Մաղաքիայի» ձեռքում [121, էջ 723]:

Մ. Թեոփիլյանցը Մ. Չամչյանի այս ցանկին ավելացնում է «Ոտանաւորք յոգունք զարարածոց եւ Հանդամանաց ի խնդրոյ Աբրահամ չէլէպոյն «...» եւ տաղք ոչ սակաւք», վկայելով նույնպէս «բազումք յայտոցիկ եւ անկան ի ձեռս վերոյիշեալ Մաղաքիա դպրի, որ է նախահաւն իմ, այսինքն Հայր Հաւուն իմոյ» եւ որ «միջնորդութեամբ թողին նորա Յարութիւն վարդապետին միոյ ի միաբանից ուխտիս մերոյ եւ Հօրեղբօրն իմոյ ըստ մարմնոյ, Հասին այս ամենայն գրուածք ի վանս մեր»՝ Վենետիկի Միսիթարյան միաբանություն [75, էջ 240-241]:

Երեմիա Քյոմուրճյանի ժառանգությանը առավել ամբողջական անդրադառնում են նաեւ Վ. Թորգոմյանը, Ն. Ակինյանը, Մ. Նշանյանը, Հ. Սիրունին եւ Հ. Սահակյանը: Ուստի, կրկնությունից խուսափելով եւ հեռու մնալով Ե. Քյոմուրճյանի գրական ժառանգությունը վերաքննելու մտքից, մատենագիտական դիտումով կանդրադառնանք նրա կարեւոր պատմական երկերին՝ արձանագրելով ձեռք բերված որոշ արդյունքներ:

ՀԱՐՅՄԱՆ ԳԻՐՔ - Անտիպ է, պահպանվում է Մատենադարանի թիվ 72 եւ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրաց ցուցակի թիվ 498 ձեռագրերում: Թիվ 498 ձեռագրում երկը խորագրված է «Հարցմանց գիրք համառօտ» (Ն. Ակինյանը այն հիշում է «Համառօտ հարցմունք եւ պատասխանիւք» վերնագրով), ընդօրինակված է թիվ 72-ից, գրիչ Խաչատուր արեղայի ձեռքով, 1681 թ.:

Երեմիա Քյոմուրճյանը «Հարցմանց գիրքը» շարադրել է 1681թ. սպահանցի Տեր Սարգսի որդի Թադէոս երեց Համադասպանի ընկերակցութեամբ: Այդ մասին կարդում ենք թիվ 498 դրչագրի հիշատակարանում՝ «Ընթերցող սորա ուսումնասէր մանկունք, յորժամ ընթեռնուք զսա եւ կամ օրինակէք, յիշեսջիք ի յազօթս ձեր զԵրեմիայն, որդի Տէր Մարտիրոսի Քեօմուրճոյ Կոստանդնուպօլսեցի եւ զԹադէոս երէց Համազասպեան, որդի Տէր Սարգսի ըՍպահանայ Երեւանցոյ, զի բազում աշխատութեամբ հաւաքեցաք զսա ի սուրբ գրոց ի կարճառօտ բանիւք ի յաստուածաբանութեանց, ի փիլիսոփայից, ի պատմագրաց եւ ի կերպից ինչ ազօթից, զորս առեալ ի Լաթինացոց, զորս ի Յունաց եւ զորս ի Հայոց, ի վայելումն ազգիս Հայկազեանց Արամեան տոհմի, ի փառս Քրիստոսի, թուին փրկչին 1681, եւ ի Հայոց թուին ՌձԼ (1130-1681), ամսեանն նոյեմբերի Ժ (10)-ի Կոստանդնուպօլիս ընդ հովանեաւ սրբոյ Լուսաւորչի» [1, Երուս. Զեռ. 498, 105ա-105բ]:

Երկի բովանդակութեան մասին ավելի հանգամանակից տեղեկութեան ենք ստանում Մատենադարանի նո. 72 ձեռագիր օրինակից, թեև սկզբից եւ վերջից պակասավոր է: Այն բաղկացած է 4 գլուխներից: Առաջին գլուխը նվիրված է ծննդաբանութեան, երկրորդը՝ Հայոց ինքնակալ իշխանութեան եւ անիշխանութեան շրջաններին, երրորդը՝ Աստվածաշնչյան, չորրորդը՝ Ազգային-եկեղեցական-վարդապետական գիտելիքներին: Շարադրված է հարց ու պատասխանի սկզբունքով եւ ունի ուսուցողական բնույթ:

«Հարցմանց գիրքը» կարեւոր է այն առումով, որ պարունակում է Ե. Քյոմուրճյանի մինչև 1681 թ. շարադրած ստեղծագործութեանների վերը բերված ցուցակը, որտեղ հիշատակվում են այնպիսի երկեր, որոնք այսօր կորած են:

ԳԱԻԱԶԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ ԹԱԳԱԻՈՐԱՅ (ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ) -

- Պահպանված է Երուսաղեմի թիվ 863 ձեռագրում [1, Երուս. Զեռ.

863, էջ 546բ-556ա]: Բաղկացած է 4 գրքերից.

ա) Աղգաբանութիւն Հայոց ազգին յորդոց յորդիս այնպէս համա-
ռօտագրեալ որպէս զգաւազանագիրք.

բ) Գաւազան թագաւորութեան ազգին Արշակունեաց.

գ) Գաւազան թագաւորութեան Հայոց, որք ի հրէից խառնեալ էին
յաղագս մեր.

դ) Գաւազանագրացս, որք Ռուբինեաք կոչեցան:

Երկի երրորդ եւ չորրորդ գրքերը հիշատակվում են «Հարցմանց
գրքի» Ե. Քյոմուրճյանի ստեղծագործութիւններին ցուցակում՝ ժզ/
զԲագրատունեացն եւ ժէ/ զԿիլիկեցւոյն համառօտ, իսկ ամբողջ երկը
ավելի համառօտ շարադրանքով կազմել է Հարցմանց գրքի երկրորդ
գլխի բովանդակութիւնը [1, Մատ. Չեռ. 72, 125ա-133ա]:

Մ. Չամչյանը վկայում է, որ Ե. Քյոմուրճյանը թուրքերեն է թարգ-
մանել «ի խնդրոյ գրագիտաց տաճկաց ... զՊատմութիւն Խորենացւոյն
քաղուածով ընդ սմին եւ զՀամառօտ տեղեկութիւն ինչ ի վերայ
Բագրատունեաց եւ Ռուբինեանց» մի պատմութիւն [121, էջ 723]: Ինչպէս
երևում է Մ. Չամչյանի հիշատակած թարգմանված պատմութիւնը իր
բաժիններով եւ բովանդակութեամբ համապատասխանում է «Գաւա-
զանագիրք Հայոց թագաւորացին», հետեւաբար ենթագրելի է, որ Եր-
Քյոմուրճյանը թուրքերեն է թրգմանել հենց իր այս երկը:

Ա. Տեր-Ղեւոնդյանը, քննելով այս հարցը, եկել է այն եզրակացութեան,
որ Ե. Քյոմուրճյանին խնդրողը թուրք պատմիչներից Մունեջլիմ Բաշին
պետք է եղած լինի, որովհետեւ նրա «Համաշխարհային պատմութեան»
հայ ժողովրդի պատմութեան վերաբերյալ մասում ընդհանրութիւններ
կան Խորենացու Հայոց պատմութեան հետ [143, էջ 143-151]: Ընդունելով
Մունեջլիմ Բաշիի Պատմութեան եւ «Հայոց պատմութեան» հնարավոր
առնչութիւնները, սակայն նկատել ենք տալիս միաժամանակ, որ
Մունեջլիմ Բաշին «Gayri muslim millet ve devletler tarihi için Joannes
tarihi tercümesinden faydalanmış» [211, հտ. 8, էջ 801-806; 228, հմտ.
էջ 16]:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ - Ըստ Մ. Չամչյանի՝ Երեմիա Քյոմուրճյանը
այս երկը գրել է Արեւելյան երկրների եւ Օսմանյան կայսրութեան
կենտրոնական շրջանների նկատմամբ հետաքրքրութիւն ցուցաբերող
Ավստրիայի դեսպանութեան խնդրանքով՝ «Գրեաց եւ ի խնդրոյ

դեսպանին Ալամանաց ի վերայ աշխարհաց Պարսից, Հնդկաց եւ Անատոլիոյ եւ ընդարձակ ի վերայ Հայաստանու եւ ի վերայ թեմից իւրաքանչիւր կաթողիկոսարանաց եւ վանորէից զորս եւ յանդիման արար ի պատկեր Աշխարհացոյցի» [121, էջ 723]: Աշխարհագրութեան մասին Մ. Չամչյանի վկայութիւնը կրկին էն Ս. Սոմալյանը, Ղ. Ալիշանը, Ն. Ակինյանը, Վ. Թորոմյանը, Գ. Մրմրյանը: Վերջինիս կարծիքով Աշխարհագրութիւնից օգտվել են Նիկողայոս Ազոնցն ու Ղ. Ինճիճյանը [107, էջ 11; համա. 108]:

Մ. Չամչյանի հիշատակութիւնից պարզ երեւում է, որ Ավստրիայի դեսպանին հետաքրքրող աշխատութիւնը բովանդակել է Պարսից, Հնդկաց եւ Անատոլիոյ մասին Երեմիա Քյոմուրճյանի գրվածքները, իսկ Հայաստանի, կաթողիկոսութիւնների թեմերի մասին շարագրանքները եւ Աշխարհացոյցը մաս չեն կազմում Աշխարհագրութեան եւ թվարկվում են համատեղ այն պատճառով, որ Մ. Չամչյանը, անկասկած, դրանք հավաք տեսել է նույն ձեռագիր ժողովածուում:

Այս ժողովածուի ճակատագիրը այսօր հայտնի չէ, բայց այն 18-րդ դարի կեսերին դեռեւս գտնվել է Կ. Պոլսում: Սարգիս Հովհաննիսյանը Քյոմուրճյանի արձակ «Համառօտ պատմութիւն Օսմանցոյ թագաւորացն» ընդօրինակելիս մեծ հավանականութեամբ, դրանից է քաղել կաթողիկոսութիւնների եւ վանքերին ենթակա թեմերի մասին հատվածները [1, Մատ. ձեռ. 10721]:

Երեմիա Քյոմուրճյանը «Աշխարհագրութիւնը» գրել է 1681 թ. հետո, որովհետեւ «Հարցմանց գրքի» աշխատութիւնների ցուցակում այդպիսի ավարտված երկ նշված չէ, ուստի, թե ինչ բնույթի աշխատութիւն է եղել Աշխարհագրութիւնը՝ պարզ ժամանակագրութիւն, վերլուծական երկ, որոշակի չենք կարող ասել:

ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ - Հիշատակվում է «Հարցմանց գրքի» ստեղծագործութիւնների ցուցակում (իս. Ժամանակագիր): Քյուրտյանը նկատում է, որ Քյոմուրճյանը այն գրած պետք է լինի 1676 թ. եւ նրանից է համառօտագրված Պոլսի վի հայկական Ս. Գեորգ եկեղեցու գանձարանում իր գտած 12 էջանոց «Ստորագրութիւն սրբոյ եկեղեցոյ» ձեռագիր (ընդօրինակված 1828-ից հետո) երկի երկրորդ մասը, որ նա հրատարակել է «Վիպասանութիւն առման Ս. Գէորգ եկեղեցոյ. որ ի Մակէդոնիայ ի Փիլիպուպոլիս. ի ձեռաց ազգին Յունաց» խորագրով²² [150, էջ 237-239]:

Այն նվիրված է 1672-1675 թթ. թուրքերի դեպի Լեհաստան արշավանքի ժամանակ Կամենիցի Հայկական դաղութի ապրած ողբերգության, գաղթի ճանապարհին ԿամենիցաՀայության կրած տառապանքների, նրա պատառիկներից վերածնված Փրիլպուպոյսի Հայ գաղութի Համար Աբ. Գեւորգ եկեղեցու ձեռք բերման պատմությանը, որը ծավալով թեև փոքրիկ, բայց մեծարժեք աղբյուր է Հայ սփյուռքի պատմության համար:

Ղ. Ալիշանը «Տարեգիր Կամենիցոյ» աշխատության մեջ 1551 թ. Մոլդավահայության ապրած փորձությունների մասին հրատարակած Մինաս Թոխաթեցու «Ողբ ի վերայ Օլախաց Հայերուն» ողբի «Ի թուին Ռ (1000=1551) Օլախի երկրին Շտեֆան պարոն Օլախի երկրին Հայերն եհան ի հաւատէ եւ զեկեղեցիսն քակեց զամէն բովանդակ» տեղեկությունը ծանոթագրում է՝ «Այս ծանօթ պժգալի դիպումն ի վրայօք դար մի վերջը Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, եղբայր երանաշնորհ Կոմիտասայ, դրէ այսչափս. «Ի թուականութեանս Հայոց Ռ (1000-1551)-ին ի Սէչով քաղաք երկիր Ուլախին, թագաւորն Ստեփան՝ դաւանութեամբ Յունաց, բռնութեամբ կալաւ Հազար ի Հայոց ազգէ, դրով դարձուցանել յազանդ իւր, որք ընդ նորա իշխանութեամբ էին եւ որք ոչ դարձան՝ նահատակեցան, յորոց մինն ի բազմաց քահանա ոմն, որ զերկու աչսն եհան եւ զերկու ձեռսն եւ զոտսն եւ զլեզուս եւ զհոտոտելիս եւ զշրթունս՝ նման Յակովկայ արար: Եւ Պալքոյ զանուն ումեմն զճակատն քերթեցին եւ այլ պէսպէս կտտամահ եւ զբազումս: Դահիճք նոցա քահանայք էին Ուլախաց ազգէ եւ գլխաւորք սոցա զեպիսկոպոսն իւրեանց, հրամանաւ պիղծ թագաւորին Ստեփանի յորմէ էառ.» չնեշելով, սակայն, օգտագործված երկը [3, էջ 18-19]:

Վ. Հակոբյանը վերոհիշյալ վկայությանը համապատասխանող հատվածի հանդիպում է Մատենադարանի թիվ 7584 ձեռագրի, իր հրատարակած անանուն հեղինակի «Նախ վասն խօնդքարին եւ շահին եւ զկնի պղծին Ստեֆանի Օլախաց թագաւորի եւ շարեաց նորին, որ առ ազգս Հայոց» խորագրով ժամանակագրության մեջ եւ ենթագրում է, որ Ղ. Ալիշանի կողմից «Քեոմուրճյանից օգտագործված վերոհիշյալ բնագիրը հավանորեն ծագել է հրատարակվող բնագրից», հնարավոր նկատելով նաեւ՝ «վերոհիշյալ երկու հատվածները հնարավոր նկատելից տարբեր հեղինակների» պատկանելը [97, էջ 131-138, 132]²³, սակայն հակված ենք կարծելու, որ օգտագործված հատվածի համար Ղ. Ալիշանը աղբյուր է ունեցել Եր. Քյոմուրճյանի

ներկայացվող, ժամանակագրութունը»։ որովհետև հրատարակված եւ ձեռագրացուցակներում նկարագրված եր. Քյոմուրճյանի երկերում չենք հանդիպում այդ հատվածին եւ ոչ էլ նման նյութի ակնարկությանը։ Հետեւաբար ավելի տրամաբանական է հրատարակված Անանուն ժամանակագրության համապատասխան հատվածի, թեև նրանցում որոշ ծավալային տարբերության եւ տարբնթեցվածների առկայությանը, Ե. Քյոմուրճյանի ժամանակագրությունից քաղված լինելու հնարավորութունը, քանի որ Վազգեն Հակոբյանի կողմից հրատարակված Անանուն ժամանակագրութունը կազմվել կամ ընդօրինակվել է Քյոմուրճյանի ժամանակագրությունից շուրջ քսան տարի հետո, 1698 թ. Կ. Պոլսում։

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ 3ԱՊՐՕ ՁԷԼԷՊԻ - Ն. Ակիրյանը եր. Քյոմուրճյանի այս ստեղծագործութունը տեսել է 1939 թ. Մյունխենում, Լյութֆիդ Ռոզենդալ գրավաճառատանը եւ նկարագրել։ Ըստ Ն. Ակիրյանի՝ երկը շարագրված է հինգ գլուխներում, չափածո է՝ (1595 երկտող). գրվել է 1672 թ.։ Երկի առաջին երեք գլուխներում պատմական հենքի վրա հյուսվում է Ապրո Ձէլէբիի հասարակական ու առեւտրական գործունեութունը, Օսմանյան կայսրության եւ Վենետիկի միջև ընթացող Կանդիայի պատերազմի պատմութունը։ Չորրորդ գլխում եր. Քյոմուրճյանը անդրադառնում է պոլսահայության հասարակական կյանքի մանրամասնութուններին, հրդեհներից կործանված քրիստոնեական եկեղեցիների վերանորոգման եւ վերակառուցման նկատմամբ կառավարության անհանդուրժող տրամադրութուններին։ Բանասիրության եւ հատկապես թարգմանական գրականության պատմության համար հետաքրքրութուն է ներկայացնում հինգերորդ գլուխը, որը ամբողջությամբ բովանդակում է եր. Քյոմուրճյանի կողմից երբայերենից թարգմանված եւ չափածո շարագրված Երեմիա Մարգարեի ողբը՝ ի հիշատակ Կրետե կղզու առման եւ եկեղեցիների ավերման ողբերգության «բովանդակ ողբս Երեմիայի մարգարէի, որ էր ըստ քառից ալֆապէտիցն Երբայեցւոց բարբառացն, որ ի խնդրոյ Ձէլէպոյն աստ ոտիւք տաղաչափեալ առ ի յիշատակութիւն սուրբ Մարգարէին եւ ի թախանձանս ականատեսութեան կղզոյն Կրիտեայ եւ վասն եկեղեցեաց աւերածոյն» [7, էջ 103]։

«Վիպասանութիւն յԱպրո Ձէլէպիի» մի օրինակ ունեցել է Վ. Թորոգո-

մյանը, մի օրինակ էլ Վենետիկի Մխիթարյան միաբան Եփրեմ վարդապետ Ապրոյանը, որը Վ. Թորգոմյանին է տրամադրել նրա Պոլսում եղած ժամանակ երկու ձեռագիր օրինակները համեմատելու համար [55, հտ. էջ 718]: Ապրոյանի գրչագիրը այժմ, հավանաբար, գտնվում է Մխիթարյանների մատենադարանում, իսկ Վ. Թորգոմյանի օրինակը, թե որ գրադարանի սեփականություն է, հայտնի չէ:

ԿՈՆԴԱԿ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ի ԿՐԵՏԷ ԿՂԶԻՈՁ - 1669 թ. Օսմանյան կայսրությունը տիրում է Կրետե կղզուն: Հայ մեծահարուստ Աբրո Չելեբին, գտնվելով Կրետեում, կարողանում է իր քսակի ուժով զենել մզկիթի փոխարկվելու դատապարտված մի եկեղեցի հայ դադութի համար եւ օծել տալ սբ. Կարապետ անունով: Աբրահամ Չելեբու եկեղեցազգասիրական արարքը եր. Քյոմուրճյանը արձանացնում է «Կոնդակ սբ. Կարապետ եկեղեցւոյ ի Կրետէ կղզւոջ» կամ «Վիպասանութիւն յառումն Կրետէ կղզւոջ» խորագրով նաեւ հայտնի հիշատակարան կոնդակ ստեղծագործությունը [7, էջ 108]:

Ն. Ակինյանը 1931 թ. տեսել է այս երկը Փարիզում եւ նկարագրել: Նրա նկարագրության համաձայն, կոնդակ-հիշատակարանը կազմված է երկու գրքերից: Առաջին գիրքը (12 ենթախորագրով) պատմական բովանդակություն ունի: Նվիրված է հայոց անցյալի ազգային իշխանությունների կործանման պատճառներին, ազգի դառնացյալ վիճակի եւ Աբրահամ Չելեբու բարի գործունեությունը, Կանդիայի պատերազմի ծագմանն ու ընթացքին, Մուհամմեդ եւ Ահմեդ Քյոփրյուլունների մեծ վեզիրության ժամանակներում թուրքերի Հունդարիա ներխուժումներին, Կրետեի գրավմանը եւ քրիստոնյա բնակչության հասած արհավիրքներին, Կանդիա քաղաքում Աբրոյի կողմից եկեղեցու գնման փաստին:

Երկրորդ գիրքը խորագրված է «Գովասանականք առ սակի կաթողիկէ եկեղեցւոյ» եւ բաղկացած է 33 դանձերից: Երկի առաջին գիրքը հիշատակվում է «Հարցման գրքում»՝ (զՄաճարաց եւ զԳանտիոյն), որպես պատմական առանձին գրքեր: Արժեքավոր աղբյուր է կայսրության 17-րդ դարի երկրորդ կեսի քաղաքական պատմության համար:

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՀՐԱԿԻԶՄԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ - «Ի թուականութեան հայկազեան տուժարի հազարերորդի հարիւրերորդի եւ յիններորդի ի չորեքտասաներորդ աւուր ամսոյ յուլիսի» (14 հուլիս, 1660թ.) Կոս-

տանդնուպոլսում Այազմա դռներից սկսած հրդեհից այրվում են Գումգափուռի հայոց սբ. Աստվածածին եկեղեցին եւ շրջապատի հինգ հազար հայկական տներ: Պոլսահայության հասած այս ողբերգութունը ծնում է ողբական երկ ստեղծելու գաղափար՝ «Հարկեցայ ի հրամանաց վեհից եւ ի խնդրոց բազմաց շարակածել ըստ ենթադրութեան կերպի զպատահեալքս ներկայի», - գրում է Ե. Քյոմուրճյանը [1, Անկիւր. Կարմիր վանուց...Ձեռ. 115; նաեւ Երուսաղեմ՝ ձեռ. 892]:

«Պատմութիւն հրակիզման Կ. Պոլսոյ» երկը Քյոմուրճյանը գրել է 1666-1674 թթ. [36, էջ 477]: Բովանդակում է ոչ միայն 1660, այլեւ 1662, 1666, 1672 թվականների Պոլսի հրդեհհանքերի պատմութիւնը:

Երկն անտիպ է: Կան երկի երեք ձեռագիր օրինակներ «Անկիւրիոյ Կարմիր վանուց ձեռագրաց» ցուցակում նկարագրված օրինակի գրիչն է Անկիւրացի Մովսես վրդ. Շիրինյանը, ժամանակն է 1700 թ. [1, Անկիւրիոյ, ձեռ 115]: Երուսաղեմի օրինակի գրիչն է Հովհաննես Երկան երեցը, ստացողը՝ Մինաս Ամղեցին, տեղը՝ Ստամբուլ, ժամանակ՝ 1675 թ. [1, ձեռ. 892]: Ն. Պողարյանի ցուցակում եւ Հ. Օշականի Քյոմուրճյանի գրական ժառանգության նվիրված հոդվածում նկարագրվում է որպես արձակ շարագրված, հաճախ կաֆաներով ընդմիջված երկ [1, ձեռ. 892; 111, էջ 103-104]: Գ. Գալեմքեարյանին հայտնի օրինակը չափածո է, բաղկացած 2850 տողերից [36, էջ 474-477; 121, էջ 691]:

«Պատմութիւն հրակիզման Կ. Պոլսոյ» խորագիրը պայմանական է: Երկի առաջաբանում այն հիշատակվում է «Ըստ անուան իւրոյ Հրակիզման յորջորջի», «Ստամպոլոյ պատմութեան» ընծայականում՝ «Կամիս զայլ դրուատ սորին՝ ընթերցիր զ Գիրքս իմ Հրակիզման», իսկ Հարցմանց գրքում՝ «Հրակիզութիւն Ստամպոլոյ» խորագրով [72, էջ 160ա, 160բ]:

Երեմիա Քյոմուրճյանը իր այս երկը ակնարկում է նաեւ «Պատմութիւն Ստամպոլոյ»-ում՝ «Որպէս զ Պատմութիւնս տեսեր 'ւ ԵՌ (5000) տունք մեր ի վայրս կիզեցան» [55, հտ. էջ 16, 74] եւ «Պատմութիւն համառօտ Դձ տարւոյ Օսմանցոց թագաւորաց»-ում՝ «Ուրոյն զգիրք մի եղէ գրեալ վասն աղէտիցն, յոր մեք դիպեալ» [62, տ.3217]:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՃԷԼԱԼԵԱՅ - Այս երկը Երեմիա Քյոմուրճյանի գրական ժառանգութիւնն ուսումնասիրողներին հայտնի չի եղել: Այն չի հանդիպում նաեւ նրա ստեղծագործութիւններն ամփոփող ցուցակներում: Քյոմուրճյանը «Պատմութիւն յաղագս ճէլախաց» երկը

գրած լինելու մասին հայտնում է միայն իր «Համառօտ պատմութիւն Դձ տարւոյ Օսմանցոց թագաւորացն» ստեղծագործութեան մեջ՝

«Տաս 'ւ երկու տարի այսպէս զասացեալ երկիրդ ապականեալ,
Պատմութեան ոճով գիրք մի վասն այսոցիկ եղէ գրեալ»

[62, էջ 167, տ. 1705-1706]

Եւ «Համառօտ պատմութիւն թագաւորացն օսմանցոց» արձակ երկում՝ «Ի սորա Սուլթան Մուհամմեդ Երրորդ - Ժ.Ա./ Ժամանակին Անատոլոյ ճէլալիքն յայտնեցան ... Վասն սոցա զգիրք մի գրեալ եմ ուրոյն պատմութեամբ լի» [1, Մատ. ձեռ. 1786, էջ 22ա, ձեռ. 10716, էջ 49]:

«Պատմութիւն յաղագս ճէլալեացը» որպէս ականատեսների վկայութիւնների ժողովածու, անշուշտ, արժեքավոր տվյալներ կարող էր մատուցել ջելալիական շարժման մասին, եթե գտնվեր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ԼԱՆԿ ԹԱՄՈՒՐԻՆ - Հիշատակվում է «Հարցմանց գրքում»՝ «զԼանկ Թամուրին» խորագրով [1, Մատ. ձեռ. 72, էջ 160ա-162ա]: Այս երկը գրելու ծրագրի մասին Երեմիա Քյումուրճյանը հայտնում է «Պատմութիւն Համառօտ Դձ տարւոյ օսմանցոց թագաւորաց»-ում՝

Թէ Տէրն կարիք եւ պահ տացէ, աղօթիւք ձեր վըստահանալ,

Սակս Թամուրին ուրոյն գիրք մի զանձան իրաց եղէց պատմեալ:

[62, էջ 81, տ. 335-336]

«Պատմութիւն յաղագս Լանկ Թամուրին» գրապահոցներում չունի գրանցում:

ՅԱՂԱԳՍ ԴԵՐԱՔՐԻՍՏՈՍԻՆ, ՈՐ ԿԷԼՏԻ ԿԷԼՏԻ ԱՍԻ ԱՐԱՐԵԱԼ ԵՒ ՇԱՐԱԴՐԵԱԼ ԵՐԵՄԻԱ ԴՊԻՐ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻՈՅ, ՈՐ ԷՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՒ ՏԵՍՕՂ ԻՐԱՅՆ ՌՃԺԵ (1115_1666) ԹԻՈՋ -

- «Հարցման գրքում» հիշատակվում է «Սուտ Քրիստոսի» անունով [1, Մատ. ձեռ. 72, էջ 160ա-160բ]: Առաջին անգամ հրատարակվել է անցյալ դարի սկզբում, Կ. Պոլսում՝ «Տետրակս այս կոչի Սաբէթայի Սեւու համբաւեալ ի Հրէից ոմն խաբեբայ Սաբէթայ անուն կամէր մոլորելի զմոլորեալսն» խորագրով [7, էջ 121; 137, էջ 629]: Երկրորդ անգամ լույս է ընծայել Հ. Քյուրտյանը ըստ իր հավաքածուի թիվ 44 ձեռագիր օրինակի, որը, ըստ նրա հավաստիացման՝ Հեղինակային գրչու-թյուն է: Խորագիր է օգտագործված երկի «Սաբէթայ անուն հրէայ ոմն

յայտնեալ» սկզբնատողը: Հ. Քյուրտյանը նկատում է նաև, որ Պոլսի հրատարակութիւններ պակասաւոր է միջին մասից՝ 6, իսկ վերջնամասից՝ 19 տուն [149, էջ 89-94]:

Հ. Քյուրտյանի ունեցած օրինակից բացի կան մի քանի ընդօրինակութիւններ [1, Մատ. ձեռ. 8780, էջ 3ա-16բ; Երուս. ձեռ. 605, էջ 14ա-24ա եւ ձեռ. 959, էջ 805-813]:

Ըստ Մատենադարանյան ձեռագրի՝ երկը բաղկացած է 125 քառյակից (500 տող), նյութը շարադրված է 8 գլուխներում: Վերջին գլխի տների առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Այս բան Երեմիայի»:

Երկը պատմում է 17-րդ դարում Օսմանյան կայսրութիւնում «Մեխա-յի» խորհրդով հրեա ժողովրդի քաղաքական ազատութեան հասնելու ծրագրի մասին: 1666 թ. Իզմիրում հայտնվում է հրեական մեսիան՝ իր ժողովրդին փրկելու թուրքական բռնութիւնից եւ հիմնելու հրեական թագաւորութիւն: Շարժումը, սակայն, դեռեւս իր կազմակերպման շրջանում դաժանորեն ճնշվում է, «ազատարարը» ձերբակալվում է եւ մահվան սարսափի ներքո հավատափոխ դառնում՝ ընդունելով Ազիզ Մուհամմեդ անունը²⁴:

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ - 1939 թ. հրատարակել է Մ. Նշանյանը ըստ հեղինակի ինքնագիր Երուսաղեմի թիվ 1893 ձեռագրի [60] «Օրագրութիւն» վերնագրով՝ հետեւելով գրչագրում Ղ. Փիրղալեմյանի, «Հեղինակ Օրագրութեանս է Երեմիա Չէլէպին որդի Տէր Մարտիրոս քահանայի» հիշատակագրութեան, մինչդեռ Եր. Քյումուրճյանը այս խորագրած է եղել «Ժամանակագիր եւ պատմութիւն» կամ «Շարակարգութիւն պատմութեանց»: «Հարցմանց գրքում» թվարկվում է «Ժամանակագիրս» վերնագրով [1, Երուս., 1893, էջ 2ա; Պող, էջ 372ա, 544ա; Հմմտ. 7, էջ 90]:

«Օրագրութիւնը» Երուսաղեմ է հանգրվանել 1872 թ. հետո Պոլսեցի գրավաճառ Հարութիւն Մարգարյանի նվիրատվութեամբ՝ «Իբր մահարձան ի գրատուն սրբոյ Յակոբայ վանուց Երուսաղէմ ի յիշատակ գրավաճառ Մարգարի, որ հանգաւ ի Տէր 1847 սեպ. Պոլիս» [1, Երուս. ձեռ. 1893, էջ 2ա; Պող. էջ 372, 544]: Մինչ այդ «Օրագրութիւնը» գտնվելիս է եղել Պոլսում, Սամաթիայի Սահակյան թանգարանում: 1855 թ. Պոլսում «Աստղիկ Արեւելեան» օրացույցը «Ազգային Յիշատակարան» խորագրի տակ հրատարակում է «Օրագրութիւն»-ից Սաի Թորոս կաթողիկոսի մահվան եւ թաղման հատվածը [60, էջ 240-241; Հմմտ. 24, էջ 75-78]:

«Օրագրութիւնը» գրառումները սկսում է 1648 թ. հունիսի 11-ին եւ ավարտում 1662 թ. նոյեմբերի 11-ին՝ բովանդակելով տասնչորս ու կես տարիների եղելութունները: Միայն ոչ մի արձանագրութիւն չկա 1651 թվականից²⁵, իսկ շատ ընդհանուր արձանագրվել են ավելի կարեւոր քաղաքական ու բնագրական իրադարձութիւնները, որոնք եւ ամենայն հավանականութեամբ խմբագրվել են հետագայում: Օրագրութիւնում ստեղծագործական ձեւին հարազատ գրառումները կատարվել են միայն 1652 թ. սկսյալ: Այնուամենայնիվ մինչեւ 1656 թ. ամենօրյա բնույթ չունեն նրա գրառումները: Հաճախ նշումները կատարված են հետագայում լրացնելու միտումով. «Աստ գրեա Զ-շի պահոցն գալուստն Մարտիրոս վարդապետի եւ Դ-շի Աստուածածնին գնալն ի դէմ վէզիրին առ ի Պէլլրատ գանգատ Յունաց վասն Երուսաղէմի» [60, էջ 295], «Աստ գրէ գէլումն Հաբելի յերրորդ աւուրն գալոյ Իսմայիլին» [60, էջ 295], «Աստ գրեա զգնալն Աստուածատուր վարդապետին ի գիւղս եւ յիգմիր» [60, էջ 339], «Աստ պատմէ զխաղ եւ զճիրիտ արքային որ անց» [60, էջ 350-351]: Այս արտահայտութիւնները հրատարակչին բերել են այն մտքին, որ «Օրագրութիւնը» ծրագրված աշխատանք է եղել, որը հետագայում հենք էր ծառայելու հատկապէս «նախագաղափար կամ աղբիւր հեղինակի պատմական «Տարեգրութիւն» մեծածավալ երկին» [119, «Շողակաթ էջ 52]:

Իրականում «Օրագրութիւնը» ոչ միայն «Տարեգրութիւն...» ստեղծագործութեան հենքն է, այլեւ՝ հեղինակի գրեթե բոլոր պատմական երկերի սկզբնագրերից մեկը:

ՏԱՐԵԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ - Հիշատակում է Մ. Չամչյանը «Գրեաց եւ զՊատմութիւն անցից իւրոյ ժամանակի՝ ստուգութեամբ եւ հաւատարմութեամբ, յորմէ առեալ եւ մեք աւանդեցաք ինչ ինչ ի ԼԲ/32/ գլխոյ մինչեւ ցայսօր» [սորագրով [121, էջ 723]²⁶:

«Տարեգրութիւնը» անտիպ է, հեղինակային գիրը գտնվում է Վենետիկի մխիթարյանների մատենադարանում, ըստ Երեմյանի եւ Վ. Թորնտիկի մխիթարյանների մատենադարանում, ըստ Երեմյանի եւ Վ. Թորնտիկի՝ թիվ 509-ի տակ, բաղկացած «միջադիր 255 թղթերէ» [45; 55, էջ 186, հմտ. 7, էջ 94], իսկ ըստ Հ. Անդրեասյանի՝ (Չեռագրի վերաբերյալ Չաքրյանից ստացած տեղեկութեան համաձայն) թիվ 476, բաղկացած 478 թերթերից, նույնպէս հեղինակային գիր [221, էջ XX]: Հետեւաբար ենթադրելի է, որ Վենետիկում գոյութիւն ունի երկու հեղինակային

օրինակ, կամ երկու Հաղորդումների միջև ընկած 50 տարվա ընթացքում միեւնույն ձեռագիրը ենթարկվել է նոր համարակալման եւ էջադրման:

«Տարեգրութիւնը» բովանդակոււմ է շուրջ 40 տարվա (1648-1690թթ.) ժամանակաշրջանի պատմութիւնն եւ շարադրված է երեք թեմատիկ բաժիններով [45]: Արժեքավոր նյութեր է հաղորդում Օսմանյան կայսրութեան արտաքին եւ ներքին հարաբերութիւնների վերաբերյալ, առանձնապէս Արեւմտահայութեան վիճակի եւ Պոլսահայութեան հասարակական կյանքի մասին: Եւ պատահական չէ, որ հայ պատմագրութիւնը եւ բանասիրութիւնը աշխատել են օգտագործել «Տարեգրութեան» նյութերը:

«Տարեգրական պատմութիւն»ը, ինչպէս «Օրագրութիւն»ը մեծ ընդհանրութիւններ ունի Հեղինակի բոլոր ստեղծագործութիւնների հետ եւ, այս տեսակետից, այն Հեղինակի պատմական երկերի, ակնառես շարադրված հատվածների սինթեզն է: Եւ որպէս այդպիսին, Հ. Օշականը նկատում է, որ «Տարեգրական պատմութիւն»ը միայն կարող է ամբողջական պատասխան տալ Երեմիա Քյոմուրճյանի աշխարհայացքի եւ պատմաբանի բնութագրմանը [111, Սիոն, 1940, էջ 71]:

ԵՐԵՄԻԱՅԷ ԱՌ ԵՂԻԱԶԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ Ի ՊՐՈՒՍԱ (Այստեիկ են անցք նարդենիս որպէս թէ ընծայս Ձեզ եւ էլլէնճի ի խրախուժիւն որ է ահվալի ալէմ)

- Հրատարակել է Մ. Նշանյանը՝ «Պատմական բանք իւրոյ ժամանակին» խորագրով [60, էջ 412-429]: Հեղինակային գիրը պահվում է Երուսաղեմի մատենադարանում [1, Երուս., Ձեռ. 1058, էջ 44ա-57ա]: Ձեռագրում նամակը ներկայացված է սկսվածքով: Եր. Քյոմուրճյանը նամակը գրել է Եղիազար Այնթապցուն, 1682 թ. փետրվարին: Նախապէս Մ. Նշանյանը Վ. Թորգոմյանին եւ Ն. Ակինյանին գրած իր նամակներում հայտնել է այն կարծիքը, որ Եղիազար Այնթապցին նամակը ստացել է էջմիածնում՝ «Այժմ վստահաբար կրնամ ըսել, թէ «Պատմական բանք իւրոյ ժամանակինը» Երեմիա Քյոմուրճյանի 1682 թ. էջմիածին գրած ընդարձակ նամակն է» [55, էջ 734/735; 7, 94]: Սակայն հետագայում ճշտում է, որ Եղիազարը այն ստացել է Պրուսայում, ուր գտնվել է 1681թ. հոկտեմբերից մինչև 1682 թ. մարտի 1-ը [60, էջ 4, 412; Հմմտ. 20, էջ 263, 269]:

Հ. Սահակյանը, ուշադրութիւն չզարձնելով այն փաստի վրա, որ

«Պատմութիւն բանք իւրոյ ժամանակին» խորագիրը պայմանական է, թյուրիմացարար Տ. Պալյանի «Պատմութիւն մ'իւր ժամանակին անցքերուն վերաբերեալ» եւ Գ. Մրմրյանի «Ստուգութեամբ իւր ժամանակի պատմութիւն» խորագրով հիշատակված գործը նույնացրել է այս նամակի հետ՝ նշելով նաեւ «Այս աշխատութեան մասին առաջին անգամ ակնարկում է Պալյանը», «երկրորդ անգամ հիշատակել է Գ. Մրմրյանը» [108, էջ 5-11; 125, էջ 611-612; 134, 69]:

Հ. Սահակյանը չի նկատել, որ Մ. Չամչյանը, Մ. Թեոփիլյանցը, Ս. Սոմալյանը, Տ. Պալյանը, Գ. Մրմրյանը «Պատմութիւն անցից իւրոյ ժամանակի ստուգութեամբ եւ հաւատարմութեամբ», «Պատմութիւն աւուրց իւրոյ հաւատարիմ բանիւք», «Պատմութիւն իւր ժամանակաշրջանի վերաբերեալ» խորագրերով ակնարկում են միեւնոյն ստեղծագործութիւնը՝ «Տարեգրական պատմութիւնը», որից Գ. Մրմրյանի վկայութեամբ իսկ «Չամչեան շատ բան է վերցրել», մի բան, որ Մ. Չամչյանը եւս վկայում է՝ «յորմէ առեալ եւ մեր աւանդեցաք ինչ ինչ ի ԻԲ (32) գլխոյ մինչեւ ցայսր» [121, էջ 723, 75, էջ 240-241; 188, 159]:

Ն. Ակինյանն էլ համոզված է եղել, որ Տ. Պալյանի ակնարկած երկը կապ չունի 1682 թ. գրված նամակի հետ՝ «Ուրիշ պատմական գրուածք մ'ալ կը յիշէ Տ. Պալեան «Պատմութիւն մ'իւր ժամանակի անցքերուն վերաբերեալ», որի ձեռագիր օրինակը տեսել է Տ. Պալյանը 1885 թ. «Ի Յոպպէ Գերմանիոյ Հիւպատոս Ս. Մուրատեանի քով» [121, էջ 723]:

Երեմիա Քյոմուրճյանի այս նամակում քսան հակիրճ հաղորդումներով Եզրագար Այնթապցուն տեղեկացնում է պոլսահայութեան շրջանում տեղի ունեցած իրադարձութիւնների, Օսմանյան կառավարութեան ներքին որոշումների կայսրութեան արտաքին քաղաքականութեան մեջ սպասվող փոփոխութիւնների մասին:

ՀԱՄԱՌՕՏ ՍՏՈՐՈՂՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍՈՅ ՆԵՂՈՒՑԻ - Տ. Պալյանը հավաստիացնում է, որ սա աշխարհիկ ոճով չափածո ստեղծագործութիւն է եղել, ուր Եր. Քյոմուրճյանը «նեղուցի երեւելի գեղերուն այժմեան անուններուն հետ նաեւ գրած է գլեր հին անուններն ալ», նույնիսկ «իտալերէն ալ գրած է կ'սուի» [127, 15 612]: Բայց այդ կարծիքը մնում է ենթադրութիւն միայն: Մեզ թվում է, «Համառօտ ստորգութիւն Կ. Պոլսոյ նեղուցի» երկը Կոստանդնուպոլսի նշանավոր աղբյուրների վերաբերյալ ծրագրած այն ստեղծագործութիւնն է, որի մասին Երեմիա

Քյոմուլերճյանը ակնարկում է «Պատմութիւն Ստամպոլոյ» մեջ՝

«Իբր հարիւր աղբերակօք ի սահմանս որ պիտոյացան.

Ամէն մի գանուն ստացեալ զորս թողի գրել յայլ մատեան»

[55, էջ 51; էջ 43, տ. 15-16]:

Երեմիա Քյոմուլերճյանը այս երկը գրած պետք է լինի 1685 թ. հետո, որովհետեւ «Պատմութիւն Ստամպոլոյ»-ն նա ավարտել է 1684 թ.:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՏԱՄՊՈԼՈՅ - Հրատարակի է Վ. Թորգոմյանը ըստ այն օրինակի, որի գրիչը հեղինակի եղբայրն է՝ Կոմիտաս քահանան: Կոմիտասը, ինչպես վկայում է նրա հիշատակարանը, երկը ընդօրինակել է Կ. Պոլսում, 1697 թ. [55, տ. 121-122]: Երկու ընդօրինակութուն կա նաեւ Մատենադարանում [1, Մատ. Ձեռ. 1345, 1675]: Հեղինակային գիրը պահվում է Երուսաղեմում [1, Երուս. ձեռ. 1030], Հավանաբար 18-րդ դարի հենց սկզբից: «Ի թուին հայոց ազգիս մերոյ Արամեան հազար հարիւր եւ յիսուն ամին (1701)» Կոմիտաս քահանան գտնվել է Երուսաղեմում [1, Մատ. ձեռ. 1786, էջ 58] եւ իր ձեռքում ունենալով ընդօրինակութունը, Քյոմուլերճյանի ինքնագիրը նվիրաբերած լինի Երուսաղեմին:

Մատենադարանի ձեռ. 1345-ը (գրիչ Մինաս երեց, տեղ՝ Անդրիանապոլիս) ընդօրինակվել է 1697 թ. Կ. Պոլսի հայոց Եփրեմ պատրիարքի Հանձնարարությամբ: Նա այդ առթիվ հիշատակարանում գրում է՝ «Ջայս կարմիր խորագիրս է վասն յառաջակայ ոտանաւորիս, զոր ը Ստամբոլցի Քեօմիլըճի օղլի Երեմիայ Չէլէպին, որ յաղագս հիմնարկութեան եւ վասն շինութեան Բուզանդիոյ եւ Կոստանդնուպոլսոյ տաղաչափեալ է ... Ջոր եւ ես նարդենիս Կոստանդնուպոլսոյ պատրիարք երաժիշտ Եփրեմ վարդապետս ի ՌձևՉ (1146-1697) թուականիս հայոց գրել ետու եւ եղի ի մէջ զայս...» [1, Մատ. ձեռ. 1345, էջ 320ա]:

Մատենադարանի թիվ 1675 ձեռագրի ընդօրինակութունը իրականացրել է գրիչ Գալիպոլցի Խաչկոն, 1732 թ. Գալիպոլիում՝ Աբրահամ Կրետացու խնդրանքով [1, Մատ. ձեռ. 1675, էջ 274ա]:

Անդրադառնալով «Պատմութիւն Ստամպոլոյ» երկի ձեռագիր օրինակներին եւ հրատարակությանը՝ պատասխանի է կարոտում այն հարցը, թե ինչ հարաբերության մեջ են գրանք իրար հետ: Համեմատությունից պարզվում է, որ Մատենադարանի 1675 ձեռագիր օրինակի եւ հրատարակվածի միջեւ, թեեւ որոշ տարբերություններ

առկայության, որոնք առաջացել են հրատարակչի կողմից բնագրի ճշգրտումից, ծավալային տարբերություն չկա: Որպես հաստատումն այս եզրակացություն, բավական է նկատել, որ հրատարակություն պակասավոր տողերը նույնպես պակասում են 1675 ձեռագիր օրինակում²⁷:

Մատենադարանի թիվ 1345 ձեռագիր օրինակը ամբողջական չէ թիվ 1675 ձեռագրի եւ հրատարակվածի համեմատությամբ: Այս ընդօրինակությունից պակասում են առանձին տողեր, քառյակներ, ընդարձակ հատվածներ, այնպիսի պատմական իրադարձությունների նկարագրություններ, որոնք տեղի են ունեցել 1680-ականներին եւ բնագիր են մուծվել 1681 թ. հետո, պատմության վերամշակման ժամանակ: Այսպես, չկան Էդիրնեի ճանապարհին 1681-1682 թ. ձմռանը որսորդության դուրս եկած Մուհամմեդ 4-րդի համար առատ եւ բարեհաջող որս ապահովելու համար որսը դեպի որսաշրջան քշելու նպատակով շրջակա բնակավայրերից կանչված բնակիչներից 5 հազար հոգու ցրտահարվելու, սուլթանի պալատում լողվազանի մեջ նետված, լողալ չիմացող գեղեցկուհիների տառապանքներից զվարճացող սուլթանի անմարդկային արարքների նկարագրությունները²⁸:

«Պատմութիւն Ստամպոլոյ»ն հրատարակվել է նաև թուրքերեն (Թարգմանիչ պոլսահայ Հ. Անդրեասյան) [221]: Բնագիրը քննվում եւ արժեքավորվում է Երեմիա Քյոմուրճյանին ժամանակակից եվրոպական եւ թուրքական աղբյուրների նյութերով: Թարգմանությունը կատարված է արձակ, թուրքերենի եւ միջավայրի ընձեռած հնարավորությունների սահմաններում, սակայն այնուամենայնիվ, տալիս է մի քանի բացատրելի դիտողությունների առիթ:

ա. «Բիւզանդ», «Կոստանդնուպօլիս», «Նիկոմէդիա», «Պոնտոս» եւ այլ անունների փոխարեն օգտագործված են թուրքերեն ձեւերը:

բ. Թուրքերին բնութագրող «Թշնամիք այսք ամբարտաւան», «Խուժաղուժ տաճիկք» եւ նման արտահայտությունները կամ բոլորովին չեն թարգմանվել, կամ փոխարինվել են «մուսուլմաններ» ընդհանուր անունով²⁹:

«Պատմութիւն Ստամպոլոյ» երկը շարադրված է չափածո (հրատարակվածը 2063 տող է, իսկ նո. 1345 ձեռ. օրինակը՝ 1953 տող), ինչպես նշում է Երեմիա Քյոմուրճյանը հիշատակարանում, ինչպես նաև «Ես եմ կորուսեալ ոչխարհն» սկսվածքով, «Ողբ եւ մաղթանք ի ինչապուր Կեչառեցոյ ասացեալ» կաֆայի դուռով (չափով), 15 վան-

կանի տղով՝ երկու 2-5 եւ 3-5 վանկանի հատածներով [26]:

Երեմիա Քյոմուրճյանը իր այս երկը սկսել է գրել 1661 թ. եւ մեկուկես տասնամյակ ընդմիջումից հետո վերսկսել է շարադրել 1681 թ. եւ ավարտել 1684 թ. «Հայ թուականօք դա ՋինՉ է (1133 = 1684) Երեմեան յանգեալ զիւր ընծայն» [55, տ. 3, 7-8, 158]:

Երեմիա Քյոմուրճյանը նախապես գրել է ներառյալ մինչեւ 5-րդ դլուխը, 1681 թ. 6-8-րդ դլուխները: Այսպես ենք ենթադրում, որովհետեւ 6-րդ գլխում հաղորդվում են պատմական այնպիսի իրադարձություններ, որոնք տեղի են ունեցել 1665, 1669, 1681 թվականներին եւ հետո (նկատի ունենք Եր. Քյոմուրճյանի այցելությունը Կոնիայի մեվլեվիների հոգեւոր կենտրոն, որը նա կատարել է 1665 թ. Երուսաղեմից վերադարձին, Կանդիայի պատերազմի ավարտի մասին հաղորդումը (1669) եւ Մուհամմեդ 4-րդի 1681 թ. ձմռանը էդիրնեի ճանապարհին հայտնի որսորդությունն հիարագրությունը):

Երկի շարադրման ընդմիջվելը կարելի է բացատրել բազմազբաղություն կամ ժամանակակիցների՝ աշխատության նկատմամբ ցուցաբերած քամահար վերաբերմունքով, որը կարող էր ընկճել Քյոմուրճյանին: Նա հայտնում է այդ առիթով իր դժգոհությունը.

«Տեսողք զայս զիս ծաղր առնեն՝ թէ ընդէր կաս ի յաշխատման,
Ջժանօթս մեր մեզ պատմես, տխմարից չունիմ պատասխան»

[55, 1-ին գլուխ, տ. 13-14]:

Ժամանակակիցները Եր. Քյոմուրճյանի շուրջ իհարկես ստեղծել են մտահոգող վիճակներ: Համառոտ գրելը համարել են իմացություն պահատություն, ընդարձակ շարադրելը՝ «զէվզէկութիւն» (չատախոսություն): Նրան մխիթարել է միայն այն, որ «մեծ ոմանց այս պատահեալ, ինձ նոցա մազ մին չերեւան» [55, էջ 109, տ149-152]³⁰:

Երկի լեզուն գրաբար է, բայց աշխարհաբարի (ժողովրդական լեզվի) հարուստ բառաձեւումներով, որի համար հեղինակը ներողություն է խնդրում՝ «Բայց աշխարհաբար գրելոյս զմեղադրանսդ լիցիս արգիլման», առատ թուրքերեն բառաչերտով (տե՛ս էջ 56 տ. 14; էջ 67 տ. 72, էջ 109 տ. 267-268, էջ 110 տ. 289-290):

Երեմիա Քյոմուրճյանը իր այս երկը ընծայել է ժամանակի նշանավոր վարդապետ Բաղեչի Ամրդոլու վանքի վանահայր Վարդան Բաղիչեցուն՝ «Մեծարգոյ եւ քաջ բարունապետին, տեսառն Վարդանայ վարդապետին ընծայեցեալ յԵրեմիայէ Կոստանդնուպոլսեցւոյ Քէօմիւրճեան»: Նա հու-

շած պետք է լինի «Պատմութիւն Ստամպոլոյ»ն գրելու միտքը՝ «բառ սաստիկ խնդրոյն յիշատակ բարունայ Վարդանայ ընծայն» [1. Երուս. ձեռ.1030, էջ 2բ; Մատ. ձեռ. 1345, էջ 320բ]:

Երեմիա Քյոմուրճյանը երկուսն բազմիցս դիմում է Վարդան Բաղի-
շեցուն՝ «Ռուհըմ վարդապետ խնդրեմ ձանձրութիւն քեզ մի դիպենան
(էջ 42, տող 1). «Ով Տէր վարդապետ իմ ճան», «Տէր վարդապետ հոգ-
ւոց մին՝ աւասցես սոցուն փրկութեան» (էջ 53, տ. 198), «Բաւ է
խնդրեմ վարդապետ շաղփաղփել ընդ այլս զայս իմ բան» (էջ 56, տ 1),
«Գոհացիր Տէր վարդապետ ըզբարեաց տուողէն յարածամ» (էջ 56, տ.
15), «Որպէս յառաջն յիշեցի՝ ծանիցես հայր իմ պատուական (էջ 64,
տ.12), «Վարդապետ կանգնես յոտին հանգուցեալ հոգւոցն ի մաղթան»
(79, տ. 79-80), «Օրհնես վարդապետ ըզսեղան զնէվալէքս, որ մեզ պատ-
րաստ կան» (էջ 91,տ.510), «Նախ սաղի յիս խմիր իմ վարդապետիս
ողջութեան» (էջ 92, տ.512), «Գոհացիր Տէր վարդապետ այժմ եւ միշտ
զտեսանէ փառական» (էջ 92, տ. 218), «Մի ձանձրացիս ի պատմելս
վարդապետ դու իմ սիրական» (էջ 94, տ. 1) եւ վերջապես համեստորեն
խնդրում է նրան լինել ներողամիտ, չհանդիմանել թերությունների
համար, որոնք կարող են լինել հոգածության, անտեղյակության կամ
մոլորության արդյունք [55. էջ 118, տ. 125-130]:

«Պատմութիւն Ստամպոլոյ» երկը բաղկացած է 8 գլուխներից: Նա-
խարանում տրվում է գլուխների բովանդակութիւնը եւ յուրաքանչյուր
գլխի վերաբերյալ հատվածը բերվում է նաեւ որպես առանձին գլուխների
ենթախորագիր³¹:

Ե. Քյոմուրճյանը, ուղեկից ունենալով իր ընթերցող Վարդան վարդա-
պետին, քաղաքի հիմնադրման պատմութիւնն անելուց հետո, քաղաքին
ծանոթացնելու նպատակով սկսում է Ստամբուլի հարավ-արեւմտյան
սահմաններից, Մարմարա ծովի հյուսիսային ափով ճանապարհորդել
դեպի արեւելք՝ շրջանցելով հարավ արեւելքից քաղաքը, Ոսկեղջյուրի
արեւմտյան ափով բարձրանալով դեպի Այվանսարայ եւ թեքվելով
հարավ արեւմուտք, հասնում է Յոթնաշտարակ բերդը՝ նկարագրելով
Պոլսի 26 դռների ցամաքային եւ ծովամերձ շրջանները (գլուխ 1-4)³²:

Վերադառնալով Այվանսարայ, Ոսկեղջյուրի արեւմտյան ափով շա-
րունակում է իր ուղեւորութիւնը դեպի հյուսիս արեւելք, անցնում
է էյուր սուլթանի հուշարձանը եւ Քյաղըտ խանէյով (5-րդ գլուխ)
իջնում Գալաթիա՝ ծանոթացնելով ծովափնյա 9 դռներին՝ (Ազատ,

Քիւրքէլի, Եաղ դափան, Պալըք պազար, Գարաքէօյ, Գուրչունլի մաղազա, Մոււ խանէ, Էկրի, Քիրիէ դափի դարբաններին): Այնուհետեւ Բոսֆորի եվրոպական եզերքով ուղեւորվում է դեպի Սեւ ծով՝ այցելելով (Չափուշպաշի, Սալի փազար, Ֆրնաքլի, Պէքլիկ պօստան, Պէշիկթաշ, Օրթաքէօյ, Գուռի չէշմէ, Առնաւուտ քէօյ, Հասան դալֆա, Պէպէկ պաղչէսի, Պէնկլիկ զեղն, Ուռումէլի հիսար, Հիսար քիրէզի, Պալտա օղլի լիմանի, Եէնի քէօյ, Տաուպիէ, Քէֆէլի քէօյ, Քըրքաղաւ, Պէօյիւք տէրէ, Մալրօմօլօզ, Գարաթաշլար, Ֆէնեթ) վայրերը: Հասնելով Սեւ ծով՝ Բոսֆորի Անատոլիական եզերքով վերադառնում է՝ հանդիպելով (Գալագ, Թոքաթ պաղչէ, Հանչէրլի սուլթան, Ինճիրլի քէօյ, Ճըպըքլի պաղճա, Գանլիճէ, Եօնդադատէ եալի, Հիսար Անատօլի, Գանտլիլի պաղճա, Վանի քէօյ, Գուլէ պաղճա, Փափազ պաղճէսի, Չէնզէր քէօյ, Ստալրոս, Կեօհէր Հասան սուլթան, Ղուզդունճիւք գիւղ, Գայա սուլթան պաղչա, Իւսկուտար, Խանդատէ պաղճէսի, Էօքիւղ լիման, Հիւնքեար իսկէլէ, Հայտար փաշա, Գատը քէօյ, Ֆէնէր) բնակավայրերը եւ Մարմարայի մի քանի հայտնի կղզիներ (7-րդ գլուխ): Եւ ընդհանրացնող վերջաբանով (8-րդ գլուխ) ավարտում է պատմութիւնը:

Երեմիա Քյոմուրճյանը առանձնահատուկ մանրամասնութեամբ է նկարագրում պատմական Կ. Պոլսի – Ստամբուլ՝ իր բնակավայրերի բնութեամբ, վարչական ու տնտեսական դերով, աղաբանակչութեան կազմով, նրանց զբաղեցրած ոլորտներով, պատմական, բյուզանդական հուշարձաններով, եկեղեցիներով, մզկիթներով, սրբատեղիներով, գերեզմանոցներով, հուշաղբյուրներով, պալատներով, զբոսավայրերով, շուկաներով: Այս բոլորը նա հյուսում է պատմական հենքի վրա:

«Պատմութիւն Ստամպոլոյ» գործը ներկայանում է որպէս հեղինակի ժամանակի կայսրութեան ներքին եւ արտաքին քաղաքական կյանքի, Պոլսի տնտեսական եւ առեւտրական նշանակութեան, Օսմանյան իշխանութեան վարչակառավարման ձեւերի ու մեթոդների, մայրաքաղաքի ոչ մուսուլման համայնքների ազգային կյանքի բովանդակութիւնը պատկերավոր ներկայացնող մի արժեքավոր, դնահատելի սկզբնաղբյուրային շտեմարան:

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ԹԱԳԱՒՈՐԱՅ ՕՍՄԱՆՅՈՑ - Անտիպ է: Հեղինակային զիրը գտնվում է Վենետիկում [ձեռ. 910], վեց ընդօրինակութիւններից երկուսը՝ Մատենադարանում [1. Մատ. ձեռ. 1786,

10716], երեքը՝ Երուսաղեմում [1. ձև. 1176, 1329, 3167]³³ եւ մեկը՝ Վիեննայում [1. ձև. 786]:

Ժամանակագրական առումով ամենավաղ ընդօրինակությունը Մատենադարանի թիվ 1786 գրչագիրն է: Այն ընդօրինակել է Ստեփանոս Դաշտեցին 1704 թ. «Ահա տեսանի եւ այժմ, որ է թուական փրկչին 1704, զոր եւ պատմութիւն գաղափարէի» [1. Մատ. ձև. 1786, էջ 21ա] «ի հեղինակէ ձեռացազրի Քէօմիւրճի օղլու, որ ասի յոյժ հանճարեղ իմաստուն եւ բան ի բուն եւ հոմերոսականաց ոճից եւ զարդարութեանց վարժ ի մէջ Հայոց» [1. Մատ. ձև. 1786, էջ 12ա, 21ա]:

Ստեփանոս Դաշտեցին իր խմբագրական աշխատանքի մասին հայտնում է եւ պատմության վերջում՝ «Մինչ ցաստ Երեմիա Ձէլէպուն գրեալ եւ վճարեալ էր, եւ մէք ըստ մեր կարոյն մերոյ գեղեցկացուցաք զպարագրութիւնս եւ ըստ քերթողութեան տառից եւ զոյզն ինչ վայելչացուցաք որպէս եւ կարէք տեսանել ընդ հեղինակին զփորձ առնուլ» [1. Մատ. ձև. 1786, էջ 36բ]: Այս հիշատակության կից, ձախ լուսանցքում ժողովածույի գրիչ Մարտիրոս Դի Առաքելը վկայում է, որ «այս գեղեցկացնողն Դաշտեցի ամենահանճար պարոն Ստեփանոսն է» [1. Մատ. ձև. 1786, 36բ]:

Ստեփանոս Դաշտեցին «Պատմութիւնը» խմբագրելուց բացի առիթներով հավելել է իր եզրակացությունները՝ դրանք առնելով փակագծերի մեջ: Այս լրացումները նկատի ունենալով, հավանաբար, բանասիրութեան մեջ ենթադրվել է, որ Դաշտեցու կողմից է նաեւ Երեմիա Քյոմուրճյանի պատմության վերջում, 1699 թ. Օսմանյան կայսրության եւ եւրոպական դաշնակից երկրներից՝ Ավստրիայի, Վենետիկի, Լեհաստանի միջեւ կնքված Կարլովիցի պայմանագրի վերաբերյալ հատվածը, որից, ձեռագրի էջերի կորստյան պատճառով, մի մասն է միայն պահպանվել: Սակայն այդ հատվածին հանդիպում ենք Մատենադարանի 10716 եւ 1329 (ԴԺ) ձեռագիրների պատմության օրինակներում, որոնք նույնպես Քյոմուրճյանի ինքնագրից ընդօրինակումներ են: Այս կապակցությամբ մեր մտորումները թողնում ենք գալիք մեր ծրագրերին:

Պատմության երկրորդ ընդօրինակությունը (1, Մատ. ձև. 10716) կատարվել է Կ. Պոլսում, 1771 թ. Սարգիս դպիր Կոստանդնուպոլսեցու ձեռքով, որը այդ մասին թողել է հետեւյալ հիշատակագրությունը՝ «Համառօտակի ժողովեալ եւ արտահանեալ ի լիակատար պատմութեան նորին զգլխաւոր զրույցս եւ զգործս ծաղկաքաղ արարեալ յումմանէ

բանասիրէ վասն զբօսնելոյ ազգիս մերոյ: Եւ հասնալ ի ԻԲ (22)-երորդ թագաւորն Մուստաֆա Երկրորդ եւ այն եւ ոչ լրացեալ պատմութեամբ, եւ մեք իբր թե լրացուցաք եւ իսկ յինքնէն նոյն պատմութենէն: Եւ այժմ յամի տեսուն 1771 եւ ի մերս հաշուի ՌՄԻ (1220-1771) յամեսանն յունվարի գաղափարեալ եղեւ ի յանսխալ օրինակէ, բայց յոյժ հնացեալ դրքէ կարի շրջահայեաց խուզմամբ եւ խիստ անձկութեամբ, վասն գոյոյ օրինակին շղագրիւ եւ բազում տեղիս խանգարեալ գոլով, ի Սարգիս դպրէ Կոստանդնուպօլսեցոյ չնչին պաշտօնէի սրբոյն Յակոբայ Մծրենցոյ Հայրապետին մանկատան, շեշտակի գրմամբ եւ այն շղագրիւ» [1, Մատ. Զեռ. 10716, էջ՝ Տիտղոսագիր]:

Սարգիս գրիչ-հեղինակը ընդօրինակութեան փաստին մեկ անգամ էլ անդրադարձել է, երբ վերջացրել է աշխատանքը՝ լուսանցքում՝ «Մինչ աստ թարգմանողին է» [1, Մատ. 10716, էջ 79, 1329, էջ 49]: Անհավանական է թվում, սակայն, որ Սարգիս գրչին հայտնի չի եղել ընդօրինակվող երկի հեղինակը, բայց եւ այնպես չի նշել:

Եւ Ստեփանոս Դաշտեցին եւ գրիչը խմբագրել են, ամենայն հավանականութեամբ, Քյոմուրճյանի ինքնագիրը: Ս. Դաշտեցուն անհրաժեշտ է եղել «գեղեցկացնել», «վայելչագրել» այն, իսկ Սարգիս գրչին՝ «կարի շրջահայեաց խուզմամբ եւ խիստ անձկութեամբ» ընդօրինակել «բազում տեղիս խանգարեալ եւ աւերեալ», «յոյժ հնացեալ գիրքը» [1. Մատ. ձեռ. 1786, էջ 36բ; 10716, էջ Տիտղոսագիր]:

Երկու խմբագրութիւններն ի տարբերութիւնը (չանտեսելով նաեւ տարբերութեանները) միայն նրանում է, որ 10716 ձեռագիր օրինակը ունի սուլթանների անվանն անմիջապես հաջորդող ժամանակագրական կանոնավոր հատվածներ՝ սուլթանի ծննդյան, գահակալութեան, իշխանութեան եւ մահվան թվական տվյալներ, որոնք ենթադրելի է, որ Սարգիս գրիչ-հեղինակի հավելումներն են բնագիր:

Դաշտեցու եւ Սարգիս Կոստանդնուպօլսեցու խմբագրած օրինակների համաձայն՝ «Համառօտ պատմութիւն թագաւորաց օսմանցոցը» ավարտվում է 1695 թ. հուլիս ամսվա իրադարձութիւնների նկարագրութեամբ: 10716 ձեռագիր օրինակի գրիչ Սարգիսը, արտագրելով «Պատմութիւնը» շարունակել է եւ հասցրել մինչեւ 19-րդ դարի սկիզբը:

Երուսաղեմի թիվ 1329 ձեռագրի «Համառօտ պատմութիւնը...»³¹ ընդօրինակութիւնն է Մատենադարանի այժմյան 10716 ձեռագրի: Անհայտ գրիչը պահպանել է Սարգիս գրչի 1771 թ. վեր բերված հիշատակութիւնը,

բայց առանց «ի Սարգիս դպրէ Կոստանդնուպօլսեցւոյ չնչին պաշտօնէի սրբոյն Յակոբայ Մծնեցւոյ Հայրապետի մանկատան, շեշտակի գրութեամբ եւ այն շղագրիւ» վկայութեան [1, Մատ. ձեռ. 1329, էջ 1; Հմմտ. ձեռ. 10716, էջ Տիտղոսագիր]: Երկու բնագրերն էլ բառացի նույն են: Ի դեպ թիվ 10716 ձեռագրի պատմութեան սուլթանների անվան Հաջորդող ժամանակագրական Հատվածների լուսանցքային մասերում տեղադրված լրացումները կամ ճշգրտումները Համապատասխանում են Երուսաղեմի այս օրինակի ժամանակագրական նույն Հատվածների բնագրային թվական տվյալներին:


Թիվ 1329 ձեռագիրը նկարագրող Ն. Պողարյանը Պատմութեան այս ընդօրինակութեան ժամանակը նշում է 1771 թ.՝ նկատի ունենալով 1771 թ. Հիշատակագրութեանը [1, Երուս., ձեռ. 1329]: Այս տարեթիվը սրբագրելի է: Երուսաղեմի ձեռագրի «Պատմութիւնը» ավարտվում է 1781 թ.՝ «Ի ՌՄԼ (1230-1781) յունվարի ԺԶ (16) 1195 սէֆէրի 2, յաւուր շաբաթու լուաք ծնանիլ թագաւորիս դուստր մի Մէլիքշահ սուլթան» [1, Մատ. ձեռ., 1329, էջ 185; Հմմտ. Մատ. ձեռ. 10716, էջ 119]: Այս թվականն էլ պետք է Համարել թիվ 1329 ձեռագրի գրչութեան ավարտի ժամանակը:

Երուսաղեմի թիվ 3167 ձեռագրի «Համառօտ պատմութիւն թագաւորաց Օսմանցոցը» ընդօրինակվել է 1783 թ.: Գրիչը դադարաւոր օրինակի մասին Հայտնում է Հետեւյալը. «Յայսմ Պատմագրութեանս թուական եւ Հիճրէթին, այսինքն սէնէն Տաճկաց, զոր լատինք Հիճրայ ասեն, դին ի կարգս բանից, իսկ թուականն Հայոց դին լուսանցն, թուական փրկչին դին Հռոմայեցւոց թուագրով, Տաճկացն՝ իւրեանց թուագրով կամ բախամով, եւ Հայոց՝ տառիւք Հայոց թուին» [1, Երուս., ձեռ. 3167, էջ 4; Ն. Պող. Հտ. 9, էջ 436], ինչպես թիվ 10716 ձեռագիր օրինակում է:

Երուսաղեմի 1176 գրչագրի «Պատմութիւնը» ընդօրինակված է ամենաուշը, 1821 թ.: Ձեռագրի գրիչ Գրիգոր սարկավազին Հայտնի է եղել, որ Երեմիա Քյոմուրճյանն իր այս պատմութեանը ընծայել է Վարդան վարդապետին՝ «Մեծարգոյ եւ քաջ բարունապետին տեառն Վարդան վարդապետին ընծայեալ յԵրեմիայէ Կոստանդնուպօլսեցւոյ Քէօմիւրճեան ի թուականին Հայոց ՌձնԸ (1148-1699) [1, Երուս., ձեռ. 1176, էջ 1ա]:

Վիեննայի թիվ 786 ձեռագրի «Պատմութիւնը», ըստ Ն. Ակինյանի՝ ընդօրինակված է 1782 թ. Հետո, իսկ ըստ Ոսկանյանի՝ ԺԹ (19) դարում [7, էջ 79-80: 1, Վիեն. Ոսկ., Հտ. Բ, էջ 347-348]:

Վերջին երկու ձեռագրերը բովանդակում են այն բոլոր նյութերը, որոնք ունի ավելի վաղ օրինակված Երուսաղեմի թիվ 3167 ժողովածուն, ուստի կասկածից վեր է, որ ձեռ. 3167-ից ծագում են թիվ 1176 եւ թիվ 786 ձեռագիր օրինակները: Այսպիսով Երեմիա Քյոմուրճյանի «Համառօտ պատմութիւն թագաւորաց օսմանցոց» երկի հայտնի ընդօրինակութիւնների ծագման հաջորդականութիւնը, չունենալով դրանց համադրութեան հնարավորութիւնը, կարելի է ներկայացնել միայն պայմանականորեն հետեւյալ կերպ՝



Արձակ «Համառօտ պատմութիւն թագաւորաց օսմանցոցը» Երեմիա Քյոմուրճյանի վերջին երկն է, որը ավարտվում է նրա մահով: Երկի գրութեան անհրաժեշտութեան մասին հեղինակը առաջաբանում գրում է հետեւյալը. «Խնդրող իմաստից եւ կամ գիտութեանց գրոց հարեւանցի տեսանելով կամ վերի վերոյ անցանելով ոչ կարեն առնուլ զճաշակ եւ ոչ եւս առնուն զհանգիստ... եւ կամ այլոց գրոց, վասնորոյ եւ զայլ եւ այլեւս խօսին որպէս եւ ամենայն կարգ խանդարեալ է նոյնպէս եւ այլ գիտութիւնք եւ խօսակցութիւնք, վասնորոյ եւ հարկեցայ Համառօտել զՕսմանցոց թագաւորաց պատմութիւն»

Պատմութիւնը ունի ուսուցողական բնույթ, ընդգրկում է 22 սուլթանների ժամանակաշրջանի կայսրութեան պատմութիւնը: Յուրաքանչյուր սուլթանի իշխանութեան շրջանին նվիրում է առանձին գլուխ, ուր հեղինակը աշխատում է պատասխանել հիմնականում 7 հարցերի՝ Նախ, թե որն է որի որդին (սուլթանը նախորդ որ սուլթանի որդին է) եւ քանի թվին է ծնվել, քանի տարեկանում է դահ բարձացել եւ քանի տարի է իշխել, Երկրորդ՝ որքան մարտեր է վարել, Երրորդ՝ քանի հաղթանակ է արձանագրել, Չորրորդ՝ որքան բարեգործութիւն է կատարել, Հինգերորդ՝ քանի որդի է ունեցել, Վեցերորդ՝ քանի վեզիր է ունեցել, Յոթերորդ՝ քանի մուֆթի է պաշտոնավարել նրա ժամանակ:

Պատմութիւնը բանաբազմազան է թուրքական աղբյուրներից, այն սկզբնաղբյուրային արժեք ունի հատկապէս 17-րդ դարի երկրորդ կեսի քաղաքական պատմութեան հարցերում: Հետաքրքիր է նաեւ, Պատմութիւնը կառուցվածքով եւ շարադրանքի սկզբունքներով

ազդեցություն է ունեցել Հայ մատենագրություն մեջ Երեմիա Քյոմուրճյանից հետո գրված կայսրության պատմության նվիրված վերոհիշյալ պատմական երկերի վրա՝ դառնալով դրանց հենքը:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ ԴՃ ՏԱՐԻՈՅ ՕՍՄԱՆՑՈՑ ԹԱԳԱՈՐԱՅՆ -

Երեմիա Քյոմուրճյանի այս ստեղծագործությունը նրա պատմական երկերի եւ ընդհանրապես Հայկական ազբյուրների շարքում ունի առանձնահատուկ տեղ: Ի տարբերություն Հայկական ազբյուրների, որոնք լինելով գերազանցապես Հայոց պատմություններ, թուրքերին ու Օսմանյան կայսրության պատմությանը անդրադառնում են առիթներով, այն Հայ հեղինակի կողմից Հայ մատենագրության մեջ գրված առաջին գործն է, որ ամբողջությամբ նվիրված է Օսմանյան կայսրության պատմությանը:

«Պատմութիւն Համառօտ ԴՃ տարւոյ...»-ն սկսվում է Օսման Առաջինի (1299-1325 թթ.) ժամանակներից եւ հասնում մինչեւ Մուհամմեդ Չորրորդի գահակալության երեսուներորդ տարին (1678 թ.):

«Պատմութիւն Համառօտ ԴՃ տարւոյ...»-ն պահպանվել է միակ ընդօրինակություն, որն է Մատենադարանի թիվ 1675 գրչագիրը [1, Մատ. ձեռ. 1675]³⁵: Այն ընդօրինակել է Տէր Խաչիկ Գալիպոլցի գրիչը Գալիպոլիում եւ այդ առիթով թողել է երեք հիշատակարան, որոնցից առաջին երկուսը վերաբերում են սույն պատմությանը (էջ 13ա, 174ա), իսկ երրորդը՝ Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն Ստամպոլոյ» երկին եւ ամբողջ գրչագրին (էջ 274ա): Խաչիկն այդ աշխատանքը կատարել է Թրակիայի Հայոց առաջնորդ «Դէտ յորջորջեալ» Աբրահամ Կրետացու խնդրանքով:

«Իսկ վայելող այսմ գրքիս՝ Տէր Աբրահամ Դէտ յորջորջեալ,

Ներ առաջնորդ եւ Թրակիոյ Կեցցէ ամօք երկարացեալ»

[1, Մատ. ձեռ. 1675, տ. 13ա]:

Սկսել է Հայոց «Հազար Հարիւր յութսուն թուին, այսինքն 1731 թ. եւ ավարտել նախ՝ «Պատմութիւն Համառօտ...»ը 1732 թ. փետրվարի 23-ին. «Գրեալ աւարտեցաւ պատմութեանց գիրքս ի գիւղաքաղաքն Կալիպոլի ձեռամբ ումեմն անշնորհք կոչեցեալ մեղսասէր իրիցու ի ՌճՁԱ (1181/1732) թուականիս Հայոց, որ օր ԻԳ (23) էր փետրվար ամսոյն», ապա երեք ամիս անց՝ մայիսի 16-ին ամբողջ ձեռագիրը:

«Յանդ առեալ եգերեցաւ գովասանութիւնս Բիւզանդեան

.....
Շրջան մեր հազար հարիւր ութսուն եւ մէկ թիւ յաւելան
Ներ ամսեան եւ մայիսին էր անցեալ աւուրբք վեցտասան»:
Եւ հանձնել է պատվիրատու «վայելողին».

«Բարունեաց պետն Աբրահամ Ազամբ եւ տոհմիւրն Կրէտեան»
[էջ 274ա]:

Հայտնի է, որ Աբրահամ Կրետացին 1734-1737 թթ. եղել է Էջմիածնի
կաթողիկոս եւ ամենայն հավանականութեամբ, այսօր այս արժեքավոր
գրչագրի Մատենադարանում գտնվելը կապված է նրա Էջմիածին գալու
հետ:

Արդարացիորեն առաջ է գալիս հետեւյալ հարցը. Չեռ. 1675 գրչագրում
«Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն» երկը
հեղինակային բնագրից է օրինակված, թէ միջանկյալ գրչագրից: Այս
հարցին առայժմ հնարավոր չէ սպառիչ պատասխան տալ, քանի որ,
ինչպէս ասացինք, հայ ձեռագրաց հավաքածուներում պահպանված
չեն ոչ հեղինակային բնագիրը եւ ոչ էլ մի երկրորդ օրինակ, բայց մի
բան պարզ է, որ Մ. Չամչյանը այս երկի հեղինակային օրինակը տեսած
պիտի լինէր, նույնիսկ թերթած, որպէսզի գրեր՝ «Շարագրեաց (Երեմիա
Քյոմուրճյանը – Ժ. Ա.)... միւս եւս առանձին ոտանաւորս ի խնդրոյ
Յակոբայ կաթողիկոսի» [121, էջ 723]: Այդ մասին՝ ստորեւ:

Երեմիա Քյոմուրճյանը պատմութիւնը գրելուն ձեռնամուխ է եղել
1675 թվականին.

«Հազար հարիւր քսան եւ չորս թիւ Հայոց զորս ճառեցեալ»(տ3267):
Ավարտել է երեք տարվա ընթացքում, 1678 թվականին.

«Ծննդեան Փրկչին թուական հազար վեցհարիւր եւ եօթանասնեալ,
Յութերորդի միջի դիպեալ, լիջիք ըզմեզ եւ յիշեցեալ
Յաւագ պահոցս հինգերորդի, մէջ շաբաթուս եզրակացեալ,
Ընծայեցաւ խոստացելոյս, զայն, որ արժան եղէ վարկեալ»
[տ. 3617-3621]:

Ինչպէս երեւում է հեղինակային հիշատակարանից, Երեմիա Քյոմուրճյանը
կատարել է իր խոստումը, ավարտելով երկը՝ ընծայել է նրան,
ու՛մ խոստացել է՝ «Ընծայեցաւ խոստացելոյս»: Բայց ով կարող էր լինել
այն պատվարժան անձնավորութիւնը, որի պատվերով, խնդրանքով,
հորդորներով կամ որի համար Երեմիա Քյոմուրճյանը երեք տարի աքնել
է՝ ստեղծելու այս երկը:

Մ. Չամչյանը, որ ժամանակով ավելի մոտ է կանգնած Երեմիա Քյոմուրճյանին, նրա գրական ժառանգության մասին խոսելիս, գրում է. «Շարադրեաց Պատմութիւն Օսմանեան ընդարձակ ի Հինգ դիրս եւս առանձին ոտանաւոր ի խնդրոյ Յակոբայ կաթողիկոսի»: Հետագայում Երեմիա Քյոմուրճյանի կյանքին ու գրական գործունեությանը անդրադարձողներ Ն. Ակինյանը եւ Հ. Սիրունին [7, էջ 81; 137, էջ 628] ենթադրել են, որ Մ. Չամչյանը այդ վկայությամբ նկատի է ունեցել Հեղինակի «Ոտիւ շարադրեալ անուանք թագաւորաց Օսմանցոց» 90 տողից (կամ 45 երկար տողերից) կազմված չափածո ժամանակագրությունը [1, Մատ. ձեռ. 1786, էջ 97-98]: Սակայն այս ենթադրությունը ընդունելի չէ այն պարզ պատճառով, որ նախ Մ. Չամչյանի վկայությունը որոշակիորեն այս փոքրիկ ժամանակագրությունը չի ակնարկում, այլ ինչ-որ չափածո մի գործ, եւ երկրորդ՝ Հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցին ղժվար թե Երեմիա Քյոմուրճյանից խնդրեք այդպիսի փոքրիկ մի ժամանակագրություն: Նա, անշուշտ, պատվիրել է գրել մի այնպիսի գործ, որն ունենար ծավալ, ընդգրկեք Օսմանյան կայսրության ամբողջական պատմությունը, որի համար ինչպես Հեղինակն է նշել, նրանից պահանջվել է երեք տարվա տքնաջան աշխատանք: Ուստի «ի խնդրոյ Յակոբայ կաթողիկոսի» գրված Օսմանյան պատմությունը պետք է լինի ոչ թե «Ոտիւ շարադրեալ անուանք թագաւորաց օսմանցոց» 90 տողանոց ժամանակագրությունը, այլ «Պատմութիւն Համառօտ Դձ տարւոյ օսմանցոց թագաւորացն» չափածո ծավալուն ստեղծագործությունը, որն ավարտելուց հետո հանձնվել է Պոլիս ժամանած Հայոց կաթողիկոսին՝ «Ընծայեցաւ խոստացելոյս զայն, որ արժան եղէ վարկեալ»: Մեր այս եզրակացությունը հաստատում են ստեղծագործության այն երկու քառյակները, որտեղ Հեղինակի խոսքն ուղղված ենք տեսնում Հակոբ Զուղայեցուն (կթ.1655-1680)՝ առանց նրա անունը հիշատակելու.

«Տէրդ ընծայի արժանաւոր յաթոռ նախնոյն ժառանգ նստեալ,
Որ զորբացեալքս մըխիթարեաց՝ անտեսաբար խանդաղատեալ,
Որ էր հազար հարիւր եւ չորս ի թուականիս Հայոց հասեալ»

[տ.2941-2943]:

Այստեղ Երեմիա Քյոմուրճյանը փաստորեն ողջունում է Հակոբ Զուղայեցուն, որը Փիլիպոս Աղբակեցու (կթ.1632-1655) մահից հետո բազմել է կաթողիկոսական գահին:

«Եւ վարդապետն Մարտիրոս, յէջմիածին եղեւ գնացեալ,

Յընթանրական կարգէդ սրբոյ եպիսկոպոս էր ձեռնադրեալ,
Ընծայական մեծ նամակաւդ Ղրիմ՝ Լ ի Կաֆա առաջնորդ լեալ»
[տ. 3230-3233]:

Իսկ այս տողերում խոսում է Մարտիրոս Ղրիմեցու մասին, որը գնալով Էջմիածին՝ Զուղայեցուց եպիսկոպոս օծվելով կարգվել է Ղրիմի եւ Կաֆայի հայոց առաջնորդ: Հավանաբար Հակոբ Զուղայեցի ընթերցողն է ակնարկվում նաեւ 572-րդ տողում՝ «Որ դյաճախից փոյթ ոչ կալայ, զայսքան վաստակն իմ դու ընկալ»:

Այսպիսով, այս վկայութիւնները գալիս են ասելու, որ հրատարակված պատմութիւնը գրվել է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի պատվերով, նրան է ընծայված երկը:

Կաթողիկոսին պատմութիւն պատվիրատու համարելու համար ուշադրութեան արժանի է նաեւ այն փաստը, իհարկե ոչ այնքան կարեւոր, որ երեմիա Քյոմուրճյանը երկում ոչ մի առիթով չի հիշատակել Եղիազար Այնթապցուն (Էջմիածնի կթ. 1681-1691) ժամանակի գործունյա հոգեւորականներից մեկին՝ կաթողիկոսի հակառակորդին:

«Պատմութիւն համառօտ Դձ տարւոյ...» երկը չափածո է, բաղկացած 1810 երկտող տնից: Ամեն տող բաղկացած է գերազանցապես 16 վանկից եւ բաժանվում է երկու կիսատողի՝ հաստատուն հատածով: Տունը, այդպիսով, հանգավորված երկու տողերի ամբողջութիւն է, այլ կերպ՝ իրար հետ հանգավորված են զույգ կիսատողերը՝ 2-րդը եւ 4-րդը, թեեւ հանդիպում են նաեւ տներ, ուր հանգավորված են 1-ին, 2-րդ եւ 4-րդ կամ 3-րդ եւ 4-րդ կիսատողերը: Ամբողջը միահանգ է: Հանդ է կազմում անցյալ դերբայի «եալ» վերջավորութիւնը:

Ե. Քյոմուրճյանին մտահոգել է երկարաշունչ այս երկի ընթերցումը եւ, որպեսզի ապահովվի տողի ռիթմը, հնչեղութիւնն ու երաժշտականութիւնը, շեշտադրել է յուրաքանչյուր կիսատողի չորրորդ (պակաս վանկերի դեպքում՝ երկրորդ կամ երրորդ) վանկը կամ ավելի վանկի դեպքում օգտագործելով սուղի (0) նշանը՝ պահանջելով ընթերցողից եւ գրարողից. «Լաւ ընթերցօղ պիտի որ զտանաւորն չափովն կարենայ գրել, որոյ լըսօղքն վայելեցնեն» [1, Մատ. ձեռ. 1675, էջ 3ա]:

«Պատմութիւն համառօտ Դձ տարւոյ օսմանցոց թագաւորացն» երկի լեզուն գրաբար է, սակայն օտար (թուրքերեն) բառերն առատ են հատկապես այն մասերում, որոնք գրված են թուրքալեզու պատմական սկզբնաղբյուրների օգտագործմամբ: Լեզուն համեմատաբար մաքուր է

օտար բառերից այն հատվածներում. որտեղ հեղինակը ինքնուրույն է գրառել տեսածն ու լսածը:

«Պատմութիւն Համառօտ ԴՃ տարւոյ...»-ն, ինչպէս ասվեց, ընդգրկում է չորս հարյուր տարվա, այլ կերպ՝ Օսմանյան 19 սուլթանների իշխանութւյան ժամանակաշրջանների պատմութիւնը.

«Մերձ չորս հարիւր ամաց լինի, որ Օսմանայ պապոյն սկըսեալ, Տասն եւ ինն թագաւորաց, որ մինչ ի սա մեր ժամանեալ»

[տ. 3611-3612]:

Շավարով ամենահամառօտը՝ Սելիմ Երկրորդի, ամենաընդարձակը՝ Մուհամմեդ Չորրորդի հատվածն է:

Պատմութւյան ժամանակագրութիւնը տրվում է Հայկական եւ Հիւճրայի թվարկութեամբ: Այդ մասին երկի սկզբում կա հետեւյալ հիշատակութիւնը. «Համառօտեալ ի սուլթանս Օսմանայ մինչեւ Սուլթան Սէլիմ (1512-1520 թթ.)՝ տաճիկ թուականօք, ի Սուլթան Սէլիմէ մինչեւ ցՍուլթան Մուհամմէտ (1595-1603 թթ.)՝ Հայոց թուականօք, ի Սուլթան Մուհամմէտէ մինչեւ այսու Սուլթան Մուհամմէտիս ճուլունն (1648-1687 թթ.)՝ տաճիկ թուականօք, եւ մինչեւ ցարդ, որ Լ(30) ամ է, Հայ թուականօք» [1, Մատ. ձեռ. 1675, էջ 3ա]:

Այսինքն, Օսման Առաջինից (13-րդ դար) մինչեւ Սուլթան Սելիմ Առաջինի գահակալութեան առաջին տարին (1512 թ.) ներկայացված է հիւճրայի, այնուհետեւ մինչեւ Սուլթան Մուհամմեդ Երրորդի գահակալութեան տարին (1595 թ.)՝ Հայկական թվարկութեամբ. Մուհամմեդ Երրորդից մինչեւ Մուհամմեդ Չորրորդի շրջանը (1648թ.) հիւճրայի թվարկութեամբ, իսկ 1648-1678 թթ. երեսուն տարվա պատմութիւնը՝ Հայկական թվարկութեամբ: Բավական հետաքրքիր է օգտագործված ժամանակագրութիւնը: Այն պատմութիւնը կարծես բաժանում է 4 մասերի՝ Ա մասը՝ սկզբից—1512 թ., Բ մասը՝ 1512-1595 թթ., Գ մասը՝ 1595-1648 թթ., Դ մասը՝ 1648-1678 թթ., որոնցից առաջինը եւ երրորդը գրված են հիւճրայի թվարկութեամբ, իսկ երկրորդը եւ չորրորդը՝ Հայկական թվարկութեամբ: Պարզվում է, թե ինչու «Պատմութիւն...»ը «Հարցմանց գրքի» Երեմիա Քյոմուրճյանի ստեղծագործութիւնների ցուցակում հիշվում է «ը Օսմանցոյն Դ/4/ Հատորս» [1, Մատ. ձեռ. 72, էջ 160ա-160բ]:

**ԵՐԵՄԻԱ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

«Պատմութիւն Համառօտ Դձ տարւոյ օսմանցոց թագաւորացն» եւ «Համառօտ պատմութիւն թագաւորաց օսմանցոց»-ը, ինչպէս ասվեց, Օսմանյան կայսրութեան նվիրված առաջին ամբողջական պատմական երկերն են Հայ մատենագրութեան մեջ: Շուրջ 400 տարվա ժամանակամիջոց ընդգրկող այդ պատմութիւնների 350 տարվա շրջանը գրված է պատմագրական աղբյուրների միջոցով, առանց որոնց Երեմիա Քյոմուրճյանը չէր կարող իրականացնել իր առաջ դրված խնդիրը: Իսկապէս աղբյուրների հարցի ուսումնասիրութիւնը պարզում է, որ պատմութիւնները շարադրված են թուրքական ու հայկական, այլալեզու գրավոր աղբյուրների եւ ականատեսների հաղորդումների օգտագործմամբ:

Երեմիա Քյոմուրճյանը ասլրել եւ գործել է Օսմանյան կայսրութեան մայրաքաղաքում, եղել ճանաչված գործիչ, պաշտոնավարել է Հայոց պատրիարքարանում, ծանոթներ ունեցել թուրք մտավորականութեան շրջանակում, հնարավոր է նաեւ, որ թուրքերենի ուսուցիչը եղած լինի հայկական շրջանակին մոտ կանգնած թուրք որեւէ մտավորական, որը միաժամանակ նրան տրամադրել է թուրքալեզու պատմական երկեր, որոնցից օգտվելով՝ հորինել է նա իր պատմութիւնները³⁶:

Սակայն միջնադարյան պատմագիրների սովորութեան համաձայն, Երեմիա Քյոմուրճյանը եւս ոչ միշտ է հիշատակում իր աղբյուրները՝ բավարարվելով այդ մասին միայն ընդհանուր ակնարկներով:

«Հակիրճ ճառիւք, զորս ի Տաճկաց՝ ստ կարի իմում եմ թարգմանեալ» [տ. 28]³⁷: Կամ՝

«Ըզ Տաճկաց վիպօղս հարցի Պայազիտին սուլթան կոչեալ» [տ. 173]:

Երեմիա Քյոմուրճյանը 1402 թ. Անկարայի ճակատամարտում ջախջախված եւ գերեվարված սուլթան Բայազետ Առաջինի(1388-1402) եւ հաղթական Թամուրի միջև երկխոսութիւնը հյուսելիս, գրում է.

«Թուճա բարունն, զորմէ պատմէ, զայլ իմն զգործիսն ոչ է լուեալ, Պարսիկ, Տաճիկ, Մարք 'ւ Արաբիկ, իւրաքանչիւր ըստ ուրոյն այնմ վիպեալ» [տ.333-334]:

Իսկ մեկ այլ առիթով ընթերցողից, ավելի շուտ պատվիրատուից, իր համեստ աշխատանքի ներողամտութիւնը հայցելով՝ հիշում է.

«Ըզպատմագիրս, որպէս գտի, հիբար 'ստ իմում չափու բերեալ, Որ զյաճախից փոյթ ոչ կալայ, զայսքան վաստակն իմ դու ընկալ» [տ. 571-572]:

Սուլթան Սուլեյմանի եվրոպական արշավանքի, զբաղումների եւ շինարարական գործերի մասին խոսելիս, թեեւ ակնարկում է օգտագործված աղբյուրը, բայց լռութեան է մատնում նրա հեղինակին՝

«Սա շատ քաղաք առ դաւառօք ի պատմութիւնս նորա յայտնեալ, ՅԱնդրիանու ճանապարհին մինչ ի Պուտիմ զէջնս շինեալ» [տ. 1439-1440]:

Երեմիա Քյոմուրճյանը իր աղբյուրներն է նկատի ունենում նաեւ «ըստ ոմանց ասի», «զպատմութիւնս այլոց ցուցեալ» [տ.3362], «Գրեն ի պատմութիւնս» [տ.553], «Որոց վերայ թուրքի հանեն» [տ.569] արտահայտութիւններով:

Թուրքական աղբյուրների առկայութեան մասին են խոսում նաեւ պատմութիւններում (արձակ եւ չափածո երկերում) 600-ից անցնող թուրքերեն բառերը³⁵, «Պատմութիւն համառօտ Դձ տարւոյ...»-ում ձեւ սուլթանի հայատառ թուրքերենով քասիղը [տ.865-936], Շահ Աբբասի կողմից Գիլանի իր իշխանութիւնից զրկված Ահմետ խանի «Սրտի դանդատը» [տ.1761-1766], առանձին թուրքերեն տողերն ու քառյակները [տ. 570, 1865-1866, 2653-2656, 2696]:

Սկզբնաղբյուրների մասին, թեեւ անուղղակի, կարծես, ուղեցույց տեղեկութիւն է տալիս «Պատմութիւն համառօտ Դձ տարւոյ...» երկի խորագրին անմիջապէս հաջորդող պատմութեան ժամանակագրութեան մասին հեղինակի հետեւյալ հիշատակագրութիւնը. «Համառօտեալ ի սուլթան Օսմանայ մինչեւ ցսուլթան Սէլիմ տաճիկ թուականօք, ի սուլթան Սէլիմէ մինչեւ ցսուլթան Մուհամէտ՝ հայոց թուականօք, ի սուլթան Մուհամէտէ մինչեւ այս սուլթան Մուհամէտիս ճուլում՝ տաճիկ թուականօք: Եւ մինչեւ ցարդ, որ Լ(30) ամ է՝ հայ թուականօք» [62, էջ 289]:

Դա թեկադրում է, կարծես, աղբյուրները փնտրելիս առաջնորդվել

Հետեւյալ սկզբունքով. «տաճիկ թուականօք» գրված մասերի աղբյուրները փնտրել թուրքական աղբյուրներում, «Հայոց թուականօք» գրվածներինը՝ Հայկական:

Սակայն սա, իհարկե, չպիտի ընդունել բացարձակ, որովհետեւ աղբյուրների ուղղությամբ կատարած մեր որոնումները Հնարավորություն են տալիս ասելու, որ Հայոց թվականով գրված մասերում հանդիպում ենք եւ թուրքական աղբյուրներից քաղված տվյալների, ինչպես եւ հակառակը՝ տաճիկ թվականով գրված մասերում հայկական աղբյուրներից օգտվելու հետքեր կան, որ Երեմիա Քյոմուրճյանը իր ձեռքի տակ ունեցել է մեկից ավելի թուրքական աղբյուրներ, որոնցից օգտվել է թարգմանելով եւ համառոտագրելով:

Սակայն ճշտել պատմությունների բոլոր թուրքալեզու աղբյուրները, պետք է խոստովանել, դժվարությունների հետ է կապված: Նախ՝ մեր տրամադրության տակ չունենք թուրքական բոլոր սկզբնաղբյուրները (Հայկական զբաղարանների թուրքական աղբյուրների Ֆոնդը այնքան էլ հարուստ չէ), եւ երկրորդ, որ ավելի կարեւոր է, թուրքական աղբյուրները ունեն մի աչքի զարնող առանձնահատկություն: 15-17-րդ դարերի աղբյուրները թուրքերի եւ Օս. կայսրության վաղ շրջանի պատմությունը քաղել են հաջորդաբար՝ մեկը մյուսից, ուստի Երեմիա Քյոմուրճյանի պատմությունները նրանց հետ համեմատելիս, բառացի համապատասխանող հատվածներում անգամ դժվար է առանց վարանելու ասել, թե հատկապես, ո՞ր պատմական գործն է ծառայել համապատասխանող մասի համար սկզբնաղբյուր: Սակայն դրանով հանդերձ՝ համեմատությունը ի հայտ է բերում պատմությունների ունեցած կապը եւ ընդհանրությունները թուրքական աղբյուրների հետ, աղբյուրներից օգտվելու Երեմիա Քյոմուրճյանի եղանակները, ամենակարեւորը՝ ճշտում մի քանի աղբյուրներ: Օրինակ, «Պատմութիւն համառօտ Դժ տարւոյ...»-ի եւ թուրքական աղբյուրների միջեւ եղած այդ կապի ու ընդհանրության մեջ համոզվելու համար բավական է թուրքերի ծագման, նրանց Փոքր Ասիա եկվորության, օսմանյան իշխանության հաստատման վերաբերյալ Երեմիա Քյոմուրճյանի հաջորդածը համեմատել Աշըբ փաշայի(1400-1484), Նեշրիի (? - 1520), Լյուսթֆի փաշայի(1488-1564), Նիշանջիզադեի (1555-1622) պատմությունների հետ, որոնք մի քանի այլ անանուն աղբյուրների հետ հյուսում են հետագա թուրքական հետազոտությունների հիմքերը:

Ըստ «Պատմութիւն Համառօտ Դժ տարւոյ ...»-ի՝ թուրքերը սերում են «յԱբեթական տոհմէ» [տ. 16] եւ «Ի Մարաց 'ւ Թորգոմեաց 'ւ ի Թաթարաց ազգ մի նոր լեալ [տ. 3]: Նրանք «օրրստօրէ միշտ զօրացեալ, Հանուրց ազգաց ճոխազարդեալ» [տ. 20] դալիս են փոխարինելու պարսկական, արաբական, եգիպտոսի մամլուկյան, Իկոնիայի իշխանութիւններին եւ «զհօլով ազգս», «զՅոյնս եղեն իսպառ ջրնջեալ» [տ. 27]: Օսմանյան իշխանութեան Հիմնադիր Օսմանը (1299-1326), որն Իկոնիայի Ալանդդին սուլթանի (Սուլթան Ալանդդին Քեյ-Քուբաթ 3-րդ, իշխել է 1283, 1293, 1300-1303, 1304-1307 թթ.), զորավարներից մեկն էր, ծառայութեան դիմաց նրանից ստանում է «Հայրենիք». «զՏօմալիճ եւ զԱրմէնիլ հայլագ սուլագ նորա տուեալ. զերկիրն իւր ընդ Ղարաման հուպ եէնիշէհրիւ եւ զՍօկիւտն այլ» [տ.41-45]: Կարգվում է «սանճաղ պէկ»: Օսմանը «յերկիր Յունաց արշաւելով զերրդ եւ զաւանս յափշտակեալ», «էառ զՊիլէճիկ, զՔեօփրի հիսար, զԵարէ հիսար, զէյնէկեօլ եւ զՂարա հիսար», ուր «զեկեղեցիսն մէսճիտ առեալ [տ. 46-50] ու հիջրայի 687 (1288) թ. ընթերցել տալիս իր անվան խութբէն՝ «Յաւուր ուրբաթի ժողովոյն զնամագ պայրամին վրճարեալ եւ խութպէն Օսման Ղազույ անունն անդէն նոր ընթերցեալ» [տ.53-54]:

Օսմանի Օրխան որդին (1326-1360 թթ.) դեռ հոր կենդանութեան ժամանակ Հարձակվում է Նիկիայի վրա, ավարի ենթարկում գավառը, այնուհետեւ շրջափակում Բուրսան երկու հսկիչ բերդերով: Բրուսային օգնութեան են շտապում հույները: Սակայն «Եալօվա»-ում ափ իջած հունական ուժերը ջախջախվում են դարանակալ թուրքերից: Հաջողութիւնից օգեւորված՝ թուրքերը Հարձակվում են Նիկիայի (Իզնիկի) վրա: Պաշտպանները «անճար մնացեալ» Հանձնում են քաղաքը: Թուրքերը կրկին Բուրսայի պատերի տակ են: Բախումների մեկի ժամանակ սպանվում է Օսմանի եղբորորդին՝ «Այտօղտի էր հոչակեալ, ի բախմանէ այն սրով անկեալ» [տ.77-78]. Ի վերջո Բրուսայի տերը «անճար 'ւ ի նեղ անկեալ» թուրքերին է Հանձնում քաղաքը եւ առնելով «զկին եւ զորդիս, զկարասիս՝ ի Կոստանդնուպօլիս տարեալ» [տ.85]: Բրուսայում ոտք է դնում թուրքական բարբարոսութիւնը՝

«Զքրիստոնեայս կոտորեցին եւ զարհօնդայսն նուաճեալ.

Ուր զկողմնակալսրն այն եւ սպանին, զբերդս եւ զաւանս յափշտակեալ» [տ. 87-88]:

Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն Համառօտ Դժ տարւոյ...» մեջ

Թուրքերի ծագման³⁹, Փոքր Ասիայում նրանց վարած պատերազմների ու նվաճումների մասին ահա այս ամբողջ շարադրանքը բխում է Թուրքական սկզբնաղբյուրներից [197, էջ 4-27; 223, էջ 17-26; 231, էջ 276-278; 225, էջ 1, 228, էջ 13-135], սակայն կան զիտակցարար արված շեղումներ: Երեմիա Քյոմուրեճյանը իր այս գործում զուրս է թողել Սուլեյմանի և Էրզոզլուրուլի՝ Օսմանի պապի ու հոր շուրջ հյուսված ավանդական պատմությունները և վերցրել է ամենակարեւորը՝ Օսմանյան Թուրքերի Փոքր Ասիա գալու փաստը⁴⁰:

Երեմիա Քյոմուրեճյանը Օսմանին է վերագրել ամեն ինչ, քանի որ նա է այդ իշխանության անվանադիր-հիմնադիրը: Օսմանն է ստացել սելջուկ սուլթանից «զՏօմալիճ և զԱրմէնիլ և զՍօկիւտ», մինչդեռ Թուրքական աղբյուրները նշում են Էրզոզլուրուլի անունը:

Խմբագրված են Օսմանի կողմից «Պիլէճիկի, Քեօիբի հիսարի, Եարէ հիսարի, Էյնէկեօլի և Ղարա հիսարի» գրավումները մեկ ժամանակագրական տվյալի տակ, որոնց համար մինչդեռ անհրաժեշտ է եղել մեկուկես տասնամյակ, Իզնիկի ու Բրուսայի շուրջ Էվրենոսի, Կիզիի և այլ հունական քաղաքների միացյալ ուժերի և Թուրքերի միջև տեղի ունեցած բախումների նկարագրությունները: Համեմատությունից երեւան է դալիս և մի կարեւոր իրողություն՝ առավելապես Լյութֆիի պատմությանը Երեմիա Քյոմուրեճյանի մոտենալու ձգտումը: Լյութֆիի Պատմության մեջ ևս ասվում է, որ սելջուկ սուլթանը Թուրքերին բնակավայր է տվել որպես «եայլազ և սուլազ» (Yaylak ve sulak):

Լյութֆիին հետեւելով՝ Եր. Քյոմուրեճյանը գրում է, որ Իզնիկը գրավել է Օսմանը Յայովայի հաղթանակից հետո (1307 թ., 1317 թ.), մինչդեռ մեզ հայտնի մնացած Թուրքական աղբյուրներում Իզնիկի գրավումը գրվում է Օրխանի իշխանության տարիներին, Ֆիլոկրենի (1329 թ.) հայտնի ծովափնյա ճակատամարտից հետո: Երկու աղբյուրներում էլ միավորված են հիշատակվում երկու պատմական իրադարձությունները: Լյութֆիին, ինչպես և Եր. Քյոմուրեճյանը, լուծւմ են Բրուսայի Բերես հույն իշխանի՝ Օրխանին տված 30 հազար ֆլորինի մասին⁴¹:

Իհարկե, Լյութֆիի պատմության հետ համապատասխանությունների կողքին Երեմիա Քյոմուրեճյանի մոտ կան նաև անհամապատասխանություններ: Օրինակ, Բրուսայի վրա հարձակման իրադարձություններում հիշատակված Օրխանի զինակից Թուրղութ բեկը «Պատմութիւն Համառօտ Դժ տարւոյ...»-ի մեջ հիշատակվում է Թուրտէլիին ձեւով, որն

աղբյուրների մեծ մասում Հանդիպող Թուրզուտ Ալիի ձեռի տարբերակն է, ինչպես եւ «Տոմալիճ» (Domalic) դրուժյունը մեզ հանդիպում է միայն երեք սկզբնաղբյուրներում Սուլթազադե(1592-1658) [239, էջ 6]; Կարաչեղերի Աբդուլազիզ(1591-1658)[214, էջ 239]; Նիշանջիզադե [231, էջ 287], մնացած դեպքերում եւ ժամանակակից թուրքական քննական պատմագրության մեջ «Տոմանիչ»(Domanic) է:

Այսպիսի տարբերություններ երկու երկերում երեւում են եւ այլ կետերում, շեղումներ նկատելի են այն հատվածներում, որոնք վերաբերում են 1512-1553 թթ. միջեւ ընկած ժամանակաշրջանին, որը խոսում է «Պատմութիւն Համառօտ Դձ տարւոյ...» միաժամանակ մի քանի աղբյուրների նյութերի համակցութեամբ շարադրված լինելու մասին:

Մինչեւ 1512 թ. կատարված իրադարձությունները պատկերող մասերում Լյութֆիի եւ Երեմիա Քյոմուրճյանի ակնհայտ սերտությունը կարող է արդյունք լինել նաեւ մի երրորդ աղբյուրի, որը Լյութֆիի համար եւս հանդիսացել է սկզբնաղբյուր: Այդ աղբյուրը մեծ հավանականութեամբ կարող է լինել 15-րդ դարում գրված մի անանուն օսմանյան պատմություն:

Բերենք Լյութֆիի երկի (կամ անանուն աղբյուրի) հետ «Պատմութիւն Համառօտ Դձ տարւոյ...»-ի աղբյուր վկայող մի քանի զուգադիրներ.

Orhan gazi gelüp Iznimidi feth etti kiliseleri yıktı yerine mescidler ve medreseler yaptı. Andan sonra Orhan Iznike gelüp bir emaret yaptı ve kendi eliyle aş ulaştırdı ve emaretlerde aş eliyle bişirmek andan kaldı ... ve Balı Kesri ve Bergama ve Edremidi feth edüp oğlu Suleyman paşaya verüp kendisi Bursaya gelüp sakin oldu.

Նիկոմեդիա քաղաք առնէ, այն որ ի հնումն էր Հրոչակեալ, Ուր քակէ զեկեղեցի մէսճիտ մէտրէսէ շինեալ: Եւ ի յիգնիկ նոր ամարաթ շինէր եւ զճաշն ձեռօքն բաշխեալ: Պալի Բէսրէ եւ զՊէրդամա, Եփեսոսիւ զԻգմիր առեալ, Ուր անըման եւ մեծածախ կեկեղեցիքն են կործանյալ:

[223, s. 27]

[տ.96-100]

Քրիստոնեական շինությունների ու քաղաքների վերափոխման

* Հրատարակության մեջ բնագրային արաբատառ օսմաներեն համագրությունները դարձրել ենք լատինատառ, - ժ. Ա.:

փաստերի մասին խոսում եւ արձանագրում են վաղ շրջանի թուրքական գրեթե բոլոր աղբյուրները՝ որպէս Հաղթանակի վկայութիւն: Ըստ Աշըք փաշա պատմիչի՝ Օրխանի առաջին գործն է եղել Իզնիմիդը (Նիկոմեդիա) մշտական բնակութեան վայր դարձնել: Նա իր ավագ որդու՝ Սուլեյմանի հետ գալիս է Նիկոմեդիա, եկեղեցիները վերափոխում է մեսլիդների եւ կառուցում մեզրեսներ, Իզնիկում (Նիկիա) իր ձեռքով վառում է եկեղեցիներից վերափոխված մեսլիդների գիշերային լուսերը [197, էջ 42]: Լյուլեֆին շէշտում է եկեղեցիների քանդումը, բայց լուռ օրխանի կողմից մեսլիդներում գիշերային լուսերը վառելու մասին: Երեմիա Քյոմուրճյանը նույնպէս շէշտում է «քանդէ գեկեղեցիս» եւ լուռ գիշերային լուսերի վառման մասին: Երկուսն էլ չեն ընդարձակվում մանրամասնութիւնների մեջ, պատմում են որոշակի եղելութիւնը:

Laz oğlu dahi sultan Murada haber gönderdi „Gelsin cenk edelim devlet kimin ise zafer ola,, (diyu) Gazi Murad (han) dahi leşker cem'i edüp oğlu Yıldırım Bayazid ve Yakub Çelebi bile aldı Kosovaya çıktı ve Sırf leşkerin karşıladı ve Laz oğlu da kafir leşkeri her yakadan gelüp bekleri gönderirdi. Gayret azim cenk oldu akıbet gaziler galib olup kafiri seydiler ve kafir ler ser-nigun olup kaçtılar kafirler sincek Sultan Murad kırılan kafir leşkerin tamaşa ederken meğer kırılan keş-teler içinde bir yaralı kane buluşup yatırırken Sultan Muradı göre durur-muş ol aradan kalkup Sultan Mura-dı kaflen vurup şehid eyledi.

[223, s. 42-43]

Կոսովայի դաշտում 1389 թ. հունիսի 15-ին տեղի ունեցած ճակատա-մարտը եվրոպական համախումբ ուժերի հերթական, բայց եւ անհաջող

Լազ օղլին պատգամ յըղէ Մու-րատին, թէ «եկ, զի մարտեալ, Տէվլէթ յորում կողման իցէ՝ նա յաղթեսցէ աշխարհ տեսեալ» Ի Գօս դաշտըն ժողովին, որ երկ կողմանց բիւրք շատք վառեալ, Ուր տեսողք զարիւն թափեալ, վըտակօրէն դետք խաղացեալ: Ուր անկան անհամարք դիք, կոյտք եւ դիզանք զգաշտըն լըցան: Մինչեւ ցարդ անդ հանդիպօղք զոսկերըս դից կուտեալ տեսեալ: Որք յետոյ կայցին ի բաց, անդ ի մարտի Տաճիկք խոնճեալ, Յետ եւ զՄուրատն ի քուն զըտին թըշնամիքն, որ այնմ ըսպասեալ, Ճահ զըտին ի մերձակայից, զոր դաշնակաւ հարին սպանեալ: [տ.157-165]

փորձերից մեկն էր թուրքերին դիմադրավելու եւ թույլ չտալու նրանց թափանցելու Բալկանների խորքերը: Թուրքերը, հաղթահարելով Սերբերին, գրավեցին այնուհետեւ Վիտինը շրջակայքով եւ արշավեցին Վալախիա եւ Բոսնիա:

Համադրված Լազ օղլուի կարգացած հրավերը քիչ ինչ այլ կերպ են ներկայացնում Աշըբը եւ Նեշրին [197, էջ 62; 231, էջ 269]: Այդ մասին լուռն է ընդհանրապես Կարաչեղերի Արդուլաղիղը [214, էջ 299-300]: Նիշանջին եւ Սուլաբզադեն բավական ընդարձակ խոսում են Սերբիայի եւ թուրքերի նախնական բախումների եւ ապա դեսպանների մակարդակով բանակցությունների մասին, անդրադառնում են նաեւ ճակատամարտում երկու կողմերի զինական պատրաստությունների, թվական կազմի մանրամասնություններին [231, էջ 309-310; 239, էջ 40-41], որոնք ամենեւին չկան համեմատվող աղբյուրում: Երեմիա Քյոմուրճյանը Լազ օղլուի այս հրավերը նույնակերպ կարդում է երկրորդ անգամ Բայազետի Թամուրին հղված նամակում [տ.230-232]: Նույն կապակցութեամբ, նույն տեղում այն կրկնում է Լյութֆին [223, էջ 52]:

Ճակատամարտում Սուլթան Մուրադ Առաջինի սպանութեան հանգամանքները թուրքական աղբյուրներում իրարամերժ են: Ըստ աղբյուրների մի խմբի՝ սուլթանը սպանվել է սերբ Միլոշ Օբլիչի (Օբլուպիչ, Միլոշ Կորլիչ, Կորիլե, Միլոշ Նիկոլա) ձեռքով, ըստ մի այլ խմբի՝ ճակատամարտի թե՛ս պահին թշնամուց ստացած հարվածից: Աղբյուրների երրորդ խումբը (Լյութֆին, Ահմեդ(1426-1497)) որին հետեւում է նաեւ Երեմիա Քյոմուրճյանը, Մուրադը սպանվել է ճակատամարտից հետո, վիրավոր մի սերբի դաշույնի հարվածներից [197, էջ 64; 211, հտ. 8, էջ 595; 199, հտ. 1, էջ 77-87]:

Andan sonra Sultan Bayazid Galiboliden geçüp Kostandineye düdü. Etrafnı yağma edüp hisarlu ile cenk ederken Ungrus kralı gelüp Nikeboli üzerine düşdü ve hisar etti. Sultan Bayazid haber oldu. Ol dahi Kostandineye üzerindengeçüp kırala ve leş kerine hücum edüp Kıral dahi leş kerı ile Dunayı geçe-

Սա կամի գնալ ի Բիւզանդ, գորածողով առնել դարձեալ, Գայ եւ զգուպն Ունկըրացուց, գորս եւ Մաճար են անուանեալ: Երբ ի Նիկուպօլիս եհաս զհիսարըն գաւառօքն առեալ, Լուր եղեւ Պայաղիտին՝ մինչ ի թունա էր վաղվաղեալ: Լընու զնոցունց զհոլովս ի գետ,

lüm diyerken musulmanlardan ardan basup bect gafferler hellak olup musulmanlar duyum oldılar hicretin yedi yüz doksan üçünde. Andan Yıldırım han Nikeboli etrafını ve Silistreyi feth etti. Andan sonra Mora etrafına akınlar gönderüp bazı yerler feth olundu. [223, s 45]

Sultan Mehmed Kostandineyi feth ettikten sonra Laz iline varup Sivri hisarın feth edüp vilayetin yağma eyledi, vilayetinden nice köyler sürgün edüp Islambul dolayında gönderdi. Islambul dayresinde olan kafirlerin ekseri andan çıkanlardır. Andan Belgra da varup almayup bek lerbekisi şehid olup gerü gelüp Edirne de karar etti ve ol yıl içinde iki kuyruklu yıldız doğdu biri magride biri meşrak da. Ol yıl Sultan Mehmed düğün etüp Sultan Bayazid ile Sultan Mustafayı senet edüp hicretin sekiz yüz altmış birinde. Andan Moraye varup feth edüp andan sonra ge lesi yıl Semende reye varup ve Bosna kıralı Semendereyi ihtiyarına verüp hicretin sekiz yüz altmış üçünde geri Moradan hiyatine zahir olacak

չառքն եւ փախչին ահաբեկեալ,
 ԶՅոյնս եւ զՊուլղարս ի սուր մաշէ,
 իբր ըզկայծակն վերասլացեալ:
 Սակս այն զանունն Կայծակ կոչեն,
 որ ելլալըրմն է թարգմանեալ,
 ԶՆիկուպօլի եւ զՍիլիստրէ
 թեմօք նոցին ձերբակալեալ:
 Եւ առ զեզերք Տօնաւիսօք ազգս
 անձանօթ ընդ այնց խառնեալ:
 Ի Մոռա յաշխարհ յըզէ զզօրս,
 որ ախին զնացին գերեալ:
 [տ. 189-198]

Ի Լազ երկիր գընաց
 եւ զՍիվրիճէ հիսար առեալ:
 Եւ ըզՄուլ հիսար էստ, զմարդ
 եւ զգանձս ետղմա առեալ:
 Եւ երթաց ի Պէլիկրատ,
 պէլլէրպէկիք ոմանք անկեալ.
 Խաւարէր եւ արեգակն,
 ու թհարիւր վաթսուն՝ է եռ ընկալ:
 Երթաց ի Կորընթոս,
 զաշխարհ Մօռայու էր առեալ,
 Ում Յոյնք ասեն Աքայիա
 եւ Աթենա՝ Յաթէնք կոչեալ:
 Յորոց Կեօրտէզ անուանեցաւ,
 նաեւ՝ Մօռա վերոյ յիշեալ,
 Որ է չափու Կիպրոյս կըզգոյն
 նաեւ Կրիտեայ, Կաֆայուն այլ:
 Նոյն գոն եւ սա ի ծով ելնու, ուր
 ըզմեղր եւ զկաթըն բըզխեալ,
 Նարընձօք՝ է ի լիմօնօք, մըրրօք,
 գինեաւ, իւզիւ յորդեալ:
 Ուր մարգարան իմաստութեանց

Moraya varup cümlesini tevaba ile feth etti. Andan gelüp Edirneде karar etti hicretin sekiz yüz altmış dörtünde Anadoluya geçüp Kastamonu ve Sinab şehrini ve vilayetlerini feth etti ve bek olan Ismail bek etbayle ve eşya ile ve ol ırk sipahi ile cümlesini Urum iline sürüp deraklerin tayin etti. Andan sonra Tırabizonu gitti ve Tirabzon tekfurunu dahi eline geçirdi. Andan gelüp Edirneде karar etti. Hicretin sekiz yüz altmış yaşında Eflak vilayetine sefer etti. Dunayı geçüp Daraklu oğlu kazıklı yüze gelmeyüp gece ile dün bakudan etti. Andan zafer bulmıyacak gene kendü ceriesi kırılıp hellak oldu ve kendü yalnız kacup Ungurus vilayetine varup Ungurus kırallı dahi kazıkluyu tutup asa koydu. Sultan Mehmed Eflak iline kızkulunun karındaş bek diküp Edirneye karar etti.[223, s. 184-186].

Օգտվելով Լյուծֆիլից կամ նրա աղբյուրից՝ Երեմիա Քյոմուրճյանը աշխատել է աղբյուրի տեղեկությունները լրացնել, ընդարձակել այլ աղբյուրների տվյալներով կամ խիստ համառոտագրել: Օրինակ 3-րդ համադրությունում լրացնում է այն, ինչ չի ասված աղբյուրում, որ թուրքերը հունգարացիներին Մաճար են անվանում եւ Նիկոլպոլսի ճակատամարտից հետո կոտորել են հույներին եւ բուլղարներին՝ «ԶՅոյնս եւ զՊուլղարս ի սուր մաշէ», որ Երլտըրըմը (հայերեն՝ կայծակ) Բայազետը այդ մահանունը ստացել է, որովհետեւ նրա հարձակումները եղել են հուժկու եւ կտրուկ՝ «իբրեւ կայծակ վերասլացեալ»: Վերջին այս տվյալը Երեմիա Քյոմուրճյանը միանգամայն կարող էր մուծած լինել հանդիպելով Նեշրիի կամ նրա աղբյուրի կոսովայի ճակատամարտի

թագաւորաց ցանկալի լեալ.
Յուլիզարիւր վաթսուն թուական,
Նդ որ երկու աստղ տըտամբք
ցուցեալ:
Երթայ ի Աէմէնտրէ, Պօսնայու
գոալն կամաւ տուեալ,
Գարձեալ երթայ յերկիր Մօռա,
ըզգոալ նորուն ձերբակալեալ:
Երթայ ի Գաստամօնի եւ
ըվՍինաալն ընդ այնմ առեալ,
Զպարոն իւր ըստացուածովք եւ
զսիփաւհիսն յուռում ածեալ:
Երթայ ի Տրապիզուն եւ
զպետ նորա ձերբակալեալ,
Երթայ յէֆլազ երկիր եւ
զգօրս նորա յոյժ կոտորեալ:
Փախչի պարոնն յուռնկրուս,
ուր եւ մահն անդ ժամանեալ,
Եւ զեղբայր նոյն պարոնին
էֆլազ երկիր պետ էր կարգեալ:
Հնազանդին աշխարհայնովք եւ
ամ յամէ զխարաճս տուեալ:
[տ. 737-756]

նկարագրութունից, որտեղ Բայազետը հիշվում է այդ մահանունով՝ «Bayazed han şefketiyle kafire yıldırım gibi yetişip» ինչպես եւ նիկուպոլսի հատվածից՝ «fi alhal yıldırım gibi ben dahi yetiştim» [225, հտ. 1, էջ 301, 327]:

Այդ մտքերը կարող էր եւ լրացվել «Շուքրուլլահ Բեհշեթուլթ թեվարիսի» նույն իրադարձութունների հատվածից՝ Hemen kullar ile kafire doğru yürüyüp yıldırım gibi yetişti [241, էջ 57]:

Եր. Քյոմուրճյանը հավելել է նաև պատմական կարեւոր մի իրողութուն, որի մասին աղբյուրը, գոնե տվյալ դեպքում, լռում է: Թուրքերը քրիստոնյաներից գրավված երկրներում, ստրատեգիական հենակետերում թուրքերի գերազանցութունը, վայրի վերջնական նվաճումը ապահովելու նպատակով, անմիջապես այդ շրջաններում բնակեցնում են Անատոլիայի թուրքական ցեղերով: Թուրքերի այս քաղաքականությանը լավաճանոթ Եր. Քյոմուրճյանը իրողութունը ընդգծել է «Եւ առ զեզերք Տոնալիսօք ազգս անձանօթ ընդ այնց խառնեալ», մի ճշտութուն, որը նշել է եւ աղբյուրը (երրորդ համադիր հատվածում):

Այս համադրվածում Մուհամմեդ 2-րդի 1454 թ. Լազի երկիր կատարած (Սերբիա) արշավանքի հատվածում Սիվրիճե հիսար անվան ձևով եւ Մուլ հիսարի հիշատակությամբ հեռանում է Լյուլթֆիից, որը առաջինը հիշում է Սիվրի հիսար ձևով, իսկ Մուլ հիսարը բոլորովին զանց է առնում: Պարզ է, որ այս երկտողի աղբյուրը Լյուլթֆիին չէ, այլ անհայտ մի սկզբնաղբյուր, որը ծանոթ է եղել Մաշտոցյան Մատենադարանի 1497 գրչագրի անանուն հեղինակին: Վերջինս Երեմիա Քյոմուրճյանից անկախ, բայց նույնպիսի համառոտությամբ վերարտադրում է միևնույն իրադարձութունն այսպես. «Ի հիճրէթին 858 (1454) սուլթան Մէհմէտ գնաց Լասի գաւառը, առաւ բերդերը Սիվրիճէ հիսար ու Մուլ հիսար, բոլոր գաւառն ալ կողոպտեց: Անհնար գերի առաւ: Սա գերիներին էն շատը ան քրիստոնէից են, որոնք կբնակին ըՍտամբուլի չորս դին» [1, Մատ. 1497, էջ 23բ]: Պարզ է նաև՝

«Երթայ ի Կորընթոս, գաշխարհ Մօռայու էր առեալ,
Ում Յոյնք ասեն Աքայիա եւ Աթէնա, Յաթէնք կոչեալ:
Յորոց Կեօրաէզ անուանեցաւ, նաեւ՝ Մօռա վերոյ յիշեալ,
Որ է չափու Կիպրոյս կըղզոյն, նաեւ Կրիտեայ, Կաֆայուն այլ
Նոյնց գոն եւ սա ի ծով ելնու, ուր ըզմեղր եւ զկաթն բըղխեալ,
Նարընճօք՝ ւ ի լիմօնօք, մըրզօք գինեաւ, իւղիւ յորդեալ:

Ուր մարզարան իմաստութեանց թագաւորաց ցանկալի լեալ»

[տ. 741-747]:

Այս տողերը թուրքական աղբյուրը չէր կարող ունենալ: Հունական աշխարհի բնութեան, բարիքների, «իմաստութեանց մարզարանի» գովերգումը թուրքական բռնութեան ենթարկված քրիստոնյա աշխարհի կորուստի փաստը գիտակցող Երեմիա Քյոմուրճյանի ողբական խոսքն է, նրա ստեղծագործական գրչի արձանագրումն է:

Աղբյուրները օգտագործելու Երեմիա Քյոմուրճյանի եղանակի համար բնորոշ է նաև Լանկ Թամուրի եւ Բայազետի ղրվազը⁴² «Պատմութիւն համառօտ Դձ տաւոյ...»-ում պատմվում է, որ այդ երկու արյունոտւշտ միապետների հանդիպման ժամանակ սեղանն սպասարկել է Բայազետի կինը. ներկայացվում է գինի մատուցակելու պատմութիւնը, որը բացակայում է Լյութֆիի մոտ: Իսկ Երեմիա Քյոմուրճյանը չունի Թամուրի կողմից Բայազետին մածուն հյուրասիրելու դեպքը, որը, ըստ պատմագիր Սոլաքզադեի՝ ծագում է Մուլա Համզայի(?-1543) պատմութիւնից [239, էջ 75-78]: Ընդհանրապես Թամուրի եւ սուլթանի հետ կապված իրադարձութիւնները ավելի հանգամանորեն են ներկայացված Երեմիա Քյոմուրճյանի երկում, քան Լյութֆիի մոտ: Այդ մանրամասները, թերեւս, գալիս են Շարաֆեղզինից [240] կամ Մեվլանն Հանիֆիի՝ Թամուրին նվիրված գործերից [226; տե՛ս եւ Սոլաքզադե [239, էջ 77, 79] եւ սրանց հետեւող թուրքական աղբյուրներից: Ինչ խոսք, այս առումով հարցի վրա լույս կարող էր սփռել Երեմիա Քյոմուրճյանի «Լանկ Թամուր» երկը, որը, դժբախտաբար, կորած է⁴³:

Երեմիա Քյոմուրճյանը «Պատմութիւն համառօտ Դձ տարւոյ...» առաջին բաժնում, երբ խոսում է Մուհամմեդ Երկրորդի մահից հետո սուլթանական գահի համար որդիների միջև մղված կռիվների մասին, մեջ է բերում «Ճամի ձէմ նուշ իլէ...» սկսվածքով թուրքերեն մի քասիղ [տ. 865-936]: Նրա կարծիքով այդ գործի հեղինակն է Մուհամմեդի ձեմ սուլթան անունով որդին, որը գահակալական անհաջող պայքարից հետո անցել է Եվրոպա՝ 13 տարի ապրելով տարագրութեան մեջ եւ դավադրութեան զոհ դառնալով, կնքել իր մահկանացուն:

Քասիղը բաղկացած է երկտող 36 տնից (բեյթից): Թուրքական աղբյուրների վկայութեամբ՝ նրա հեղինակը իսկապես սեր է ունեցել բանաստեղծելու, նաև հովանավորել է բանաստեղծներին կարամանիայում իր կառավարչութեան տարիներին: Նրա շուրջ են հավաքվել ժամա-

նակի Հայտնի բանաստեղծներ (ձեռն Սաղին, Հայդարը, Լալին, Շահսին): Նկատված է նաև, որ ձեռն սուլթանը իր քասիդները ու երկերը հորինել է ինչպես Նեջմիի ու Նիզամիի, այնպես էլ, մանավանդ, Ամասիացի Ահմեդ փաշայի [193] գաղեխների նմանությունը՝ հիմնականում հարասելով վերջինիս որոշ գործերին: Լաթիֆին(1491-1582), խոսելով վերահիշյալ քասիդի մասին, նրա հեղինակ է համարում ոչ թե ձեռն սուլթանին, այլ՝ նրա տարագրության մեջ ընկերացող ձեռն Սաղինին, որը ձեռն մահից հետո վերագրվել է Հայրենիք՝ իր հետ բերելով ձեռն սուլթանի մարմինը: Լաթիֆին կարծում է, որ քասիդը գտնվել է դիվանում եւ այդ հանգամանքը պատճառ է դարձել, որ քասիդը վերագրվի սուլթանի որդուն [222, էջ 188; 210 հտ. 3, էջ 69, 81]: Կան եւ այլ կարծիքներ [205, հտ. 1, էջ 207]:

Ի դեպ, Քյոմուրճյանը իր «Համառօտ պատմութիւն թագաւորաց Օսմանցոց» երկում եւս հիշատակում է քասիդի մասին՝ բերելով նրա առաջին բեյթը. «Ի դառնալն Սուլթանին (իմա ձեռն սուլթանի – Ժ.Ա.) ի Քէպէտու՝ քասիտէ էր դրեալ ձէմն եղբօրն իւրում Պայազիտի, եւ Պայազիտն եւս գրեաց նմա նազիրէ, որ ի «Գիրք Թէսքիրէին» գտանին գրեալք» [1, Մատ. ձեռ. 1786, էջ 26]: Ահա այս հիշատակությունը գալիս է հաստատելու, որ մեզ հետաքրքրող քասիդը եւս գտնվել է նույն «Թէսքէրէում», որտեղից եւ այն ընդօրինակել է Երեմիա Քյոմուրճյանը: Հնարավոր է նաև, որ նրան մատչելի է եղել եւ ձեռն սուլթանի դիվանը:

Մեզ Հայտնի է քասիդի երկու հրատարակություն Հայրուլահ էֆենդիի [206] եւ Ահմեդ Րէֆիկ Ալտինայի [196], սակայն երկուսում էլ մատնանշված չէ, թե որն է նրա ձեռագիր հիմքը: Երեմիա Քյոմուրճյանի օրինակի համեմատությունը նրանց հետ բերում է այն հետևություն, որ այն արաբատառ թուրքերենի քասիդի պարզ վերարտադրությունը չէ: Մինչ արաբատառ բաղկացած է 26 բեյթից (52 երկար տող), Երեմիա Քյոմուրճյանի տարբերակն ունի 36 բեյթ (72 երկար տող):

Արդյոք Հայ բանաստեղծն է, թուրքերեն բնագրի բովանդակությունը չխաթարելով, իր կողմից ավելացրել այդ տասը տունը, կամ մասամբ խմբագրել-համառոտագրել, վերափոխել քասիդի որոշ տողեր ու տներ՝ ավելի բանաստեղծական շունչ հաղորդելով քասիդին¹¹, ինչպես նաև նկատի ունենալով հեղինակի անվան բացակայությունը, վերջից հավելել երկու տուն եւս՝ հիշատակելով ձեռն սուլթանի անունը որպես քասիդի հեղինակ: Դժվար է պնդել:

Հաջորդ աղբյուրը, որից Երեմիա Քյոմուրճյանը ընդարձակորեն օգտվել է, դա 17-րդ դարի թուրք հայտնի պատմիչ Քյաթիր Չելեբիի «Ֆէզլէքէ» երկն է [217, 218], որն ամփոփում է Օս. կայսրության 1592-1657 թթ. (հիջրի՝ 1000-1065 թթ.) պատմությունը: Այդ աղբյուրի հիման վրա են շարադրված 1595-1648 թթ. դեպքերը, այսինքն՝ «Պատմութիւն համառօտ Դձ տարւոյ...» երրորդ մասը, որ հորինված է «հիճրի թուականօք»: Եր. Քյոմուրճյանը այդ երկին նախապատվութիւն է տվել իրրեւ սկզբնաղբյուրի, հավանաբար այն առումով, որ Քյաթիր Չելեբին (1609-1657) իր ընդգրկած ժամանակահատվածում կատարված իրադարձությունների գրեթե մեծ մասի ականատեսն է. 34 տարիների պատմությունն նա արձանագրել է որպես ժամանակակից, իսկ նախորդ տարիների անցուղարձերի մասին գրելիս հետեւել է հավաստի ժամանակագիրների Հասան Բեկզադե(?-1636/37), Իբրահիմ Փեչեւի (1572-1650) [244; 233], Կարաչելեբիզադե Աբդուլ էֆենդի [214; 215; 216], Նելիզադե (1583-1635), Ջերազզադե (1495-1571) [167, էջ 42; 171, էջ 17-18]:

Այս աղբյուրից Երեմիա Քյոմուրճյանին հետաքրքրել են 17-րդ դարի առաջին կեսի քաղաքական պատմությունը վերաբերող նյութերը (Եվրոպայում՝ Ավստրիայի, Լեհաստանի, Վենետիկյան հանրապետության, իսկ Ասիայում՝ Իրանի դեմ, հատկապես Երեւանի համար մղված պատերազմները), ապա նաեւ երկրի ներքին կյանքում կատարված իրադարձությունները (Ջելալիական շարժում, Լիբանանի դյուրզինների ապստամբություն, ենիչերիների խռովություններ, պալատական խմբակցությունների պայքար ու հեղաշրջումներ եւ այլն): Սակայն «Ֆէզլէքէ»-ից եւս Երեմիա Քյոմուրճյանը օգտվել է յուրովի. շատ նյութեր ու մանրամասներ (պետական եւ հոգեւոր գործիչների կենսագրական տեղեկությունները), անգամ կարեւորագույն դեպքերի վերաբերյալ տվյալները նա բաց է թողել, օրինակ 1620 թ. Ցեցորայի ճակատամարտի մասին բոլորովին չի հիշատակում, անտեսում է Հայտնի Կարա Յազըճիի եւ Աբազայի ապստամբությունների մանրամասները, որոնք բավական հանդամանորեն են ներկայացված «Ֆէզլէքէ»-ում: Աղբյուրի հետ, այսպիսով, Երեմիա Քյոմուրճյանը վարվել է շատ ազատ, իր չափածո պատմության ծրագրին ու պահանջին համապատասխան: Այդ մասին ճաշակ տալու համար երկու երկերի համընկնող հատվածներից բերենք մի քանի օրինակ.

Bu sal cemazi ul ahir senede

Զպատճառս չարեաց գինի օղուով

Muhbi efendi serayı ve refi ve senayı hazret padişaha din-dar um ulhabaset ve futade ve surure bais olan hamuru memalik islamiyeden bilkülliye ref edüp.

(beyt) „Kalb aşık gibi
viran ettiler meyhaneyi
Bivefaler ahdine dönderdiler
peymaneyi,,

Hamlar para para ettiler ve seleri avare edüp meyhaneleri kala ve nice yüz yuk akçe hasil alan mukadayı ve emaneti def'a ferman ettiler. [217, cilt 1, s. 352]

(Ahmed han) sabıka Gilan hakimi iken Şah Abbas yenice senden raha bulup bin bir senesinde dergah alımpenaha iltica eyleyup gelmişidi melkinden ceda ve bir kaç sene muhabet neval başka olup bu salda intikal eyledi ferak ve den ve diyar gurbette çekdiği elem ve sikil şikayet güne bu şiri demiştir;

Maz şeh'r hod perişan ve ceda
uftadeem

սուղ պատճառէ, որ ցնա յիշեալ,
Վընասուց եւ չարութեան
Նըկատեցին եւ Տրամայեալ:
Մուգադա եւ էմանէթ,
եւ թէ որքան այլ դրամ եկեալ,
Ըղկեօմբուկն եւ այլ կէլուրս
ոչ հոգային 'ւ ի բաց բարձեալ:
Մէմալիբի Իսլամիէ գինի
'նդ ցըսւ մի երեւեալ,
Կոտորեն զըղուղս ֆուչովք
եւ աւարէ զծախօղան առեալ:
Գալպ աչըք կիպի
վիրան իթտիլէր մէյխանէի,
Պիվէֆայէր ահտընէ
տօնտէրտիլէր փէյմանէի*
[տ. 1859-1866]:

Ահմէտ խանն, որ յառաջագոյն
Կիրանայ տէր էր մեծարեալ,
Երբ Շահ Ապան էսո զաշխարհն,
խանն առ հունքեար էր ժամանեալ:
Ի սոյն ամի երբ մեռանէր,
որ է սէնէ հազար ութ լեալ:
Զգանկատ սըրտին արտարերէր,
պանդխտութեան զողբս
յարմարեալ:
Մալի շէհր խուս փէրիշան
ու ճուտա ուֆթատէէմ,
Բուղ ու շէպ տէր միհնէթ

* Սիրահարի սրտի նման ավեր դարձրին գինետունը,

եւ պայմանն ու ուխտը դրժած՝ շուռ տվեցին գինու գավը:

(Այս եւ հաջորդ թարգմանությունները Ժ.Ա.-ին են):

Rūz ü şeb der mihnet ve renc
ve ina uftadeem
Şükür namet hai şehz şut
hod nekerdem an zaman
Lacerem pes şuma misl geda
uftadeem

Ahmeda ender gurbeti ğem
me hur dil şad baş
Ma derin gurbet be takdiri
huda uftadeem.,*

Selim han Özbek hanlarından idi
bu salda kazaya uğrayup intikal
surhiseran mezburun eyledi katlına
handan olup.
(Gaft Melhem beki kim Bet baht**)
mısranı tarih dediler.[217,c,1,s.135].

ու բէնճ ու ինս ուֆթատէէմ:
Շուքը նահ թէհայի շէհը շուտ
խուտ նէքէրտէմ անղաման,
Լահէրէմ փէս շուճա միսլի կէտա
ուֆթատէէմ:

Ահմէտա էնտէր ղէրիպի ղէմ
մէ խուր տիլ շատ պաշ
Մա տէր ին ղուրպէթ պէ
թաղտիրի խուտա ուֆթատէէմ*:
Նահե սակս Սէլիմ խանի
յՕղպէկ խաներացն էր եկեալ,
Ի մարտի սպանաւ յայսըմ ամ,
սուրխիսէրան լուեալք բերկրեալ:
[տ. 1757-1768]

Bu feth beyyina tarihler dediler
cümleden şeyh ul islam Yahya efen-
di bu güne ada eyledi:

Hazreti Sultan gazi han Murad
kam-yab eyledi çün feth Bağdada
sadetle hücum,

Haktala hazreti ani müeser

Նդ որ շայիրք ըզտաղ երգեն՝ զառն
քաղաքին ղթուական ցուցեալ,
Յետ ոմանց երկոց Եահնա
մուֆթին եւ զայս արտաբերեալ.
«Հաղրէթ սուլթան զազի խան
Մուրատ քեամիսալ
էյլէտի չուն ֆէթհ Պաղտատէ

* Մենք, մեր քաղաքից տարադիր, որբացած ու մերժված.

Գիշեր-ցերեկ նեղության, տանջանքի մեջ ենք ընկած:

Իմ քաղաքի բարիքներից շնորհակալ չեղա ես.

Ձեր մոտ այժմ որպես մի խեղճ մուրացկան եմ ընկած:

Ահմեդ, զարիբության մեջ այս մի վշտանա, ուրախ եղիր.

Քանզի զարիբության մեջ Աստծո կամքով ենք ընկած:

**«Bt bht»-ի արաբատառերի թվարժեքների՝ $2+4+2+600+400=1008$
(1599/1600) գումարը նշում է Ահմեդ Խանի մահվան թվականը, որը Երեմիա
Քյոմուրճյանը արձանագրել է իր Հայերեն շարադրանքի սկզբում:

eyledi.
 Didi tarihin lisan feth
*Kül hakan Rum**,
 [218, cilt 2, s. 214-215]

սատէթիլէ Հուճուճ:
 Հազթալա Հազրէթիերի
 անի մուէսէր էյլէտի,
 Տիտի թարիխըն լիսան Ֆետճ
*քիւլ Հազան րում**:
 [տ. 2651-265]

Kars hisarı bundan akdem tahrir olunmuş idi hala tecdid olunup asker konmak makul görünüp kapukulu ve beklerbekilere kul verilüp bir haftada kabl sakin olacak kadar bina ettiler bölük halkından tarafı ile ve kul oğlu yazılup muhafazasına asker ve toplar tayin olunduktan sonra koculup. Revan sahrasına varıldı gece meteris tedarigi görülp muhasara olundu... Revan ili kolunda dört top ve yeniçeri kolunda iki top ve kapuye karşı iki top kurulup yirmi gün dovuldu mukayyet oldu toprak sürmeğe mubaşiret ettiler gündüz sürülüp turap gece içeri çekelüp kayıp olurdu ve handaya atılan torbaları ve ğırarları kanca ile çekirlerdi bil-ahire asker

Նաեւ զՂարս քաղաք շինեն, ի պահպանումն զօրս անդ ամեալ, Հասին ի դաշտն Բէվանու եւ զհող կուտեղըն պատրաստեալ: Ի ցերեկի երբ զհող քշեն, ըզհողն ի ցայգ ի ներքս քարշեալ, եւ քսան առուրբբ շատ ձեծէին
 եւ անօգուտ էին խոնջեալ:
 Շինեն Օսմանցիք թապիէ եւ մեծ թօփովք զայն ծակոտեալ, Ի ծակոտեալ տեղոց Հնարուք բազում կողմանց ի ներքս վաղեալ: Սուսերամերկքըն Օսմանցիք, սէրտէնկէչտիք ի մահ զիմեալ, Թուֆէնկէնտաղ Մազանտարանք սուրխտէրանքըն ճակատեալ: Ուր բազումք կոտորեցան, ենիչէրոց աղայն անկեալ, եւ խոցեալ թիւրքճէ Պիլմէզն, եւ

* «Պոյժառախայլ սուլթանը՝ Հազթալան խան Մուրադը, երբ ցանկացաւ Բաղդադը դրաւիլու Համար Հաջողակ Հարձակում կատարել, Բարձրան Աստված անմիջապէս նրան այդ Հնարավորությունը ընձեռեց: Տարեգիրն ասում է Հազթանակը՝ Քիւլ Հազան րում»:

Ընդդժված բառերի արարատառադարձության թվարժեքների դումարը՝ 20+30+600+1+100+50+200+60+40=1048, Բաղդատի դրավման Հիջրի թվական է, ընկնում է փրկչական 1638-1639 թթ. սահմաններում:

islam akdam edüp tabiye yaptılar ve zarba zanlar ile kur ateşle gedikler açılıp her taraftan klaya yürüdüler mazandaramı tüfenkandaz be-
denlerde gizlenüp azim cenk etmekle niçeler şehid ve tyurkçe bilmez mecruh olmağla asker geri çekildi.

[217, cild 1, s. 375.]

Այս համադրություններից առաջին երեքը բառացի նույնն են, իսկ չորրորդում Երեմիա Քրիմուրճյանը իրադարձություններ է համառոտագրել: Միմիանց հարազատ բազմաթիվ այլ հատվածներ եւս կարելի է բերել երկու երկերից՝ շեշտելու համար Երեմիա Քրիմուրճյանի Պատմությունների աղբյւրը «Ֆէզլէքէ»-ի հետ: Սակայն դրանով հանդերձ Երեմիա Քրիմուրճյանը մնում է մշտապես փնտրող, իր սկզբնաղբյուրի հարդրածը խմբագրող եւ լրացնող պատմիչ: Այդ են վկայում «Ֆէզլէքէ»-ի համեմատությամբ նրա կատարած հավելումներն ու որոշ շեղումները: Հիշատակենք դրանցից միայն մի քանիսը:

Օսման Երկրորդի դահակալության առթիվ կազմակերպված տոնախմբության ժամանակ Եդիկուլէի բանտից փախչում է Ղրիմի Գիրեյների ներկայացուցիչ Մուհամմեդը: Հետապնդողներ Փարավատի կողմերում հասնում են նրան: Ենիշերիներից մեկի նետահարումից սպանվում է նա: Իսկ «Ֆէզլէքէ»-ի համաձայն՝ խանը ձերբակալվում եւ բանտարկվում է Եդիկուլիում: Նույնն է վկայում նաեւ Փեչեւին [տ. 2062-2072 հմտ. 217, հտ. 1, էջ 390-391; 233, հտ. 2, էջ 362-363]:

Այնուհետեւ, ըստ Քրիմուրճյանի, 1569 թ. մայրաքաղաքում սփիւհիների խռովության ժամանակ սփիւհի աղան եղել է Օքյուզ Մեհմեդը, իսկ ենիշերիների աղան՝ Տավութը, մինչդեռ Քյաթիբ Չելեբիի համաձայն սփիւհիների աղան եղել է ոմն Մուստաֆա, իսկ ենիշեր աղան՝ Ֆերհադ փաշան, ընդ որում Տավութը հիշվում է որպէս գլխավոր դռնապահ (kapucu başı) [1, ձեռ. 1675, տ. 1611-1614, հմտ. 217, հտ. 1, էջ 191]: Սուլթան Ահմեդ Առաջինի հերթական ծնված որդուն հիշում է անունով՝ «Ասեն սուլթան Սէլիմ զայն անուանեալ» [տ. 1847-1649]: Քյաթիբ Չելեբին վկայում է առանց անվան՝ «Padişah alempenah Davut Paşa iken Sultan nam bir şehzade vücüde geldi» [217, հտ. 1, էջ 341]:

այլքն անդուստ յետըս փախեալ:
[տ. 1969-1978]:

Սուլթան Մուստաֆա Առաջինի երկրորդ զահազրկմանը անդրադառնալիս եր. Քյոմուրճյանը քաղված պատճառաբանություններից ավելացնում է նաև սուլթան Ահմեդ Առաջինի կոնջ՝ Մահմեդյան Քյոսեմ սուլթանի ակտիվ մասնակցությունը փաստը, որի գործունեությունը մասին կոնկրետ այս հարցի շուրջ Քյաթիր Չելեբին լուում է [տ. 2039-2050, հմտ. 217, հտ. 1, էջ 390]:

Նույնպիսի տարբերություններ առկա են եւ Իզելդդինի եւ Շարաֆեդդինի եւ Ման օղլու եղբոր էմիր Յունուսի առաջնորդությամբ 17-րդ դարի առաջին կեսին 22 տարի ծավալված դյուրզլիների ապստամբության բառացի համապատասխանող նկարագրություններում անգամ: Երեմիա Քյոմուրճյանը հաղորդում է, որ կառավարական եւ Իզելդդինի ուժերի միջև տեղի ունեցած ճակատամարտերից մեկում ապստամբներից սպավիկ են 500 հոգի: Քյաթիր Չելեբին սպանվածների համար մի տեղ նշում է 200, իսկ մեկ այլ տեղում 300 թիվը:

Շարաֆեդդինի գլխավորած ապստամբների եւ պատժիչ ուժերի բախումը, ըստ Երեմիա Քյոմուրճյանի՝ տեւել է «Եօթն ժամ» եւ ապստամբներից զոհվել են «Եօթն հարիւր», ինքը Շարաֆեդդինը նաև: Քյաթիր Չելեբին լուում է ճակատամարտի տեւողության մասին: Պանպասի կլայի ճակատամարտում Ման օղլու եղբոր Յունուսի ղեկավարությամբ մասնակցած ապստամբների 5000 տվյալի դիմաց, աղբյուրը ունի 4000 տվյալը: Այս վերջին տարբերություններում կարելի է նկատել հետեւյալը, որ լրացումները կատարված են տողը համահունչ դարձնելու համար՝ «Եօթն ժամ», «Եօթն հարիւր», իսկ երկրորդ դեպքում՝ Շարաֆեդդինի շուրջ համախմբած 4000 ապստամբների թվական տվյալը չկրկնելու նպատակով [տտ. 1939-1962 հմտ. 217, հտ. 1, էջ 359-361]:

Աղբյուրից շեղումներ են դիտվում ժամանակագրական տվյալների եւ պատմական իրադարձությունների հաջորդականության մեջ: Այսպես, Մուրադ շահզադէի (Սուլթան Մուրադ Չորրորդ - ժ. Ա.) ծնունդը Երեմիա Քյոմուրճյանը դնում է Հիջրայի 1018 թ. տակ, աղբյուրը՝ 1021 թ. [տտ. 1837-1840 հմտ. 217, հտ. 1, էջ 346]: Խոսելով Հիջրայի 1019 թ. դեպի Իրան մեծ վեզիր Մուրադ փաշայի սերդարությունը արշավանքի, նրա ու Աբբաս Առաջինի (1588-1629) բանակցությունների շուրջ որպես նույն թվականի եղելություններ, այնուհետեւ պատմում է Սելիմ շահզադէի ծննդյան, «Միզապի Քեապէի» (Mizab-i Kabe) պատրաստման, գինու եւ օղու արտադրության եւ վաճառքի արգելման, Ֆիլեմենկի

(Հորանդիայի) դեսպանի ժամանման մասին, որոնք աղբյուրում հիշատակվում են հիջրայի 1020-1022 թթ. իրադարձություններ [տտ. 1841-1848 հմմտ. 217, հտ. 1, էջ 334-339]: Նասուհ փաշան մեծ վեզիր է նշանակվում հիջրայի 1021 թ. եւ ի տարբերություն աղբյուրի, նրա մեծ վեզիրություն տարիներում կատարված մեծ անցքերը, նրա իշխանազրկվելը, մահապատժի ենթարկվելը (1023 թ.), գաբուտան իսալի փաշայի հրամանատարությունը թուրքերի Մալթյան դրոհը, Մորեայի մանեացիների ապստամբությունը, կաղակների Սինոբի վրա հարձակումը (1023 թ.), Լիբանանի դուրդիների Ման օլլիի առաջնորդությամբ սկսված ապստամբությունը, թուրքերի կողմից պաշարումը (1024 թ.), իսալիի մեծ վեզիրի պաշտոնում նշանակվելը, Սուլթան Ահմեդի ջամիի բացման տոնակատարությունը (1026 թ.) «Պատմութիւն Համառօտ Դճ տարւոյ...»-ում շարադրված են որպէս հիջրայի 1021 թ. կատարված դեպքեր [տտ. 1847-1870, 1878-1894, 1931-1937, 1939-1964, 2010-2020; հմմտ. Համապատասխանաբար 217, հտ. 1, էջ. 339-341, 350-353, 345-346, 359-361, 368-369, 383]:

Ինչպէս երեւում է, Երեմիա Քյոմուրճյանը չի պահպանել իր աղբյուրի ժամանակագրական կարգը եւ աղբյուրի 1021-1026 թթ. հինգ տարիների իրադարձությունները հյուսված են 1021 թ. տակ: Բնականաբար պատմությունը շարադրելու Երեմիա Քյոմուրճյանի եղանակի ու սկզբունքներին անտեղյակ ընթերցողը աղբյուրի հետ այս անհամաձայնությունները կարող է դիտել իբրեւ ժամանակագրական անճշտություն: Նկատենք, որ Երեմիա Քյոմուրճյանը նախ չի պահպանել կայուն ժամանակագրություն, երկրորդ՝ նրան հատուկ է պատմական անցքերը խմբավորված շարադրելու եղանակը: Յուրաքանչյուր սուլթանի իշխանության ժամանակաշրջանում տեղի ունեցած արտաքին քաղաքական իրադարձությունները ներկայացված են մեկ խմբով, երկրի ներքին կյանքին վերաբերող իրադարձությունները՝ մեկ այլ խմբով: Ահա այս հանգամանքով է երեւան դալիս աղբյուրի համեմատությունը երկերում առկա նյութերի ետառաջությունը:

Ինչի մասին են խոսում այս տարբերություններն ու շեղումները: Այն մասին, որ Երեմիա Քյոմուրճյանը, ինչպէս այլ աղբյուրների, այնպէս էլ Քյաթիբ Չելեբիի երկի նկատմամբ դրսեւորել է որոշակի վերաբերմունք: Մասնավորապէս նշելի է ջելալի 60 առաջնորդների անունների հիշատակումը, որը շատ ամբողջական է («Ֆէզլէքէ»-ում հիշվում են միայն

23 անուն) [տտ. 1711-1750 Հմմտ. 217 Հտ. 1, էջ 304, 305, 309], ըստ երեւույթին, Երեմիա Քրիմուրճյանին սկզբնաղբյուր են ծառայել նաև Հայկական Հուշարձանները եւ ականատեսների վերապատմությունները, հիշողությունները [1, Մատ. ձեռ. 1786, էջ 52]:

Թուրքական աղբյուրներից են քաղված «Պատմութիւն Համառօտ ԴՃ տարւոյ...» «Հայոց թուականօք» գրված (երկրորդ մաս) Սուլթան Բայազեդ Երկրորդի (1481-1512 թթ.) սպանության Հանգամանքների, սուլթան Սելիմ Առաջինի պարսկական եւ արաբական արշավանքների, սուլթան Սուլեյմանի կողմից (1520-1566 թթ.) Բելգրադի, Ռոդոս կղզու գրավման եւ Հունգարիայի դեմ մղված նվաճողական պատերազմների, 1531, 1537 եւ 1551 թվականների թուրք-պարսկական պատերազմների, Սիրիայի բեկլերբեկի ձանվերդի Ղազելի (1521 թ.), Զուլֆադիբ Ալի բեկի (1527-1528 թթ.), Աթմաճա դալֆայի (1528 թ.), Զեյնեյ բեկի (1529 թ.), Շեյխ Բեկդաշի (1527 թ.), Տոռխուլի Հույների ապստամբությունների, սուլթան Սելիմ Երկրորդի (1566-1574 թթ.) Կիպրոսի գրավման, սուլթան Մուրադ Երրորդի (1574-1596 թթ.) իշխանության տարիներին Օսման Օզդեմիր փաշայի հրամանատարութեամբ եւ Ղրիմի խանական ուժերի մասնակցութեամբ Վրաստան ու Շամախի թուրքերի կատարած ներխուժումների պատմությունները: Վերջին իրադարձությունները, որոնք ծանր հետեւանքներ ունեցան Հայ եւ վրաց ժողովուրդների կյանքում, Հյուսված են ինչպես թուրքական, այնպես եւ Հայկական աղբյուրներով:

Թուրքական աղբյուրները Հակասական պատմություններ են անուամ սուլթան Բայազեդ Երկրորդի մահվան շուրջ: Նրանց մեծ մասը լուրթյան է մատնում կրտսեր որդու՝ սուլթան Սելիմ Առաջինի կողմից նրա սպանության փաստը, որ Հաղորդում է Երեմիա Քրիմուրճյանը: Հայտնի է, որ Բայազեդը կամավոր հրաժարվել է իր դահից հօդուտ Սելիմի եւ հեռացել որդու կողմից իրեն ընակության համար հատկացված Տիմոթոքայի շրջանը: Ըստ Երեմիա Քրիմուրճյանի՝ ճանապարհին որդու հրամանով նրան է մատուցվում վերջին բաժակը: Բայազեդը (1481-1512) խմում է եւ անիծում որդուն.

«Ասէ. «Զի քո՝ փութասըլաց եւ սուր քո սուր լիցի սըրեալ,

Փէչդ ի միջացդ մի՛ թուլասցի, բայց կեանքըն քո լիցի նուաղեալ»

[տ. 1045-1046]:

Թուրքական աղբյուրներին քաջատեղյակ Գարրիել Այվազովսկին վկայում է, որ այդ միջադեպը պատմվում է միայն «... ի «Միրաթ-ի

Քեայինաթ» եւ ի պատմագրին Հասան Պէկզատէի» [14, Հտ. 1, էջ 290]: Չկասկածելով այս հաղորդման հավաստիութեանը, կարող ենք ենթադրել, որ Եր. Քյոմուրճյանը այդ դրվագի համար օգտուել է հիշյալ երկից [231] եւ կամ պատմագրից [Hasan Beyzade, Tevarih-i Ali Osman]:

Վերելում Լյուլթֆիի պատմութեան կամ նրա աղբյուրի հետ «Պատմութիւն Համառօտ Դժ տարւոյ...» աղբյուրի մասին խոսելիս նշել էինք, որ այն Համեմատութեան եղբեր ունի Աշըքի «Թեւարիխ-ի Ալի Օսման» [տտ. 117-122, 183-188, 189-198, 265-270, 280-290, 407-410, 432-440, 467-472, 482-504 Հմմտ. 197, էջ 51-53, 64-65, 67, 78, 78-79, 84, 88, 97, 98-100] եւ Մեհմեդ Նեշրիի «Քիթաբի ջիհան նյումա» [231] երկերի հետ: Երեմիա Քյոմուրճյանը պետք է, որ ծանոթ եղած լինի նաեւ Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա» [216], Իբն Քեմալի (1468-1536) «Մոխաջ նամէ» եւ «Չաֆէր նամէ -ի սուլթան Սուլէյման» [208], Մյունեջջիմ Բաշիի (1631-1702) «Սահիֆի ուլ ախբար» [228; 229] պատմական գրվածքներին, որոնցից որոշ մտքեր եւ նույնիսկ յուրահատուկ արտահայտութիւնները թարգմանութիւններ են հանդիպում նրա մոտ:

1522 թ. սուլթան Սուլեյմանի կողմից Բելգրադի գրավման նկարագրութեան մեջ Երեմիա Քյոմուրճյանը բացատրում է այդ քաղաքի անվան նշանկութիւնը եւ տալիս նրա տեղագրութիւնը:

«Սորա թարգմանն՝ Աղվոր կըլա, որ ի Մաճար բարբառն կոչեալ,

Եւ պարծի երկու գետովք՝ Հանդէպ նորա յիրար խառնեալ,

Չորս Սաւա եւ Թունա կոչեն, ի Այամանա երկրէ իջեալ» [տ. 1197-1199]:

Երեմիա Քյոմուրճյանի ասածը հիշեցնում է Մյունեջջիմ Բաշիի «Եւ հիշեալ գետի (Թունայի) եւ Սալա գետի միջնատարածքում գտնվող քաղաքը» [228, Հտ. 1, էջ 514; Հմմտ. 223, էջ 300-301] եւ Քեաթիբ Չելեբիի (Բելգրադի ... մի կողմում՝ Թունան եւ մյուս կողմում՝ Սաւան) նկարագրութիւնները [216, էջ 106], որոնցից վերջինը Բելգրադ անունը բացատրում է «Ակ հիսար» (Սպիտակ բերդ) անունով:

Մոխաջի ճակատամարտի ժամանակ (1526 թ.) Լայոշ Երկրորդի (1516-1526 թթ.) ճահիճների մեջ խեղդվելու, նրա թաղման եւ առհասարակ ճակատամարտի հանգամանքների մասին խոսելիս, ամենայն հավանականութեամբ Երեմիա Քյոմուրճյանը հետեւել է Իբն Քեմալի «Մոխաջ նամէ» կամ «Չաֆէր նամէ սուլթան Սուլեյման» խորագրով հայտնի երկերին (208), (թուրքական մյուս պատմական աշխատութիւններում նրանց մասին այնուամենայնիվ նման մանրա-

մասնությամբ չի պատմվում): Որ իր արձակ «Համառօտ պատմութիւն Համառօտ թագաւորաց Օսմանցոց» աշխատութեան սուլթան Սուլէյմանի իշխանութեան ժամանակաշրջանի բաժինը շարադրելիս դիմել է սուլթան Սուլէյմանին նվիրված մի պատմութեան, Երեմիա Քյոմուրճյանը բարեխղճորեն հայտնում է՝ «Աստ արժան է փոքր մի պատմութեան ունկն դնել եւ ոչ հարեւանցի անցանել, զի տիր ծաղկաքաղ արարի եւ գլխատեցի զմեծ «Գիրք պատմութեան» սորա» [215; Հմմտ. 1, Մատ ձեռ. 10716, էջ 25; ձեռ. 1329, էջ 45; ձեռ. 1786, էջ 32]: Իսկ Սուլթան Մուրադ Չորրորդի ժամանակաշրջանի համար նկատի է ունեցել նրան նվիրված կարեւոր երկու գործերի, որոնց մասին նույն տեղում նա ակնարկում է՝ «Ասայէթ սորա եւ ալիֆրէտութիւն եւ ռայասիրութիւն ի «Գիրք իւրեանց» տեսցես ... զքաջութիւն յաղթութեան ի մարտն «Րէվանայ եւ Պաղտատայ» գտցես գրեալ», որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ Կարաչէլեքի Աբդուլազիզի հայտնի պատմական երկերը [213; 214; Հմմտ. 1, Մատ. ձեռ. 10716, էջ 63; ձեռ. 1329 էջ 98]:

Եր. Քյոմուրճյանի տրամադրութեան տակ է եղել հալանարար Սոլաք-զադեի պատմութեան աղբյուրներից մեկը, որի մասին նա ոչինչ չի հայտնում: Սոլաքզադեն, երբ պատմում է սուլթան Մուրադ Երկրորդի դեմ նրա եղբոր՝ Մուստաֆայի խռովութեան մասին, նշում է, որ ինքը հետեւում է ինչ-որ սկզբնաղբյուրների [239, էջ 149]: Նրա «... bir virane kiliseye bulundu diyu yazmışlar» պատումի հետ գրեթէ բառացի համընկնում է Երեմիա Քյոմուրճյանի հետեւյալ հատվածը.

«Վեզիր մի կայր Մուստաֆային, ի բաղանեաց յայնմ պահ լեալ:
 'Նդ որ հանդիպէր Միխալ օղլին, նա յիսպանումն վերայ վազեալ:
 Զձին թողոյր նա, փութով փախչի՝ յեկեղեցի մի խուսափեալ»
 [տ.518-520]:

Այս համադրութեամբ եւս տեսանելի է նրանց աղբյուրային աղբյուրը՝
 Istambula tevcih eyledikte kadir- Երբ մերձեցաւ դալ յիստամալօլ,
 galar birbirine katılıp kürek küreğe համայն քաղաքն 'նդ առաջ ելեալ,
 çatılıp keştilerin zed hamından Ü- Երես ծովուն զարդարեցաւ որպէս
 küdar boğazi doldu ve ruy deryayı զանտառս նաւքն տեսեալ»
 gemiler kapılıp görünmez oldu. [տ.839-840]:

[239, էջ 276-277]

Հետաքրքիր է հույն պատմիչ Դուկասի պատմութեան եւ Շարա-

Ֆեդդիինի «Շարաֆ նամէ»-ի որոշ մասերի առկայութիւնը եր. Քյոմուրճյանի պատմութեան համապատասխան տեղերում: Դուկասը Կ. Պոլիսը գրավելու սուլթան Մուհամմեդ Երկրորդի մտադրութեան եւ ապրումների մասին գրում է. «Մուհամմեդը գիշեր ցերեկ ինչպես քնելիս, այնպես էլ արթուն ժամանակ, լիներ պալատում, լիներ պալատից դուրս՝ պատերազմի դաշտում կամ այլ տեղում, մտածում էր միայն Ստամբուլի գրավման մասին» [201, էջ 152]: Այս միտքը Ե. Քյոմուրճյանի մոտ խմբագրված է՝ «Եւ ըզխորհուրդ սաստիկ սըրտին ըզԿոստանդնուպօլիս եղեալ» [տ. 655]: Հուլյն հեղինակը Կ. Պոլիս ներխուժած թուրքերի գործած բարբարոսութիւնը պատկերում է այսպես. «... Յուրաքանչյուր թուրք իր ձեռքն էր գցում ամենաերիտասարդ եւ ամենագեղեցիկ կնոջը, բայց առավել ուժեղները նրանցից խլում էին դրանք եւ կապկապում որպես իրենց սպրանքը: Կանանց քաջքում էին մագերից, ստինքներից, բազուկներից: Մերկանում էին կանանց կրծքերը: Իշխանուհին, տիրուհին, կույսն ու դեռահաս աղջիկները կապկապվում էին միատեղ: Նրանց մեջ այնպիսի գեղեցիկ կույսեր կային, որոնց զեմքը դեռ արեւ չէր տեսել, տեսել էին միայն նրանց ծնող մայրերն ու հայրերը: Այդ կույսերը բարբարոսաբար բռնաբարվում էին» [201, էջ 179]:

Այս պատկերը երեմիա Քյոմուրճյանը եւս ներկայացնում է.

«Ի քունճ քունճ զհարուածս առնեն զազնիւ կանայս հափըշտակեալ,
Զչքքնաղ աղջկունս եւ զնոր հարսունս քարչէին՝ խայտառակեալ»
[տ. 670-671]:

«Ըզգուրիցայսըն օմօրֆօս եւ քէրացայս Լամբրոնափայլ,

Միշտ ի սպասու կալնուն զնոսս ի խնամատար անձանցն կալեալ»
[տ. 677-678]:

Ուշագրութիւն են հրավիրում Կ. Պոլիսին նվիրված այս հատվածում օգտագործված հունարեն՝ դալօեէրօ (հողեւորական, վանական), արհօնդէս (իշխան, ազնվական), դուրիցա (աղջիկ, օրիորդ, կույս), օմօրֆօս (գեղեցիկ, չքնաղ), քէրացա (տիկին, տիրուհի) բառերը, որոնք համոզիչ կռվան են Կ. Պոլիս անկման նվիրված ողբում հունական աղբյուր օգտագործված լինելու մասին:

Շարաֆեդդինը Օսմանյան դինաստիայի հաստատման եւ նրա հզորացման կապակցութեամբ նկատում է, որ «Из дня в день из минуты в минуту умножается и возрастает величие и великолепие этого вечного рода» [172, с. 42]:

Այս միտքը արտահայտված է նույնպես Երեմիա Քյոմուրճյանի մոտ՝ «Օր ըստ օր է միշտ զօրացեալք Հանուրց ազգաց ճոխազարդեալք» [տ. 20]: Հիշելով Շարաֆեղզինի եւ Երեմիա Քյոմուրճյանի այս համապատասխանութիւնը, իհարկէ կշեշտենք, որ ամենայն հավանականութեամբ, նրանց տվյալ հատվածում համընկնումը ծագում է երկուսի համար էլ միեւնույն թուրքերեն սկզբնաղբյուրից:

Վերահիշյալ թուրքական աղբյուրների հետ միասին, սրանց մի մասի հետ պատմութիւնների կապը թերեւս որոշակի կամ պատճառաբանված չի կարելի համարել, Երեմիա Քյոմուրճյանը օգտագործել է եւ հայկական հուշարձանները՝ պատմութիւններ, ժամանակագրութիւններ, հիշատակարաններ, պատմական ողբեր, որոնց հաղորդած տվյալները ստույգ են ու անկողմնակալ: Նա Կոնստանդնուպոլսի՝ Բյուզանդական կայսրութեան վերջին պատվարի կործանումը ողբալիս հիշում է պատմահայր Մովսես Խորենացուն՝ «Ժամ է մեզ ըստ Խորենացույ յորժամ ըզհայս լինէր լացեալ» [տ. 689], Ներսես Շնորհալուս «Ժամ է մեզ ըստ Նէրսիսի, որ զՈւրհայունն էր ողբագրեալ» [տ. 691], Առաքել Բաղիշեցուն՝ «Ընդ որ Առաքել վարդապետն մեր ի նոյն աւուրս այսմ վըշտակցեալ» [տ. 639-695] եւ Բայազետի ու Լենկ Թամուրի պատմութեան հատվածը գրելիս թովմա Մեծօփեցուն՝ «Թովմա բաբունն, զորմէ պատմէ, զայլ իմն զգործիսն ոչ է լուեալ» [տ. 333]⁴⁵:

Երեմիա Քյոմուրճյանը ծանոթ է եղել եւ օգտվել է Առաքել Դավրիժեցուց [22], Հովհաննես Մշեցուց [113], Հակոբ եւ Ստեփանոս Թոխաթցիներից [109; 138], Մինաս Ամդեցուց եւ Մինաս Թոխաթեցուց [101; 102, 103], Հովհաննես Մակվեցուց [87], Ազարիա Սասնեցուց [2], Ավետիք ժամանակագրից [31], Գրիգոր Կամախեցուց [42], Վարդան Բաղիշեցուց [140], Թադեոս Սեբաստացուց [74]⁴⁶, Հակոբ Վարդապետից [141], ընդ որում նրանցից ոչ միայն պատմական տվյալներ ու փաստեր է քաղել 16-րդ դարի առաջին քառորդից սկսված մանկածոդովների, սուլթան Սուլեյման Առաջինի իշխանութեան շրջանում կայսրութեան եւ Իրանի միջեւ Հայկական աշխարհում Հայաստանի ամբողջական նվաճման համար մղվող պատերազմների, այնուհետեւ շահ Աբասի ժամանակ եւ հետո ավելի բուռն ընթացող պարսկա-թուրքական բախումների, այս ժամանակներից սկսված եւ շարունակվող ջեյալիական շարժումների աշխարհագրական միջավայրի, ծավալի, շարժման պատճառների, սոցիալական եւ ազգային կազմի, ապստամբութիւններից եւ պատերազ-

մներից հայ ժողովրդին հասած ավերիչ հետեւանքների՝ սովի, մարդակերության, ժողովրդի գոյատեւմանը վտանգող արտագաղթի, հայրենագրկության, մասսայական բնաջնջման ողբերգության վերաբերյալ. այլեւ հետեւել է նրանց դրական ավանդույթներին՝ փոխ առել իմաստավոր արտահայտություններ, ոճեր ու դարձվածքներ, խոսքի դիպուկ ձևեր, բնութագրումներ, առհասարակ հետեւել նրանց պատմողական արտահայտչամիջոցներին:

Ոճական առումով, իր խոսքին հուզականություն հաղորդելու, այն ավելի ազդեցիկ դարձնելու նպատակով, Ե. Քյոմուրճյանը դիմել է Սուրբ Գրքին, Եսայու մարգարեությանը, սաղմոսներին, Երեմիայի ողբին:

«Ժամ է ինձ ըստ Եսայեայ գարժանահասն 'ստ այսմ յիշեցեալ.

Փոխանակ կամար գօտոցն են հուան գօտովք եւ զքուրձ զգեցեալ»
[տ. 683-684, Հմմտ. Ես. Գ. 24/ [25]:

«Ժամ է ինձ 'ստ Դաւթին բերել ըզգուշակ սուրբ քաղաքին տալ, թէ՛ հեթանոսք ահա մըտին ի սուրբ տաճար քո եւ պըղծեալ»

[տ. 685-686, Հմմտ. Սաղմ. ՀԸ, 1, [25]:

«Ժամ է ինձ 'ստ Երեմիայի ըզգլուխ իմ ծով առնուլ 'ւ ողբալ, Իշխան երկրին գոլ հարկատու, նեղեալ, սովեալ եւ ծարաւեալ»

[տ. 687-688, Հմմտ. Եր. Ա, 1, [25]:

Ի վերջո նշենք նաեւ, որ Երեմիա Քյոմուրճյանը տեղ է տվել եւ իր ժամանակակից ականատեսների պամություններին, այդ մասին հիշատակելով. «Ականատեսք մեզ պատմեցին...» [տ. 1670]:

ԵՐԵՄԻԱ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՂԲՅՈՒՐ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(17-րդ դարի 3-րդ քառորդ)

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ
ՈՒԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Ինչպես ասվեց, «Պատմութիւն Համառօտ Դձ տարւոյ...» առաջին երեք մասերը եւ արձակ «Համառօտ պատմութիւն թագաւորաց օսմանցոց»-ի մինչեւ 1648 թ. բաժինը ունեն բանաքաղային բնույթ: Այդ Հանգամանքը, սակայն, Երեմիա Քյոմուրճյանին չի խանգարել, հայտնի նյութի նկատմամբ Հանդես բերել անկողմնակալ վերաբերմունք: Քաղված նյութերը չեն մեկնաբանվում այն բովանդակությամբ, ինչպես ընկալվել, մեկնվել ու բացատրվել են միակողմանիությամբ եւ միտումնավորությամբ տառապող թուրքական աղբյուրներում: Երեմիա Քյոմուրճյանի պատմական երկերը թուրքերի հաղթանակների, զենքի ու զորության գովերգություններ չեն, ինչ հատուկ է թուրքական աղբյուրներին, այլ ունեն նպատակ՝ ճշմարիտը պատմելու պատմական եղելություններում:

Երեմիա Քյոմուրճյանը հետեւողականորեն իր ժողովրդին է ծանոթացնում Օսմանյան կայսրության պատմությունը՝ սկզբնավորությունը, նրա անցյալին ու ներկային: Նա շեշտում է, որ թուրք տիրակալները եկել են հեռվից (մի կարեւոր ճշմարտություն նրանց եկվորության վերաբերյալ, որը համառորեն վկայում են արեւելյան աղբյուրների հետ թուրքական սկզբնաղբյուրները եւս), եւ թեեւ հավաստիացնում են, թե իրենք «Հիմն եւ արմատ ... լեալ», եւ քաղաքակիրթ են, չպետք է հավատալ, որովհետեւ նրանք եւս բռնակալներ են, ինչպես պարսկական, եգիպտական, Դամասկոսի ու Բաղդադի տիրակալները, եւ արյունով

ու բռնութիւններ տարածել են իրենց իշխանութիւնը արեւելյան ու արեւմտյան սահմաններում, վատաբարո արարքներում գերազանցելով բռնութիւններ արեւմուտք ներխուժած իրենց նախորդներից: Երեմիա Քյոմուրճյանը հիշատակում է թուրքերի վարած բոլոր պատերազմները, արձանագրում նվաճված երկրներում նրանց գործած չարիքները՝ (Ջարդ, թալան, գերեզմանութիւն, ժողովուրդներին հասած բազում արհաւիրքներ, մանկաժողովներ, բռնի հավատափոխութիւն փաստեր), որոնք թուրքական աղբյուրներում ներկայացվում են որպէս թուրք զինվորի հերոսականութիւն, քաջութիւն ու սխրագործութիւն օրինակներ՝ «խլամի մեծութիւնն ու փառքը ամենարարձր պայծառութիւն հասցնելու» համար [230, էջ 23]:

Երեմիա Քյոմուրճյանը պատմում է Օսմանյան կայսրութիւն սահմաններում տեղի ունեցած ընդվզումների, խռովութիւնների, ապստամբութիւնների, ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի, Հայաստանի տարածքում ջիւլիանի ապստամբութիւն ծանր հետեւանքների, կայսրութիւն պալատական միջավայրի եւ հեղաշրջումների, սուլթանի եւ հպատակի փոխհարաբերութիւնների մասին:

Երեմիա Քյոմուրճյանը որպէս ականջալուր եւ ականատես հեղինակ իր ժամանակի, ընդարձակ տեղեկութիւններ է հաղորդում 17-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայում թուրքերի մղած նվաճողական պատերազմների, Մոլդավիայի եւ Վալախիայի հակաթուրքական-ազատագրական տրամադրութիւնների մասին, անդրադառնում ենիչերիների ու սիփահչինների խռովութիւններին, կենտրոնական կառավարութիւն քաղաքականութիւնից դժգոհ փաշաների՝ Հայդար օղլուի, Հասան փաշայի եւ Թայար օղլու Մուստաֆայի, Բուրդ Նեզիմի, Ղաթրջի օղլի Ալիի ապստամբութիւններին:

Երեմիա Քյոմուրճյանը տեղեկութիւններ է տալիս նաեւ կայսրութիւն սահմաններում իրենց գոյութիւն համար մաքառող Հայ, հույն, հրեա եւ այլ ժողովուրդների վիճակի, պոլսահայութիւն միասնութիւնը խանգարող երեւույթների, քրիստոնյա ժողովուրդների եւ Օսմանյան կայսրութիւն փոխհարաբերութիւնների, վարչակառավարման ձեւերի եւ մեթոդների, զիվանական հարաբերութիւնների, երկրի միջազգային առեւտրական կապերի, կայսրութիւն մայրաքաղաքի տնտեսական դերի, խանութների, շուկաների եւ դրանց բովանդակութիւն, բնակչութիւն կազմի, զբաղմունքի, գործող արհեստների, պատմական հուշարձանների

վերաբերյալ: Այսպիսով Երեմիա Քրիստոսը հարուստ նյութ է հաղորդում կայսրության քաղաքական, տնտեսական եւ հպատակ ժողովուրդների պատմության համար:

Քաղաքական անցքերը, իրադարձությունները Երեմիա Քրիստոսը հաղորդում է որպես փաստեր, փաստերի շարք՝ առանց ակտիվ մեկնաբանությունների եւ պատճառաբանությունների: Այս ոճը, որ հատուկ է ընդհանրապես ժամանակագրություններին, դրսևերում է պատմական իրողությունների ճշմարտացի վերարտադրության խնդրում Երեմիա Քրիստոսը անմիջականությունն ու անկողմնակալությունը: Բայց փաստերը, պատմության ընթացքը Երեմիա Քրիստոսը, արտահայտելով իր ժամանակի ըմբռնումը, պայմանավորում է վերին ուժով: Ըստ նրա, Աստուծոն է հայտնի անիմանալին ու սպառնալից, քաղաքին, երկրին, ժողովրդին վիճակված գալիքը.

«Աստուծոյ է գիտելին, իսկըզբանէ զոր կամեցեալ,

Որպէս շարժէ եւ զարածս, նոյնպէս ազդմունքն եւ Հետեւեալ»

[տ. 3613-3615]:

«Միայն միոյն Տեառն գիտելի, ամենեքեան շողակրատեալ» [տ. 3366]:

Նախախնամությունը այդ եղելությունները, անխուսափելի գալիքը ավետում է բնության, տարերային աղետների՝ կայծակի, երկրաշարժերի, հրդեհների, երկնային երեւույթների հայտնության միջոցով [տ. 1019-1023; 3362-3368; 1, Մատ. ձեռ. 1786, էջ 54; ձեռ. 8780, էջ 22ա]: Սակայն Երեմիա Քրիստոսը միաժամանակ ցույց է տալիս, որ թուրքերը ամենուրեք հաջողության են հասել ոչ թե իրենց հավատքի նկատմամբ քրիստոնյաների ցուցաբերած թերացումների, այլ՝ նախ թուրքերի ռազմատենչության, մշտապես արշավանքի պատրաստ տրամադրության եւ երկրորդ՝ հայրենիքի պաշտպանության գործում քրիստոնյա ժողովուրդների ցուցաբերած անհոգության եւ անտարբերության, ճակատամարտի դաշտում քրիստոնյա զինվորի անմարտունակության, թուլամորթության եւ վախկոտության հետեւանքով [տ. 1292-1293]: Երեմիա Քրիստոսը համար հայոց աշխարհին, հայոց ժողովրդին հասած անպատմելի ողբերգությունները մեղքերի հետեւանք չեն, այլ՝ Հայաստանի ամբողջական նվաճումը հետապնդող թուրք-պարսկական շարունակական պատերազմների, խուժուժ ջնջալիների չարագործությունների:

Երեմիա Քրիստոսը գնահատում է իրական վիճակը, այն ինչ

գոյություն ունի ներկա պահին: Նա երազող է՛ Կ. Պոլսի անկումը տեսած Առաքել Բաղիշեցու եւ Աբրահամ Անկյուրացու նման: Ապրելով նրանցից երկու հարյուր տարի հետո, նա ողբում է, իհարկեւ, այդ անդարձ կորուստը, բայց հասկանում, որ՝

«Զինչ շահեցայց դըրուատելոյս, ի քաղաքէս զինչ եմ օգտեալ,
Զինչ է շահ քրիստոնէից, եթէ ոչ միշտ յոգոց հանեալ» [տ. 727-728]:

Անիրազործելի են դարձել նախկին երազանքները, ազատագրությունն ավետող հայոց տեսիլներն ու մարգարեությունները, չկա բյուզանդական աշխարհին վերածնունդ գուշակող ուժը՝

«Ըստ մեր նշան մի չերեւին, այլ գրեհհիկքըդ մընացեալ» [տ. 734]:

Սա հուսահատության կանչ է՛, այլ իրադրության ճիշտ գնահատություն: Բյուզանդիայի եւ նրա վերջին պատմարի անվերադարձ կորուստը քրիստոնյա աշխարհի համար անժխտելի փաստ է, հենց Բյուզանդիայի՝ ենթակա եւ հարեւան դաշնակից քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ գերագահության ձգտման թեթեւամիտ, դալիք վտանգին դիմադրող միասնական ուժը ջլատող քաղաքականության անխուսափելի արդյունք՝

«Վայ ասեմ ազգիդ Հոռոմ, որ աչքդ ի բաց գհոգիդ առեալ,

Վայ կարդացիք յոլով աղաաց եւ միշտ ըզպարախտս զմեծ խօսեցեալ:

Զանգիտութիւնսն պատճառէիք՝ զյանյաջողմանցըն կատարեալ

Հըպարտութիւնդ սնապարծութեամբ ընդ մախանաց միայն

մնացեալ» [տ. 729-731; 733]:

Եւ մխիթարական է միայն այն, որ այդ քրիստոնյա երկրի հոգեւոր հարստության ժառանգորդը եղավ Եվրոպան.

«Զիմաստութիւնդ Փրոանկն էառ, եւ զտէվլէթդ Տաճիկ ապուեալ»

[տ. 732]:

Բյուզանդական կայսրության կործանումով նոր շրջան է սկսվում Օսմանյան կայսրության համար: Թուրքերը ավելի ակտիվ եւ վճռական դործողությունների են դիմում Բալկանների նվաճման ծրագրով, համոզված եւ վստահ լինելով, որ Կ. Պոլսի դրամանը նպաստող Եվրոպայի անմիաբանությունն ու անվճռականությունը հետագայում եւս կբացառեն կողեկտիվ հակահարվածի հնարավորությունը: Մուհամմեդ Երկրորդը (1451-1481 թթ.) իր իշխանության 30 տարիների եւ օսմանյան սուլթաններից ամենաազդեակիվ ներկայացուցիչներ՝ Սելիմ Առաջինն (1512-1520 թթ.) ու Սուլեյման Առաջինը (1520-1566 թթ.) կարողանում են կայսրության սահմանները տարածել երեք մայրացամաքներում՝

Հպատակեցնելով բազում ժողովուրդներին:

Երեմիա Քյոմուրճյանը ըմբռնում է եւ Համոզում, որ Օսմանյան կայսրութեան պատմութիւնը պատերազմների, բարբարոսութեան անվերջ շղթա է, որոնք թուրքերը մղում են եվրոպական եւ ասիական ժողովուրդների դեմ՝ տիրելու, ստրկացնելու, բնօրրանից դաղթեցնելու, նրանց դարավոր մշակույթը ոչնչացնելու մոլուցքով, որ օսմանյան տիրակալները «ի մարտէ ոչ դադարէր՝ և ի շինութեանց ոչ պարապեալ [տ. 1203-1204], մշտապես փնտրել են առիթ պատերազմի ելնելու՝ «Ելեալ արքայն ըստ օրինի, որ պատճառքն միշտ խընդրեալ» [տ. 1377-1378]:

Թուրքերը նույն ոգով են ոտք դնում 17-րդ դար: Դարասկզբից իսկ բացահայտ ազրեսիվութիւն են ցուցաբերում Ուկրաինայի նկատմամբ՝ պատերազմների երկար շարք սկսելով Լեհական թագավորութեան դեմ [164, էջ 95]: Նրանք դարի կեսերից սկսյալ պատերազմ են մղում Վենետիկյան Հանրապետութեան դեմ Միջերկրականի ստրատեգիական հենակետերից Կանդիան (Կրետե) զավթելու նպատակով: Ամենադաժան պատժիչ միջոցներ են դործադրում ազատագրական տրամադրութիւններով ոգեւորված Վալախիայի, Մոլդավիայի եւ Տրանսիլվանիայի դեմ եւ, ի պատասխան Հակաթուրքական ծրագրերում Ավստրիայի ցուցաբերած աջակցութեան, փորձում են իրականացնել Վիեննային տիրելու իրենց վաղեմի ծրագիրը: Դարի այս քաղաքական կարեւոր եղելութիւններին առավել հետեւողական է անդրադառնում ժամանակակից Երեմիա Քյոմուրճյանը:

Կանդիան՝ Միջերկրական Հյուսիս-արեւելյան եւ Էգեյան ծովի Հարավային շրջանում գտնվող այդ կղզին ուներ տնտեսական ու ստրատեգիական մեծ նշանակութիւն եւ, բավական մոտ լինելով Օսմանյան կայսրութեան սահմաններին, հսկում էր Ստամբուլ-Եգիպտոս տանող առեւտրական ուղիների վրա³⁷: Օսմանյան կայսրութիւնը գիտակցում էր նրա կարեւորութիւնը եւ փայտայում էր տիրելու հույսը: Սակայն ժամանակ չէր գտել՝ զբաղված լինելով ցամաքային պատերազմներով մերթ եվրոպայում եւ մերթ Ասիայում, թեեւ Հաջողվել էր անցյալ դարում տիրել նույն միջավայրի Ռոտոս (1527 թ.) եւ Կիպրոս (1571 թ.) կղզիներին:

Կայսրութիւնը իր այդ նպատակը «Հանկարծակի» հիշում է 1638թ.: Փորձում է օգտվել Միջերկրականի եվրոպական առեւտրին խանդարող սուլթանութեան հպատակ մավրիտանական ծովահենների դեմ Վենե-

տիկյան Հանրապետության ձեռնարկած պատժիչ գործողությունների պատճառով կայսրություն ծովամերձ շրջաններին հասած վնասներից եւ ընդհանրապես անհանգստացած Հանրապետության ծովային հաջողություններից, պատերազմ սկսել Վենետիկյան Հանրապետության դեմ: Սակայն Վենետիկյան դիվանագիտությունը հաջողվում է կանխել պատերազմը եւ կայսրության հետ կնքել համաձայնագիր ծագած հարցի շուրջ, ըստ որի՝ Հանրապետությունը պարտավորվում է սահմանամերձ շրջանին հասած վնասի դիմաց վճարել 250 հազար դուկատ, իսկ կայսրությունը՝ արգելել մավրիտյան ծովահենների հարձակումները վենետիկյան առեւտրական նավերի վրա եւ կայսրության նավահանգիստները բացել վենետիկյան նավերի համար [244, հտ. 3, էջ 141-142]: Սակայն այս պայմանագիրը եւ սուլթան Մուրադ Չորրորդի (1624-1640 թթ.) մահը միայն վեց տարով են հետաձգում թուրք-վենետիկյան պատերազմը [245, հտ. 9, էջ. 119]:

Օսմանյան կայսրությունը իր այդ ցանկությունը իրականացնելու հնարավորություն է ստանում 1644 թ.: Մալթյան ծովահենների հետ կապված մի միջադեպ առիթ է տալիս «Կանդիայի» անունով հայտնի թուրք-վենետիկյան 25-ամյա պատերազմին: Երեմիա Քյոմուրճյանը անդրադառնում է այդ միջադեպին եւ հայտնում, որ հիջրի «Հազար յիսուն եւ չորս» (=1644) թվականին սուլթան Իբրահիմի (1640-1648 թթ.) սիրելի «զղլար աղա ներքինապետ, ընչաւետեալ եւ գիրացեալ» Սյունբյուլ աղան (պալատական խմբակցությունների պայքարի հետեւանքով պաշտոնազրկված), «յարքայէ հրաման» առնելով, իր ունեցվածքով (Ֆինանսական մեծ կարողություններ, 50 հարճերով եւ ստրուկներով, 500 վարձկան պահապան զինվորներով) ուղեւորվում է Եգիպտոս՝ անցկացնելու կյանքի վերջին շրջանը [245, էջ 120]: Նրա նավը «մերձ ի Կրիտէս» ենթարկվում է մալթյան ծովահենների գրոհին. «Եթովպացին՝ ալլը ընդ նմա Մալթէզ թօփիցն մահացեալ»: Մովահենները, հափշտակելով նրա «լի ստացուածովք» նավը՝ գերեվարված թուրքերով փոխադրում են Կրետե՝ ձեռք բերած «յաւարիցն, յերիվարացն ճէներալին ընծայ տուեալ» [տ. 2737-2744]:

Սուլթան Իբրահիմը կարգադրում է պատերազմի պատրաստություններ տեսնել: Հաջորդ տարի «հազար յիսուն եւ հինգ (1645 թ.) յեւանել դարնան հարկեալ» (ապրիլ 30-ին) թուրքական մեծամթիվ նավատորմը ուղղություն է վերցնում դեպի Կանդիա: Ամեն ինչ կատարվում է խիստ ծածուկ՝

նախապես հայտարարվում է պատերազմի նախապատրաստությունների՝ Մալթայի դեմ ուղղվածության մասին [245, էջ 121]: Միայն «մերձ ի Չուխա կղզի», բաց ծովում Յուսուֆ փաշան հայտնում է արշավանքի բուն նպատակը [տ. 2750-2754]: Թուրքերի առաջին գրոհին ենթարկվում է կղզու հյուսիս արևմուտքում գտնվող Հանիան, որը նրանք վերցնում են պաշարման 54-րդ օրը: Հաջորդ տարի ընկնում է ցամաքային ամուր բերդերից մեկը եւս՝ Ռեթիմոն (15 նոյեմբեր 1646): Բացվում է կղզու գլխավոր քաղաք տանող ճանապարհը՝ «նըկրտին ի Գանտիա, որ ճէնարալն անդ էր նըստեալ» [տ. 2765]: Երեմիա Քյոմուրճյանը գրում է, որ մինչ Կանդիայում թուրքերը հասնում են մեծ հաջողության, ապա հաջորդ տարի Դալմատիայից նրանք ենթարկվում են Վենետիկյան հանրապետության եւ ցամաքային ուժերի հարձակմանը, կորցնում մի շարք ամրություններ եւ տալիս մեծ կորուստներ [տ. 2775-2780]: Վենետիկցիներին հաջողվում է ժամանակ առ ժամանակ նաեւ շրջափակման ենթարկել Դարդանելի նեղուցը՝ (1648-1657 թթ.) Կրետեում գտնվող թուրքական ուժերին զրկելով օգնական ուժեր ստանալու հնարավորությունից [235]:

Թուրքական նավերը հետապնդվում են ամենուր, նույնիսկ սրբատեղի մեկնող նավերը՝ «Յահէ Փռանկին, որ ի ծովն Սպիտակ՝ զբազում ամ ոչ երթայր ուխտաւորաց նաւ»⁴⁸: Վենետիկցիները գրավում են 1656 թ. Սեմենտիրեկ, Լիմնի, Պողչա եւ Միտիլի կղզիները Դարդանելի ելուստում: Շրջափակումը ճեղքելու եւ բաց ծով դուրս դալու թուրքական նավատորմի փորձերը մեծ մասամբ մատնվում են անհաջողության: 1656 թ. հունիսին 100 նավերից բաղկացած թուրքական նավատորմը ջախջախիչ պարտություն է կրում: Եր. Քյոմուրճյանը վկայում է, որ թուրքերը զրկվել են իրենց ամբողջ նավատորմից՝ «սոքա չունին մի նաւ ընաւ» [տ. 3014-3014; Հմմտ. 60, էջ 124], եւ այդ իրադարձությունը մեծ շփոթ է առաջացրել կայսրության մայրաքաղաքում: Օգտվելով այս անհանդիստ կացությունից՝ մուֆթին, գլխավորելով պալատական հակադիր կուսակցությունը, համարձակվում է ակնարկել մանուկ սուլթանի եւ սուլթանության ողորմելի վիճակը եւ «մուշավէրէ առնել, թէ զթագաւորն սպանցեն եւ եղբայր նորին դիցեն յաթոռն»: Բացահայտվում է դավադրությունը: Աքսորվում, մահապատժի են ենթարկվում բարձրաստիճան անձինք, եւ ինքն՝ մուֆթին, պաշտոնազրկվում է նաեւ մեծ վեզիր Պոյնի էկրին, որը փորձել էր ելք որոնել «զհաշտին յառաջ արկեալ»

[տ. 3015-3018, 3021-3030; 200, էջ 421-422]:

Մեծ վեզիրի իշխանության է հրավիրվում 75-ամյա Մուհամմեդ Քյոփրյուլուն (1656-1661 թթ.), որին տրվում է լիազորություններ՝ խաղաղացնելու անհանգիստ մայրաքաղաքը եւ հարձակողական նոր ուժեր տեղափոխելու Կրետե: Շուրջ մեկ տարվա նախապատրաստություններից հետո (կազմավորվում է նավատորմը եւ առատ ռոճկավորումով բարձրացվում բանակի մարտունակությունը) [տ. 3107-3111] կայսրության նավատորմը անցնում է գրոհի՝ օգնական ունենալով առափնյա հրետանին: Ծովային ճակատամարտի թեժ պահին թուրքերը փախուստի են դիմում [տ. 3116-3118]: Մուհամմեդ Քյոփրյուլուն կործանարար վիճակից դուրս գալու, ենիչերի ուժերին զգաստացնելու համար մահվան է դատապարտում 800 դասալիքների [235]:

Վենետիկյան նավատորմը ոգեւորված հաջողությունից փորձում է իրականացնել նախամտածված մի ծրագիր՝ անցնել Դարդանեղի նեղուցը, համարձակորեն նավարկել Ստամբուլի վրա եւ քաղաքը ռմբակոծելու փաստի ներքո ստիպել սուլթանությանը կնքելու Կանդիայի պատերազմի շուրջ նպաստավոր պայմանագիր: Սակայն առափնյա հրետանու պատահական արկից հրդեհվում է վենետիկյան նավերից մեկը, եւ նեղուցում նավերը, բախվելով հրդեհված նավին, մեծ կորուստներ կրելով, ետ են քաշվում [245, էջ 161]: Երեմիա Քյոմուրճյանը վկայում է, որ թուրքական «տոնանման» զորանալով անցնում է նեղուցը եւ դուրս գալիս բաց ծով: Վենետիկյան նավատորմը ոչ միայն վերացնում է շրջափակումը, այլև քաշվում Լիմնի եւ Բողչա ատա հենակետերից:

Վենետիկյան հանրապետությունը Կանդիա թուրքերի նոր ուժեր տեղափոխումը կանխելու համար 1665 թ. առաջարկում է կնքել պայմանագիր՝ խոստանալով միանվազ վճարել 100 հազար ոսկի, իսկ տարեկան 12 հազար, միաժամանակ վերադարձնել Բոսնիայում գրավված տարածքը, ճանաչել Կանդիայի որոշ տարածքի նկատմամբ կայսրության իրավունքները [234, հտ. 1, 29ա-29բ; 238, հտ. 1, էջ 412]⁴⁹: Սակայն առաջարկությունը մերժվում է, եւ Կանդիայի պատերազմը հաղթական վախճանին հասցնելու վճռականությամբ թուրքերը մեծ վեզիր Ահմեդ Քյոփրյուլուի (1661-1667 թթ.) անմիջական ղեկավարությամբ, 1666 թ. 167 նավերով ռազմական ուժ են տեղափոխում Կանդիա կղզի [200, էջ 437; հմմտ. 234]:

Երեմիա Քյոմուրճյանը նշում է, որ թուրքերի այս նոր գրոհը դիմա-

գրավելու համար ուժեր են ժամանում Եվրոպայից՝ «ի Վենետիկոյ իբրու օգնել անդ փութացեալ» «նաւք Ֆրանցիզայ», «որք այրեցան եւ յետս դարձան», (նկատի ունի հավանաբար Ֆրանսիայի 1669 թ. 6 հազարանոց զինական օգուծյունը, ինչպես նաև 35 նավերով ժամանած Ֆրանսիական, պապի, Մալթայի եւ Վենետիկյան հանրապետութիւններից շտապ ժամանած ուժերը [տե՛ս, 20, էջ 142; 181, էջ 315-317; 182, էջ 837]):

Թուրքերը աշխատում են գետնափոր ճանապարհով մոտենալ պարսպներին եւ անցքեր փորել, սակայն Երեմիա Քյոմուրճյանի վկայութեամբ, նրանք 4 տարի մարտնչելով չեն կարողանում հաղթահարել քաղաքի «ոչ գտեալ զշաւիղս ուսհից» եւ միայն պաշտպանների շարքում գտնվող դավաճանի մատնութեամբ, զրոհ կազմակերպելով քաղաքի թուլ պաշտպանած կողմի վրա՝ պաշտպաններին դնում են ծանր կացութեան մեջ, եւ նրանք «վերելով» հանձնում են Կանդիան (1669թ. սեպտեմբերի 5-ին):

Կնքված պայմանագրի համաձայն՝ Վենետիկյան հանրապետութիւնը իր ձեռքում է պահում կղզու Սուդա, Գրոնբոս եւ Սպինդունդ բերդերը [234, 60-61], որոնք եւս հետագայում անցնում են թուրքերին, Գրոնբոսը 1692 թ., Սուդա եւ Սպինդունդը՝ 1715 թ. [245, էջ 201]: Հանրապետութեան է մնում նաև Դալմատիայում Քիլիս բերդը: Կանդիայի պաշտպանները, ըստ հրամանի եւ պայմանի՝ «ի դատարկել զքաղաքն սկսեալ»:

Թուրքերը, հավատարիմ իրենց քաղաքականութեան, քրիստոնյա այս քաղաքի ճարտարապետական շինութիւնները, եկեղեցիները վերածում են մզկիթների ու խաների, բաղնիքների: Երեմիա Քյոմուրճյանը դառնութեամբ է նկարագրում այդ եւ բնիկ ժողովրդի հեռանալու իրողութիւնը.

«Եկեղեցիք, տաճարք թափուրք զարդուց, փառաց ունայնացեալ,

եւ յայլաբանս փոխարկեալ, ի բաղանիս՝ և ի խանս չըրջեալ:

Ըզընակութիւնս լըքեալ թողին եւ երթալով երթալ լցեալ,

Ըզձընընդեան եւ զսընընդեան տեղիսն թողեալ՝ և օտարացեալ:

Հեռացան եւ մեկնեցան, օտարք զերկիրըն վայելեալ,

Հայէին, յետս դառնային՝ արտասոււածորք հառաչեալ»

[տ. 3459-3464]:

Թուրքերը, ինչպես խոստովանում է Յըլմազ Էօղթունա պատմիչը, նույն կերպ են վարվել նաև Հանիայում: 1645 թ. գրավելով քաղաքը, նրանք անմիջապես 3 եկեղեցի՝ սբ. Նիկողոս, սբ. Ֆրանցիսք եւ սբ. Սափան վերածել էին մեջիդի [245, էջ 123]:

Երեմիա Քյոմուրճյանը Կանդիայի անցքերը չի նկարագրում միջ-ազգային հարաբերությունների հենքի վրա: Նա տեղյակ է, իհարկե, որ քրիստոնյա աշխարհը օգնական է եղել Կանդիային, բայց թե ինչպիսի ուժով՝ Երեմիային դա չի հետաքրքրել: Նրա համար կարևոր է եւ ցավալի այն փաստը, որ քրիստոնյա աշխարհը նահանջել է մուսուլմանական աշխարհի առջև:

Իհարկե, Կանդիայի պատերազմին անտարբեր չի դիտում Եվրոպան: Վեստֆալյան հաշտությունը (1648 թ.) վերջ դնելով 30-ամյա պատերազմին՝ եվրոպական երկրները իրենց ուշադրությունը սեւեռում են Կանդիայի պատերազմի վրա: Պապական իշխանությունը, պատերազմի հենց սկզբից իր ռազմական ուժը տրամադրելով հանրապետությունը, ակտիվ դիվանագիտական գործունեություն է ծավալում՝ ստեղծելու հակաթուրքական դաշնություն: Նա հորդորում է լեհ-վենետիկյան համադորձակցությունը՝ պատրաստ լինելով Լեհաստանին տրամադրելու Ֆինանսներ՝ կազմակերպելու իր ռազմական ուժը, սուլթանությունը ներքաշելու համար հյուսիսային պատերազմի: Լեհաստանի թագավոր Վլադիսլավ 4-րդի (1632-1648 թթ.) ոգևորությունը, սակայն, մնում է անարդյունք երկրում իշխող անմիաբանություն հետեւանքով [163, հտ. 2, էջ 444; 157, էջ 77-94]:

Ավստրիան, որ տարածական ու քաղաքական կորուստներ էր կրել 30-ամյա պատերազմում, Կանդիայի պատերազմի շրջանը նկատում է հարմար պահ վերադառնելու կորուստը ի հաշիվ սուլթանության ենթակա շրջանների, ակտիվ իր միջամտությունն է բերում 50-60-ականներին Տրանսիլվանիայում, Մոլդավիայում ազատագրական ձգտումներին, ստեղծված հակաթուրքական քաղաքական իրադրությունը [166, էջ 184]:

Ֆրանսիան, թեև կապիտուլացիաներով կայսրությունում ունեցած առևտրական եւ տնտեսական շահագրգռվածությամբ, անմտահույզ չի նայում Կանդիայի պատերազմում հնարավոր հաղթանակից հետո թուրքերի Միջերկրականում ձեռք բերելիք գերիշխանությունը: Միջերկրականի նկատմամբ միեւնույն ձգտումը փայփայող Ֆրանսիան ոչ բացահայտ, բայց պատերազմի ամբողջ ընթացքում օգնում է Վենետիկյան հանրապետությունը՝ տրամադրելով ռազմութ, հանրապետությունը թույլ տալով նաեւ զորահավաք կազմակերպել Ֆրանսիայում [181, էջ 304; հմտ. 20, էջ 91]: Ֆրանսիան փորձում է սուլթանությունը հարված հասցնել նրա հպատակ Ալժիրում (1664 թ.), հակակշռելու հա-

մար Միջերկրականում երկգերիշխանությունը [179, հտ. 3, էջ 96-97, համա. 20, էջ 90]:

Եվրոպական երկրների այս «համագործակցական» միջամտությունը կարողանում է միայն Կանդիայի պատերազմում կայսրության հաղթանակը հետաձգել 25 տարով: Կանդիայի պատերազմով Վենետիկյան հանրապետությունը կրում է տնտեսական մեծ հարված, նսեմանում է նրա քաղաքական դիրքը Միջերկրականում: Մյուս կողմից Կայսրությունը Միջերկրականի ավազանի ստրատեգիական այդ կարևոր հենակետին տիրում է մարդկային եւ ֆինանսական մեծ կորուստների դնով, որը բացասական անդրադարձ է ունենում ինչպես երկրի ներքին տնտեսական կյանքի, այնպես էլ ռազմական հարվածային ուժի վրա:

Կանդիայի պատերազմին զուգընթաց Օսմանյան կայսրությունը ռազմական գործողություններ է վարում Արեւելյան Եվրոպայում, կայսրության վասալ Վալախիայում, Մոլդավիայում եւ Տրանսիլվանիայում՝ ազատագրական տրամադրությունները ճնշելու, այդ շարժումներին օգնակից Ալստրիայի եւ քիչ ավելի ուշ Լեհական թագավորության եւ Ռուսաստանի դեմ՝ Ուկրաինան զավթելու նպատակով [164, էջ 95]:

17-րդ դարի կեսերին Տրանսիլվանիայի իշխան Ռակոցի 2-րդը (1646-1660 թթ.), դաշնակցելով Շվեդիային, որը 1655 թ. սկսած պատերազմ էր վարում Լեհաստանի դեմ, եւ, օգնական ունենալով վալախական եւ մոլդավական փոյեվոզությունների ուժերը, 1657 թ. մտնում է լեհական տարածքները՝ նոր սահմաններով վերածնելու հունգարական թագավորությունը: Շվեդա-հունգարական դաշնակցությունը նպատակ ուներ երկբաժանել Լեհաստանը [161, էջ 398; 163, էջ 259-260]: Ռակոցին այդ մտադրությունը անարդել իրականացնելու համար Ղրիմի խանություն միջնորդությամբ խնդրում է կայսրության չեզոքությունը՝ խոստանալով հավատարիմ եւ հնազանդ մնալ սուլթանին եւ ամենամյա համապատասխան տուրք ուղարկել [204, էջ, 139; 173, էջ 66]⁵⁰: Մյուս կողմից Լեհաստանն է խնդրում կայսրության միջամտությունը՝ հայտնելով. «Сын трансильванского короля Ракоци вторгся в мои польские земли и вознамерился захватить их. А беи Валахии и Молдавии послали на подмогу Ракоци по двадцать тысяч воиска, и вот-вот оно двинется на меня» [173. с. 27; 204, с. 102, 181, с. 398]: Մեծ վեղիր Մուհամմեդ Բյոփրյուլուն (1657-1661 թթ.), օգտվելով առիթից, Վալախիայի ու Մոլդավիայի իշխանների գործողությունները Լեհաստանում Օս.

կայսրության նկատմամբ անհավատարմության դրսեւորում դիտելով, Ռուսներէյի մութասարըՖ Մեկեկ Ահմեդ փաշային եւ Ղրիմի խանին հրամայում է անմիջապես անցնել գրոհի [173, էջ 27-28; Հմմտ. 204, էջ 102-103; 161, էջ 398-400]: Ու թեւեւ թուրքական ու խանական ուժերը, անցնելով լեհական սահմանը, հաղթանակներ են տանում Ռակոցիի դեմ, լեհ հետման Լյուբոմիրսկին եւս մտնում է Տրանսիլվանիա, գրավում մի շարք քաղաքներ եւ ստիպում Ռակոցիին նահանջել Լեհաստանից [163, էջ 260], իսկ Տրանսիլվանիայի խորհուրդն էլ կայսրության պահանջով պաշտոնանկ է անում Ռակոցիին [64, էջ 400], այնուամենայնիվ մեծ վեզիր Քյոփրյուլուն հակայական բանակով մտնում է Տրանսիլվանիա: Անպաշտպան երկրում նա գրավում է Եանովա, Լուդոշ, Շերեշ բերդերը իրենց շրջաններով, կցում Բուդինի բեկլերբեկությանը, եւ տարեկան հարկը բարձրացնելով 20 հազարի, մեծ ռազմատուգանքով (25 հազար դուկա) ու թաթարներին բաժին հասած 50 հազար գերիներով հեռանում երկրից [245, էջ 165; 244, էջ 64-65]⁵¹: Փոխում է Վալախիայի եւ Մոլդաւիայի վոյեվոդներին: Մոլդաւիայում Կոստանդին Բեսարարի փոխարեն նշանակում է Գյորգի Գիդային (1658-1659 թթ.), իսկ Վալախիայում՝ Կոստանդին Շերբանիի (1654-1658 թթ.) փոխարեն աղբյուրներում Զիվան անունով Հայտնի Ռադուլ Միքայել Միհնեսին (1658-1659 թթ.), որը, ի հեճուկս թուրքերի, շարունակում է իր նախորդի հակաթուրքական քաղաքականութունը՝ զինակցելով Տրանսիլվանիային [230, Հտ. 351; 238, էջ 178; 204, էջ 342; 173, էջ 169-170; տ. 3133-3136]:

Էվլիա Չելեբին հաղորդում է, որ այս «չարագործ» վոյեվոդը, ծածուկ մտադրութուն ունենալով ապստամբության եւ այն խորամանկորեն թաքցնելով, շուայլ խոստումներով թմրեցնում է թուրքերի զգոնութունը, Վալախիա է հրավիրում բազմաթիվ մուսուլման վաճառկանների եւ կողոպտում Եգիպտոսի հարկի տասնապատիկին հավասար նրանց հարստութունը (Եգիպտոսից ստացված հարկը կազմում է 600 հազար ոսկի), ունեզրկում Վալախիայում ապրող մուսուլմաններին, ստեղծում է 100 հազարանոց մի բանակ՝ կազմված հունգարներից, վալախներից, ավստրիացիներից, շվեդներից, մոլդաւիներից եւ կադակներից, ապստամբում Օս. կայսրության դեմ [204, էջ 343-344, 173, էջ 170]: Դադարեցնում է վալախական հարկի ուղարկումը սուլթանության գանձարան [244, էջ 489; 204, էջ 340; 173, էջ 170]:

Ռադուլ Միհնեսն Վալախիայի տարածքում արագորեն ջախջախում է

Ֆազլի փաշայի հրամանատարությամբ գործող բանակին եւ պաշարում Ջորջուն՝ ծրագրելով Դանուբը սառելուց հետո գրոհել Նիկուպոլսի, Ռուչչուկի, Սիլիստրեի վրա: Երեմիա Քյոմուրճյանը, չմերժելով վոյեվոդի փայփայած հակաթուրքական տրամադրությունները, վկայում է, որ նրա ապստամբությունը թուրքերի անօրինական պահանջների, բռնության, ենթակա ժողովուրդներին կողոպտելու, թալանելու քաղաքականության բնական հետեւանքն է եղել: «Յետ ամսոց մինչեւ ելեալ էր վիզիրն, առաքեաց արս հրամանաւ ի ձեռն Ղատիր փաշայի, որ նստէր նա ի Սիլիստրէ, զի Զձ (600) քսակ պահանջիցէ ի պարոնէն եւ յորժամ առաքէր զայն ինչ պատգամ, յղէր եւ պարոնն արս իմաստունս խօսել առ նա թէ՛ նոր առի գահս ի միջի պարտուց եւ ուստի չունին՝ զայդքան դրամ, զոր խնդրէքն: Եւ Ղատիրս սպան պոյարն նորա, եւ առաքէ երկիցս անգամ պահանջել զասացեալ դրամն: Եւ ձիւանն եւս զգնացեալ դափուծիալաշին սպանանէ, եւ Ղատիրն կալեալ զարս եւ զալասս Ուլախին՝ կոտորէ եւ առաքեաց պատգամ առ վէզիրն զայս ինչ, որ նստէր ի Պուրսայ, թէ՛ ապստամբեցաւ ձիւանն», - գրում է Երեմիա Քյոմուրճյանը [60], էջ 339-340]:

Վոյեվոդը փորձում է բողոքել, բայց նրա սուրհանդակը բռնվում է Ստամբուլի ճանապարհին Ղատիրի կողմից: Քաջ իմանալով այսպիսի դեպքերում ուղարկվող հրամանի բովանդակությունը, Ջիվան վոյեվոդը «պատրաստի զօրոք եւ վաղվաղակի վառեալ մտանէ ի հողս Տաճկաց, միանգամայն զթուր եղեալ ի գաւառս եւ ի դիւղս եւ ի ճանապարհս գէշայս եւ զՅոյնս, զՏաճիկս եւ զվաճառականս ամենայն ազանց զորս եւ գտանէր» [60 էջ 340], նախապես Վալախիայում սպանելով ԺԴՌ (14000) տաճիկ ... եւ ՌԴձ (1400) արս մկրտեալ եւ Խ (40) աւուրքք պատարազի արարեալ հաղորդել տայ ի վանք մի եւ կատարումն քառասնից ... պատրաստէ զղահիճս Բ (2) զի կանգնին ի դրունս վանիցն, եւ տա ի ձեռս արանցն Բ Բ [երկուական] ոսկի եւ ասէ՝ Գիտեմ զի օձ տաճիկ էք եւ անդէն զնոսս սպանանէ: Այսքան աւերութիւն արար ի հպարտութենէ սրտին, եւ թէ՛ դոյր պատճառ դրամ պահանջելոյ աստի ի նմանէ» [60, էջ 340-341]:

Թուրք էվլիա Չելեբին եւս Վալախիայի եւ Մոլդավիայի ապստամբությունները կապում է հարկերի գանձման, հարկաչափերի բարձրացման հետ, նկատելով միաժամանակ, որ անհավատները պատժվեցին իրենց համարձակության համար եւ նրանց երկիրը եւ ժողովուրդը թալանի ու ավարի ենթարկվեցին [204, էջ 346; Հմմտ. 173, էջ 170]:

Թուրքերը ընդհանրապես վասալ Վալախիայի եւ Մոլդավիայի նկատմամբ վարել են շարունակաբար հարկերի բարձրացման քաղաքականություն: Արդեն 15-րդ դարի վերջերին Մոլդավիայից 2 հազար ոսկու փոխարեն գանձվում է 4 հազար ոսկի, 16-րդ դարում հարկը հասնում է 12 հազար ոսկու [243, էջ 423]: Իսկ երբ Մոլդավիան կարիք է ունեցել Ղրիմի խանի օգնություն, հարկը գանձվել է տարեկան երկու անգամ [243, էջ 425]: Վալախիան 16-րդ դարից կայսրությունը վճարել է 100 բեռ աղէչ (10 միլիոն աղէչ) [227, էջ 25; Հմմտ. 243, էջ 421]: Գտնվելով Փինանսական դժվարությունների մեջ՝ կայսրությունը հենց Ջրվան վոյեվոդի հաջորդից պահանջում է այնպիսի մի գումար, որը երբեք Վալախիայի վոյեվոդները չէին մուծել իշխանություն ստանալու դիմաց. «Եւ բերեալ էր զպարոնն ծեր Ուլահին ընդ իւր, որ յոյժ հաւատարիմ գտաւ իւրեանց, զոր նա ինքն եղ անդ եւ արդ պահանջէր եւս ԲՃ (200) քսակս, եւ նա ոչ առնոյր յանձն, թէ ոչ եմ կարող եւ ոչ է պիտոյ իշխանութիւնդ, եւ եդ ի բանտս մահապարտուց մինչեւ էառ եւ զորդին եդ պարոն յՈւլահ եւ զնա արձակեաց» - հաղորդում է Երեմիա Քյոմուրճյանը այդ կապակցությունը [60, էջ 362]:

Վալախիայի Ջրվան վոյեվոդը գալիս էր Ստամբուլից, լավագույնս ծանոթ էր կայսրության ներքին անհանգիստ կյանքին, Փինանսական դժվարություններին եւ ռազմական թուլություններին, բերել էր իր հետ, ինչպես նկատում է Երեմիա Քյոմուրճյանը, մի ծրագիր, որը հաջողություն էր խոստանում վալախա-մոլդավական եւ տրանսիլվանյան դաշնակցության՝ Օս. կայսրության դեմ ոչ թե պաշտպանական այլ՝ նախահարձակ պատերազմում⁵²: Նախ մեկ հարվածով ջախջախել ներխուժած թաթարներին եւ ապա սուլթանության ուժերին նրա իսկ տերիտորիայում՝ «Եւ յորժամ զնաց ձիւան ի Մահար միաբանեցան եւ առաքեցին արս ի պարոնն Պուղտանայ, որ մինչեւ էր գնացեալ նա Ուլահ, թէ եւ ընդ մեզ միաբան լեր, զի կոտորեսցուք նախ զթաթարս եւ մտցուք յերկիրս Տաճկաց: Եւ ելանեն ի տեղոջէ իւրեանց, գան ի մերձ ի Պուղտանն, եւ ծեր պարոնն արձակէ պատգամ, թէ կամք իմ չէ այդմ հաւան, վասնորոյ եւ նոքա զերկիր Պուղտանին աւիրեն» [60, էջ 341]⁵³:

Վալախիան Օսմանյան կայսրության դեմ նման մի զինակցություն առաջարկել էր դեռեւս Մաթեյ Բեսարաբցու (1638-1654 թթ.) իշխանության օրոք Լեհաստանի Վլատիսլավ 4-րդին (1632-1648 թթ.), որը պատրաստակամություն էր հայտնել անսալով պապի կոչին՝ Վենետիկ-

յան դաշնությամբ մասնակցելու Կանդիայի պատերազմին սուլթանությանը ներքաշելով հյուսիսային պատերազմի [20, էջ 42; Հմմտ. 174, էջ 125]: Զինակցությանը կողմնակից էր երեւացել Մուրափիայի իշխան Վասիլ Գայլը (1634-1653 թթ.) ավելի հավատարմով ռուս-լեհական համագործակցության հաջողությանը եւ կոչ էր արել ընդլայնել համագործակցությունը եւ քրիստոնեական մի խաչակրության վերածել [20 էջ 42; Հմմտ. 178, էջ 209-210]: Իսկ դեռ մեկ դար առաջ Մուրափիայի գահի հայազգի իշխաններից Յոան Արեանուլը (1572-1574 թթ.) փորձել էր թուրքական առաջխաղացման դեմ պատնեշ ստեղծել ռուս-ուկրաինական, լեհական, վալախական, մուրափական գինական միությամբ եւ ընկել էր զենքը ձեռքին, ծրագրի իրականացման ճանապարհին թուրքերի դեմ պատերազմում [89, էջ 397]:

Օսմանյան կայսրությանը հակազդելու, նույնիսկ կործանելու բազում եւ բազմապիսի ծրագրեր են առաջարկվում եվրոպացի գործիչների կողմից սպասվող եվրոպական համագործակցությանը, որոնք սակայն չեն գործադրվում քրիստոնյա երկրների միջեւ գոյություն ունեցող հակասությունների եւ մրցակցությունների հետեւանքով⁵³: Բացառություն չի կազմում նաեւ վալախա-տրանսիլվանյան-մուրափական համագործակցության փորձը: Մուրափիայի անվճռականությունը խանգարում է գնահատել ծրագրի կենսունակությունը: Զինակցող ուժերի անմիաբանությունը հնարավորություն է տալիս սուլթանությանը նախահարձակ լինել: Թուրք-թաթարական ուժերը դիմում են արտակարգ միջոցների, ձմռանը անցնելով չսպասված հարձակման: Հանկարծակի եկած վալախական բանակը դիմում է փախուստի, Զորջուրի թուրքերը թալանի են մատնում երկիրը, հրդեհում գյուղ ու ավան: Գրոհում են Տրանսիլվանիայի վրա, ուր պաշտպանություն էր փնտրել իշխանազրկված Զիվան վոյեվոդը [204, էջ 341, 345, 346]⁵⁴:

Օսմանյան կայսրությունը Տրանսիլվանիայի դեմ ավելի ակտիվ դործողությունների է դիմում 1660 թ.: Նախ երկիր է մտնում Բուդինի բեկլերբեկի Ահմեդ փաշայի հրամանատարությամբ մի բանակ: Քլաւբուրգի ճակատամարտում մահացու վիրավորվում է Ռակոցին եւ քաշվելով Վարադ (ըստ Երեմիա Քյոմուրճյանի՝ Գալաթովա) մահանում: Անպաշտպան երկրում թուրքերը «կիսան առին ժե (15) աւուր ճանապարհ զվանս եւ զեկեղեցիս, զգիւղս եւ զգիւղաքաղաքս»

քանդեցին, կործանեցին: Տրանսիլվանիա է հասնում նաև Ալի փաշայի գլխավորությամբ՝ «ԺԸ (19) օտա եէնիչէրաց» մոտավորապես 19 հազարանոց բանակով [60, էջ 355-356]: Պաշարված Վարադ ամրոցը ընկնում է 45-րդ օրը [161, էջ 402; 60, էջ 356; տ. 3220]: Երեմիա Քյոմուրճյանը վկայում է, որ թուրքերը «Սուր եղեալ ի վերայ Մաճարաց անխնայարար կոտորեցին զնոսա եւ գերի վարեցին զբնակիչս գաւառին ոչ պակաս, քան զանցեալ տարին, զոր արարին աւար եւ կոտորաց: Եւ ասացին ի(20) բերդ առեալ ի նոցանէ, որ մուտն է Յուլիսի» [60, էջ 356]:

Քրիստոնյա աշխարհից ստացված այս լուրը մեծ դառնություն է պատճառում կայսրության քրիստոնյա բնակչության շրջանում՝ «Եւ ով էր որ ցնծայր ի լուր, եթէ ոչ անհօք նոցունց», - արձանագրում է Երեմիա Քյոմուրճյանը իր Օրագրության մեջ [60, էջ 359]:

Ավելի սուր բնույթ է ստանում Տրանսիլվանիայի հարցը 1660-1662 թթ.: Թուրքերի ներխուժումները Տրանսիլվանիա վերաճում են թուրքավատրիական պատերազմի: Ավստրիան, որ տվյալ պահին Տրանսիլվանիային հովանավորող միակ երկիրն էր, ստիպված է լինում առավելապես մտահոգվել իր սահմանների անվտանգության հարցով: Օսմանյան կայսրությունը Ավստրիայի դեմ պատերազմ սկսելու եւ Տրանսիլվանիայի վրա նրա ազդեցությունը վերջ տալու համար օգտագործում է սահմանի վրա պաշտպանական նպատակներով Ավստրիայի կողմից կառուցվող Սերինվար ամրոցի փաստը՝ պահանջելով քանդել այն: Ստանալով մերժում՝ մեծ վեզիր Ահմեդ Քյոփրյուլուն 120 հազարանոց բանակով եւ Ղրիմի խանական 30 հազարանոց օգնական ուժով 1663 թ. մտնում է Տրանսիլվանիա [245, էջ 170-177], պաշարում Նիթրա (Nitra) գետի վրա գտնվող հզոր Ույվար ամրոցը եւ մեծ զոհերի զնով պաշարման 40-րդ օրը զրավում այն [234, էջ 11-12; 200, էջ 432; 245, էջ 177]: Միաժամանակ «Թաթարք պէկչէրպէկուլք ի կողմ ի կողմ գերկիրն հարեալ ի կուսէ մի եւ վէզիրն զփալանդայս զոմանս առեալ» [տ. 3309-3310]: Հարձակման են ենթարկվում Նիթրա գետի երկարութեամբ գտնվող բնակավայրերը: Թուրքերը ներխուժում են Մորավիա եւ Սիլեզիա, վերադառնում 80 հազար գերիներով [245, էջ 179; 186, էջ 183]: Երեմիա Քյոմուրճյանը հայտնում է, որ թեեւ հաջողություններին, թուրքական բանակում տիրում է խռով վիճակ, եւ մեծ վեզիրը ստիպված սիփահչիներից շատերին զրկում է իրավունքներից, քաշվում ձմեռելու Բելգրադ՝

«Ի Պէլլիկրատ երբ դառնային, զօրոք վէզիրն անդ ձմեռեալ,

Տըրտնջեալ գային սիփայք, եէնիչէրիք եւ յոյժ խոնջեալ»

[տ. 3313-3314]:

Ավատրո-Հունգարական ուժերը, օգտվելով թուրքական բանակի այս պարտադրված նահանջից, անցնում են հակահարձակման եւ վերադարձվում զբաղեցված վայրերը՝ «զնոյն փալանդայան դարձեալ ապուեալ, զգըտեալ տաճիկս ի կառս լըցին յաշխարհ իւրեանց գերի վարեալ [տ. 3315-3316]: Հատկապես հարված են ստանում թաթարները, որոնք, չնայած թուրքական բանակի նահանջին, դեռեւս շարունակում են կողոպուտն ու թալանը՝ «ի թաթարաց գուեդ մի գտին, զաչսըն փորեալ եւ արձակեալ», սակայն ճանապարհին նրանցից շատերը ցրտահարվում են, եւ «չատք ի գուբս՝ ւ ի վիհս սուղեալ» [տ. 3320]:

Թուրք տարեգիր Թաշիղը հայտնում է, որ մեծ վեզիրը, տեղեկանալով հակառակորդի այս հաջողությունների մասին, հրամայում է Օսեքիում գտնվող Հալեպի բեկլերբեկի Մուհամմեդ փաշային հարձակվել եւ ինքն էլ շարժվում է դեպի Օսեքի: Մուհամմեդ փաշան, գալով Սիդվատոր (Sidvator) եւ տեսնելով, որ ավատրիական բանակը, չկարողանալով կարճ ժամանակվա ընթացքում զբաղել այն, վերադառնում է Օսեքի: Մեծ վեզիրն էլ ժամանելով Օսեքի եւ, տեղեկանալով այդ մասին, կրկին քաշվում է Բելգրադ [234 15-16; 245, էջ 178]: Մինչգեւ Երեմիա Քյոմուրճյանը նշում է, որ թուրքական բանակը վերադառնում է, որովհետեւ անկարող է եղել ձմռանը պատերազմական գործողություններ վարել՝

«Լուեալ վէզիրն երթայ Օսէք, ոմանք անդէն են ցըրտացեալ,

Դառնան ի Պէլիկրատ զի ոչ հնարին յառաջ խաղալ»

[տ. 3320-3321]:

Գարնանը անհրաժեշտ է լինում բարձրացնել ենիչերիների մարտունակությունը, համալրել բանակը, մի բան, որը 17-րդ դարի կեսերից սկսյալ լուրջ դժվարությունների հետ էր կապված, որովհետեւ սովորական երեւույթ էին դարձել դասալքությունը բանակում եւ կենտրոնախույս ֆեոդալների զորահավաքներից խուսափումները: Հրամայվում է կայսրության անատոլիական ուժերին նույնպես ներկայանալ Բելգրադ: Կրկին զինվորագրում են հողագրկված այն սիփահիներին, որոնք առանձնապես չէին փայլել նախորդ կռիվներում, նույնիսկ առիթներ էին ստեղծել բանակում դժգոհությունների՝

«Ըզսիփահիսն ջընջեալս ի բրոց եւ վերստին յայնվայր դըրեալ,

Եւ փաշայս յԱնատուլի զքըջողս զօրաց էր խիստ հարկեալ:

Եւ այլոց փաշայից այլ պատերազմի հրաման փութալ,
Եւ լաղըմճիք դարձեալ խընդրի, եւ դուռ զօրաց կըրկին եղեալ,
Ի Պէլիկրատ դուռ առնէին եւ յիստամպօլ մարդ ժամանեալ,
Հաղարճի պաշին զնոր զօրս աստի՛ւ անտի հանեալ տարեալ»
[տ. 3323-3328]:

Թուրքերը 1664 թ. մայիսին շարժվում են դեպի Յանըք, որի գրավումից հետո բաց կտեսնեին իրենց առաջ Վիեննայի դռները: Ծանապարհին գրավում են Բուբուֆճե, Բերդենճե բերդերը, 20 օր պաշարելուց հետո նաև Սիրինվարը եւ հիմնահատակ կործանում: Ավստրիական բանակը, որին օգնության էր շտապել Ֆրանսական մի 6 հազարանոց ուժ, թուրքերին դիմավորում է Յանըք բերդի դիմաց, Ռաբ գետի հանդիպակաց ափին, որը ավստրո-հունգարական բանակին ապահովում էր ստրատեգիական առավելություն [179, էջ 91-93; 181, էջ 310; 182, էջ 835; Հմմտ. 20; 170, հտ. 2, էջ 113]: Թուրքերը, հաշվի չառնելով այս հանդամանքը, սկսում են անցնել գետը: Ավստրիացիները թույլ տալով գետն անցնել, ապա, կեղծ փախուստի երեւույթ ստեղծելով, կտրում են գետն անցած ուժերին թիկունքից եւ հասցնում 1664 թ. օգոստոսի 1-ին տեղի ունեցող ճակատամարտի ելքը վճռող տակտիկական հարվածը: Հազարավոր թուրքեր իրենց մահն են գտնում Ռաբ գետում՝

«ժայթքեցան միագումարք՝ դասք սըրընթացք վերայ հասեալ,
Ահ եւ երկիւղ եկն ի վերայ Տաճկաց, որք յետս եղեն փախեալ:
Ի ջուր Ռապա լըցան՝ երիվարօք ստորասուզեալ,
Օտապաշիք եւ չօրպաճիք եւ փաշայք ընդ մեծամեծս այլ:
Իսմայիլ փաշայն իւրովք եէնիչէրւոց դունդք ճապաղեալ,
Մեծամեծք նոցուն փոքումբք կորեան ի ջուրն, եւ այլքն փախեալ»
[տ. 3347-3352]:

Թուրքերի կորուստը, ըստ Ռաշիտ պատմագրի՝ կազմել է 5-10 հազար, մինչդեռ աղբյուրների տվյալներում հասնում է մինչև 25 հազարի [234, էջ 22; 200, էջ 435; 170, հտ. 2, էջ 113]:

Չնայած այս տպավորիչ հաղթանակի, Ավստրիայի առաջարկությամբ Սենթ Գոթարի մոտ գտնվող Վասվարում (Էսենբուրգ - Esenburg) երկու երկրների միջև կնքվում է պայմանագիր (1664, օգոստոս 10-ին), ըստ երկրների միջև կնքվում է պատերազմում թուրքերի որի՝ Ավստրիան ընդունում եւ ճանաչում է պատերազմում թուրքերի գրաված Ույվար, Նովիգրադ եւ Ենի քաղե (Uyvar, Noigrad, Yenikale) բերդերի ու քաղաքների վրա թուրքերի իշխանությունը, խոստանում

է չմիջամտել Տրանսիլվանիայի գործերին եւ վճարել ռազմատուգանք 200 հազար Քլորին [234, էջ 22-23]:

Երեմիա Քյոմուրճյանը պայմանագրի տվյալների մասին ոչինչ չի խոսում, բայց հիշատակում է երկու երկրների միջեւ դեսպանությունների փոխանակման մասին: Վիեննա է ուղևորվում թուրքական դեսպանությունը, իսկ էդիբնե ժամանում Ավստրիայի մեծ դեսպանը, որն արժանանում է արտակարգ ընդունելության եւ պատիվների, որին չէր արժանացել դեռեւս ոչ մի քրիստոնյա դեսպան՝

«Զպատիւ բազում ցուցին նմա, ընդ որ դեսպանն լինէր բերկրեալ, Յարքայէ մինչ ցըվէզիրն ընդ տէՓտէրտարն եւ աղան այլ»

[տ. 3397-3398]:

Թուրքական աղբյուրները մանրամասնությամբ եւ ընդարձակորեն են խոսում վալախա-ավստրիական զինակցության դեմ սուլթանության մղած պատերազմի ու պատերազմը եզրափակող Ռար գետի ճակատամարտի շուրջ, նույնպէս եւ եվրոպական աղբյուրները: Յուրաքանչյուր կողմ պատերազմը համարում է իր օգտին ավարտված: Երեմիա Քյոմուրճյանը, հարազատ մնալով պատմագրության իր մեթոդին, եզրակացությունը թողնում է ընթերցողին:

1669 թ. ավարտված 25-ամյա Կանդիայի պատերազմից դեռեւս 3 տարի չանցած, արդեն Օսմանյան կայսրությունը Ուկրաինայի տարածքում պատերազմում էր Լեհական թագավորության եւ Ռուսաստանի դեմ՝ Ուկրաինան զավթելու նպատակով: Լեհաստանը, որ դեռ չէր հաղթահարել Շվեդա-Տրանսիլվանյան (1657-1658 թթ.), թաթարների (1666-1667 թթ.) ներխուժումների ծանր հետեւանքները եւ ապրում էր ներքին քաղաքական անկայուն մի շրջան, այնուամենայնիվ ամենայն դեպի աշխատում էր պահպանել Ուկրաինայի նկատմամբ իր «իրավունքները»: 1654 թ. հունվարի 18-ի պատմական նշանավոր Պերեյասլավյան ակտով Ռուսաստանը ձեռք էր բերել Ուկրաինան իր կազմի մեջ մտցնելու իրավունքը, բայց դեռ անպատրաստ էր ջախջախիչ հակահարված տալու ուկրաինական հողի նկատմամբ թուրքերի ագրեսիվ ձգտումներին [166, էջ 185]: Լեհաստանի եւ Ռուսաստանի հակամարտությունը Ուկրաինայի շուրջ անհնարին էր դարձնում համագործակցված դիմադրավելու կայսրության հերթական ագրեսիային [164, էջ 99, 109]:

Աջափնյա Ուկրաինայի հետման Պետրոս Դորոշենկոն (1665-1676 թթ.) փորձում է օգտվել շահագրգռված երկրների հակասություններից

եւ ուկրաինական ժողովրդի ազատական տրամադրությունից՝ մեկ հետմանության մեջ միավորել ամբողջ Ուկրաինան [164, էջ 99; 244, էջ 160]: Սակայն Հանդիպելով Չախափնյա Ուկրաինայի Հետմաններ՝ Իվան Բրուխեւեցկու (1663-1668 թթ.) եւ Դեմիան Բազմամեղի (1668-1672 թթ.) դիմադրության ու մերժմանը, Ուկրաինայի միավորման որոնումների ճանապարհին ընտրում է այն սխալ ուղին, որով իր ժամանակին անցել էր Բողդան Խմելնիցկին՝ առիթ տալով 1652 թ. թաթարների ներխուժման ու արյունալի իրադարձությունների [3, էջ 190-191; 163, էջ 244]: Պետրոս Դորոշենկոյի դեպի Օսմանյան կայսրություն կողմնորոշման քաղաքականության հետեւանքով ուկրաինական ժողովուրդը կանգնում է թուրք-թաթար բարբարոսների հերթական ներխուժման վտանգի առաջ [164, էջ 101]: Աջափնյա Ուկրաինան Հայտարարվում է սուլթանության հովանավորության ենթակա տարածություն, եւ Դորոշենկոյին է ուղարկվում իշխանության խորհրդանիշեր [1, Մատ. ձեռ. 1497, էջ 107ա-107բ; 164, էջ 101]:

Եթե մինչեւ 17-րդ դարի երկրորդ կեսը Լեհաստանի եւ Օսմանյան կայսրության փոխհարաբերությունները պայմանավորվում էին Մոլդավիայի նկատմամբ նրանց ունեցած տրամադրությունով, կազակների եւ Ղրիմի թաթարների նախահարձակ գործողություններով (հետեւանք պետք է հիշել Յեցորայի (1618) եւ Խոթինի (1620 թ.) պատերազմները) [154, էջ 179], ապա դարի երկրորդ կեսում դրվում է Ուկրաինայի պատկանելու հարցը: Ահա օգտվելով Ուկրաինայի շուրջ ստեղծված իրարամերժ մթնոլորտից, երբ կենտրոնական Եվրոպայում կրկին ծագել էր երկու խմբավորումների՝ մի կողմից Ֆրանսիայի, Անգլիայի եւ Շվեդիայի, մյուս կողմից՝ Ավստրիայի, Հոլանդիայի, Բրանդենբուրգի եւ Դանիայի միջեւ պատերազմ, Օսմանյան կայսրությունը մեծաթիվ բանակով, խանության զինակցությամբ, սուլթան Մուհամեդ 4-րդի ղլխավորությամբ 1672 թ. ամռանը մտնում է Լեհական թագավորության տարածքները: Պողոլիայում թուրքերին է միանում Հետման Դորոշենկոն, որը Երեմիա Քյոմուրճյանի վկայությամբ՝

«Ի Լէհայ տիրութենէն ապրստամբեալ, ռահացոյց լեալ Օսմանցոց եւ զազգն Ռուսաց եղեւ մատնեալ» [տ. 3504]:

Երկու շաբաթվա ահեղ մարտերից հետո օգոստոսի 18-ին ընկնում է առեւտրա-տնտեսական նշանակությամբ Հայտնի կամենեցը՝

«Սուղ աւուրբք անդ ոչ ժուժեն, զօրքըն Լէհցոց սակաւ էր լեալ,

Զ Գամանիցյան տան Օսմանցոյ, զոր եւ արքայն եղեւ բերկեալ»
[տ. 3493-3494]:

Թուրքերը իրենց սովորութեան համաձայն տեղափոխուած են անուամբ Կամանիցի եւ շրջակայքի բնակչութեանը եւ քրտնաբերութեանը:

«Ըզմուսս եւ զՀայս եւ ըզՀրեայս ուր եւ եզիտ ուայա առեալ,
Յետոյ արտաքս ի քաղաքէն Հանին եւ յերկիրըս յայս բերեալ,
Բաժին մի ի ծով խեղդին՝ և այլք յայլազգաց ձեռըս մաշեալ:
Յետոյ ի Ֆիլիպէ քըչեն, ի ցասմանէ ոմանք մեռեալ»

[տ. 3496-3198]:

Իրադարձութիւններին ակնատես ուկրաինացի պատմիչը նշում է, որ թուրքերը Կամանիցի գրավումից անմիջապէս հետո մզկիթի են վերածում կենտրոնական եկեղեցին եւ օրհներգութիւն մատուցում հաղթական սուլթանի անունով [165, էջ 114-115; 170, հտ. 2, էջ 125]:

Կամանիցի եւ նրա բնակչութեանը հասած մեծ ողբերգութեան մասին Երեմիա Քյոմուրճյանը ավելի մանրամասնութիւններ է հաղորդում եղելութիւններին ու հետեւանքներին նվիրված իր հիշատակարաններից մեկում, ուր նա վկայում է, հաստատելով ուկրաինացի ակնատես պատմիչի հաղորդած փաստերը, որ թուրքերը «քաղաքի գլխահացոց, զմուսաց եւ զՀայոց եկեղեցիսն դարձոյց ի մզկիթ ըստ սովորութեան իւրեանց եւ զբոլոր բնակիչսն արար հարկատու» եւ «մնացեալքն յազգէն Հայոց Հանդէրձ պարագաիւքն իւրեանց, հրամանաւ արքունի, յեղերս Սպիտակ ծովու իջուցեալ եւ անդ ի յերիս նաւս բաժանեալ՝ յուղի արկին յարեւելս կոյս Միջերկրական ծովուն»: Նավերից մեկը հասնում է «ի Ղալաթիա Կոստանդնուպօլսոյ»⁵⁵ եւ միւսն յեղերս Սեաւ ծովու հանդէպ Ահիոլու Պարզագու ի բերդն Սիւզէպօլսոյ, իսկ երրորդն յանդիման Պոնտոսի ի հարաւկողմն պատահեալ անհնարին ալեկոծութեան ի քայքայելն ի բռնութեան հողմոց իննսուն եւ եօթն հոգիք թօթափեալ ի ջուր զբաւեցաւ ի կենաց աստի» [151, էջ 238-239]: Կամանիցից դաղթած հայութեանը բուլղարական հողում տարիներ շարունակ սովահար եւ թափառական կյանք է վարում, միայն ժամանակի մեծահարուստ եւ բարեգործ Աբրո Չելեբու օգնութեամբ արքունիքից ստանում է Պլովտիվի շրջանում ապաստանելու իրավունք [151]:

13-րդ դարից հիմնադրված Կամանիցի հայ գաղութը, որն արդեն 17-րդ դարի կեսերին բաղկացած էր 1200 եւ ավելի ընտանիքից (քաղաքի բնակչութեան կեսից ավելին) [89, էջ 361, 376; 43, էջ 18, 19],

Լեհաստանի ամենակազմակերպված դադուլթներին էր իր ուրույն մշակութային կյանքով, թագավորութայան հայկական մյուս օջախների (Լվովի, Բրոզիուի, Յազլովեցի, Յարասլավի, Զամոստինի, Ստանիսլավի եւ այլն) հետ միասին ապահովում էր երկրի արեւելյան միջազգային առեւտրի կապերը [89, էջ 365-366] եւ աշխուժություն էր հաղորդում երկրի ներքին տնտեսական կյանքին: Կարեւոր դեր էր խաղում նաեւ սահմանամերձ գոտում գտնվող ստրատեգիական նշանակություն ունեցող Կամենիցի պաշտպանության գործում [43, էջ 18-19, 33]: Սակայն թուրքական կործանարար այս հարվածից հետո այլեւս չկենդանացավ Կամենիցի դադուլթը: Մնացյալ հայությունը հետագայում հեռացավ Տրանսիլվանիա՝ ստվարացնելով նորակազմ Հայ սիյուլաքը [89, էջ 388]:

Թուրք-լեհական այս պատերազմի ընթացքում ծանր կորուստներ են կրում նաեւ Մոլդավիայի Հայ օջախները: Բազմահազար մոլդավահայեր զաղթում են նույնպես Տրանսիլվանիա: Այդ մասին է վկայում Մինաս գրչի հիշատակարանը՝ «... Գրեցի զգիրս ի երկրին Մաճառաց, ի գիւղաքաղաքն ձուրճով, ի շխանութեան երկրիս ըՇտեֆան Լազարին, ի դառն ժամանակիս որ սուլթան Մէհմէտն որդին Իպրահիմին՝ վասն ծովացեալ մեղաց մերոց եկաւ ի վերայ Լէհայ եւ Գաղարաց (կաղակաց՝ Ուկրաինայի – Ժ.Ա.) երկրին վերայն Պուղտանայ երկիրն [յ]երթեւեկողաց հեծելոց Տաճկաց եւ Լէհաց աւերեցաւ: Տաճիկն Լէհաց երկիրն կաւիրէր՝ ամառն, ձմեռն՝ Լէհն գայր Պուղտանաց երկիրն կաւիրէր: Եւ ես տառապեալս վասն սիրոյ սուրբ եկեղեցեացն՝ վանիցն չէր հրաժարէր. մինչեւ երկիցս անդամ կողոպտեցին, ապա մերկիք, գլխիբաց՝ մորթի մի քամակս կապեալ՝ փախեայ ելայ երկիրս Մաճառաց, կէս մի ժողովրդոցս աստ փախեալ էին... Այս գրեցաւ թուին ՌձԻՆ (1125=1676) սեպտեմբեր ամսոյ Ե (5) [3, էջ 197]:

Թուրքերը, Կամենիցը գրավելով, անարգել շարժվում են դեպի Լվով, եւ Լեհաստանը, անկարող լինելով դիմադրութայան, ստորագրում է 1672 թ. Հոկտեմբերի 21-ին Բուչաչի հաշտութայան պայմանագիրը, սուլթանություն է զիջում ամբողջ Աջափնյա Ուկրաինան եւ պարտավորվում է վճարել միանվազ 80 հազար եւ տարեկան 22 հազար զլոտի [164, էջ 10, 169, էջ 126, 263]: Սակայն Դնեստրի եւ Բուգի միջեւ ընկած տարածություն փաստական կորուստը սթափեցնում է Լեհական սեյմին, որը եւ մերժում է Բուչաչի պայմանագիրը: Օգտվելով թուրքական բանակի նահանջից՝ հետման Յան Սոբեսկին սրբնթաց գրոհով մեկը մյուսի

ետեւից վերագրւում է Լվովը, Լյուբլինը եւ արագորեն իջնում ղեպի Կամենեց: Ջախջախում է հապշտապ Խոտինի պաշտպանութեան համար ժամանած Սարը Հյուսիսային փաշայի հրամանատարութեամբ թուրքական 30 հազարանոց բանակը, որը համարձակվում է բաց ճակատամարտ տալ Խոտինի պարիսպների դիմաց (1673 թ. նոյեմբեր 10-ին) [169, էջ 364; 170, հտ. 2, էջ 126; 234, հտ. էջ 76; 200, էջ 443]:

Երեմիա Քյոմուրճյանը այս եղելութեան մասին արձանագրում է՝
«Իսկ ի ձմեռն մերձ Խոթինու Լէհք եւ ըՌուսք եկին կոխեալ,
Չոմանս զընդից եկնիչէրուց եւ ըզպարոնս ոմանս ապուեալ»
[տ. 3499-3500]:

Թեեւ թուրքերը այս արշավանքից վերադառնում են ձեռնունայն եւ խայտառակված, սակայն Լեհաստանը 1674-1676 թթ. ստիպված է լինում դիմակայել Օս. կայսրութեան նոր հարձակմանը: Լվովի դրավման անհաջող փորձը, Լեհական բանակի հաջողակ գործողութիւնները, Ռուսաստանի վճռական միջամտութիւնը Դորոշենկոյի նկատմամբ, վերջինս հնազանդութիւն է հայտնում Ռուսաստանին եւ ապա 1677 թ. աքսորվում Ռուսաստան [169, էջ 366-367; 165, էջ 124]: Թեեւ սուլթանին հարկադրում են բանակցութիւններ վարել, ամենայնիվ 1676թ. հունվարի 17-ի ժուրավնոյի պայմանագրով սուլթանութիւնը իր ձեռքում է պահում Պոդոլիան՝ Կամենիցով եւ Աջափնյա Ուկրաինայի մի մասը [165, էջ 122]: Կարգավորելով իր հարցերը Լեհաստանի հետ՝ կայսրութիւնը հնարավորութիւն է ստանում շարունակելու ռազմական գործողութիւնները Ռուսաստանի դեմ 1677-1678 թթ.՝ Ջախսիսարայի Ուկրաինայի համար, բայց ռուս-կազակային ուժերի տպավորիչ հաղթանակները հարկադրում են թուրքերին նահանջել եւ կնքել 1681 թ. Բախչիսարայի հաշտութիւնը: Կայսրութիւնը հրաժարվում է Ջախսիսարայի Ուկրաինան զավթելու տրամադրութիւնից՝ պահպանելով սակայն Աջափնյա Ուկրաինայի նկատմամբ ժուրավնոյի հաշտութեան արդյունքները [164, էջ 107-108, 280; տե՛ս եւ 170, հտ. 2, էջ 165-166]:

Երեմիա Քյոմուրճյանը, անդրադառնալով կայսրութեան ղեպի Ուկրաինա երկու ռազմական գործողութիւններին, չհակասելով ժամանակակից աղբյուրներին, հայտնում է, որ թուրքերը եւ նրանց մշտական զինակից թաթարները, ուկրաինական ժողովրդի դավաճան Դորոշենկոյի ուժերը, որին Երեմիա Քյոմուրճյանը անվանարկում է «Դորոժոն», հրի ու սրի են մատնում երկիրը, կոտորում ու մարդաթափ անում «գիւղք

եւ աւանք», «ընդ ոլորտըս տիեզերաց որպէս զհոտս ցըրուեալ տարեալ» [տ. 3510], գերության վարում այնպիսի բազմությամբ, որ «ի դուռիչ մի զգերի ծախեալ» [տ. 3506; տե՛ս եւ 164, էջ 114-131]:

Երեմիա Քյոմուրճյանը անտարբեր չէ ազատասեր ժողովուրդների տառապանքների նկատմամբ: Միանգամայն հակառակ թուրքական աղբյուրների հեղինակների դավանած տրամադրությանը, որով հաղթական թուրքերի բոլոր վատաբարո արարքները զնահատվում են որպես ռազմական սխրանքներ, նա, դառնադեպ փաստերն արձանագրելով, կարծես լուսլայն ստիպում է հանգել ճշմարիտ եզրակացության, որ ժողովուրդներին հասած չարիքի արմատը թուրքերի անհագ ծարավն է՝ զավթելու, բռնանալու, թալանելու, սպանելու, գերեվարելու, հափշտակելու եւ այդ ճանապարհով հողալու երկրի կարիքները:

17-րդ դարի երկրորդ կեսի առաջին քառորդում Կանդիայում, Վալախիայում, Մոլդավիայում, Տրանսիլվանիայում, Ուկրաինայում Օսկայսրության վարած ռազմական գործողությունները, Ալստրիայի դեմ պատերազմները նպատակ ունեին արյան մեջ խեղդելու ենթակա ժողովուրդների ազատագրական քայլերը, զավթելու նոր տերիտորիաներ եւ գրելու ամենաողբերգական իրադարձություններով լի էջեր ազրեսիային ենթարկված ժողովուրդների պատմության մեջ:

Թուրքերի ներխուժումներից տուժում է եւ բնիկ ժողովուրդների հետ միասին Վալախիայի, Մոլդավիայի, Տրանսիլվանիայի, Ուկրաինայի հայ սփյուռքը: Հատկապես տուժում են Լվովի հայ գաղթօջախները, որոնք, ակտիվ մասնակցութիւն բերելով երկրի պաշտպանությանը, կրում են կործանիչ հարվածներ, հետզհետե նվազում են, թուլանում եւ ի վերջո հանգում:

Օսմանյան կայսրութիւնը՝ գինակից Ղրիմի խանության մասնակցությամբ, ուկրաինական արշավանքի ժամանակ, թեեւ խլում է Աջափնյա Ուկրաինայից որոշ տարածք, բայց դա ձեռք է բերում ոչ իր ռազմական գերազանցության շնորհիվ, որքան գիմադրող Լեհաստանի, Ռուսաստանի եւ ուկրաինայի անհամերաշխության եւ անվճռականության պատճառով:

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիշյալ պատերազմները, բացառությամբ Կանդիայի պատերազմի, ավարտվեցին թուրքերի համար ոչ ցանկալի արդյունքով: Կայսրությունը, որ 14-16-րդ դարերում իրեն էր ենթարկել տասնյակ երկրներ եւ ժողովուրդների, 17-րդ դարում այլեւս ի վիճակի չէր շարունակելու փառավոր եւ աննահանջ պատերազմների պատմությունը: Թեւեկոխելով «լճացման շրջանը», կայսրությունը սկսել էր քայլել վայրէջքի ճանապարհով, որը հետեւեալք էր նաեւ կայսրության սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող մեծ երեւույթների [242, հտ. 3, էջ 115, 118]:

Շարունակական պատերազմները, որոնք դիտվում էին պետության գոյություն տնտեսական ռեսուրսները ապահովելու միջոցներից ամենազլխավորը՝ կայսրությանը դրել էին Փինանասական դժվարին կացության մեջ: Ռազմական հարածուն ծախսերը ծածկելու նպատակով կառավարությունը անցել էր հողի վարձակալման, պաշտոնների վաճառքի, դրամի արժեքազրկման, ժողովրդին նոր հարկերով հարկադրելու քաղաքականության, որը եւ բնականաբար անկայուն էր դարձրել երկրի ներքին քաղաքական վիճակը:

Ինչպես վկայում է Երեմիա Բյոմուրճյանը, հատկապես դրամի արժեքազրկումը, ցածրորակ դրամով բանակին ռոճիկավորելը եւ էսնաֆությանը նոր հարկերով հարկադրելը սուլթանության մայրաքաղաքում բարձրացրել էին խռովությունների ալիք՝ դրսևուրելով անվստահություն կառավարության նկատմամբ, եւ սուլթանը ստիպված էր եղել շարունակ փոխել մեծ վեզիրներին կամ ապստամբների դատաստանին հանձնել մեղավոր ճանաչված պետական գործիչներին:

1656 թ. Փինանասների կառավարիչը համարձակվում է ցածրորակ ստակով ռոճիկ բաշխել.

«Տէֆթէրտարըն վատ ստակ տայր, զռոճիկն եւ ոչ բաւականեալ»
[տ. 2971]:

Մայրաքաղաքում բռնկվում է ամենահզոր քաղաքային խռովություններից մեկը: Խռովարարները՝ (ենիչերիներ, սիփահիներ եւ այլ զորատեսակի ներկայացուցիչներ) համախմբվում են Աթմեյդանում եւ ուխտում պատժել այն անձանց, որոնք համարձակվել էին վիրավորել սուլթանի ամենահավատարիմ ստրուկներին՝ «զօլօֆէն կարմիր եւ փող ըստակ տալով» եւ ստակս այնպես արժեքազրկել, որ «ի մէջ Ռ (1000) ըստակին օլօֆիցն ճ(100) ըստակ էջր անցանէր ի մէջ քաղաքին»: Նրանք պահանջում են՝ սուլթանին ներկայանալ լսելու իրենց այնպիսի հաստատակամուծյամբ, որ նույնիսկ համարձակվում են Աթմեյդանում «զդիշերիս ի բուն անդ վրանօք անցուցանել» [60, էջ 114] եւ իրենց դատաստանին հանձնել սուլթանություն ամենահեղինակավոր գործիչներից 31 հոգու, այդ թվում եւ թագավորամորը⁵⁶, որոնք ըստ Երեմիա Քյոմուրճյանի՝ «մի մի թագաւոր էին եւ ի բազում ժամանակաց ուտէին զմանսուպքն եւ զթագաւորութեան զրամն ամենայն եւ զանձն ի սոցատունն գտանէր վասն մանկութեան թագաւորին, ինքեանք միմեանց օգնական լինելով», հակառակ դեպքում, սպառնալով սուլթանին, որ այսուհետեւ չի կարող իր հրամանները կատարել տալ [60, էջ 116]: Սուլթանը, մեծ թախանձանքներով փրկելով իր մորը, ստիպված պահանջված պաշտոնյաներին հանձնում է ապստամբներին, որոնք ազգակիցներին բարբարոսաբար՝

«Յօշատեն պատառ պատառ, վերայ դանկաց զմարմինս առեալ»
[տ. 3002]:

Աթմեյդանում ստեղծվում է այնպիսի մի տեսարան, որ տեսնողները «խելազնա եղեալ ուշաթափէին»: Երեմիա Քյոմուրճյանը եւս ապրում է այդ սարսափը՝ «Ոհ զըզուլիմ ըզձրելն եւ սարջիմ ի միտս բերելն եւ զդողամ սարսափելով զձեռս յառաջ տանելն զխեղճս եւ զխայտառակութիւնս սոցա, զոր տեսաք աչօք մերովք» [60, էջ 122]:

Դատապարտվածները, ինչպես վկայում է Երեմիա Քյոմուրճյանը, իրենց ձեռքում կենտրոնացրել են այնպիսի իշխանություն, որ կարողացել են պարգևել «մանսուպ եւ զիամէթ», փաշայություն, պարոնություն կամ զրկել իշխանությունից: Առանձնապես բացարձակ հեղինակություն տեր է եղել Մուլքի Բուլայն, որին «յազգն իւր փոքր թագաւոր վերաձայնէր», իսկ «թագաւորն նորա մորաքոյր ձայնելով զնա պատուէր առաջի ամենայն մեծամեծացն»: Նա կարողացել է «առեալ զգրիչն եւ գրէր զհրամանս թագաւորին եւ զմանսուպն ում

կամէր տար եւ գրէր խէթիշէրիֆ եւ կանխէր զհրամանս թագաւորին, թէ այսպէս լիցի»: Սուլթի Բուլայն թագաւորամոր համագործակիցն ու միախորհուրդն է եղել մեծ վալիդեին՝ Քյոսեմ սուլթանին կործանելիս [60, էջ 124]:

Սուլթարաների պահանջով կառավարութիւնը, չնայած ֆինանսական ծանր վիճակին, արժեքազրկված դրամը հավաքում եւ ծովն է թափում: Շրջանառութեան մեջ է դրվում էձ՝ (700) քսակի չափով նոր դրամ [60, էջ 127]:

Նման մի խռովութիւն է ծագել նաեւ 1650 թ. նույնպես դրամի արժեքազրկման պատճառով: Սուլթան Իբրահիմի գահազրկումից հետո իշխանութիւնը վարող ենիշերինների խմբակը Մուրադ ենիշերի ազատու գլխավորութեամբ, չբավարարվելով գանձարան հոսող «արծաթով, ոսկով եւ ընծայււք յամենայն աշխարհաց», համարձակվում է նորատեսակ հարկերով հարկադրել էսնաֆութեանը եւ «ցած ըստակ» արկանել ի վերայ արհեստաւորաց»՝ «ձի (120) ըստակին ոսկի մի պահանջել»: Էսնաֆութեան հուժկու ապստամբութիւնը պարտադրում է սուլթանին փոխել մեծ վեզիրին եւ իշխանութեան հրավիրել իրենց թեկնածուին՝ Սիւլուշ բազմափորձ գործչին, մահվան մատնել եւ քսորել հանցագործ ճանաչված պաշտոնյաներին [60, էջ 19-20]:

Անկայուն է դարձրել նաեւ կայսրութեան մայրաքաղաքի կյանքը գահի շուրջ հակառակորդ կուսակցութիւնների պայքարը, որով եւ թուլացրել է սուլթանի իշխանութեան հեղինակութիւնը: Այդ խմբակցութիւնների պայքարի հետեւանքով 17-րդ դարի 20-50-ական թվականներին իշխող չորս սուլթաններից երեքը՝ Մուստաֆա 1-ինը, Օսման 2-րդը եւ Իբրահիմը գահընկեց են լինում, նույնիսկ Օսմանն ու Իբրահիմը խեղդամահ արվում:

Երեմիա Քյոմուրճյանից տեղեկանում ենք, որ սուլթան Իբրահիմի արքունիքում մրցակցող խմբակցութիւններից մեկը գլխավորել է ոմն Ճինճի Հոջա, ընդդեմ մեծ վեզիրների եւ մուֆթիների: Այդ պայքարը մեծապես խանգարել է կառավարման գործին: Ճինճին, օգտվելով սուլթանի վրա ունեցած իր ազդեցութիւնից, բազում տմարդի անձանց «մեծի պատուոյ էր հասուցեալ», որոնք հետագայում «կաշառոյք վերամբարձեալ», մահվան մատնել պետական անվանի շատ գործիչներին, կուսակել անչափ հարստութիւն: Հակառակորդների իրարամերժ հակասութիւնները վերաճում են բացահայտ դժգոհութիւնների:

Մուֆթինն եւ ուլեմայութիւնը օգտագործում են մեծ վեզիր Ահմեդ փաշայի դեմ եղած դժգոհութիւնները: Վեզիրը, որ իշխանության էր հասել մեծ խոստումներով, աչքի է ընկել ընչաքաղցությամբ եւ կաշառակերությամբ՝

«Կաշառակուրծ լինէր վէզիրն՝ գտեարս մանսուպից փոյթ փոփոխեալ
'ի ի համայն դատաւորաց մինչ ի մուֆթին եղեւ հասեալ:

Սամուր քիւրքով գափանիցա վասն արքային յայնց պահանջել,
Համայն օճաղ յաղաներաց 'ւ ի Կրիտու, որք են եկեալ»

[տ. 2787-2790]:

Վեզիրն իր այս քաղաքականությամբ հրահրում է ենիչերիներին խառնակութիւնը, որը գլխավորում է Աբդուլհալիմ մուֆթինն եւ տալիս ուղղվածութիւն:

Ապստամբները պաշտոնազրկված են հայտարարում գործող մեծ վեզիրին եւ վեզիրի իշխանության են հրավիրում Սոֆի Մուհամմեդ փաշային, իսկ ենիչերի ազա՝ Մուրադ աղային, սուլթանից պահանջելով հաստատել իրենց թեկնածուներին: Սուլթանը բավարարում է ապստամբների պահանջը: Ստանալով գոհացում, ապստամբները նախ մահվան են մատնում Աբդուլ փաշա վեզիրին ընդունված բարբարոսական եղանակով եւ պահանջում այնուհետեւ հենց սուլթան Իբրահիմի գահազրկումը՝ մեղադրելով նրան «Ոչ գիտելով ընդ արժանւոյն զպատիւ եւ զփառս մանսուպից տալ, նիզամին, այլ եւ գանձուց օր ըստ օրէ զվընաս բերեալ» [t. 2827-2828]:

Համագործակից գտնելով Իբրահիմի մոր Քյոսեմ Մայփեյքեր սուլթանին⁵⁷ նրանք «կալեալ թագաւորին՝ եղին ի բանտի եւ խնդրէին զաւագ որդին եւ նստուցին զնա յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ» [60, էջ 4]: Երեմիա Քյոսուրճյանը, ինչպես եւ թուրքական պատմագրութիւնը հայտնում են, որ Իբրահիմ սուլթանի գահընկեցութիւնը իրականացվել է մի փոքրիկ շրջանակի կողմից, որ կատարված փաստի նկատմամբ սիփահիները հայտնել են իրենց բացահայտ դժգոհութիւնը եւ սպառնալով պահանջել սուլթան Իբրահիմի վերադարձը գահին⁵⁸:

Դավադիր խմբակը, նկատի ունենալով, որ սուլթան Իբրահիմի վերադարձը կնշանակեր իրենց ձեռքով ստորագրել իրենց մահավճիռը, իրականացնում են սուլթանի սպանության գործը [245, էջ 143]: «Եւ մահ թագաւորին խորհրդեամբ մուֆտիին եւ վեզիրին եւ զօրագլխոց եէնկիչէրուն եւ ոչ թեւադրութեամբ առ հասարակ սպահուն, այլ սակա-

ւուն» - նկատում է Երեմիա Քյոմուրճյանը [60, էջ 5]: Քաղաքական ասպարեզից հեռացվում եւ մահվան են մատնվում սուլթան Իրբահիմի համախոհները: Սպանվում է Ճինճի Հոջան եւս, եւ Հարբունիս է զբվում նրա «1000 քսակ ղուուիչ եւ չիլ ոսկի զայլ զանձս անհամարս», որով վճարվում է ապստամբ ենիչերիների ոռճկավարձը [1, Մատ. ձեռ. 1786, էջ 71]:

Նոր սուլթանի գահակալումով իհարկե չի ավարտվում արբունիքում խմբակցությունների պայքարը: Օգտվելով սուլթան Մուհամմեդ 4-րդի անչափահասությունից՝ կառավարման գործում ակտիվություն են ցուցաբերում նրա տատ Մայիեյքեր Քյոսեմը եւ սուլթանի մայրը, որոնք գլխավորում են հակառակորդ կուսակցությունները: Երեմիա Քյոմուրճյանը վկայում է, որ այդ ուժերին են պատկանում «խօսք եւ հրաման թագաւորական եւ թագաւորն որպէս կամին այնպէս առնեն եւ չեն թողուր, որ զաջքն բանայ թագաւորն եւ կու երկուցանեն, թէ չլինի որ խօսիս, մեք զքեզ կու պահեմք [60, էջ 152]: Այս ուժերի առկայության պայմաններում օջաղ աղաների իշխանությունը անկարող է լինում կարգավորել իր իսկ ստեղծած քաղաքական խառնակ վիճակը եւ երկրի հետզհետե ծանրացող ֆինանսական դրությունը: Էսնաֆներին հարկադրելու նրանց քաղաքականությունը հակազդեցություն է ունենում: Իշխանությունից հրաժարվում է ենիչեր աղա Մուրադ փաշան (1649-1650 թթ.): Ոչինչ չի փոխվում նաեւ նրան հաջորդող Մելեկ Ահմեդ (1650 թ.), Կյուրջու Մեհմեդ (1650-1652 թթ.), Ահմեդ (1652-1653 թթ.), Տերվիչ Մեհմեդ (1653-1654 թթ.), Իփշիր (1654-1655 թթ.) փաշաների մեծ վեզիրության ժամանակներում, որոնց իշխանության աստիճանը լավագույնս բնութագրում է Երեմիա Քյոմուրճյանը՝ «չէր յայտնի վէզիրն ով է» [տ. 2973]:

Սուլթանական իշխանության հեղինակությունը վերականգնելու որոշ փորձեր է անում միայն Սիավուշ փաշան իր 67 օրյա մեծ վեզիրության շրջանում (1650 թ.): Օգտվելով խմբակցությունների հակամարտությունից՝ նա «գողացեալ զմիտս արքայի եւ եւս խրատիւ մօրն, զի իւր լիցի ամենայն փառք եւ շարժեսցի որպէս եւ կամեսցի», մահվան է մատնում Քյոսեմ սուլթանին եւ նրա կողմնակիցներից 12 պաշտոնյաների, որոնց Քյոմուրճյանը հիշատակում է հակառակ անվանն [60, էջ 22; տ. 2901-2912]: Սիավուշը սպանում է նաեւ «զայլս ծածուկ» եւ ծրագրում է «միւսանգամ եւս մեծամեծացս մինչեւ ցփոքունս ի ներքինաց, սեաւոյն,

սենեկապետաց եւ նախարարացն արքունի որ պալատն՝ փոփոխել, զոմանս սպանանել եւ զոմանս աքսորել» եւ ջախջախել երկրորդ ազդեցիկ խմբակցությունը: Սակայն թագավորամայրը կարողանում է կանխել վերահաս վտանգը, եւ պաշտոնազրկվում է Սիրավուշ մեծ վեզիրը [60, էջ 152; տ.2913]:

Օսմանյան կայսրության քաղաքական եւ տնտեսական ճգնաժամը իր արտահայտությունն է գտնում նաեւ 17-րդ դարի կեսերին եւ երրորդ քառորդին, կայսրության ներքին քաղաքականությունից դժգոհ, կենտրոնախույս տրամադրություններ ունեցող խոշոր հողատիրության ներկայացուցիչների ապստամբություններում: Գահին մեծ անհանգստություն են պատճառում Նասուհ փաշայի որդի Հյուսեյն փաշայի (1644 թ.), Հայդար օղլիի (1648 թ.), Ղաթրճի օղլի Ալիի (1648 թ.), Սեյդի Ահմեդի (1655-1656 թթ.), առանձնապես Հալեպի բեկլերբեկի Աբազա փաշայի եւ նրա համախոհ 30 մանր ու մեծ ավատատերերի (1658 թ.) խռովությունները:

Երեմիա Բյոմուրճյանը հաղորդում է, որ Հյուսեյն փաշան, մանսուպը չկորցնելու համար ընդվզում է, նույնիսկ ձգտում զենքի ուժով ստիպել Սուլթան Իբրահիմին իրեն հանձնել մեծ վեզիրության կնիքը՝ «մօհրի էր ջանացեալ»: Սկյուտարում անհաջողությունների մատնվելով՝ նա նավով անցնում է Ռումելի՝ «Անդ կամելով դումարք խմբեալ»: Ապստամբությունը դժվարություններ ճնշվում է, «հասարակաց երկիւղ» պատճառող այրն սպանվում է, գլուխը ցուցադրվում կայսրության մայրաքաղաքում [տ. 2729-2736]:

Կարա Հայդար օղլու ապստամբությունը ընդգրկում է կենտրոնական Անատոլիայի 29 սանջակներ, սակայն ջախջախվում է եւ մահապատժի ենթարկվում մայրաքաղաքում [տ.2863-2865; հմտ. 242, էջ 144]: Առավել հզոր եւ անընկճելի է եղել Ղաթրճի օղլի Ալիի խռովությունը: Մերժելով կառավարությունից առաջարկությունը՝ «ցրուեա ըզզօրսդ, մանսուպ տացուք, լիցիս նստեալ», նա ուժերով շարժվել հասել է Սկյուտար եւ խուճապի մատնել մայրաքաղաքը: Սկյուտարում կառավարական ուժերի դեմ ճակատամարտ տալուց հետո՝ ստացել է իր «պատվին արժանի» մանսուպ՝ «եւ ետ մանսուպ նմա յԱնատօլի, զոր կամեցեալ» [տ. 2872-2878]: Սեյդի փաշա ապստամբը Հալեպի շրջանում մեծ ավերածություններ կատարելուց եւ պատժիչ ուժերի դեմ հաջող պատերազմից հետո (նա հասնում է մինչեւ Բրուսա) ներվում է եւ նույն-

պէս ստանում իր ցանկացած մանսուպը [60, էջ 102, 154]⁵⁹:

Իրենց մանսուպի համար են ոտքի կանգնում Աբազա Հասան փաշայի գլխավորութեամբ 30 ֆեոդալներ՝

«Որք եւ դըրեն առ թագաւորն, զի դատաստանս լիցիք տուեալ,
Մեք անմեղ ի մանսուպս մեր, վէզիրդ ըզմեղ վըշտացուցեալ»
[տ.3143-3144]:

Ապստամբները, որոնց շուրջ հավաքվում են նաեւ «որք էին փախուցեալ ի վէզիրէս», իրենց են ենթարկում «ամենայն փաշաււքն Արեւելեան», մինչեւ «ի Պրուսա քաղաք եւ յիզնիմիտ»: Սպառնալից պահանջում են պաշտոնազրկել մեծ վեզիր Քյոփրյուլուին եւ իշխանութիւնը վստահել Աբազա փաշային: Վերջինս համոզված է եղել, թե «ինքն գեր ի վերայ քան զնա» եւ «գեր քան զթագաւորս»: Ապստամբութեան ընդգրկումը եւ նպատակը ստիպում են մեծ վեզիր Քյոփրյուլուին Տրանսիլվանիայի հարցը չլուծած վերադառնալ մայրաքաղաք եւ ճնշելու միջոցներ որոնել: Երեմիա Քյոմուրճյանը ընդգծում է, որ մեծ վեզիրը երկնչել է անձամբ ղեկավարել պատժիչ գործողութիւնները ապստամբների դեմ՝ «ոչ կարէր գնալ յերկիւղէ եւ ի գործեաց աստ ելեալ զօրացն, զի ի ճանապարհին գուցէ սպանցեն եւ կամ ընդ նոսա լցին եւ թէ անդ գնայր՝ անդ դիպենայր, զի թէ ինքն անկանէր ի ձեռս նորա» [60, էջ 292-293, 298-300] եւ հանձնարարել է Ամիրի բեկլերբեկի Մուրթազա փաշային ճնշել ապստամբութիւնը՝ նրա տրամադրութեան տակ ղենլով կառավարութեան հնազանդ ֆեոդալների ուժերը [60, էջ 298]: Իզնիմիդի, Յըլըզի, Բերիայի ճակատամարտերում կառավարութեան ուժերը կրում են պարտութիւններ: Համոզվելով, որ զինական ուժով հնարավոր չէ ճնշել ապստամբութիւնը, գործի է դրվում սուլթանութեան մեջ հարգված դավաճանութեան գործիքը: Մուրթազա փաշայի հյուրասիրութեան սեղանին «գլխտին բաժակ նոցա լըցեալ», եւ մայրաքաղաքում ցուցադրվում են 32 ապստամբների հատված գլուխները [60, էջ 316-318, 319; տ. 3169-3170]: Երեմիա Քյոմուրճյանը բավականին մանրամասն է պատմում կայսրութեան ամբողջականութեանը վտանգող այս ապստամբութեան մասին: Ապստամբներին հիշատակում է անուններով եւ ոմանց էլ՝ մանսուպներով:

Այսպիսով, այս եւ վերոհիշյալ ապստամբութիւններին մասին Երեմիա Քյոմուրճյանի հազորդուամներից դժվար չէ եզրակացնել, որ ծագած ապստամբութիւնների հիմնական պատճառներից է եղել

կառավարութեան՝ հարկադրման, մանսուղներէ բաշխման եւ վերավաճառման քաղաքականութիւնը: Այդ ճանապարհով կառավարութիւնը ձգտել է ձեռք բերել ազրեսիվ պատերազմները վարելու համար անհրաժեշտ եւ երկրի ֆինանսական վիճակը բարեկարգելու գումարը:

Սակայն անհրաժեշտ ֆինանսի հայթայթման այս եղանակը կիրառվել է քմահաճորեն: Վաճառված մանսուղը կարճ ժամանակ անց, նույնիսկ զնոդ պաշտոնյան դեռեւս իր պաշտոնատեղին չհասած, վերավաճառվել է⁶⁰: Եւ հին ու նոր պաշտոնյաների միջեւ առաջացած հակասութիւնը բնականաբար վերածնել է հակակառավարական տրամադրութիւններէ եւ ապստամբութիւններէ:

Ներքին եւ միջազգային անբարենպաստ վիճակից երկիրը դուրս բերելու մտահոգութեամբ սուլթան Մուհամմեդ 4-րդը եւ նրա մայր թուրհան սուլթանը (որը ուներ մեծ ազդեցութիւն դեռեւս մանուկ սուլթանի վրա) մեծ վեզիրի պաշտոնին են հրաւիրում իր գործուհեութեամբ ազեն հայտնի 75-ամյա Մուհամմեդ Քյոփրյուլուին (1656 սեպ. 15 - 1661 նոյ. 29/30)⁶¹:

Ծագումով ալբանացի Մուհամմեդ Քյոփրյուլու մեծ վեզիրը դավանում է բռնութեամբ կառավարման մեթոդին, թուրքերի ոգուն հարազատ եղանակին: Նա անմիջապես ձեռնամուխ է լինում երկրի տնտեսական-ֆինանսական եւ մայրաքաղաքի հասարակական կյանքի կայունացման կենտրոնական կառավարութեան եւ սուլթանի հեղինակութեան, երկրի ռազմական հզորութեան վերականգման եւ հպատակ ժողովուրդներէ ազգային ազատագրական տրամադրութիւններէ ճնշման ծրագրերի իրականացմանը:

Մուհամմեդ Քյոփրյուլուի առաջին քայլերը ուղղվում են դրամի արժեքի կայունացմանը: Նա բանտարկում եւ մահվան է մատնում «զխանճի սէֆէրն»՝ դրամահատարանի պաշտոնյային «պատճառելով, թէ ի խանն դուք բազում ոճիրս գործէք արծաթի եւ զոլուուշն կտրելով պակասեցուցանէք». եւ նրանց «որք զուուշ լման առնէին եւ պակաս տային» [60, էջ 232]: Գանակահարման, պաշտոնազրկման, աքսորի եւ թիավարման մատնելու պատժով արգելում է շուկայում «պակաս չափի» գործածումը, գինու արտադրութիւնը եւ վաճառքը, հատկապես մայրաքաղաքում՝ «ոչ թոյլ տայր, որ գինի անցանէր ի ներս», հասարակական չարիք դիտվող գինեմոլութիւնը, ծխախոտի օգտագործումը եւ մաքսանենգութիւնը [60, էջ 292; հմմտ. տ. 3054]:

Հանցագործներին հայտնաբերելու համար դիմում է կանանց կերպարանքով շրջող հետախույզների օգնությունը՝ «զոր երթեալ ի տուն մտանէին, դուցէ գտանիցեն խմող մխին՝ կալցեն զնոսա, զոր ի նշանաւոր արանց ըստուգեալ իմացաք զառաջինն եւ վերջինս, զոր այս առնեն այժմ ի կերպ կանանց շուրջ գալով» [տ. 3083-3088]: Կործանում է հավաքատեղիները՝ «ծովեզերիս զղահվէխանէքն», «եւ եթէ յոյր տեղ մի ձայն ելանէր բարձր եւ զոմանս սպանանէր եւ զոմանս հնարիւք կորուսանէր կամ ի ծով ձգէր» [60, էջ 227-232; տ. 3083-3088, 3071-3080]:

Գինու եւ ծխախոտի արտադրությունը սակայն իր անդրադարձն է ունենում գանձարանի վրա: Գանձարանը զրկվում է գինու եւ ծխախոտի մուգադաններից: Կառավարությունը, հասարակական կարգի պահպանումը առավել անհրաժեշտ դիտելով, անտեսում է այդ կարեւոր գումարը եւ դիմում համարձակ քայլի: Սահմանափակում է արքունի ծախսերը, հրաժարվում է ենիչերիներին արքունիքի կողմից չորպա մատուցանելու սովորությունից, արգելում բայրամի օրերին գանձարանի հաշվին կազմակերպվող հասարակական խնջույքը [տ. 3097-3098], նվազեցնում է արքունի պաշտոնյաների եւ սիփահհինների վճարումները [տ. 3096], նույնիսկ «ըզոտոհիկս տուակեօյից (վանական հոգեւորականների) շատոցն հատեալ, զբազմացն ջընջեալ» [տ. 3095] եւ վարում բարձր հարկադրման քաղաքականություն՝ հարկադրելով տաճիկ արհեստավորությունը բարձր սուրսեթով, իսկ քրիստոնյա համայնքներին՝ քյուրեկեճի տուրքով:

Գանձարանի վիճակը կարգավորելու համար Քյոփրյուլուն դիմում է նաեւ սուլթանություն մեջ սովորական եւ մշտապես գործող եղանակներից մեկին, հորինված պատճառաբանություններ մահվան դատապարտելով հեղինակավոր անձանց եւ հարքունիս գրելով երկարատեւ պաշտոնավարման շրջանում հարստահարումով կուտակած հեքիաթային նրանց հարստությունը: Այդ եղանակով ունեզրկվում, աքսորվում եւ սպանվում են «զոմանս փաշայս» հին եւ նոր դեֆթերդարներ [60, էջ 225; հմմտ. 3052, 3074]: Նա չի վարանել նախապատրաստել Կրետեում սուլթանության փառքի համար մարտնչող օրվա հերոսին անգամ՝ քարութան Տելի շյուսեյն փաշայի կործանումը՝ հազորդելով սուլթանին այն միտքը, թէ նա, 14 տարի շարունակ ինքնիշխան գործունեություն վարելով Կրետեում, ուշադիր չի եղել սուլթանական մեծություն նկատմամբ՝ «թէ այսքան ամ է, որ զերկիրն

ունի եւ ինքն հարստացեալ եւ քեզ զինչ առաքեաց յամենայնէ»: Տեղի Հյուսիսին փաշան վեզիրի կանչին անսալով, վերադառնում է մայրաքաղաք եւ թեւ ներկայանում է սուլթանին եւ մեծ վեզիրին նվերներով եւ խալաթավորվում, այնուամենայնիւ մեծ վեզիրը հաղթահարում է քափուղան փաշային պաշտպանող «զօրք օճախին» ղիմադրությունը, «արար որպէս եւ կամեցաւ»: Տեղի Հյուսիսինը բանտարկվում, խեղդամահ է արվում Յոթնաշտարակում եւ «անդ ի բերդն թաղեցաւ»: Աքսորվում է եւ Հյուսիսինի որդին, որը քափուճի բաշին էր արքունի պալատի եւ սուլթանի սիրելիներից մեկը, բանտարկվում է նրանց տնտեսության կառավարիչ Օմեր քեհյան, այնուհետեւ «զկարասիս եւ զգանձս իւրեանց տանց Հիւսէինին կրեցին առ արքայ» [60, էջ 323-325]:

Քրտփրյուլուն օգտագործում է նաեւ ժամկետային վարձակալության (կապալային) կարգը, հատկապես պաշտոնի բաշխման դեպքում: Նա կենտրոնական կառավարության քաղաքականությունից դժգոհ փաշաների իրավունքները առանց վարանելու վերավաճառում է, որը իհարկե իր բացասական անդրադարձումներն է ունենում ներքին քաղաքական կյանքում:

Այսպիսով, Քրտփրյուլուն իր տնտեսական քաղաքականությամբ ներքին հնարավորություններով երկրի ֆինանսական կարողությունը 1660 թ. հասցնում է 5812 յուքի (14531 քեսե), 1650 թ. 5329 յուքի ղիմաց: Սակայն արտակարգ միջոցառումներով ձեռք բերվածը միայն ժամանակավոր է կարգավորում երկրի ֆինանսական վիճակը: Քրտփրյուլուի վեզիրության վերջին տարում (1661 թ.) գանձարանի հզորությունը իջնում է արդեն 1654 թ. ֆինանսների մակարդակին: Հավելյալ ծախսերը բարձրանում են 1600 յուքի՝ 12 անգամ գերազանցելով 1660 թ. լրացուցիչ ծախսերը [244, հտ. 3, էջ 336]:

Քրտփրյուլուի առաջ դրված խնդիրներից է եղել եւ կենտրոնական կառավարության հեղինակության վերականգնումը: Կայսրության վաղ շրջանում բացարձակ իշխանությունը իրականացրել է սուլթանը: Կայսրության ընդարձակման հետ սուլթանի իշխանության կից ստեղծվում են կառավարման լայն ապարատ՝ խորհուրդ (զիվան), որի ֆունկցիաները եւ նրա նախագահի՝ մեծ վեզիրի ազդեցությունը գնալով մեծանում է երկրի ներքին եւ արտաքին քաղաքական հարցերի լուծման գործերում: Հաճախ, կարող վեզիրների իշխանության շրջանում սուլթանները զրկվում են երկրի կառավարման գործերում ակտիվ միջամտությունից:

Սակայն 17-րդ դարի սկզբից, բացառությամբ սուլթան Մուրադ 4-րդի օրոք, մեծ վեղիրները Ֆինանսական ճգնաժամերի և ռազմական շրջանակների ազդեցություններից կորցնում են ինքնիշխանությունը երկրի կառավարման գործերում:

Մուհամմեդ Քյոփրյուլուն իր ծրագիրը լուծում է մեծ հմտությամբ: Նա նախ աշխատում է չեզոքացնել սուլթան Մուհամմեդ 4-րդի վրա ազդեցություն ունեցող Թուրհան վալիդե սուլթանին և նրան զրկել իր հեղինակավոր հենարաններից: Նա մահվան է մատնում օրվա հերոսին անգամ՝ Տելի Հյուսեյն փաշային, ոչ միայն նրա հեքիաթային հարստությունը տիրանալու, այլև հենց վալիդեին հենարանից զրկելու համար, որի սիրելիներից էր Հյուսեյն փաշան [60, էջ 324-325]: Քյոփրյուլուն աշխատում է չհեռանալ մայրաքաղաքից, սուլթանից հեռու չգտնվել՝ իր ներկայություն անհրաժեշտությունը սուլթանին թելադրելով և ամեն առիթ օգտագործելով հեռացնել մայրաքաղաքից վալիդեի շուրջ համախմբված, բացարձակ հեղինակություն վաստակած պետական գործիչներին:

Հակառակ վալիդեի ջանքերին, (որպեսզի իր քեհյա Ալի փաշան սպանված Հյուսեյն փաշայի փոխարեն չնշանակվի քափուղան փաշայի պաշտոնին և չուղարկվի ռազմի դաշտ, ուր նա կարող էր «պատահականորեն» զրկվել կյանքից) Քյոփրյուլուն, ինչպես վկայում է Երեմիա Քյոմուրճյանը, «սպան զՏիլին, զի ասասցէ թագաւորին, թէ լայէիս է զափուտանութեան Ալին...., որ և և յետ երկուց աւուրց սպանման Հուսէինին եզ զափուղան զԱլին և փոյթ առաքէ ամենայն նաւօք ի պատերազմ ի ծովն Սպիտակ»՝ փորձությունների ճանապարհին նրան հեղինակազրկելու միջոցներ որոնելով [60, էջ 325]:

Քյոփրյուլուի այս համարձակ և հաջողակ քայլերն արդեն իսկ վկայում են նրա իշխանության բացարձակության և վալիդեի պարտության և մեկուսացման մասին: Երեմիա Քյոմուրճյանը, նրանց պայքարին անդրադառնալով, արդյունքը այսպես է ներկայացնում՝ «Եւ վալիտէ մայր թագաւորին տազնապէր, մաչէր հանապազ, զի գործիք վէզիլին յառաջանայր, և սիրտ նորա խոցոտէր, յորմէ հետէ տէր եղև կնքոյն բազմախելքն Քէոփրիւլու, վասն զի չէր համարձակ ի տէրութիւնս արքայի և ի փառս և ոչ անունն ևս յիշէր՝ թէ կայ և թէ չը կայ, զի այնպէս սանձեաց զաշխարհ և զնա» [60, էջ 324: Այս իրողությունը հաստատում է նաև պատմիչ Էվլիա Չելեբին (1611-1682)՝ գրառելով

իր եւ վալիդներ միջեւ այդ հարցի շուրջ ունեցած խոսակցութիւնը՝ «Кая султанша сказала: Моу Эвлия, если крепость Очаков была бы уничтожена, попала бы в руки врагов, Кеprюлю обязательно приказал бы убить нашего дорогого (Мелек) пашу. Еу богу, моу милью Эвлия, тут не только я, а и сам падишах не в силах был бы его спасти» [173, с.145; 204, с. 216]:

Քյոփրյուլուի իշխանութեան հեղինակութեան մասին է խոսում նաեւ այն, որ նա իշխանութիւնից հեռացնում է սուլթանութեան երրորդ հեղինակութեանը՝ «գէնպէհն», որը համարձկվել էր ուշացնել Տելի Հյուսեյնի սպանութիւնը արտոնող Ֆեթվան:

Քյոփրյուլուն կարուկ քայլերի է դիմում ենիչերիներին եւ սիփահիներին դեմ՝ խոռով եւ համարձակ տրամադրութիւնները մարելու, երկրի մայրաքաղաքի հասարակական կյանքը կայունացնելու նպատակով: Քյոփրյուլուի օրոք եւս ենիչերիները եւ սիփահիները, վերհիշելով նախորդ վեզիրներին ժամանակներում իրենց հաջողութիւնները, համարձակվում են թելադրել իրենց կամքը Քյոփրյուլուին՝ սպառնալով նրան հիշեցնել Իփշիր փաշայի վեզիրութեան վերջին օրերը [տ.3061-3063]: Սակայն Քյոփրյուլուն, օգտագործելով առիթը, անմիջապէս գլխատում է խռովութեան ղեկավարութիւնը: «Ոյք կային ի ներս առ վէզիրն մեծամեծացն սպահոցն իրը թէ չիք ի մեղա լինելով եւ յոյր վերայ եհաս կարծիք՝ զնոսա կապեալ եւ եսպան եւ ձգեաց արտաքս: Ի պալատէ թագաւորին զբազումս սպանեալ եւ ի ծովն արկեալ եւ թօփչոցն մեծամեծացն եւ ի ճէպէճոցն եւ սպահիլար աղասացն եւ ի մէհթէրիցն եւս որք կային յայնմ խորհրդեան, զայսոսիկ զամենեսեան սպանեալ եւ ի դուրս ձգեալ եւ զոմանս ծովահեղձ արարեալ»- գրում է Երեմիա Քյոմուրճյանը [60, էջ 222-223; հմմ. տ. 3064-3074, 3081]: Փակում է Աթմեյդանի, Այասոֆիայի եւ այլ ենիչերիներին խաները «ի մէջ քաղաքիս որչափ կայր» եւ, արգելելով տարազափոխ լինելը, հետապնդում է հանցագործներին:

Քյոփրյուլուն արտակարգ բռնութեամբ փորձում է կարգավորել ռազմական ուժը, համարել բանակը, բարձրացնել ենիչերու մարտունակութիւնը: Դիմում է նաեւ շահազրգուելու միջոցին՝ խոստանալով բանակը համալրողին եւ ռազմի դաշտ մեկնողին անմիջապէս վճարել յուրաքանչյուր օրվա համար վեցական ստակ, սակայն այս քայլով հնարավոր է լինում բանակը լրացուցիչ համարել 2000-ով միայն [60, էջ 265]:

Քյոփրյուլուին մեծ անհանգստություն են պատճառում իր քաղաքականությունից դժգոհ կենտրոնախույս տրամադրություններ՝ զրսեւորող ֆեոդալների ապստամբությունները: Եթե այդ ուժերը ռազմական միջոցով ճնշել հնարավոր չի եղել, ապա գործի է դրվել խորամանկությունը: Այդ ճանապարհով է նա ջախջախել կայսրության ամբողջականությանը սպառնացող Աբազա Հասան փաշայի ապստամբությունը:

Մուհամմեդ Քյոփրյուլուն խիստ արտակարգ քաղաքականություն է վարում երկրի քրիստոնյա հպատակների նկատմամբ: Նա արյան մեջ խեղդում է Մուլափիայի եւ Վալախիայի ազատագրական շարժումները: Կայսրության մայրաքաղաքում կախաղան է բարձրացնում հույն պատրիարքին՝ մեղադրելով նրան կայսրության նկատմամբ դավադրություն կազմակերպելու եւ լրտեսության մեջ: Չափազանց բարձր հարկերով է հարկադրում ոչ մուսուլման հպատակներին [60, էջ 167, 233]:

Քյոփրյուլուն, ստեղծելով լրտեսական լայն մի ցանց, կարողանում է երկրում եւ մայրաքաղաքում ժամանակին հայտնաբերել կառավարության դեմ կազմակերպվող խմբավորումները: Նրա վեզիրության 5 տարիների ընթացքում մահապատժի են ենթարկվում 30 հազար հոգի [166, էջ 181]: Քյոփրյուլուի կառավարման մեթոդը որդեգրում է նաեւ նրա որդին՝ Ֆազլ Ահմեդ Քյոփրյուլուն՝ մեծ վեզիրի պաշտոնում հաջորդելով հորը, որը «կրտակ արար որդւոյն՝ սպանել յետոյ, զոր կամեցեալ» [տ. 3262]: Նման եղանակով է ղեկավարում ընտանիքի երրորդ ներկայացուցիչը՝ Քարա Մուստաֆա Քյոփրյուլուն (1676-1683 թթ.):

Այս երեք Քյոփրյուլունների վեզիրութան ժամանակաշրջանում կայսրությունը արձանագրում է իր վերջին ռազմական հաջողությունները՝ Տրանսիլվանիայում, Ուկրաինայում եւ Կանդիայում՝ ապահովելով նաեւ Օսմանյան կայսրության համար որոշակի կայունություն: Սակայն նրանցից հետո սուլթանների հեղինակությունը կրկին վայրէջք է ապրում: Սուլթան Մուհամմեդը Վիեննական պատերազմի պարտությունից հետո, պաշտոնազրկելով եւ մահապատժի ենթարկելով Մուստաֆա Քյոփրյուլուին, անկայուն է դարձնում նաեւ իր դիրքերը: Եւ որոշ ժամանակ անց գահընկեց է լինում ինքը 1687 թ.:

Մուհամմեդ 4-րդին հաջորդող իր երկու եղբայրների՝ Սուլեյման 2-րդ (1687-1690 թթ.) եւ Ահմեդ 2-րդ (1690-1694 թթ.) սուլթանների շրջանում եւս Կայսրությունը ներկայանում է վայրէջքային ընթացքով:

Այսպիսով, ըստ Երեմիա Քյոմուրճյանի՝ Օսմանյան սուլթանության

ուսումնասիրվող ժամանակաշրջանի քաղաքական եւ տնտեսական կյանքի անկայունության պատճառ են դիտվում՝ կաշառակերությունը, մեծ վեզիրի պաշտոնը դրաված անձանց վրեժխնդրության ձգտումը, կառավարման եղանակներն ու ձեւերը, երկրի ֆինանսական վիճակը կարգավորելու նպատակով տարվող հարկային խիստ քաղաքականությունը, պաշտոնների քմահաճ վաճառքը, արքունիքում կանանց մասնակցութեամբ խմբակցությունների պայքարը, ինչպես եւ խմբակցությունների ձեռքում գործիք դարձած ենիչերինների եւ սիփահինների մշտական խառնակ տրամադրությունները մայրաքաղաքում, կենտրոնախույս ուժերին ճնշելու կառավարութեան անկարողությունը, սուլթանների հեղինակութեան թուլացումը եւ վերջապես հիշյալ բացերով տառապող սուլթանութեան գոյությունը երաշխավորող բռնությունը:

3. ՀԱՅԵՐԸ ԵՒ ՄՅՈՒՍ ՈՉ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երեմիա Քյոմուրճյանի պատմական ժառանգությունը կարելոր սկզբնաղբյուր է նաև արևմտահայության և պոլսահայության պատմության վերաբերյալ: Այն ընդարձակորեն ներկայացնում է 17-րդ դարի երկրորդ կեսի պոլսահայության շրջանում տեղի ունեցող անցուղարձերը, Օսմանյան կայսրության և Հայ համայնքի փոխհարաբերությունները: Քիչ թե շատ պատկերացում է տալիս կայսրության մեջ ապրող ոչ մահմեդական համայնքների և բախտակից ժողովուրդների՝ հույների և հրեաների դրություն, ինչպես և կայսրության հասարակական և տնտեսական կյանքում նրանց ունեցած դերի և գործունեություն մասին:

Սուլթան Մուհամմեդ 2-րդի կողմից Կոտանդնուպոլիսը դրավվելուց հետո (1453, մայիս 29) կամաց-կամաց, հատկապես զավթած հայկական բնակավայրերից բռնի գաղթեցումների ճանապարհով Հայ ժողովուրդի պատառիկներից ստվարանում է բյուզանդական ժամանակներից ձեռավորված պոլսահայ դաղութը, որը 17-րդ դարում արդեն հասնում էր հարյուր հազարի և Պոլսում ուներ վեց եկեղեցի իր համայնքներով: Այս համայնքների գլուխ կանգնած Հայոց պատրիարքությունը հաստատվել էր նույն Մուհամմեդ 2-րդի կողմից 1461 թ.⁶²:

Պատրիարքությունն էր ներկայացնում Հայ ժողովրդի իրավունքներն ու իշխանությունը կայսրության սահմաններում: Նա էր կարգավորում Հայ ժողովուրդի ու Օսմանյան կայսրության հարաբերությունները, եկեղեցիների հարկադրման, տուրքերի գանձման ու մուծման հարցերը: Երեմիա Քյոմուրճյանը վկայում է, որ պատրիարքությունը 17-րդ դարի երկրորդ կեսին կռվախնձոր է դարձել պոլսահայ գաղութի կյանքում աշխարհական մեծատունների և նրանց տրամադրությունն արտահայտող հոգեւորականության ձեռքին՝ ժողովուրդին պատճառելով նյութական և բարոյական վնասներ:

1650 թ. Դավիթ եպիսկոպոսը կրորդ անգամ պատրիարքական

աթոռին տիրելու համար, կառավարութեանը խոստանում է 40 հազար ղուռուշի հարկաչափ, որը իրականում պիտի վճարեր Պոլսի հայ գաղութը: «Ի բնակչաց պահանջեցաւ եւ տրտնջանօք զայն վճարել», - գրում է Երեմիա Քյոմուրճյանը [60, էջ 11; Հմմտ. տ. 2893]: Դժգոհութիւնները այն աստիճանի են հասնում, որ աշխարհական մեծատունները, ծախսելով լրացուցիչ գումարներ, հեռացնել են տալիս Դավթին. «Յօգոստոսի Ժ (10) աւուր կիրակէի մանզուլ արարին զԴաւիթ եպիսկոպոսն ի պատրիարքութենէն եւ ամենայն պարտօքն առին Զ(6) եկեղեցոյ իշխանքն» [60, էջ 17]: Պատրիարքական իշխանութիւնը ներկայացնում է աշխարհականների խորհուրդը, որն աշխատում է թույլ չտալ «սեւազուխներին» նույնիսկ քաղաք մտնել.

«Զանձրացեալ քաղաքացիք եւ ազգս հայոց զայս հնարեալ,
Ծախսելով դըրամս բազումս զնախարարաց կամս հաճեցեալ,
Զհարկ արքունոյն տալ խոստացան, որ ամ յամէ են պահանջեալ:
Զպատըրկութիւն բառնան բընաւ եւ զսեւազուխս վանեալ
Հանեալ,

Վերայ վեցից եկեղեցեաց կապեն 'ւ ինքեանք են հրամայեալ»
[տ. 2886-2890]:

Իրականում ոչինչ չի փոխվում: Դավիթ եպիսկոպոսի պատրիարքական իշխանութեան ձգտումը եւ հակառակորդների աննահանջ պայքարը, Երեմիայի վկայութեամբ ազգի վրա ծանրացնում են «ՂԻ (90000) ղուռուշի» հասնող մի պարտք, եւ դա միայն «վասն փառաց եւ ոչ Աստծոյ, քանզի որչափ զսա աքսորեցին, նա այնքան եկն եւ յայս յետին շունչն հասոյց զտառապեալ ազգս Հայոց» [60, էջ 17]:

Աշխարհական խորհրդի պատրիարքական առաջին իշխանութիւնը հաղթահարում է հոգեւորականութիւնը՝ Եղիազար Այնթապցու գլխավորութեամբ, որի կարճատեւ պատրիարքութիւնը, սակայն, չի խաղաղեցնում աթոռի շուրջ ծավալված փոթորիկը: Ի վերջոյ անհրաժեշտ է լինում էջմիածնի կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցու միջնորդութիւնը՝ «ի հնարել ինչ վասն բառնալոյ խոռովութեանց եւ վճարելոյ պարտուցն» [22, էջ 336]:

Փիլիպոս Աղբակեցուն պոլսահայութիւնը ղեկավորում է 1652 թ.՝ «Հանդերձ իշխանօք քաղաքիս... մեծաւ փառօք բերեալ առ ի քաղաքս Ստամպոլ», այն հավատքով, որ եկել է խաղաղութեան ոգին [60, էջ 23]: Սակայն հակառակ կաթողիկոսին «Համապատիւ եղբայրս լինիլ եւ

դամենայն զգործս եւ զբանս ի միասին հոգալ եւ կատարել» [22, էջ 335], Հովհաննես Մուղնեցուն հաջողվում է եղիազար Այնթապցուն, Օհան եւ Ներսես վարդապետներին հեռացնել տալ մայրաքաղաքից՝ Հովվական այցելությունների ուղարկելով, գրավել պատրիարքական աթոռը եւ ստիպել կաթողիկոսին հաշտվել իրողության հետ: Կաթողիկոսին մնում է հիշյալ վարդապետներին նվիրակ ուղարկելով, ժամանակավորապես թուլացնել հակասությունները [60, էջ 33], կարծես իր մահից հետո հաջորդող Հակոբ Զուղայեցու կաթողիկոսության առաջին իսկ օրից այն ավելի ուժգին բռնկվելու համար:

Պատրիարքական աթոռի շուրջ մրցակցությունը, այն տիրելու կամ օրվա պատրիարքին պաշտոնազրկելու նպատակով հակառակորդ կողմերի կաշառատվությամբ գործելու եղանակները, ինչպես տվյալները հնարավորություն են տալիս ենթադրելու՝ ոչ միայն ժողովրդին պատճառել են նյութական եւ բարոյական վնասներ, այլև հանգեցրել իրավական կորուստների, որոնք վերստանալու համար ազգից պահանջվել են նոր ճիգեր ու զոհաբերումներ:

Պատրիարքական հոգևոր իշխանությունը վերահաստատելու կամ դրան հասնելու համար անհրաժեշտ է եղել ամեն անգամ վճարել սահմանվածից ավելին: Եւ ստեղծվել է այն սխալ պատկերացումը, թե ինչքան շատ է խոստացված եղել տուրքը, այնքան մեծ են եղել պատրիարքական աթոռը գրավողի իրավունքները ազգի վրա: Թովմա պատրիարքը, հէրբնեում մեծ վեղիրին խոստանալով հավելյալ գումար՝ 10 քսակի չափով, ստանում է հատուկ բերաթ լայն իրավունքներով. «...զի ինքն իշխեսցէ յամենայն իշխանութիւնս Տաճկաց եւ ամ յամէ տացէ զմիրին եւ զոր առնելոցն է առաջնորդ արասցէ, եթէ փոխելն եւ եթէ նստուցանելն, եթէ կալն եւ եթէ մնալն՝ ամենայն ինչ ի ձեռս իւր, - արձանագրում է Երեմիա Քյոմուրճյանը [60, 277-278]⁶³:

Թովմա Բերխացին իր այս քայլով պատրիարքության տուրքը հասցնում է անսահման չափերի՝ 400000 ակչեի⁶⁴: Պոլսի վեց համայնքների աթոռակալների, իշխանների մեղադրանքներում նկատում ենք, որ նա «ազգս մեր զոչ եղեալս արար», ավելացրել է հարկերը, հափշտակել եկեղեցիների եւ թեմերի իրավունքները եւ, առաջին անգամ լինելով, Պոլսո պատրիարքությանը հարկատու է դարձրել նաև Երուսաղեմի պատրիարքությունը՝ «թէ զԵրուսաղէմ ի պէրաթ գրեալ, հարկատու առնէ զնա» [153, էջ 2518; 137, էջ 371; 121, էջ 671; 60, էջ 277-278]:

Գայմագամը, որ սուլթանական բերաթուլ պատրիարքական իշխանությունն էր շնորհել թովմային, պատվել, խլալել եւ «Հեծուցեալ ձի զօրավարօք Հանդերձ» ուղարկել էր աթոռատեղին՝ «ի վանս սրբոյ Գէորգայ», պատրիարքի Հահառակորդ ազգակիցների առաջարկած (20+30=50) քսակի առաջ տեղի տալով, հորինված պետական դավաճանության մեղադրանքով բանտարկում է եւ ապա մահվան մատնում: Երեմիա Քյոմուրճյանը այս եղելությունը համարում է ստոր արարք՝ անպարտ դտնելով թովմային. «բայց մինչեւ ցայժմ ի քաղաքս չտեսին համբաւ չարութեան նորա կամ թէ լուեալ էին զպակասութիւն օրինաց նորա» [60, էջ 277-278; 121 672-673]: Չարամիտ այդ քայլի դիմաց ծանր են փոխհատուցել համայնքները:

Այս խառնակ իրադրության մեջ Եղիազար Այնթապցի եւ Մարտիրոս Ղրիմեցի վարդապետները, միջամտելով իրադարձությունների ընթացքին, կարողանում են ազգային տուրքը իջեցնել մինչեւ 140000 դուռուշի եւ ստանալ Մարտիրոս Ղրիմեցու պատրիարքության իրավունքը: Սակայն Մարտիրոս Ղրիմեցու պատրիարքությունը եւս միայն կարճ ժամանակի համար է ապահովում խաղաղություն: Այս անգամ Ղրիմեցու եւ Այնթապցու միջեւ ծագած տարաձայնությունն է վերանորոգում աթոռի շուրջ պայքարը: Օգտվելով այս վիճակից, ազգի ուսերին ծանրացած թիավարման (քիւրէկճի) տուրքը վճարելու պայմանով աթոռը գրավում է Ղազար Սեբաստացին. «Եւ գայր նա ի քաղաքս եւ սպասէր գործոյն եւ զպարզամիտս պատէր թէ զքիւրէկճին ի վերայ իմ առնեմ եւ հանեմ զայն հարկ է ժողովրդենէ եւ այլ թէ զեկեղեցիքն շինելոյ աղագաւ առնեմ զպատրիարքութիւն... մինչդեռ էր Եղիազար աստ եւ նա եւս ոչ կամեցաւ զհաստատիլն Մարտիրոսին եւ թոյլ ետ զի առցէ միւսն վասն զգժտութեան որ մտեալ էր բազում անգամ ի մէջ նոցա, այլ եւ թէ Ղազարն լինի փաթրիք՝ առաւել խոնարհեսցի նմա... [60, էջ 364]:

Ուրեմն, ըստ պատմագրի՝ գործարար անձինք տիրել են պատրիարքական աթոռին՝ օգտվելով նախ ժողովրդի անօգնական վիճակից, եւ երկրորդ՝ հագուրդ տալով նաեւ ազգեցիկ հոգեւորականների փառասիրական ձգտումներին՝ պատրիարքական աթոռի վրա տեսնելու այնպիսի աճնավորությունների եւ խմբերի, որոնց վրա կարող էին ազդեցություն ունենալ: Նման պատճառաբանությամբ է բնութագրում պատրիարքության շուրջ ծավալված պայքարը նաեւ իրադարձություններին ժամանակակից Առաքել Դավրիժեցին. «Եւ

պատճառ պարտուցս էին նախ սոսկ միայն կոչմամբ եւ եթ պատրիարք անուանեալ առաջնորդքն, որ նստին թագաւորական իշխանութեամբ եւ արծաթոյ ընտրութեամբ սպրդեալ ի ներքո մտանեն՝ յանձանց, եւ ի սուտակասպասից ընծայեալք եւ ոչ յԱստուծոյ: Եւ երկրորդ՝ խազմասէրքն եւ խոռվարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան եւ վասն նախանձու եւ վասն մարմնաւոր շահուց ակնկալութեան, գումարտակ լինէին, ոմանք ի վերայ այսմ առաջնորդի եւ ոմանք այնմ առաջնորդի եւ սուտակասպաս արբանեակք եւ զօրավիզք լինէին նոցա եւ ապա գնացեալ առ դավթարդար եւ առ վէզիր եւ առ թագաւորն, տային կաշառս յօրովս նոցա, եւ վանէին զախոյանն եւ առնուին զիշխանութիւն սոսկ անուն պատրիարքութեան եւ առաջնորդութեան: Եւ այլ եւս բազմապատիկ կաշառս ի գրունս իշխանացն ցուցէին աստ եւ անդ եւ այսպէս առնելով բազմացաւ, բարդացաւ, զիզացաւ պարտքն եւ եհաս մինչ ի ԽՌ (40000) զուռուշն» [22, էջ 269]:

Որոշ տվյալներից պարզվում է եւ, որ պատրիարքական աթոռի գրավման այս պայքարը միայն հոգեւորականների կամ աշխարհական մեծատունների փառասիրութեան գրասեւորում չի եղել եւ այն էլ հայոց համայնքին հատուկ, նման թե՛ պայքար ընթացել է նաեւ հունական պատրիարքական աթոռի շուրջ: «Օրերքս չօռացի եպիսկոպոս մի Հոռոմոց էառ պատրիարքութիւն ինքնագլուխ, ոչ կամաւ իշխանացն ազգին իւր եւ ոչ եւս եպիսկոպոսօք նստեալ յաթոռն, որպէս օրէն էր նոցա, այլ բռնութեամբ՝ տուեալ բազում գրամս վէզիրին եւ նստեալ», - գրում է Երեմիա Քյոմուրճյանը [60, էջ 238]: Ուրեմն այդ ավելի բարդ քաղաքական երեւույթի հետեւանք էր՝ Արեւմտահայ բուրժուազիայի ներսում ընթացող պայքարի արտացոլումը արեւմտահայութեան հասարակական կյանքում: Հայ հոգեւորականութունն էլ իր հերթին երկփեղկվելով հարում էր բուրժուազիայի ներքին տրամադրութեաններին՝ ստեղծելով, ինչպէս նկատում է Հակոբ Անասյանը, «միաձուլված բուրժուա-կղերական երկու ուժեղ ճակատներ, որոնցից յուրաքանչյուրի ձեռք բերած հաջողութեաններն արտահայտվում էին պատրիարքների հաճախակի փոփոխութեաններով» [20, էջ 74-75]:

Յուրաքանչյուր խմբակցութիւնը բնականաբար օգտագործում է իր միջոցները գրավելու պատրիարքական աթոռը եւ իր օգտին կարգավորելու Օսմանյան կայսրութեան իշխանութեանների եւ հայ ժողովրդի հարաբերութեանները: Եւ այդ մրցակցութիւնը հաճախ ստանում է

անդիջում բնույթ ու վերաճում «Հասարակական խառնակությունների եւ թշնամանքի [20, էջ 62]: Դավրիժեցու վկայությամբ՝ «Հաստատեալ խոսովութիւն ի մէջ նոցա անհաշտ եւ արեամբ չափ ատելութեամբ» [22, էջ 268] անդրադառնելով Հայ Հասարակական եւ Հոգեւոր կյանքի վրա, պառակտելով այն, Հանդեցնելով նյութական եւ իրավական կորուստների: Բայց Հայ Հասարակության ներքին պայքարի հետեւանք չէին միայն պատրիարքների Հաճախակի փոփոխությունները եւ դրա շուրջ ընթացող մրցակցությունը, կրում էին եւ արտաքին ազդեցությունը, որին դիմադրավելը առավել դժվար էր:

Հակոբ Սիրունին, անդրադառնալով այս ազդակին եւ պատրիարքների Հաճախակի փոփոխելու Հանգամանքին, գտնում է, որ դրանում շահագրգռված են եղել օսմանյան արքունիքն ու կառավարությունը «ոչ միայն այն կաշառքներու Համար, զորս օրուան պաշտօնատարները պիտի ստանային թեկնածուներէն կամ անոնց պաշտպաններէն՝ օրուան պատրիարքին հեռացնելու եւ անոր տեղ բազմեցնելու Համար ամենէն շատ վճարողը, ոչ միայն այն ընծաներուն Համար, որոնք պաշտօնական սակի վերածուած էին... այլ նաեւ կարեւոր այն գումարին Համար, զոր ամէն պատրիարք անուան բերաթը ստանալէ առաջ պարտաւոր էր Հատուցել արքայական դանձին» [137, էջ 371-372, 369]: Ահա եւ այդ քաղաքականության Համաձայն, պատրիարքական տուրքը հետզհետեւ 16-րդ դարից մինչեւ 17-րդ դարի կեսերին 4 Հազար ակէից Հասնում է 400 Հազարի Թովմա պատրիարքի օրոք⁶⁵:

Եւ որպէսզի նոր պատրիարքի օրով այս տուրքը ավելի մեծ չափով եւ Հաճախակի Հոսի պետական դանձարան, կառավարությունը դիմել է զանազան միջոցների, որոնցից է եղել եւ ամենամյա տուրքը ժամանակից շուտ պահանջելը: Ընդհանրապէս պատրիարքական տուրքը մուծվել է տարվա սկզբին, սակայն Հաճախ կարգադրվել է նույն տարվա կեսին վճարել նաեւ Հաջորդ տարվա տուրքը, եւ ստացվել է այնպէս, որ միեւնույն տարում Համայնքը պարտավոր է եղել մուծելու երկու տուրք: Այդ դեպքում, բնականաբար, Հարկը Հնարավոր չի եղել վճարել, հետեւաբար եւ իշխանությունները գահընկեց են արել պատրիարքին:

Երեմիա Քյոմուրճյանը վկայում է նաեւ, որ տուրքը ժամանակին չմուծելու դեպքերում կառավարությունը բանտարկել է Հարկի պատասխանատուներին: Այդպէս է եղել աշխարհական տեղակալների շրջանում, 1657 թ.: Բանտարկվել են Հայտնի չելերիններ տուրք չմուծելու եւ պաշ-

տոնական պատրիարք չունենալու մեղադրանքով՝ «թէ դուք այսքան տարի պատրիարք չէք եղեալ» [60, էջ 240]:

Ինչպես երեւում է, իշխանութիւնը շահախնդիր է եղել, որ պատրիարքական աթոռը ունենա իր գահակալը, Հաճախակի փոխվի եւ վերահաստատվի օգուտ պետական գանձարանի: Այս եզրակացութիւնը Հաղորդում է նաեւ Երեմիա Քյոմուրճյանի ժամանակակից եվրոպացի Հեղինակներից Ռայչիտը՝ նկատելով, որ «Հայկական հոգեւոր իշխանութիւնները կոչված են բաւարարելու թուրքերին, որոնց շահերն իսկ թելադրում են պահել այդ իշխանութիւնները, քանի որ այդ իշխանութիւնն յուրաքանչյուր ներկայացուցչի գահակալութիւնը եկամուտ է բերում» [20, էջ 232; Հմմտ. 175, էջ 397]:

Օսմանյան կայսրութիւնն ենթակա հայութիւնը, բացի պատրիարքական տուրքից եւ բազում հարկերից, 17-րդ դարի երկրորդ կեսից սկսյալ ստիպված է եղել վճարել նաեւ «քիւրէկճի» կոչված հարկը: Ըստ Երեմիա Քյոմուրճյանի՝ այն հետեւանք է եղել Կանդիայի պատերազմի՝ «որոյ քիւրէկճի անուանեն, ի պէտս Կրիտեայ լինին ծախեալ» [տ. 2859-2860]: Այն 1648 թ. քրիստոնյա բնակչութիւնից պահանջել է մեծ վեզիր Մուհամմեդ փաշան (1648-1649 թթ.). «Մարտ ամսոյ եւ վէզիր պիղծն նոր իմն հարկ եղեալ ի վերայ հարկատուաց, վասն զի տօնանմայի նաւուցն պատերազմի որ երթային ի Ֆռանկս, որ Ե (5) ամ է ՌՂԳ (1093-1644) էառ կղզին Կրիտեայ. սա արկ «թի» անուամբ որպէս զի արս գտցեն դրամով. Եձ (500) այր հրէից, ԲձԾ (250) յունաց, ԲձԾ (250) ի Հայոց. եւ ԲՌ (2000) ըստակ ի գլուխ միոյն ետուն ի պէկլիկէն եւ դայլ ճար արարեալ եղին հարկ ի մէջ իւրեանց բամբ երից ազանց ի վերայ ամենեցուն եւ ժողովեալ ետուն եւ զնացողքն անբան տաճիկք եւ ռամիկք յայլոց նահանգաց առնէին զստակն եւ մտանէին ի նաւս [60, էջ 287]

Ինչպէս երեւում է, քրիստոնյաները տուրք վճարել են նաւատորմում պարտավորութիւններ կատարելու դիմաց: Նախապես պահանջվել է կենդանի ուժ, բայց ազգերի ջանքերով այն փոխարինվել է ամենամյա վճարվող տուրքով: Տուրքի չափերը թեւեւ որոշվել են ըստ բնակչութիւնն ունեւորութիւն: Ընդհանրապես 4-8 ընտանիքներից գանձվել է մեկ քյուրէկճի [232, հտ. 2, էջ 343], սակայն այն միշտ փոխվել է՝ կապված պաշտոնյաների քմահաճույքից, երկրի ֆինանսական կարիքների եւ դրամի արժեքազրկման հետ: Մուհամմեդ Քյոփրլուլուի վեզիրութիւնն ժամանակներում այդ տուրքը անտանելիորեն ծանր է եղել: Քյոփրլուլուն

մինչև 1657 թ. վճարվող 100-ի փոխարեն պահանջել է 150 քյուրեկի՝ Համայնքի բողոքի վրա այն հասցրել է 300-ի. «Նա մեծաւ սաստիւ հատեալ զբանս, թէ Գձ՝ (300) տուէք եւ ի նոցանէ քանզի բարկացեալ էր՝ ետ հրաման, թէ գնացեալ Գձ (300) քիւրէկի տուէք: Ամօթալից դառնային եւ զԲձ (200), Բ (2)-ական, Ռ (1000) ըստակ տուին՝ թէ մարդ գտէք յորում աւուրքս յամենայն եկեղեցի կոտոր արարեալ բաժանմամբ: Ա (1) տուողն յամենայն ամի յայսմ ամի Գ (3) երեր եւ ամենայն ազգ այսպիսի ի մեծի վտանգի կայր» [60, էջ 288]:

Երեմիա Քյոմուրճյանի այս հաղորդումից պարզվում է, որ քյուրեկի տուրքը կազմել է 3000 ղուռուշ, որի երկու հազարը հավաքվել է Համայնքից, յուրաքանչյուրը մեկի փոխարեն վճարել է երեք քյուրեկի: Տուրքի այս չափը հետագայում չի փոխվել: Ղ. Ինճիճյանը հայտնում է, որ 18-րդ դարում այն տատանվել է 6-7 քսակի, այսինքն շուրջ 3000-3500 (500 x 6/7) ղուռուշի սահմանում եւ որպէս կարգ «մի ըստ միոջէ ժողովել ի տանտեարց» [81, էջ 111]:

Քյուրեկի տուրքը հավասարապես ծանր է եղել երեք համայնքների համար էլ՝ Հայերի, հույների եւ հրեաների: Նրանք հարկը թեթեւացնելու կամ նրանից ազատվելու նպատակով աշխատել են օգտագործել պաշտոնյաների շրջանում իրենց ազգակիցների ունեցած ծանոթությունները եւ կայսրութեան մեջ ծագող կաշառքի ճանապարհը: Սակայն դա հաճախ ավելի է բարդացրել: Ե. Քյոմուրճյանը հաղորդում է, որ 1651 թ. Հայերը, հույները եւ հրեաները որոշում են ժամանակի մեծ վեղիր Կյուրջի Մուհամեդ փաշային (1651-1652 թթ.) վճարել լրացուցիչ մի գումար եւ ստանալ քյուրեկի տուրքից ազատվելու արտոնաթուղթ: Սակայն քիչ հետո կառավարութեան մեջ փոփոխություններ են կատարվում: Նոր վեղիր Ահմեդ փաշան (1652-1653 թթ.) չի ճանաչում ձեռք բերված իրավունքը եւ կրկին հարկադրում է:

Եղեւ հազար հարիւր թուական(1651), որ այս համայն էր գործեցեալ Ընդ ժամանակըն Կիւրճիս երից ազգաց միաբանեալ:

Քրսան հազար ղուռիչ ետուն՝ ըզքիւրէկճոյ հարկըն բառնալ,

Զի առնուն ետ խէթիչէրիՖ, ըզկնի եկեալքն ոչ ընկալեալ

[տ. 2916-2919]:

Այսպիսի մի գործարք էին կատարել Հայերը 1648 թ. օգտվելով Մելեկ Ահմեդ փաշայի հետ հայ մեծահարուստ Մաղաքիա Զելեբիի ծանոթությունից եւ հաջողվել էր ազատվել տուրքի մի մասից [60, էջ

68; 55, 51-52; 82, էջ 84]: Կառավարութեան Հետ այս գործարքն արդեն իսկ լավագույն փաստն է այն մասին, թե ինչքան ծանր ու մեծ է եղել քյուրեհիճի տուրքը, որը ոչ մահամեղական համայնքները պարտավորված վճարել են հետագայում եւս:

Օսմանյան կայսրութեան մեջ հայը, ընդհանրապես ոչ մահամեղական հպատակը պարտավոր է եղել տարազի համար նույնպես վճարել տուրք: Սուլթան Մուհամմեդ 4-րդը 1662 թ. հրամայում է փակել չկրել՝ «Եւ ըզփակեղս քրիստոնէից ամենեւիմք վերացուցեալ», այլ՝ սեւ դռակ, իսկ գլխանոցի համար լրացուցիչ վճարել. «սարըղի դրամ առնուն»: Մեծամեծերից մինչեւ ամենահասարակ հայը պարտավորվում է գդակ կրել եւ հագնել անտեսք եւ տգեղ, մինչդեռ մահամեղական ամենացածր անձնավորութիւնն անգամ կարող էր չըջել «զհայոց դեղին մեսան եւ զգունակ դաղձուրն զմեծ փակեղն եւ զղալփախն, զգունակ վերարկուն եւ զապըշումէ գօտին միջաց» հազած կապած, վկայում է Երեմիա Քյոմուրճյանը [60, 399-400]:

Այդ արգելքը գալիս էր դեռեւս 15-16-րդ դարից եւ շարունակվել է հաջորդ դարերում եւս: Սուլթան Սելիմ Երկրորդի (1566-1574 թթ.) 1568 թ. հրամանը որոշում է, որ հրեա եւ քրիստոնյա հպատակի հագուստը չպիտի լինի ազնիւ կերպասից, այլ՝ աստառացու կտորից, պետք է կոշիկը լինի սեւ, հրեան պետք է կրի վարդագույն փաթթոց, քրիստոնյան՝ կարմիր, բայց ոչ արժեքավոր կտորից:

Հայ կանանց համար նախատեսվում է սեւ Բուրսայի քութնու, կապույտ չաքիր, մեշինն հողաթափեր, հասարակ տեսքով հագնված: Սուլթան Մուրադ Երրորդը (1574-1595 թթ.) 1577 եւ 1580 թվականների հրամանագրերով կարգադրում է ոչ մուսուլման հպատակներին հագնել ավելի անշուք, որ հրեան փաթթոցի փոխարեն կրի կարմիր գդակ, քրիստոնյան՝ սեւ, ինչպես նախատեսված է եղել սուլթան Մուհամմեդ Երկրորդի օրոք [1, Մատ. ձեռ. 1497, էջ 36բ-37ա; 195, թիւ 46, 47, 51; Հմմտ. 147, էջ 203-204, 206-207; 14. Հտ. Բ, էջ 268-269; 179 Հտ. 8, էջ 81; 70, էջ 74]:

Այսպիսի հրամանագրեր արձակվում են նաեւ հետագա դարերում՝ ոչ մուսուլմաններին դնելով մուսուլմանի նկատմամբ ավելի ստորացուցիչ հարաբերութեան մեջ: 18-րդ դարի մեծ վեզիրներից Ահմեդ Ջելալըլին եւ նրա ոգով կառավարող հաջորդ վեզիրները ոչ միայն հիշեցնում են բարեկարգ հագնելը արդելված լինելու մասին, այլեւ պարտադրում

են անտեսք արտաքինին ավելացնել եւս սեւ երիզավոր ժապավեն, զանգապաններ [70, էջ 74; Հմմտ. 14, հտ. 2, էջ 238-239]:

Ընդհանրապես քրիստոնյան եւ հրեան իրավունք չեն ունեցել փոխել իրենց համար նախատեսված հագուստը. որով ընդգծվել է նրանց ազգային պատկանելութունը եւ իրավական վիճակը, եւ հագնել մուսուլմանի համար նախատեսվածը [186, էջ 264; 20, էջ 33]: Այդպիսի դեպքերում նրանց սպառնացել է դանահարութունը՝ «օրերքս ենիչէր աղասին թէպտիլ շուրջ գայր եւ գանէր, որք հագուստով էին եւ նոր հանդերձիւ քրիստոնէից», բանտարկութուն, մինչեւ իսկ հավատափոխության պարտադրում եւ մահապատիժ [55, էջ 38, 65-66]:

Թուրքերը Հավատափոխության պարտադրանքին դիմել են դեռեւս սուլթանության վաղ շրջանից սկսյալ: Երեմիա Քյոմուրճյանը, Հենվելով թուրքական աղբյուրների վրա, նկատում է, որ թուրքերը արշավանքների ժամանակ հպատակված ժողովուրդներին ջարդելու, գերեվարելու հետ միասին բռնությամբ պարտադրել են Հավատափոխ լինել, թուրքանալ՝ «Զորս ի կրթոնրս Մահմէտի զհամայն բնակիչսըն դարձուցեալ, Ուր յոլով ազգք եւ լեզուք զթուրքաց սովորըն սովորեալ» [տ.181/182]:

Հավատափոխության պարտադրանքը 17-րդ դարում արդեն կայսրության մեջ ոչ մահմեդականի համար նախատեսվող եւ գործող պատիժ է եղել:

Քրիստոնյան Հավատափոխության է դատապարտվել տարազի փոփոխման, չնչին զանցանքների համար, նույնիսկ հորինված զրպարտությունների, մեքենայությունների զոհ դառնալով [186, էջ 336]: Եւ եթե քրիստոնյան գերադասել է մնալ իր հավատքին, մահվան է դատապարտվել՝

«Ոմանք հայք եւ հոռոմք յայսմ ընդ Ֆռանկ մի նահատակեալ, Ուրեք ուրեք լուրն եհան մեզ, շնորհն Յիսուսի պայծառացեալ» [տ. 3489-3490]:

Այս ողբերգության մասին է արտահայտվել նաեւ Գրիգոր Կամախեցին՝ «Տաճիկք մեծ վարձք համարելով զքրիստոնէից ուրանալ զՔրիստոս եւ ի Մահմէտի օրէնս եւ ի կրօնս դառնալ, զխաչ եւ զեկեղեցի բեկանել եւ խորտակել, եւ հաւատացեալ, որ ոչ հաւանին Մահմէտի եւ չար կրօնից նորին ազգի ազգի տանջանօք չարչարեն եւ հրով այրեն» [1, էջ 467-468; տե՛ս եւ 96, էջ 437-441, 449-489, 495, 519, 521, 523]:

Թուրքերը հավատափոխության պարտադրանքը իրականացրել են հետեւողականորեն: Առերես ուրացությունը նույնպես քրիստոնյային փրկության հնարավորություն չի տվել, այդպիսի դեպքերում մահվան է մատնվել նա: Երեմիա Քյոմուրճյանը նահատակությունը գնահատել է բռնադատված ժողովրդի հոգու ամբուլթյան, հերոսացման, բռնության դեմ պայքարի միջոցներից, եղանակներից:

Երեմիա Քյոմուրճյանը վկայում է, որ հայ, ինչպես եւ հույն քրիստոնյան հալածվել են ամենուրեք: Նրանք ազատորեն եւ անվտանգ չեն կարողացել երթեւեկել երկրում, հաճախել ուխտատեղիներ, եթե նախապես դրա համար վճարում չի կատարվել: Թուրքերը աշխատել են մոռացության տալ սրբատեղիների հետ կապված քրիստոնյա ժողովուրդների մեջ սովորություններն ու ավանդությունները [60, էջ 65-66; 55, էջ 13, 107]:

Օսմանյան կայսրության մեջ անհանդուրժելի են եղել եկեղեցիների փառավոր տեսքը, վեհությունը: Եթե եկեղեցին իր բարձրությամբ գերազանցել է մոտակա ջամիին կամ մեջիդին, իշխանությունները հրամայել են քանդել կամ ցածրացնել գմբեթը:

Երեմիա Քյոմուրճյանը վկայում է, որ այդպիսի պատճառաբանությամբ են քանդվել Եվդոկիայի եւ Բրուսայի հայոց հոյակապ եկեղեցիները՝ հակառակ բողոքների եւ ջանադիր միջամտությունների (1652 թ. հունիսի 14). «Ի սմին աւուր ի քաղաքն Եւդոկիա Բ (2) եկեղեցի քակէր տաճիկքն նէֆիրամ արարեալ, քանզի յոյժ հոչակաւորք էին լեալ եւ մօտ տաճկացն, եւ ասեն, թէ քակեցէք ի գլխոյն փոքր ինչ ցածուցանել: Եւ այնպէս առնեն: Եւ ազգն հայոց ասացեալ՝ թէ մէք այլ չեմք շինէր զդա, վասն էր քակեցիք զդա, ահա կու երթամք ի թաղաւորն գանդատ ի ձեռաց ձերոց: Եւ զայս լուեալ մուֆտուն՝ լցեալ բարկութեամբ նէֆիրամ առնէ, այսինքն է աշխարհաժողով նոցա եւ զամենեսեան ժողովէ եւ դիմեալ ի վերայ եկեղեցեացն զհիմն յերեսն հանեալ արեգակին» [60, էջ 42; Հմմտ. տ. 2709-2710]:

Թուրքերը թույլ չեն տվել ոչ միայն եկեղեցիներ կառուցել, նույնիսկ Հները նորոգել [տ. 3265-3270]: Օգտագործել են ամեն պատրվակ՝ քանդելու կանգուն եւ հոյակապ կրոնական շինությունները՝ վերածելու մզկիթի կամ ջամիի, իսկ նրանց շրջապատի քրիստոնյա բնակչությանը տեղահան անելով՝ թափառական դարձնել:

«Եկեղեցին քակեն զՂարսայ՝ Ակնայ, Ղարա հիսարուն այլ,

Շատ յերկիր տուգանս առնուն, փակեն, բանան՝ միշտ զրպարտեալ: Եւ զԿարնոյ եկեղեցին Վանուով ձամի են դարձուցեալ,

Այս Վանի միշտ չարախօսէր.

«Հայք ընդ Տաճկաց չէ պարտ բնակեալ»,

Հանին զՀայս յարկաց իւրեանց, թէ ի Տաճկացն երբեմն առեալ»

[տ. 3283-3287]:

Չհնազանդւողներին բանտարկել են, բռնի հավատափոխել [տ.3288]:

Պոլսի հայկական եւ հունական եկեղեցիները քանդելու վտանգի առաջ գտնվեցին 1656 եւ 1660 թվականներին նաև: Նախ Պոլսի կաղնիներից Հոջա դագեն աշխատում է համոզել կառավարութեանը, որ Կանդիայի պատերազմում Վենետիկյան ծովային ուժերից կրած թուրքերի անհաջողութիւնների պատճառը մայրաքաղաքում եկեղեցիների դոյուլթյունն է՝ «ասացեալ, թէ եկեղեցիք կան ի մէջ քաղաքիս վասն այնորիկ բան մեր ոչ լինի յաջող» եւ հորդորում է քանդել դրանք [60, էջ 195-196]: Ապա 1662 թ. երբ շեյխ Վանին, որը Հայտնի անձնավորութիւն էր Կարինի հայոց ս. Ստեփանոս եկեղեցու մզկիթի վերածելու իր դործունեութեամբ, կարողանում է հետաքննելու իրավունք ստանալ մայրաքաղաքի 1660 թ. սոսկալի հրդեհից վնասված եկեղեցիների նորոգման հանգամանքները, եւ բնականաբար դա ծանր հետեւանքներ է ունենում քրիստոնյա համայնքների վրա [60, էջ 400; Հմմտ. 110, էջ 35; 20, էջ 29; 179, էջ 78]:

Այս տրամադրութիւնները քրիստոնեական քաղաքները կերպարանափոխելու թուրքերի ավանդական քաղաքականութեան կիրառումներն էին: Նման տրամադրութիւնների փոփոխութիւնը պահանջել է քրիստոնյա համայնքներից որոշակի նպատակաուղղված գործունեութիւն: Այսպես, երբ թուրքերը, տիրելով Կանդիային, սկսում են քրիստոնեական տաճարները վերածել մզկիթների եւ բաղնիքների, միայն երկու եկեղեցի է հաջողվում փրկել մեծ վեզիր Ահմեդ Քոյոբյուլուի հույն թարգմանիչ Պանայոտտիի եւ հայ մեծահարուստ Աբրո Չելբու ջանքերով եւ նրանց քսակի ուժով՝ հայ եւ հույն համայնքների համար. «Les eglises furent transformees en mosquees, deux exceptees, dont l'une fut rachetee pour le Grecs au prix de 2,800 louis d'or par Panajotti, et l'autre par un marchand armenian pour ses coreligionnaires moyennant 1,400 ecus» [179, էջ 131]:

Կայսրութեան մեջ քրիստոնյան ոչ միայն կարող էր կորցնել իր եկեղեցին, ազդեցական էր, ուխտավայրը, ազգային սեփականութիւնները.

վտարվել ընակավայրից, տնից, հավատափոխության պարտադրվել, այլևս զրկվել Ֆրիդրիկական ապահովությունից: Քրիստոնյա հպատակը, լինել նա ընչազուրկ թե մեծատուն, նույնիսկ ազգի հոգեւոր առաջնորդ՝ պատրիարքը, կարող էր քմահաճորեն նետվել բանտ, տանջամահ արվել [60, էջ 167, 196, 233-236; տե՛ս եւ 52, նաեւ 60, էջ 412-429; տ. 3093]:

Քրիստոնյայի վրա կարելի էր բարդել մեղադրանքներ, որի պատկերացումն անգամ նա կարող էր չունենալ, չկատարած մեղքի համար պատժվել, իսկ թուրք մարդասպանը կարող էր անպատիժ մնալ, եթե նրա հանցանքը գործված էր ոչ մահամեղականի նկատմամբ: Առօրյա այս եղելություններին ականատես եր. Քյոմուրճյանը արձանագրել է այնպիսի փաստեր, որոնք ընդգծում են ոչ մահամեղականի իրավունքի աստիճանը, տարրական իրավունքից զուրկ լինելը [60, էջ 343]:

Այսպես, ցանկասեր մի տաճիկ նեղություն է պատճառում գինեվաճառ մի հույն կնոջ եւ սպանում կնոջն օգնության շտապող բարեկամ ազգակցին: Բողոքների այն հարցին, թե «Մի տաճիկ զկեաւուրն մի սպանցէ, զինչ լինի», դատավոր մուֆթին անպարտ է գտնում հանցագործին՝ պատասխանելով «Վասն էր Հոռոմն այն մտանէր եւ ելանէր ի տուն կնոջն, եթէ ոչինչ մարդ էր» [60, էջ 254, 355]: Անպատիժ է մնում նաեւ այն տաճիկ ավազակը, որը կողոպտում է հայ վաճառականին՝ «որից գողացան զինչս ականց եւ այլ՝ մինչ ի Ռեճ (1500) մուռճիլն»: Վեզիրը ի պատասխան բողոքի «ետ հրաման հանդերձ չաւուչով, զի գտցեն եթէ ոչ բերցեն զնա առ նա, եւ բազում հնար արարեալ ոչ հանեալ զնա» [60, էջ 255]: Մինչդեռ մուսուլման սպանողի համար օրենքը նախատեսում է ամենամեծ պատիժը՝ մահ [60, էջ 253]: Անընդունելի է եղել եւ քրիստոնյայի վկայությունը՝ Մեծ դատավորը կարող էր որոշել՝ «Քիթապլէրըմըզ պօյլէ շահիտի գապուլ էթմէզ» [60, 418-419: նայել եւ 55, էջ 418-419]:

Քրիստոնյան ամեն պահի կարող էր ենիչերու գրոհին ենթարկվել, որը կարող էր ներխուժել քրիստոնյայի տունը, բռնաբարել նրա կնոջը, փողոցում առեւանգել քրիստոնյա կանանց ու երեխաների, տանել «ի պարտեզ» խայտառակելու [60, էջ 348]: Երեմիա Քյոմուրճյանը նկատում է, որ ենիչերիները հաճախ հարբած «կու խմէին է, Լ, Գ, Դ ընկերօք (թեեւ կառավարությունը 1656 թ. արգելել էր խմիչքի օգտագործումը) շուրջ կու գային խաղ ասելով եւ չօնկուր զարնելով, եւ ով էր, որ հայ աղա կամ կին ի նոցա դէմն գար» [60, էջ 144]: Պարզ է թե ինչ էր սպասում

նրան: Առանձնապես ենիչերինները ավելի վտանգավոր եւ անպատիժ են գործել արչավանքի մեկնելիս [60, էջ 231]: Ենիչերինների դասի այս վարքի մասին հաղորդում են նաեւ հաջորդ դարերի հայ աղբյուրները [1, Մատ. ձեռ. 10716]:

Երեմիա Քյոմուրճյանը տեղեկացնում է, որ կայսրության մեջ քրիստոնյաների վիճակն առավել անմխիթար է դարձել հատկապես պատերազմներում թուրքերի կրած պարտություններից հետո: Ուժեղացել են բռնությունն ու ճնշումը, ծանրացել հարկերը, արգելվել են ուրախանալ, զրոսանքի դուրս գալ, նույնիսկ գերեզման այցելել:

«Ընդ հանուր ջրրոյս լըրոյ Տաճիկք առ մեզ խիստ խոժորեալ, Ջլուծս հարկատուաց ծանրացուցին համայն յերկիր եւ պահանջեալ: Հարսանիք թէ ճոխութեամբ եւ ի զբօսանս, թէ դուք զբտեալ, Գանհարեալ վըշտացուցին, 'ւ ի թէքլիֆից այլք տաճկացեալ: Ոմանք ի մի վայր, թէ նրստած զբրուցատրել, թէ պատահեալ, Հարկանեն, կոխեն, գանեն, ի տուգանաց եւ երկընչեալ»

[տ.3353-3358]:

Ահա այս դժոխային պայմաններում էր իր գոյության համար մարտնչում ոչ մուսուլմանը Օսմանյան կայսրությունում: Նա պայքարում էր գործադրելով միջոցներ՝ պահպանելու իր եկեղեցին ու սրբատեղին, ազգային ավանդություններն ու տարազը, ազատելու ազգակցին հավատափոխության պարտադրանքից, համայնքը՝ հարկերի ճնշող ծանրությունից, վերագտնելու եւ վերահաստատելու ոտնահարված ազգային իրավունքները, դիմադրելու թուրքերի վարած քմահաճ, անսանձ քաղաքականությանը:

Իր ժողովրդին մշտապես ուղեկից տառապանքն ու հալածանքը, ահն ու սարսափը ապրած մեր հեղինակը, բռնատիրության սահմաններում կաշառքի, քսակի ունեցած ներգործուն ուժը վկայելով հանդերձ, հպատակ ժողովուրդների գոյատեւման ամենամեծ դիմակայող ուժը համարում է նրանց հասարակական կարգապահությունը, կազմակերպվածությունը, համերաշխ գործունեությունը, ազգային կյանքին նրա անդամի նվիրվածության ու բարեգործության ոգին, լուսավորության ձգտումը, իսկ երկպառակտումը, վեճերը՝ վնասաբեր եւ չարաղետ ժողովրդի հարատեւ ընթացքի համար:

Այս առումով, անդրադառնալով Երուսաղեմի հայոց ազգային սեփականությունների շուրջ հայ-հույն համայնքների միջեւ ծավալված եւ 60-

ական թվականներին իր բարձրակետին հասած վիճարանություններին, որոնք ի վերջո առիթ տվեցին ազգամիջյան բախումները խրախուսող սուլթանական իշխանությունների միջամտությունների, եր. Քյոմուրճյանը խելամիտ է գտնում հաշտության ըմբռնումը, որին հանդեպին այնուամենայնիվ պայքարող կողմերը եւս, թե «վասն էր յերկարի այսքան աղմուկ եւ խռովութիւն ի մէջ մեր, թէ քրիստոնեայք եմք եւ այսքան դրամ եւ փող երթայ յերկուց ազգաց ի քսակն Օսմանցոց» [60, էջ 343]:

Երեմիա Քյոմուրճյանը նկատում է նաեւ, որ կայսրության մեջ հպատակ ազգի ու պետության հարաբերություններում փառասիրությունից եւ շահախնդրությունից մղված անձանց արտակարգ ակտիվությունը ծնում է վտանգավոր հետեւանքներ, որ դրա արդյունք են դարի կեսերից սկսված պատրիարքական աթոռի համար մղվող պայքարը եւ Արեւմտահայության առանձին կաթողիկոսություն հիմնադրելու ձգտող Այնթապցու եւ այդ ծրագրին ընդդիմացող Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցու միջեւ հակամարտությունը:

Երեմիա Քյոմուրճյանը գտնում է, որ հայոց եկեղեցու խախտած կյանքը խաղաղեցնելու պարտականությունն իրենց վրա վերցնող, բայց անառողջ մտածողությամբ տառապող ինքնակոչ գործիչները, անկարող լինելով հասկանալ ու բացատրել տեղի ունեցող այդ իրադարձությունների հիմնական պատճառները, իրենց շահախնդիր միջամտությամբ էլ ավելի են խորացնում ստեղծված հակասությունները: «Ոմանք եւ յաւուրս յայսոսիկ մտին ի մէջ երկուց կաթողիկոսացն իբր զի խաղաղացուցեն, եւ զի չէր անկեղծաբար, այլ փառամոլութեամբ եւ տգիտաբար եւ եւս դանուն իւրեանց գերիվերոյ բարձրացուցանել կամէին եթէ գերագոյն ցուցեալքն ոչ կարացին զհունս խռովութեանց գտանել, մեք մեզէն գտցուք ասելով՝ պոօօպոախտ բանիւք եւ սնտիասպաս պարծանօք զմեծաբանութիւնս խօսէին ուր եւ երթային, եւ յայլ աշխարհ գրեալ ծանուցանէին: Եւ ահա այսօքիկ են ազգիս հայոց իբրուարժանիս յիշատակի՝ արարք եւ խելք հանճարոյ եւ գիտութեան՝ որոց չիք առողջութիւն յոտից մինչեւ ցզլուխ...» - գրում է Քյոմուրճյանը [34, էջ 74; 35, էջ 274]:

Երեմիա Քյոմուրճյանը Արեւմտահայ Հասարակական կյանքին խանգարող ներգործություն է տեսնում նաեւ նվիրակների գործունեության մեջ: Չմերժելով, իհարկե, Էջմիածնի կաթողիկոսության Փինանաս-տնտեսական կայունության համար Արեւմտահայության

շրջանում նվիրակների աշխատանքի հույժ անհրաժեշտութունը, այդ գործունեություն մեջ դիտում է նվիրակների շահութամոլություն, անձնական հարստություն հավաքելու նպատակներ, որի պատճառով նախ ապականվում են «զկարգ սուրբ եկեղեցական ի թրակիա եւ ի Մակեդոնիա եւ յեզր Տանաւիս գետոյ եւ ի Փոքր յԱսիա», նսմանում է Մայր Աթոռի հեղինակությունը, եւ հնարավորություն է ստեղծվում կուտակված դրամի օգնությամբ «սեւազուլիսք անարժանք պատրիարք անուամբ նստիլ» իրենց դեմ հանելով բնականաբար նույնպես փառամոլ եւ անխոհեմ մեծահարուստ աշխարհականների խորհրդին [35, էջ 275]:

Երեմիա Քյոմուրճյանը քաղաքական իշխանությունից զրկված ժողովրդի գոյություն նեցուկ տեսնում է ազգային եկեղեցին եւ ժամանակի համար անընդունելի եւ մերժելի է համարում ազգը երկպառակտող, ազգային եկեղեցին կազմալուծող «կաթոլիկ եւ հերձուածող, Ֆռէնկ եւ հայ աղճատանօք» տրամադրությունները՝ հիշեցնելով «զժամանակս կենաց մերոց ընդ այլազգիս տրամադրութեամբ անցուցեալ եմ մինչեւ ցայսօր», որ ժամանակն է վերացնել հիմնավոր թերությունները՝ «զի ոչ եւս քննեմ զդաւանուքս նոցա այսօր, այլ զրգեմ թէ զինչ է եկեղեցոյ մերում պակասութիւն եւ եկեղեցականաց եւ կարգաւորաց մերոց հայրապետաց» [35, էջ 276]: Ահա թե եր. Քյոմուրճյանը մեր ժամանակից ուղիղ 300 տարի առաջ ինչպես է համարձակորեն նկատել մայր եկեղեցու պակասությունը եւ նրա առողջացման ուղին տեսել եկեղեցական կարգի (նվիրապետություն) հեղափոխական բարեփոխության մեջ:

Երեմիա Քյոմուրճյանը, ընդգծելով ունեւորության ու չքավորության, բարեգործության ու անօգտակարության, կյանքի հարատեւության ու մահվան անխուսափելիության պատկերը, իր ժամանակակիցներից պահանջում է եւ հորդորում նրանց՝ մնայուն ու հիշման արժանի օգտակար գործեր կատարել, լուսավորել օսմանյան դժոխքում իր գոյության համար պայքարող ազգին [55, էջ 52-53 տ. 187-196, էջ 77 տ. 241-245]:

Ընդունելով լուսավորությունը ազգի հոգեւոր ամրապնդման, ինքնաճանաչման եւ դարգացման միջոց՝ Երեմիա Քյոմուրճյանը իր ժողովրդի ֆիզիկական ազատագրումը պայմանավորում է մուսուլմանական աշխարհի նկատմամբ քրիստոնյա աշխարհի հաղթանակով: Նախ ոգեւորվելով Վալախա-Տրանսիլվանյան զինակցությամբ եւ ապա 70-80-ական թվականներին իր թիկունքում ուսական առաջացող զենքի զինակցությունը ունեցող Լեհական թագավորության Օսմանյան

կայսրութեան դեմ հաջող դիմադրութեամբ, նկատի ունենալով նաև Արեւելեան Եվրոպայում հայ սփյուռքի դոյութեանը, ընդհանուր թշնամու դեմ հայ, լեհ, ուկրաինացի, ռուս ժողովուրդների նպատակների ընդհանրութեանը, Երեմիա Քրիստոսեանը հայացքն ուղղում է դեպի Արեւելեան Եվրոպա՝ Օսմանյան կայսրութեան անմիջական սահմանակից Լեհական թագավորութեան, «համասեռ բամից խմբից քրիստոնեան», «ապառնոյն յուսով» լցնող, «անհազ դադանից» «բազմաց փրկութեան» ձգտող, աշխարհի փոթորիկուն ծովում տառապող ազգերի համար որպես հուսո կայան կղզի, «քրիստոսազիր արքայ» Յան Սորբսկու առաջնորդութեամբ դաշնակից քրիստոնյաների հաղթանակով տեսնելու իր բռնադատված ժողովուրդին քրիստոնյա ազգերի շրջապատում:

«Երանի իցէր թէ էաք համայն, ընդ հովանեաւ մեծի քոյոյ տէրութեան»,

Ի փառս ՚ Լ ի պատիւ քրիստոնէութեան, պարիլ եւ ցնծալ ի լոյսդ՝
Թագաւոր» [60, էջ 526-535]:

* * *

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ - ՍՏԱՄԲՈՒԼԸ

Օսմանյան կայսրութեան մայրաքաղաք Կ. Պոլիսը 17-րդ դարում Արեւելքից Արեւմուտք, Եվրոպայից Արեւելք զնացող ցամաքային եւ ծովային առեւտրական ճանապարհների հանգույց էր, խոշորագույն նավահանգիստ, կայսրութեան քաղաքական եւ տնտեսական, սուլթանութեան հպատակ ոչ մուսուլման ժողովուրդների (հայերի, հույների, հրեաների) կառավարման եւ մշակութային կենտրոն:

Երեմիա Քրիստոսեանը, ապրելով եւ գործելով Կ. Պոլսում, ինչպես ընդգծել ենք վերևում, հետևել է նաև կայսրութեան մայրաքաղաքի կյանքին, անդրադարձել նրա պատմութեան, պատմական հուշարձաններին, տնտեսութեանն ու առեւտրական կապերին, գործող արհեստներին, բնակչութեան կազմին, ոչ մուսուլման ազգերի բնակատեղերին, մայրաքաղաքի հասարակական, տնտեսական կյանքում նրանց բերած մասնակցութեանը:

Երեմիա Քրիստոսեանը հազորդում է, որ Կոստանդնուպոլիսը (Եվրոպական եւ Ասիական մայրցամաքներում փռված արվարձաններով) 17-րդ դարի երկրորդ կեսում արգեն հայաշատ քաղաք էր (նկատի

է առնվում նաեւ Բոսֆորի երկափերի Հայ բնակչութիւնը): Հայերը առափել Համախումբ ապրել են Սամաթիա թաղամասում, սբ. Գեորգ եկեղեցու Հովվութեամբ՝ «Հազար տունք յաւել աստ Հայ» [55, էջ 7]: Ենի գափուռի եւ Գում գափուռի շրջանում Հայոց սբ. Աստվածածին, սբ. Սարգիս եւ սբ. Նիկողայոս եկեղեցիների Հովվութեամբ ապրող Հայութիւնը մեծախումբն է եղել, որտեղ 1660 թ. Հրդեհի ժամանակ ոչնչացել է շուրջ 5000 Հայկական տուն [55, էջ 75-76]: Պալատ թաղի սբ. Հրեշտակապետաց եկեղեցու Հովվութեան ներքո գտնվել են «մինչեւ յուրթ Հարիւր տունք Հայոց», բայց Համայնքի Հայութիւնը ապրել է ոչ Համախումբ, այլ «ցիր ու ցան եւ ոչ ի մին սահման» [55, էջ 42, 44]: Այս Համայնքի մեջ է մտել նաեւ Էյուրքի շրջանի Հայ բնակչութիւնը: Էյրքի եւ Էդիրնն գափուռների շրջանում, Թոփ գափուռի կողմերում բնակվել են Հայ բոշաները: Գալաթիայի Խասքոյում ապրել են ոչ մեծ թվով Հայեր՝ «ուր Հայք են փոքր բնակեալ» [55, էջ 66], Էկրի գափուռում սբ. Լուսավորչի եկեղեցու Հովվութեամբ՝ փոքրաթիվ Հայեր, Պեշիկթաշում՝ փոքրաթիվ Հայեր, որոնք ունեցել են նաեւ ժամատուն [տես եւ 202, էջ 413-414], Օրթաքոյում՝ սակավաթիվ Հայեր, փոքրիկ ժամատունով, Գուռու չեշմեում՝ փոքրիկ ժամատան շուրջ Համախումբած են եղել սակավաթիվ Հայեր, Ենի Քոյում՝ նույնպէս փոքրաթիվ, բայց ընչավատ Հայեր, որոնք զբաղվել են զլխավորապէս առեւտրով [55, էջ 89], Մավրոմոլոզի սբ. Աստվածածին ուխտատեղիի շուրջ բնակվել են մի խումբ Հայեր [55, էջ 91]: Անատոլիական ափին՝ Բեկչոց ավանում ապրել են մի քանի ճանաչված Հայեր [55, էջ 96-97], Սկյուտարում Հայերը բնակվել են նավահանգստից քիչ վեր, մինչեւ սուլթան Մուրադի Չամուլա կոչվող տեղին [55, էջ 101]:

Երեմիա Քյոմուրճյանի Հաղորդած այս տվյալները Հնարավորութիւն են տալիս մոտավոր Հաշվարկել գոնն ինչ Բյուզանդիոնի (Կոստանդնուպոլսի) եւ Գալաթիայի Հայ նստակայաց բնակչութեան թվաքանակը, իհարկէ (նկատի ունենալով այն, որ 1660 թ. Հրդեհից Գում գափուռի եւ Ենի գափուռի շրջաններում ոչնչացված 5000 Հայկական տները չէին ներկայացնում շրջանի Հայկական տները ամբողջութեամբ, պայմանականորեն կարելի է ընդունել, որ փրկվել է Հայկական տների ինչ-որ մասը, գոնն 1/3-ը, այսինքն տվյալ շրջանում կարելի է Հաշվել մոտ 7000 Հայկական տուն):

Այս Հաշվարկով Հին Կ. Պոլսի տարածքում 5 Հայկական եկեղեցիներ

Հովվել են շուրջ 9000 տուն (1000+7000+800/1000): Իսկ եթե յուրաքանչյուր տուն ներկայացնի 1,5 ընտանիք, միջին կազմով (5-6) անձով, ապա Կ.Պոլսի տարածքում հայ բնակչության թիվը հասնում է 70-80 հազարի (9000 տուն-13000 ընտանիք՝ 5-6 անդամով): Եվ եթե այս թվին գումարելու լինենք Գալաթիայի սբ. Լուսավորիչ եկեղեցու Հովվությանը, Պեշիկթաշի եւ Օրթաքոյի փոքրիկ ժամատներին շուրջ ապրող հայերին եւս, Օսմանյան կայսրության մայրաքաղաքում 17-րդ դարի երկրորդ կեսում ապրող հայերի թիվը կհասնի մոտավորապես 100000-ի: Ենթադրվող թվաքանակի հավաստիության օգտին է խոսում Եր. Քյոմուրճյանի ժամանակակից, Կ. Պոլսում Ֆրանսիական դեսպանության աշխատակից (1673 թ.) Պ. դը լա Գոուայի կայսրության մայրաքաղաքի հայ բնակչության կազմի մասին տեղեկությունը, որ 1673 թ. Պոլսում եղել է 8000 հայկական տուն, իսկ Գալաթիայում ապրելիս են եղել շուրջ 50 հազար դաղթականներ եւս [93, էջ 111]:

Թվարկված բնակավայրերում հայերի հետ հարեւանությունը ապրել են հույներ եւ հրեաներ: Առանձնապես հրեաները մեծաթիվ են եղել Պալատ թաղամասում: Նրանք գլխավորապես ապրել են ծովային «այլ հեռի ոչ բնակին, յեղերաց ծովու չեն բաժան» [55, էջ 41]:

Երեք ազգերը մեծ կշիռ են ունեցել մայրաքաղաքի տնտեսության մեջ: Նրանց շնորհիվ գործուն արհեստներ են եղել դարբնությունը, հացագործությունը, մաղազործությունը, մաշիկագործությունը, կոշկակարությունը, կրագործությունը, զինեղործությունը, ապխտագործությունը, բրուտագործությունը, ալակեղործությունը, ձկնորսությունը, մոմագործությունը, հրուշակագործությունը, այգեգործությունը, կղմինդրագործությունը, ներկարարությունը, ոսկերչությունը, նախշագործությունը, արծաթագործությունը, թղթամշակումը, մորթամշակումը, կաշվեգործությունը, կտավագործությունը, ձիթահանությունը, ... [55, էջ 32, 33, 39, 45]:

Երեմիա Քյոմուրճյանը նկատում է, որ բրուտագործությունը բավականին զարգացած է եղել իր ժամանակ՝ «թինումաթում» կարմիր տեսակի հողի գոյության շնորհիվ (դրանով է պայմանավորվում արտադրանքի որակը) եւ արտահանվել է հեռու երկրներ [55, էջ 57, տ. 30]:

Հրեաները եւ հույները հայտնի մսավաճառներ են եղել: Քաղաքի սպանդանոցները գտնվել են քաղաքի հարավ-արեւմտյան՝ Եգիկուլեի շրջանում, ուր «Գասապ բաշու» հսկողությունը գիշերը կատարվել է

մորթը եւ միայն առավոտյան վաճառքի հանվել: Հրեաները ունեցել են 100-ից ավելի տավարի մսի խանութ Պալքբ բազարի եւ Ունգափանի շրջաններում: Ոչխարի միս է վաճառվել հուլյների 300 խանութներում [55, էջ 32, 37]: Ենիչերիների եւ արքունիքի համար եղել են հատուկ մսավաճառներ:

Երեմիա Քյոմուրճյանի ժամանակակից էվլիա Չելեբիի վկայութեամբ՝ քաղաքում գտնվել են տավարի մսի եւս 100 խանութ՝ 200 մսավաճառներով, հրեաները ունեցել են 55 խանութ՝ 200 մսավաճառներով, ենիչերիների միսը մատակարարել են 55 խանութներ՝ 100 մսավաճառներով [202, էջ 555-556, 559; 221, էջ 173, 201]: Բուրգը եւ կաշին մշակվել են եւ արտահանվել Եվրոպա [55, էջ 72], իսկ տեղում հումք է մատակարարվել մաշիկագործներին, կոշիկակարներին եւ երաժշտական գործիքների լարեր պատրաստող արհեստանոցներին:

Հուլյները, հրեաները, ինչպես ասվեց, ապրել են ծովեզերքին, եւ նրանց գլխավոր զբաղմունքներից մեկը եղել է ձկնորսութունը: Բոսֆորի նեղուցը լավագույն վայրն է եղել ձկնորսության: Ստամբուլի շուկաներում վաճառքի է հանվել 100 տեսակի ձուկ [55, 40-42], եւ եվրոպացի ճանապարհորդների վկայութեամբ՝ այդ շուկաներին կարող էին նախանձել Մարսելի եւ Վենետիկի հայտնի ձկան շուկաները [184, էջ 230]:

Երեմիա Քյոմուրճյանը հայտնում է, որ մայրաքաղաքում հացագործութունը հիմնականում գտնվել է հայերի ձեռքում «վարպետքն հացածախից ի Հայոց ազգէս ամենայն» [55, էջ 18, 37, տ. 121]: Միայն Ունգափանի շրջանում, ուր տեղավորված են եղել հացահատիկի պահեստները, հայերը ունեցել են 110 փուռ, որտեղ հայ վարպետների ձեռքով պատրաստվել են ժամանակի հայտնի հրուշակեղենի տեսակները [55, էջ 36]:

Ընդհանրապես Ստամբուլում գործել են ըստ ժամանակակից էվլիայի՝ մոտավորապես 600 փուռ, 300 ալրաղաց եւ երկու ջրաղաց [202, էջ 510; Հմմտ. 221, էջ 173]: Հիմնականում հայերն են եղել ապխտագործները: Մաղազործությունը եւս գտնվել է հայերի ձեռքում: Այդ արհեստով զբաղվել են հայ բոշաները, որոնք ի տարբերություն գինետների (մեյխանաների) հաճախորդներին հաճույքի պահեր պարզեւող հույն բոշաների, իրենց ապրուստը «վաստակին ապրանաց դատման» [55, էջ 46]: Սակայն հայ բոշաները Երեմիա Քյոմուրճյանի ժամանակներում

արդեն թուրքանալու ճանապարհն են բռնել:

Հայերը, հույները եւ հրեաները վարել են քաղաքի ներքին առեւտուրը, նրանց է պատկանել իրենցով բնակեցված շրջանների խանութների, գինետների, սրճարանների մեծամասնությունը եւ նրանց արտադրանքով է պայմանավորված եղել այդ շրջանների շուկաների, խանութների բովանդակությունը [55, էջ 40]: Կ. Պոլսում եւ նրա արվարձաններում գործել են շրջիկ շուկաներ եւս:

Մայրաքաղաքի եւ երկրի տնտեսության եւ առեւտրական կապերի պատմության համար հետաքրքրություն են ներկայացնում մայրաքաղաք ներմուծվող եւ երկրից արտահանվող ապրանքների եւ այդ ապրանքների տեսականու համաձայն քաղաքի դռների շուրջ գործող վարչական հիմնարկությունների (էմին էօնուի մեծ մաքսատան, Փենջիկ էմինի, Պալք էմինի, Ղալաթիայի մաքսատան, էդիրնէ գափուի մաքսատան) գործունեության մասին տեղեկությունները [55, էջ 30, 31, 37, 44, 72]: Ըստ Երեմիայի, մայրաքաղաք են ներմուծվել ապրանքներ ժամանակի հայտնի բազմաթիվ երկրներից: Եգիպտոսից ներմուծվել են շաքար, ալաճեք, հասիր, քրթան, բրինձ, եղեգն, սուրճ, հինա, Լիբանանից՝ կնդրուկ, միսկ, ասրլպենտ, ամպեր, քաղցրահոտ նյութեր, Իրանից՝ դիպակ, բեհեզ, կերպաս, տիպան, Հնդկաստանից՝ ոսկեթել, ծածկոցներ, Ջինաստանից՝ ակնեղեն եւ գոհարեղեն, Հուրմուզից՝ մարգարիտներ, Դանիայից՝ քեհրիբար (սաթ), ձննովայից՝ մարջան, Հոլանդիայից, Անգլիայից եւ Վենետիկից՝ ապակի, հեռագրիտակ, թուղթ, հայելի, բյուրեղապակի, Ֆրանսիայից՝ համեմունքներ, Ռուսաստանից (Մոսկովյան իշխանությունից)՝ մուշտակ, սամույր մորթի: Այս բարիքների վայելող եւ սպառողը եղել է արքունիքը, որը Երեմիա Քյոմուրճյանը այլաբանորեն ներկայացնում է որպես «հարս» [55, էջ 21-23; տ. 20-52]:

Բաղչա գափուի նավահանգստում, որտեղ գտնվել է մեծ մաքսատունը, բեռնաթափվել են ակնեղենն ու զուճաշը, երկաթն ու կապարը, անագը, Բուղդանից (Մուղավիայից) եւ Ղրիմից բերված մեծ ֆուջերով մեղրն ու յուղը: Ունգարիանի նավահանգստում բեռնաթափվել են հյուսիսային երկրներից, Դանուբի եզերքներից, Քոստենջից (Կոստանցա), Քիլից, Վառնայից, Աքքերմանից, Իբրայիլից, Իսմայիլից, Պեշեփեից, Գարահարմանից, Սունքերից, Գրզլլճայից, Պալքբեից, Թուլչանից, Բուրկազից, Թուզլայից, Գավարնայից բերված հացահատիկը [55, էջ 36], Վալախիայից՝ աղը, որի «մին փերթն ի ձի մի կու բառնան» [55, էջ 33]:

Մայրաքաղաքի մերձակա շրջաններից՝ Կելիպոլիից եւ Թեքֆուրդաղից՝ բերվել են ստղահայտ, թթու, գինու մեջ եփված համեմունքներ [55, էջ 35], Նիկոմեդիայից՝ սոխ, սխտոր, հավ, ձու եւ մրգեղենը [55, էջ 34]:

Օսմանյան կայսրութիւնից արտահանվել են կաշի, բուրդ, ավել, խեցեղեն առարկաներ, մրգեղեն, փայտ, կորեկ: Երեմիան հաղորդում է, որ Անգլիացիները կայսրութիւն են մուծել ինքնարժեքով ցած ապրանքներ եւ տարել «գոր ինչ կամին յայն երկիր տանին պիտեւան» [55, էջ 78]:

Կ. Պոլսի Ոսկեղջյուրի հարավային ափերի նավահանգիստներում մուտք են գործել կայսրութեան հպատակ եւ մուսուլման երկրների առեւտրանավերը, իսկ քրիստոնյա երկրների առեւտրանավերը խարխիս են նետել գլխավորապէս Գալաթիայի Գուրշունլի, Գարա գափուի եւ Քյուրքչի գափուի նավահանգիստներում, որտեղ գտնվել են նրանց առեւտրական ներկայացուցչութիւնները եւ դեսպանատները: Քրիստոնյա երկրների նավերը 17-րդ դարում կայսրութեան նավահանգիստներ մտել են Ֆրանսական դրոշով: Եր. Քյոմուրճյանը առանձնակի ոգեւորութեամբ է նկարագրում խաչակիր դրոշով նավաշարքերը, որոնք պայծառացնում են Կ. Պոլիսը կրկին խաչազրոշի ներքո տեսնելու Երեմիա Քյոմուրճյանի երեւակայութիւնը՝ որպէս «պարծանք սրբոյ խաչին եւ փառս փրկչին յաւիտեան» [55, էջ 72-73]:

Օսմանյան կայսրութիւնը տնտեսական կապերի հետ մեկտեղ դիվանագիտական հարաբերութիւններ ունեցել է Հնդկաստանի, Ուզբեկստանի, Իրանի, Մոսկովայի, Վրաստանի, Վենետիկի, Հունգարիայի, Եմենի, Մադրիբիայի, Ճենովայի, Լեհաստանի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Հոլանդիայի հետ: Եվրոպական երկրները ոչ միայն դիվանագիտական կապեր են հաստատել, այլեւ ստացել են կաթոլիկ եկեղեցու ազատ գործունեութեան եւ արեւելյան ժողովուրդների մեջ քարոզչութիւն վարելու հնարաններ մայրաքաղաքում: Եպիսկոպոսական իշխանութեամբ իրենց եկեղեցիներն են հաստատել Ֆրանցիսկյան (Սան Ճորճ եկեղեցի), Դոմինիկյան (Սան Փեթրո), Կարուցիյան (Սան Բենետիկո), ձիզվիտական միաբանութիւնները [55, էջ 75]:

Եր. Քյոմուրճյանը վկայում է նաեւ, որ Վենետիկյան, Ճենովյան, Անգլիական, Հոլանդական, Ավստրիական, Ֆրանսիական դեսպանութիւնները գտնվել են Գալաթիայում՝ Բեյօղլուից մինչեւ Թոփխանայի շրջանում: Մեծ ազատութիւն է վայելել հատկապէս Ֆրանսիայի դեսպանութիւնը, որի դարպասները համարձակորեն բաց են եղել,

եւ շլացուցիչ կահավորումով՝ «հաղար հայելի աւել ի մին յարկն որ ոսկեզօծման», ներկայացրել Ֆրանսիան շքեղության փառքով: Դեսպանության կից գործել է դպրոց, որտեղ ուսանել են «թարգմանից» եւ վաճառականների երեսնաները [55, էջ 77]: Ըստ Թուրքենֆորդի՝ այդ դպրոցում ուսուցանել են թուրքերեն, արաբերեն եւ հունարեն: Դալլավայը նկատել է, որ ավարտողները տիրապետել են 7-8 լեզուների եւ փոխարինել են Վենետիկյան թարգմանիչներին արեւելյան երկրներում [177, էջ 126-127]: Ռուսաստանի ձեռք բերած ազդեցության մասին է խոսում այն փաստը, որ մայրաքաղաք ժամանած ուսուցիչների միջնորդությամբ իշխանությունները թույլ են տվել վերաշինել Ֆեներ թաղում հունական սբ. Աստվածածին եկեղեցին [55, էջ 3]:

Այնուամենայնիվ դիվանագիտական եւ տնտեսական արդյունքեր ձեռք բերած եվրոպական երկրների ներկայացուցիչները եւ ներկայացուցչությունները, չնայած անձեռնմխելիության վերաբերյալ երաշխավորագրերի գոյության, կայսրության սահմաններում մշտապես գտնվել են անապահով վիճակում: Կամայականորեն խախտվել են նաեւ ներմուծվող եւ արտահանվող ապրանքների համար վճարվող սահմանված մաքսաչափերը: Երեմիա Քյոմուրճյանը հիշեցնում է, որ արեւելյան մետաքսի ներմուծման եւ արտահանման, (նաեւ տարանցիկ առեւտրից) մաքսի գանձման չափերը հաճախ գերազանցել են ընդունված նորմերից՝ «որոց ոչ է օրէն տալ, որ դրի յամենայն ահտնամէս գուլաց, որ ի ձեռս դեսպանացն» [52; եւ 60, էջ 422]: Մաքսատան ապօրինի պահանջը մերժող Հոլանդիայի դեսպանը վեզիրի կարգադրությամբ ենթարկվել է գանահարման՝ «հրամայեաց երկու հարիւր փայտս հարուլ յտից նորա» [52]: Բանտարկվել է նաեւ հեղինակավոր անգլիացի վաճառականը, որից կամայականորեն պահանջել են վճարել «զմաքսն եօթն ամաց հարիւր ութսուն քսակ ու երեսուն քսակ եւս բէֆթի (մաս առ մաս)» [52]: Ֆրանսացի առեւտրականներին թույլ չի տրվել կատարել իրենց պարտականությունները՝ արտահանելու բրինձ [52; 60, էջ 422-423]:

Երեմիա Քյոմուրճյանը խոսում է 17-րդ դարի երկրորդ կեսերին կայսրության դեռեւս ծաղկող գերեվարման եւ ստրկավաճառության փաստերի մասին: Ստրկավաճառքով զբաղվել են գլխավորապես թաթարները, քանի որ նրանց էր տրված արշավանքի ենթարկված երկրներից բնակչությանը գերեվարելու իրավունքը: Ստրուկները վաճառվել են հատուկ շուկայում՝ (Esir Bazari - ստրկավաճառի շուկա)

որպես կենդանիներ: Նախապես ստրկուհի գեղեցկուհիները առանձնացվել են մաքսատներում: Ստրկուհու գինը սովորաբար եղել է 700 ղուռուշ: Եղել են ստրկուհիներ, որոնք վաճառվել են 500 հնչյուն ոսկով: Եր. Քյոմուրճյանը նշում է, որ պատմական աղբյուրներում կան վկայություններ ստրկուհիների 1000 Ֆլորինով վաճառվելու մասին եւս: Մեծ գին են ունեցել վրացի, չեքքեզ եւ ռուս ստրկուհիները: Նրանք օգտագործվել են որպես դայակներ եւ ստնտուհիներ, ծառայել են նաեւ բաղնիքներում: Գեղեցկատես ստրկուհիները դարձել են նվազածուներ եւ պարուհիներ: Սուլթանական պալատը լի է եղել ստրկուհիներով: Սուլթանի հետաքրքրություն արժանացած ստրկուհին, եթե պարզեւել է արու զավակ, դարձել է իշխանուհի: Ստրուկների աշխատուժը օգտագործվել է այգեգործության, հովվության աշխատանքներում [55, էջ 115-117]:

Կայսրություն մայրաքաղաքը հայտնի է եղել նաեւ իր բանտերով: Եր. Քյոմուրճյանը տեղեկություններ է հաղորդում նշանավոր Զընտան գափու եւ Պէկլիկ զընտան բանտերի պայմանների մասին: Բանտերում առանձնացված են եղել ոչ միայն տղամարդկանց եւ կանանց խաները, այլեւ այլազգիներին՝ հայերին, հրեաներին, հույներին եւ եվրոպացիներին: Առանձնապես շատ են եղել ուկրաինացիները «յուով, որոք ամէն ամի գերեալ գան» [55, էջ 33, 69]: Բանտարկյալները շղթայվել են զույգերով «երկուսն ի մի շղթայած աղտոտ եւ դարիպ ի տանջման»: Երեմիա Քյոմուրճյանը հիշատակում է նաեւ հայ բանտարկյալներին՝ կենսագրական տեղեկություններով, որոնք տառապել են եւ կնքել իրենց մահկանացուն բանտում՝ Ղազարոս, Թօփալ ձիհէնէմ, Կրպո փափազ, Ստեփանոս, Թորոս պատրիարք, էջմիածնի նվիրակներ, որոնք դատապարտվել են Իրան դրամ տեղափոխելու մեղադրանքով, իշխանությունները ձերբակալել են նվիրակներին եւ ազգապատկան դրամը բռնագրավել [55, էջ 8, 33, 69, տես եւ 183, էջ 81, հմմտ. 221, էջ 223]:

Հետաքրքիր են մայրաքաղաքի պատմական հուշարձանների, բնակչության ազգային սովորությունների, ավանդությունների, տոնախմբությունների, ալայների, ջիրիտ խաղի մասին նկարագրությունները, որոնց հավաստիությունը վկայում են Երեմիա Քյոմուրճյանին ժամանակակից եվրոպացի ճանապարհորդները եւ թուրք պատմագիրները եւս, որոնք նյութի զարմանալի նմանություններ են ավանդում այդ տեղեկությունները: Այսպես, Երեմիա Քյոմուրճյանը, նկարագրելով Պոլիսը եզրոզ պարիսպ-

ները (ըստ նրա՝ պարիսպների երկարութիւնը 18 միլ է, ունեցել է 360 բուրգ) վկայում է, որ արքունիքի հատվածում պարսպի մեջ անցք է եղել, որտեղից ծովն են նետվել խեղդամահ արված անձանց դիակները. այդ հատվածում դեպի ծով ուղղված փողերով հրանոթներ են շարված եղել [55, էջ 19]: Այդ մասին ակնարկում է նաև Թեւեհնոտը, որ Արքունի պալատում խեղդամահ արված մարդկանց դիակները լայն բացված անցքից նետվել են ծով, եւ դիակների հաշվով որոտացել են հրանոթները: Այս հրանոթների մասին է խոսել Տավերնիեն նուշնպես [190, էջ 71; 189, էջ 58; Հմմտ. 221, էջ 116, ծնթ. 54]:

Բալբքչի Բաշի պարտեզի շրջանում ծովափին կառուցված աղբյուրից Երեմիա Քյոմուրճյանի վկայութեամբ օգտվել են միայն ծովայինները, որոնք նավերով մոտեցել են եւ նուշնիսի իրենց հագուստները լվանալու համար ջուր վերցրել [55, էջ 12, տ. 147-149]: Այս փաստը հաղորդում են նաև Գրեյտը եւ Տավերնիեն: Վերջինս գրում է. «Պալատից հոսող մի աղբյուր կա, այս աղբյուրը լիորեն ապահովում է մոտեցող նավերին: Այլ նպատակով այստեղ ոտք դնելը արգելվում է» [185, էջ 86; 189, էջ 59, Հմմտ. 221, էջ 113]:

Երեմիա Քյոմուրճյանը հայտնում է. «Գումլուճա կոչվող վայրից ներքեւ գտնվել է մի ուխտատեղի, ուր երգի եւ նվագակցութեամբ հայ եւ հույն բնակչութիւնը տիրոջ լուսակերպութեան տոնին՝ օգոստոսի 6-ին, ուխտի են եկել եւ իրենց խոտերից ազատվելու համար թաղվել են ավազի մեջ: Արքան այս սովորութիւնը դիտել է պալատից եւ հաճախ իր հպատակներին ստակ սփռել: Սակայն այս ուխտը ժամանակի սուլթանը արգելել է, ինչպես շատ քրիստոնեական տոներ [55, էջ 13]: Գրեյտը, անդրադառնալով այս տոնախմբութեան մանրամասնութիւններին, հավաստում է, որ հույները ուխտատեղի այցելել են հատկապես տիրոջ լուսակերպութեան օրը: Բուժիչ այդ աղբյուրի նկատմամբ հույները ունեցել են հատուկ վերաբերմունք, վրացվել են եւ ավազը քսել մարմիններին [185, էջ 83, տե՛ս, 221, էջ 113]:

Թեւեհնոտի տեղեկութիւնը մանրամասնութեամբ ավելի է մոտենում Երեմիա Քյոմուրճյանի հաղորդմանը: Ըստ նրա եւս՝ «Այստեղ հիմա մի աղբյուր կա, հույները տիրոջ տոնին այցելում են այս վայրը, իրենց հիվանդները աղբյուրից ջուր են խմում, այնուհետեւ շրջակա ավազուտներում մինչեւ կոկորդը թաղվում: Առողջ մարդիկ եւս նույն բանն են անում: Փաղիչահը այս ընթացքում պալատի պատուհանից գաղտնաբար

դիտում է հույներին [190, 15, 70; տե՛ս 221, էջ 113-114]:

Ասլան խանը (գաղանանոցը) Բյուզանդական շրջանում եղել է եկեղեցի սբ. Հովհաննես անունով: Օսմանյան կայսրության շրջանում վերածվել է գաղանանոցի, իսկ վերին հարկը՝ ներկատուն (նազալխանա): Այս փաստը արձանագրել է նաև էվլիա Չելեբին՝ ավելացնելով, որ նազալների էսնաֆը ունեցել է 1000 անդամ եւ 100 խանութ [202, էջ 607]: Ղ. Ինճիճյանը հաստատում է այս «խանի» գործունեությունը հաջորդ դարում, 1802 թ. հրդեհվել է այն եւ փակվել [81, հտ. 5, էջ 147; հմտ. 190, էջ 64; հմտ. 221, էջ 110]: Թուրքերի մեջ ուրբաթ օրերին ձինտի մեյտանում ճիրիտ խաղի մրցակցություն ընթացքի, խաղի ընույթի մասին Երեմիա Քյոմուրճյանից բացի պատմում են վերհիշյալ հեղինակները հարազատ մանրամասնությամբ [55, էջ 9-10, 96-98-104]:

Երեմիա Քյոմուրճյանը անդրադառնում է նաև պատմական կարեւոր մի իրադարձության, որ տեղի է ունեցել լատիներների իշխանության տարիներին: Նրանք կայսրության շրջաններից Պոլիս են հավաքել երկրի հարստությունը եւ երկրից հեռանալիս տարել իրենց հետ: Կողոպուտի է ենթարկվել Կ. Պոլսի մայր տաճարը՝ Այա Սոֆիան, վեհեփիկ եւ տարվել տաճարի դռները» [55, էջ 11, 118-119]: Այս պատմական եղելույթյան մասին խոսում է Խոբեբ դը Քլարին: Ըստ նրա եւս՝ բոլոր ավարը քաղաքի եկեղեցիներից մեկում հավաքելու հրաման է տրվել: Բերված արժեքավոր իրերի մեջ եղել են՝ ոսկյա, արծաթյա սկիհներ, ոսկեթիկ գործվածքներ: Այդ բացառիկ հարստությունը, այդքան գեղեցիկ եւ արժեքավոր իրերը չի եղել աշխարհում ոչ Ալեքսանդրի եւ ոչ այլ ժամանակներում կամ ոչ էլ ավելի առաջ ձեռք բերված հաղթանակների ժամանակ է տեսնվել: Պոլսում հավաքված այդ ավրանքը աշխարհի ամենահարուստ քսան քաղաքներում չի գտնվել: Համաձայն հույների հաղորդումների՝ իր ժամանակի հայտնի աշխարհի հարստության երկու երրորդը Կ. Պոլսում է եղել: Հավաքված այդ հարստությունը հափշտակողները եւ մեծավորները ոսկյա իրերը, ոսկեկար հագուստները եւ կտորները գողացել տարել են [176, էջ 173-174; հմտ. 221, էջ 109]:

Եվրոպական հեղինակից վկայաբերված այս տեղեկությունները Երեմիա Քյոմուրճյանի հայտնած պատմական փաստի հավաստիությունը հաստատելով հանդերձ, վկայում է նաև կարեւոր այն հարցի մասին, որ Երեմիա Քյոմուրճյանը իր արժեքավոր աշխատությունները գրելիս դիմել է պատմական այլալեզու աղբյուրների, տվյալ դեպքում մեծ հա-

վանականությամբ հունական աղբյուրների, որից անկասկած օգտվել է եւ Ռոբերտ դը Քլարին:

Երեմիա Քյոմուրճյանը խոսել է եւ բազմաթիվ, բազմապիսի հարցերի շուրջ, հայտնել այնպիսի տեղեկություններ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում նավագնացության (Բոսֆորի նեղուցով դեպի Սեւ ծով նավարկելու, Սեւ ծովից դեպի Միջերկրական ծով ջրի հոսքը հաղթահարելու դժվարությունների), աստղադիտության (երկնային մարմինների, դիսավոր աստղերի շարժման եւ կերպի, երեւման ժամանակի պարբերության), հայ սփյուռքի պատմության՝ (17-րդ դարում Նիկոլ Թորոսովիչի՝ լեհահայության հոգեւոր առաջնորդի լատինասեր գործունեության եւ ազդակործան ընթացքի, հայ եկեղեցու պատմության՝ էջմիածնի կաթողիկոսության եւ Կ. Պոլսի պատրիարքության հարաբերությունների, Փիլիպոս Աղբակեցի եւ Հակոբ Զուղայեցի կաթողիկոսների գործունեության շրջանակների եւ սահմանների, նրանց Կ. Պոլիս այցելությունների, (որոնց նպատակը միայն պատրիարքական աթոռի շուրջ ծավալված հակամարտության մարեւը չէր), էջմիածնի կաթողիկոսության դրամական վիճակի բարեկարգման գործում պոլսահայության խաղացած դերի, նրանց նվիրատվությամբ կառուցված էջմիածնի տաճարի զանգակատան [տ. 2937], ժամանակի հայ պատրիարքների, առեւտրա-վաշխառուական դասի բարեգործ ներկայացուցիչների հասարակական գործունեության եւ նրանց կենսագրականի մասին:

Այսպիսով, թվարկված եւ քննարկված հարցերի մասին Երեմիա Քյոմուրճյանի հավաստի տեղեկությունները գալիս են հաստատելու այն, որ նրա պատմական երկերը արժեքավոր սկզբնաղբյուրներ են եւ կայսրության այլ ժողովուրդների պատմական աղբյուրների հետ օգնում են լուսաբանելու Օսմանյան կայսրության կարեւոր մի ժամանակահատվածի՝ 17-րդ դարի երրորդ քառորդի պատմության բազում հարցեր:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով ասվածը՝ նկատենք, որ երեք հարյուր տարիների ընթացքում հայ բանասիրական ու պատմագիտական միտքը հայ եւ համաշխարհային բանասիրությանն ու արեւելագիտությանը ծանոթացրել է 17-րդ դարի հայ մշակույթի երախտավորներից Երեմիա Քյոմուրճյանին (1638-1695 թթ.)՝ որպէս բանաստեղծի, գիտնական բանասերի եւ պատմաբանի, տպագրական եւ հասարակական գործչի:

Երեմիա Քյոմուրճյանի պատմական աշխատությունները հեղինակի ասլրած ժամանակաշրջանի պատմական եղելությունները ճանաչելու անգնահատելի նյութերի շտեմարաններ են, որոնց բազմիցս դիմել է հայ պատմագիտությունը 17-րդ դարի արեւմտահայ հասարակական, քաղաքական վիճակը քննության առնելիս:

Երեմիա Քյոմուրճյանի պատմական երկերի եւ ընդհանրապէս հայկական աղբյուրների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի «Պատմութիւն Համառոտ Դժ տարւոյ օսմանցոց թագաւորացը», որը Օսմանյան կայսրության պատմության նվիրված հայ մատենագրության մեջ գրված առաջին ամբողջական երկն է, հետեւաբար իրավունք է տալիս նրա հեղինակին Համարելու հայ թուրքագիտության սկզբնավորողը:

Օսմանյան կայսրության պատմության նվիրված Երեմիա Քյոմուրճյանի պատմագրական երկերը (մինչ իր կյանքի տեւողության տարիների շրջանը) գրվել են թուրքական, հայկական աղբյուրների եւ ականատեսների հաղորդումների օգնությամբ: Երեմիա Քյոմուրճյանը իր տրամադրության տակ ունեցել է թուրքական աղբյուրներից Լյութֆիի, Աշըբի, Նեշրիի, Նիշանջիի, Ահմեդի, Սոլաքագեի, Հասան Բեկզագեի, Քյաթիր Զելեբիի, Կարաչելեբիզագեի Աբդուլազիզի, Իբն Բեմալի Մյունեջլլիմ Բաշիի եւ այլոց պատմությունները:

Երեմիա Քյոմուրճյանը թուրքական աղբյուրներից օգտագործել է փաստական նյութերը՝ համառոտելով եւ ծաղկաքաղելով, բայց յուրովի, շատ ազատ, իր պատմության ծրագրին եւ պահանջներին համապատասխան,

ձերբազատված թուրքական աղբյուրների միակողմանիությունից, պատմական եղելություններում ճշմարիտը պատմելու, առանց ավելորդ մեկնաբանությունների ու պատճառաբանությունների, մշտապես լրացնելու, ստեղծագործաբար մոտենալու տրամադրությունամբ, անմիջականություն ու անկողմնակալությունամբ:

Երեմիա Քյոմուրճյանը օգտվել է եւ հայկական հուշարձաններից՝ պատմություններից, ժամանակագրություններից, հիշատակարաններից, պատմական ողբերից: Նրան ծանոթ են եղել Մովսես Խորենացու, Ներսես Շնորհալու, Առաքել Բաղիշեցու, Թովմա Մեծուփեցու, Առաքել Դավրիժեցու, Հակոբ Մակվեցու, Ազարիա Սասնեցու, Ավետիք ժամանակագրի, Գրիգոր Կամախեցու, Անկյուրացու եւ Վարդան Բաղիշեցու հայտնի գործերը, որոնցից գլխավորապես Հայաստանի եւ հայ ժողովրդի վերաբերյալ պատմական տվյալներ եւ փաստեր քաղելու հետ միասին հետեւել է նրանց գրական ավանդույթներին՝ փոխ առել արտահայտություններ, ոճեր ու դարձվածներ, խոսքի ձևեր ու բնութագրումներ, կրել պատմական ողբերի լեզվազեղարվեստական ազդեցությունները: Քյոմուրճյանը դիմել է եւ Սուրբ Գրքին:

Երեմիա Քյոմուրճյանը, գրելով իր պատմական երկերը, նպատակ է ունեցել իր ժողովրդին ծանոթացնել այն միջավայրին ու պայմաններին, ուր ապրում է եւ պայքարում գոյություն համար:

Երեմիա Քյոմուրճյանը իր ազգակից ընթերցողին հետեւողականորեն համոզում է, որ թուրք բռնակալները եկվոր են, որ նրանց հարազատ է եղել չարությունը, թալանը, խաղաղ ժողովուրդներին գերություն վարելու անհագ ծարավը, բարին ոչնչացնելու մոլուցքը, որ թուրքական սուլթանություն պատմությունը պատերազմների ու բռնության շղթա է, եւ հիմնականում պատերազմներն են երաշխավորել Օսմանյան կայսրության գոյությունը:

Թուրքերը այս տրամադրությամբ են 17-րդ դարի երրորդ քառորդին գավթողական պատերազմներ մղել Վենետիկյան հանրապետության դեմ՝ Միջերկրականի հենակետերից Կանդիային, Լեհական թագավորության դեմ՝ Ուկրաինային տիրելու ծրագրով եւ պատժիչ գործողություններ վարել Մոլդավիայում, Վալախիայում, Տրանսիլվանիայում:

Կանդիայի պատերազմը (1644-1669 թթ.) անտարբեր չի դիտվել Եվրոպական երկրների կողմից, դարձել է հակաթուրքական պայքարի, միասնության խորհրդանիշ եւ, հակառակ քրիստոնյա աշխարհի քա-

դաքսական շահախնդիր անակցության Վենետիկին, այնուամենայնիվ ավարտվել է սուլթանության հաղթանակով:

Կայսրության ներքին խառնակ կացությունը, Կանդիայի պատերազմով զբաղված լինելը հպատակ ժողովուրդներին բռնատիրությունից ազատագրվելու հույսեր են ներշնչել, հատկապես Վալախիային, որը, փնտրելով Մոլդավիայի, Տրանսիլվանիայի զինակցությունը եւ Ավստրիայի հովանավորությունը, հավատացել է կայսրության դեմ նախահարձակ պատերազմի հաղթական արդյունքին: Սակայն ծրագրի կենսունակությունը ապացուցել հնարավոր չի եղել դաշնակիցների անվճռականության եւ անմիաբանության պատճառով, ինչպես ժամանակի առաջարկված հակաթուրքական գրեթե բոլոր ծրագրերը:

Կայսրությունը օգտագործել է Տրանսիլվանիա-լեհական պատերազմը (1655-1656 թթ.) եւ, Լեհաստանին «օգնակից» լինելու պատրվակով, ներխուժել է Տրանսիլվանիա, հետապնդելով իր հիմնական խնդիրները՝ թալանելու եւ կանխելու Տրանսիլվանիայի շուրջ մեծ Հունգարիայի վերածնման հնարավորությունը, որը կհիշեցնեք եվրոպայում իրենց ներխուժումներին հետեւողականորեն դիմադրող երբեմնի ուժը, որի հաղթահարման համար թուրքերին անհրաժեշտ եղավ մեկուկես դար գրոհել:

Օսմանյան կայսրությունը, օգտվելով Ուկրաինայում Լեհաստանի եւ Ռուսաստանի հակամարտությունից եւ հետման Դորոշենկոյի հակառուսական եւ հակալեհական կողմնորոշումից, Լեհաստանի պատերազմում փոփոխակի հաջողություններից հետո տիրել է Պոդոլիային Կամենիցով եւ Աջափնյա Ուկրաինայի մի հատվածին՝ (ժուրավնոյի պայմանագրով 1676 թ.):

Օսմանյան կայսրության մեծ պատերազմները (Կանդիայում եւ Ուկրաինայում) պատժիչ գործողությունները Վալախիայում, Մոլդավիայում եւ Տրանսիլվանիայում ուղեկցվել են ազգային շարժումները արյան մեջ խեղդելու, թալանելու, մարտաթափ անելու, բնակչությանը զերեկվարելու, ամենավայրագ բարբարոսություններ իրականացնելու անհազ ծարավով:

Օսմանյան կայսրության Վալախիա, Մոլդավիա եւ Ուկրաինա ներխուժումներից տուժել են ոչ միայն բնիկ ժողովուրդները, այլեւ ժամանակի հայ սփյուռքը՝ հատկապես Մոլդավիայի, Կամենիցի եւ Լվովի հայ գաղթօջախները: Մասնակցություն բերելով երկրների պաշտպա-

նությանը՝ կրել են ծանր հարվածներ, հետզհետե նվազել եւ թուլացել:

Օսմանյան կայսրութեան 17-րդ դարի երրորդ քառորդի պատերազմներում «Հաջողութունները» արձանագրվել են ոչ թե կայսրութեան ռազմական գերազանցութեան շնորհիվ, որքան Եվրոպական երկրների հակաթուրքական համագործակցութեան անհետեւողականութեան, դիմադրող ուժերի անվճռականութեան եւ անմիաբանութեան պատճառով: Այդ «Հաջողութունները» ձեռք են բերվել մեծագուշն դժվարութեամբ, մարդկային ու ֆինանսական կորուստների դնով եւ, բնականաբար, բացասական հետեւանքներով են անդրադարձել կայսրութեան տնտեսական, քաղաքական կյանքի եւ ռազմական հզորութեան վրա:

Շարունակական պատերազմները կայսրութեանը դրել են ֆինանսական դժվարին կացութեան մեջ, եւ ռազմական աճող ծախսերը հոգալու համար կառավարութեանը անցել է դրամի արժեզրկման, հողի վարձակալման, պաշտոնի վաճառման, արհեստավորութեանը բարձր հարկերով հարկադրելու քաղաքականութեանը, որը եւ անկայուն է դարձրել երկրի ներքին քաղաքական վիճակը:

Կայսրութեան քաղաքական եւ տնտեսական ճգնաժամը իր արտացոլումն է գտել մայրաքաղաքի համբարների եւ ենիչերիների խռովութուններում, ինչպես նաեւ խոշոր հողատիրութեան ներկայացուցիչներին՝ Հասան փաշայի, Հայդար օղլիի, Ղաթբըջի օղլի Ալիի, Սեյդի Ահմեդի, Աբազա Հասան եւ Թայար օղլիի ապստամբութուններում:

Կենտրոնախույս ուժերի այս ընդվզումները, չնայած իրենց լայն ընդգրկման, հետապնդել են նեղ դասային շահեր՝ պաշտոնի, մասնուպի, ֆեոդալական իրավունքի, տիրույթը ժառանգակարգով պահպանելու նպատակ, նրանցից հեռու են եղել, ինչպես նախորդ ջալալիական շարժումներից եւս, օսմանյան կառույցի քայքայման եւ աշխատավոր ժողովրդին ազատագրելու խնդիրները: Հետեւաբար օսմանյան ֆեոդալի խռովութեանը մարել է, երբ նա վերագտել, վերստացել է ֆեոդալի իրավունքները եւ, ներման արժանանալով, ավելի նվիրումով է լծվել օսմանյան իշխանակառքին:

Երեմիա Քյոմուրճյանը եւ ժամանակակից պատմիչները, կայսրութեան ներքին քաղաքական, հասարակական, տնտեսական կյանքի անբարվոք եւ անկայուն վիճակի պատճառներ են դիտել կաշառակերութեանը, մեծ վեզիրների կողմից պաշտոնի չարաշահումը, կառավարման ոչ ճիշտ եղանակներն ու ձեւերը, բարձր հարկադրման քաղաքականութեանը,

պաշտոնի, ֆեոդալական իրավունքի քմահաճ վաճառքը, արքունիքում խմբակցությունների պայքարը, կառավարման գործում կանանց մասնակցությունը, պայքարող խմբակցությունների ձեռքում գործիք դարձած ենիչերինների եւ սիփահիների մշտական խռով տրամադրությունները մայրաքաղաքում, կենտրոնախույս ուժերը ճնշելու կառավարության անկարողությունը, սուլթանական իշխանության հեղինակության թուլացումը:

Թեեւ սուլթանական իշխանության եւ կենտրոնական կառավարության հեղինակությունը բարձրացնելու, կայսրության ռազմական եւ տնտեսական հզորությունը վերականգնելու համար Մուհամմեդ 4-րդի մեծ վեզիրներից Քյոփրյուլունբը (իրաբահաջորդ՝ Մուհամմեդ Ահմեդ եւ Կարա Մուստաֆա վեզիրները 1656-1683 թթ.) օսմանյան իրավակարգին հարազատ կառավարման արտակարգ բռնության մեթոդներով «բարեփոխման» քայլերի են դիմել եւ Տրանսիլվանիայում, Վալախիայում, Ուկրաինայում, Կանդիայում արձանագրելով ռազմական հաջողություններ, ապահովել են օսմանյան տիրակալի համար ժամանակավոր, հարաբերական կայունություն, բայց նրանցից հետո կայսրությունը նոր անկումով է ոտք դրել «վայրէջքի» աստիճանին:

Երեմիա Քյոմուրճյանը որոշակի պատկերացում է տալիս սուլթանության հպատակ ոչ մուսուլման համայնքների, ավելի կոնկրետ հայ համայնքի դրության, մայրաքաղաքի հասարակական եւ տնտեսական կյանքում ունեցած դերի եւ գործունեության մասին:

Օսմանյան կայսրության սահմաններում արեւմտահայության եւ պետության հարաբերությունները կարգավորող պատրիարքական աթոռի շուրջ 17-րդ դարի կեսերից ընթացող բուռն պայքարը (իրար են հաջորդում պատրիարքները, պատրիարքական իշխանությունը վարում են նաեւ աշխարհական խորհուրդները), անսահման չափերի է հասցրել պատրիարքական իշխանության համար միանվագ վճարվող տուրքը:

Պատրիարքական իշխանության շուրջ ստեղծված այդ երեւույթները հետեւանք են եղել ոչ միայն փառասիրական ձգտումներ ունեցող հոգեւորականների ու աշխարհականների պայքարի, արեւմտահայության ներսում ընթացող հակադիր խմբային եւ քաղաքական հոսանքների միջեւ պատրիարքական իշխանությունը տնօրինելու նպատակով մղվող մրցակցության, այլեւ արտաքին ազդեցության՝ Ֆինանսական դժվարությունների մեջ գտնվող օսմանյան կառավարության՝ ենթակա

Համայնքներին «շնորհված» պատրիարքական իշխանությունն ղեկավարող Բարձր Եկեղեցու ղեկավարը պարզապես չի հասկանում իր իրավունքները և չի հասկանում իր իրավունքները:

Օսմանյան կայսրությունում պատրիարքական տուրքից բացի հայերը եւ ոչ մահմեդականները պարտավորված են եղել վճարել հարկեր (նվաստացուցիչ տեսքի), երկրում երթևեկելու իրավունքի, իր բարոյա-հոգեւոր կյանքով ապրելու, ավանդություններին հետեւելու, հոգեւոր շինությունները բարվոք պահպանելու, բնակատեղիներին չվտարվելու, իրեն եւ ազգակցին պարտադիր հավատափոխությունից փրկելու, տնօրինական պարտադրանքները թեթեւացնելու, ազգային իրավունքները վերագտնելու համար:

Ոչ մուսուլմանը, լինի պայմանագրով ապահովագրված հեղինակավոր օտարերկրացի, կամ հպատակ ազգություն հոգեւոր առաջնորդ-պատրիարք, չի ունեցել Ֆիզիկական ապահովություն, նույնիսկ հորինված մեղադրանքով նետվել է բանտ եւ մատնվել մահվան:

Պոլսահայությունը, հույների եւ հրեաների հետ իր մասնակցությունն է բերել կայսրության մայրաքաղաքի տնտեսական կյանքին, գործող արհեստների զարգացմանը եւ քաղաքային ներքին առեւտրին:

17-րդ դարում Կ. Պոլիսը շարունակել է ներկայանալ արեւելյան եւ արեւմտյան միջազգային առեւտրակենտրոն դեռեւս պահպանելով բյուզանդական ժամանակների իր դերն ու նշանակությունը:

Մայրաքաղաք (Կայսրություն) ներմուծվել եւ սպառվել են Եգիպտոսից, Իրանից, Հնդկաստանից, Չինաստանից, Ճինովայից, Վենետիկից, Ֆրանսիայից, Անգլիայից, Հոլանդիայից եւ այլ երկրներից բազմատեսակ ապրանքներ, իսկ արտահանվել են գլխավորապես հումք:

Երեմիա Քյոմուրճյանի տեղեկությունները նաեւ մայրաքաղաքի որպէս միջերկրային քաղաքական կենտրոնի, բնակչության ազգային կազմի, պատմամշակույթի, բարքերի, վարչ-մարմինների գործունեության, սուլթանների կենցաղի, ընթացքում քննված շատ ու շատ հարցերի մասին գնահատելի հետաքրքրություն են ներկայացնում եւ վկայում են, որ Երեմիա Քյոմուրճյանի պատմագրական երկերը արժեքավոր աղբյուր են Օսմանյան կայսրության 17-րդ դարի երրորդ քառորդի քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ կայսրության հպատակ ոչ մահմեդական ժողովուրդների պատմության:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Իսկ «Ալեքսանդրի Պատմութեան» թուրքերին թարգմանութեանը գտնվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դրապահոցում [1, Երուս. ձեռ. 988, էջ 6ա-178ա]: Կնուկյանցը «Ալեքսանդրի պատմութեանը» թարգմանել է գերմաներեն [88]:

² Հավանաբար Ե. Քյոմուրճյանի այս աշխատութեանից է Ղ. Ալիշանը ծանոթագրել Կամենիցում հրատարակած Մինաս Թոխաթեցու երկը [97, Հտ. Ա, էջ 131]:

³ Ղ. Օշականը «Միոնի» Համարներում հրատարակել է նաև Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն Հրակիզման Կ. Պոլսոյ» ստեղծագործութեանից մի հատված՝ «Գուսաներգութիւն» խորագրով եւ «Յորժամ կամենայ որ սիրուն վարդ քաղի» սկսվածքով մի բանաստեղծութեան [111]:

⁴ Այս 5 տաղերը նախապես հրատարակել է Ա. Չոպանյանը «Անահիտում» [122, էջ 189-194], «Երգ սիրոյ» տաղը երրորդ անգամ հրատարակվում է 1971 թ. «Մարգարիտներ Հայ քնարերգութեան» մեջ [98, էջ 229]: Ասատուր Մնացականյանը «Ի վերայ ջրոյ» խորագրով երեք տաղերը համարում է մշակումներ եւ որպես նախատիպ առաջարկում է նո. 30 «Տաղ ջրի վերայ է ասացեալ» տաղը [105, էջ 493-494]:

⁵ Կարո Միլիք-Օհանջանյանը այս եզրակացութեան է հանդիս օգտագործելով Երեմիա Քյոմուրճյանի թուրքերին թարգմանութեան «Ասիթանէ Չարգարեան պիւրատէրլէր» տպագրութեանը/Կ. Պօլիս, 1871/

⁶ Բանասերների մի խումբ՝ Մ. Սոմալեան [188], Տ. Պալեան [125; 126; 127], Մ. Ավդերեան [28; 29; 30], Մ. Թեոփիլեանց [75; 76], Գ. ՉարպՀանալյան [67; 68], Երեմեան [45], Հիմք ընդունելով Մ. Չամչյանի «Իսկ ինքն Երեմիա Չէլէպիլի, լցեալ զաւուրս կենաց իւրոց, մեռաւ յամի ՌձևԴ (1144=1695) ի Հասակի վաթսուն ամաց» [121, էջ 723] Հիշատակութեանը, ենթադրել են, որ Եր. Քյոմուրճյանը ծնվել է 1635 թ.: Առաջինը Վ. Թորգոմեանն է այս թվականը վիճելի համարել. «Մենք ալ կարող ենք ընդունիլ, որ ծնած ըլլալու է 1635-ին, թէպէտ Երեմիա Չէլէպիլի, Կ. Պոլսոյ մէջ 1645-ին իրեն 9 տարին նոր թեւակոխած կը գրէ» եւ առաջարկել է, թեւ վարանումով, ծննդյան թվականն ընդունել 1637 թ. [55, էջ 139]: Այնուհետեւ Ն. Ակիւնյանը, հենվելով Եր. Քյոմուրճյանի «Տարեգրական պատմութեան» նույն «յամի իններորդի նոր էի

մտեալ» վկայութեան վրա, Հաստատում է Վ. Թորգոմյանի կարծիքը / [7, էջ 30-31]: Վերջապես, Մ. Նշանյանը, իր տրամադրութեան տակ ունենալով կենսագրական ամենահավաստի աղբյուրը՝ «Օրագրութիւնը» եւ վկայարեւելով եր. Քյոմուրճյանի 1656 թ. մայիսի 13-ի իր ծննդյան առթիվ կատարած արձանագրութիւնը՝ «Օրս զԺԹ (19) տարին լիցի եւ Ի (20) տարին մտայ, այլ այս չէ պատճառք, թէ կու մեծանամք, այլ այն լիցի, որ բարեխօսութեամբ սրբոյն Աստուածածինի զմիտս եւ զսիրտս մեր փոփոխեմք ի բարին եւ ի նոր առաքինութիւն մտանեմք, որպէս որ զՀին տարին լցաք եւ ի նորս մտաք» անվիճելի է Համարում 1637 թ. մայիսի 22-ը՝ նոր տոմարով [60, Առաջարան, էջ ԾԶ եւ էջ 133-134; Հմմտ. 55, էջ 141; Հտ. Բ, էջ 719]:

⁷ Եր Քյոմուրճյանի ընտանիքի մի Հատվածը մնում է Գալիպոլիում, այդ ենթադրութեանն է Հանգեցնում մեզ Օրագրութեան Հետեւյալ վկայութիւնը. «Օր կիրակի բուն բարեկենդան Կէլիպոլու Գրիգոր ի մերս էր եկեալ, Հօրեղբօր որդի Հօրն իմոյ» [60, էջ 36]:

⁸ Ն. Ակիւնեանը այս կապակցութեամբ գրում է. «Տաճկաստանը Արեւմուտք Համարելով՝ Արեւելքը պարսկական իշխանութեան տակ ըսուած ընդհանուր բացատրութիւն մը առնելու է» [7, էջ 15]

⁹ Սա պատմական Գոմեր ընկալվայրն է [91, Հտ. Գ, էջ 522], որի մերձակայքում կային նշանավոր ինչպես աղի, այնպես էլ ածխի Հանքեր: Գոմերի Հայ ընկալութիւնը Յեժ եղեռնին իսպառ բնաջնջվեց [90, էջ 153]: Բնակավայրի մասին տե՛ս եւ /139, էջ 493/:

¹⁰ Սրվանձտյանցը Կամախի գավառում Հիշում է «Հափշտա» անունով երկու գյուղ, որից մեկը գտնվում է Կամախի գավառի Արմտանի շրջանում, տե՛ս [139, էջ 476]:

¹¹ Հայտնվել է նաև այն ենթադրութիւնը, թե Քյոմուրճյանները նախապես ապրել են Սամաթիայում [107, էջ 5]

¹² «Աստ մինչ ի Գում Գափին Հայոց եւ Յունաց գոլ սահման, Չորս քիլիսա ընդ Գում գափի եւ երեքն Յունաց մերձ մեր տան, Մերձ յեկեղեցեաց յերից արդ կայ մին ազգիս Հայկական,

Որ է սուրբ Աստուածածին պանդխտից եւ մեր սփոփարան [55, էջ 8]:

¹³ Ն. Ակիւնյանը, նրան հետեւելով նաև Լ. Սահակյանը, Տեր Մարտիրոսի մահվան թվական են նշում 1664 թ. [7, էջ.; 133, էջ 10], վերջինս չանդրադառնալով Մ. Նշանյանի օգտագործած Ամդեցու Օրագրութեան հետեւյալ Հիշատակութեանը՝ «ՌՅԼ (1130=1681), փետրվար Ժե (15) Գչ (երեքշաբթի) ...Բերդի տղան ըՍտամպոլու եկն [եւ երբը դիր] ի Մարտիրոս վարդապետէն Քէօմիւրճին մեռաւ տէյի?» արձանագրութեան Հենվող ենթադրութեանը, ըստ որի Մարտիրոսը մահացել է 1681 թ. վերջին [60, էջ 611]:

¹⁴ Մինաս Ամդեցին Օրագրութեան մեջ գրառել է այդ առթիվ 1703թ.

օգոստոսի 16-ին՝ «Լուաք գՔէօմիւրճի Տէր Գէորգին՝ Տէր Մարտիրոսին զմահն Աստուածածնի երկուշարթին» [60, Առաջաբան, էջ 26]:

¹⁵ Տեր Կոմիտասը ծնվել է 1656 թ. ապրիլի 22-ին. «Եւ ի գիշերիս յորում հաւն մօտ էր խօսելոյ ծնաւ մայր իմ զԿոմիտասս, յետ կէս մասի՛ աւելի կամ պակաս հաւն խօսեցաւ առաջին» [60, էջ 159]: Կոմիտասը ունենանում է երեք զավակ, մեկ տղա՝ Նահապետ անունով եւ երկու աղջիկ: Նահապետը 1700թ. ուղարկվում է Լոռո՝ բուժման: Այնուհետեւ նա ծառայում է իսպանական դեսպանությունում, որպես թարգմանիչ [81, էջ 156]: Կոմիտասը հեղինակ է մի շարք չափածո ստեղծագործությունների, տիրապետել է հունարեն, լատիներեն, թուրքերեն լեզուներին, քարոզխոսություն արվեստին [60, էջ 234-245]: Նա է ամբողջացրել եղբոր՝ Եր. Քյոմուրճյանի որոշ երկերը եւ շարունակել: Փ. Համմերը, անդրադառնալով իր «Օմանեան կայսրութեան պատմութեան» մեջ պոլսահայ համայնքի ներսում կաթողիկոսության հարած հայերի նկատմամբ գործադրված բռնություններին եւ հայ կաթողիկոսության արքայի եւ նրա վեց հավատարիմ մարդկանց ձերբակալման փաստին, նշում է, որ ձերբակալվածներից վեցը փրկվեցին ընդունելով մահմեդականություն: Միայն մեկը՝ Կոմիտաս քահանան քաջություն ունեցավ մնալու իր դավանանքին եւ պատրաստակամություն հայտնեց ընդունելու մարտիրոսի դավանին [153, էջ 2756; Հմմտ. 70, էջ 87] Կոմիտաս Քյոմուրճյանի կյանքի եւ գործունեության մասին տե՛ս նաեւ [29; 100; 128]:

¹⁶ Ամբախուճը հայտնի է եղել իր բարեգործությամբ. ... իր բարիքները «Զրի շնորհէր եկեղեցեաց, վանօրէից, աղքատաց եւ կարօտելոց» [139, էջ 403]:

¹⁷ Երեմիայի «Ստամպոլոյ պատմութիւն» երկի աղբյուրներից մեկը եղել է հունարեն մի գիրք, որի մասին գրում է՝ «Սա այն տեղին ստուգապէս, զոր պատմէ գիրք յունական» [55, էջ 13-14]:

¹⁸ Առ. Դավրիժեցին վկայում է, որ հրեական մեսիայի՝ Սաբեթայի հրեա ազգին ուղված մեսիայի գալուստն ավստոյ թուղթը «Ի Լոռոմ լեզուէն թարգմանեցաւ ի Հայ լեզու եւ գիր ձեռամբ ումման ճարտար դպիր Երեմիա կոչեցելոյ, որ ի նոյն Կոստանդնուպոլիս քաղաքէն էր» [22, էջ 658-659]:

¹⁹ «Բովանդակ ողբս Երեմիայի մարգարէի, որ էր ըստ բառից այժմայէթիցն Երբայեցւոց բարբառոյն, որ ի խնդրոյ Չէլչպոյն աստ ոտիւք տաղաչափեալ առ ի յիշատակութիւն ս. մարգարէին եւ ի թախանձանս ականատեսութեան կղզոյն Կրիտեայ եւ վասն եկեղեցեացն աւերածոյն եւ փառս Աստուածոյ եւ ի սէր նորա» [7, էջ 103; նաեւ 107, էջ 7]

²⁰ Եր. Քյոմուրճյանը դպրութեան կարգ ստացել է 1649 թ. փետրվարի 13-ին, 13 տարեկանում, ս. Աստվածածին եկեղեցու ինչատուր վարդապետի օրհնությունով: Այդ մասին նա «Օրգրութիւն»-ում արձանագրել է՝ «Փետրվար ամսոյ ԺԴ (14) յաւուր տօնի սրբոց դալստեան Քրիստոսի քառասնօրեայ ի տաճարն

ձեռնադրեաց Երուսաղէմի նուիրակ Խաչատուր վարդապետն ... բազում դպիրս... յորոց միջի կայի ես՝ չնչինս» [60, էջ 6]:

²¹ Մ. Նշանյանը Ամդեցու Օրագրության «Երեմիայի կարգած աղջիկը մեռաւ» հիշատակությամբ ենթադրում է, թե «Այս տողերէն ալ կը հասկցուի, թէ Երեմիա ունեցած է Սողոմէէ զատ մէկ կամ աւելի դուստրեր տակաւին չամուսնացած» [60, էջ ձժԸ]:

²² Տետրակի առաջին մասը նվիրված է 1828 թ. Ֆիլիպեի Ս. Գեւորգ եկեղեցու նորոգման նկարագրության:

²³ Ըստ Վ. Հակոբյանի՝ Երեմիա Քյոմուրճյանի այս փկայութիւնը օգտագործել է նաեւ Մ. Չամչյանը, բայց այս տվյալը պետք է սրբագրել, որովհետեւ Մ. Չամչյանը օգտագործել է ոչ թե ժամանակագրութիւն, այլ ինչպես գրում է «ի յիշատակարանի միում գրեալ ի նոյն ժամանակս», որը եւ չունի ժամանակագրության տվյալները [121, էջ 515]:

²⁴ Հրեաների մեսիայի շարժման մասին հայտնում է նաեւ Առ. Դավրիժեցին [22, էջ 651-665], ինչպես եւ Գ. Սրուանձտեանը [139, էջ 444-448]: Այս եկուադրյունների հիմքում ընկած է Եր. Քյոմուրճյանի սուլն ստեղծագործութիւնը:

²⁵ Մ. Նշանյանը Վ. Թորգոմյանին ուղղված նամակում Քյոմուրճյանի ստեղծագործութիւնների ցուցակում Օրագրության ընդգրկող ժամանակամիջոցը նշել է 1648 Յուլիս 11 մինչեւ ցամառ 1663 նոյեմբեր 11 [55, էջ 717-718, 737]: Վ. Թորգոմյանին հետեւելով՝ թյուրիմացութիւնը կրկնել է նաեւ Ն. Ակինյանը [7, էջ 89]: «Օրագրութիւն»ը, հրատարակելիս Նշանյանը սրբագրել է իր սխալը: Հ. Անդրեասյանը ուշադրութիւն չդարձնելով, կրկնել է Ն. Ակինյանին [221, Առաջ. էջ 19]:

²⁶ Մ. Նշանյանը անդրադարձել է «Տարեգրական պատմութեան» եւ Մ. Չամչյանի «Հայոց Պատմութեան» կապին եւ երկու գործերից համադրաբար բերել 8 բառացի համապատասխանող հատվածներ: Տե՛ս [119, «Շողակաթ» 1913, էջ 47-65]:

«Տարեգրական պատմութիւնը» Մ. Թեոփիլյանցը ակնարկում է «Պատմութիւն աւուրց իւրոյ հաւատարիմ բանիւք» խորագրով [75, էջ 240-241], Ս. Սոմայլյանը՝ «una Qronaca di guaturo avvene a'suoi tempi [188, էջ 159], Գ. Զարպանայլյանը՝ «Ժամանակակից պատմութիւն» փերնագրով, առաջինը լինելով, տեղեկութիւն է հաղորդում երկի բովանդակութիւն մասին, թե «Հինգ մասն բաժնած է հեղինակը իր պատմական գլխաւոր գործը» [67, էջ 442-444]: Ն. Ակինյանը, հենվելով Աբրահամ Չելեբիի ավետարանի հիշատակարանում (1666 թ.) Երեմիայի այն հաղորդման վրա, որ փափաքում է գրել «գ Պատմութիւնս նարգենիս ի Հայունս զոր ինչ գործեցան», ենթադրել է. «թէ «Տարեգրական պատմութիւն այդ ծրագրուած աշխատութիւնն է» [տե՛ս 7, էջ 93]:

²⁷ Հմմտ. հրատարակութիւն էլ 68 տող 85-86, էջ 81 տող 321, էջ 88 տող

392-393, էջ 89 տող 3-ը Համապատասխանաբար ձեռ. 1675 - ի էջ 232բ տող 11-12, էջ 242ա՝ տող 1-4, էջ 245բ՝ տող 1-4, էջ 255ա՝ տող 18-ի Հետ:

²⁵ Ընդհանուր առմամբ 1345 ձեռագիր օրինակում չկան Հրատարակության եւ 1675 ձեռագիր օրինակի հետեւյալ տողերը՝

Առաջին գլխից՝ 41-42, 91-92, 133-140, 221-222 (ձեռ. 1675-Համապատասխանաբար էջ 186բ. 8-12, էջ 188բ 13-16, 190բ 1-16, 194ա 1-12) տողերը. = Հմմտ. ձեռ. 1345, էջ 321բ, 322բ, 323ա, 324բ.

Երկրորդ գլխից՝ 47-52, 55-66, 89-94 (ձեռ. 1675-ի՝ էջ 199ա 3-14, 19-24, էջ 199բ 1-18, էջ 200բ 15-20) տողերը. = Հմմտ. ձեռ. 1345՝ էջ 326:

Երրորդ գլխից՝ 39-40, 60-62, 183-184 (ձեռ. 1675 էջ 205բ 16-19, էջ 200բ 13-16, էջ 211բ 17-20) տողերը. = Հմմտ. ձեռ. 1345, էջ 328բ 18-19 տողերի միջև, էջ 321ա 7 տողից հետո, էջ 331ա 3-4 տողերի միջև:

Չորրորդ գլխից՝ 24-29, 59-70, 97-112, 225-231 (ձեռ. 1675՝ էջ 214ա 17-24, էջ 214բ 1-2, էջ 215բ 22-24, էջ 218ա 1-2, էջ 222բ 11-22) տողերը. = Հմմտ. ձեռ. 1345 էջ 331բ, 322ա, 332բ, 334ա:

Հինգերորդ գլուխ՝ 19-20 (ձեռ. 1675 էջ 324ա 15) տողերը. = Հմմտ. ձեռ. 1345, էջ 335ա:

Վեցերորդ գլխից՝ 8, 12-14, 21-38 (ձեռ. 1675 էջ 229ա 1-2, էջ 229բ 7-12, էջ 230ա 1-24, էջ 231բ 1-12) տողերը. = Հմմտ. ձեռ. 1345, էջ 337ա:

Յոթերորդ գլխից՝ 44 տողը. = Հմմտ. 1345, էջ 346ա:

Ութերորդ գլխից՝ Կոմիտաս քահանայի հիշատակարանը:

Միայն մեկ դեպքում 1345 ձեռագիրը Հնարավորություն է տալիս հավելում կատարել Հրատարակության 96-րդ էջի 34-35 տողերի, ձեռ. 1675-ում էջ 253ա 5-6 տողերի միջև հետեւյալ՝ «Արքայն դիպի երբեմն որ Մաճար պաղզան, Այլ յառաջ Եալի Քեօշկի, Աստ Սէրվի պուռնի, Աստ փազար քեօյի կոչի» տողերը Հմմտ. ձեռ. 1675 էջ 346ա, տող 4-8:

Հրատարակության եւ 1345 ձեռագիր օրինակում կան նաեւ որոշ նյութերի հտառաջուկներ, տարբերակներ...

²⁹ Հմմտ. [55]-ի՝ Վ. Թորգոմյանի Հրատարակության 12, 18, 19, 21, 104 եւ [221]-ի՝ Անդրեասյանի Թուրքերեն Թարգմանության 3, 5, 8, 9, 10, 55 էջերը:

³⁰ Երեմիա Քյոմուրճյանը նման վերաբերմունքի է հանդիպում նաեւ իր «Հրակիզման պատմութիւն Կ. Պոլսոյ» երկը գրելիս. «Ձանձրացեալ եմ ի գրել զմեծն, որ մեօք պատահեցան ՌձԹ (1109-1660) Թուականին կսկծալի բերմունս վասնորոյ Համառօտ անցանեմ, զի ոմանք պախարակեցին զմեզ, ասելով՝ բան եւ գործ չունի Հա գրէ» [7, «Բազմավէպ» 1902, էջ 369]

³¹ Վ. Թորգոմյանը ենթադրել է, որ «Հատորին բովանդակութիւնը այսինքն նիւթը յայտնող այս գլուխը Երեմիա Չէլէպիի գրչէն ելած չերեւիր, այլ ուրիշ է մը» [55, էջ 129], նույն կարծիքն է Հայտնում առանձին գլուխներին

ենթախորագրերի համար եւս, սակայն Մատենադարանյան երկու ձեռագիր օրինակները [1, մատ. ձեռ. 1345 եւ 1675] ունեն նախարանը եւ գլուխների ենթախորագրերը, հետեւաբար Վ. Թորգոմյանի ենթադրութիւնը կարող է այլ կարծիքի:

³² Հին Կ. Պոլսի պատմական դարբաններն են՝ 1) Նաուլի գափի, 2) Սամաթիա գափի, 3) Ենի գափի, 4) Գոււմ գափի, 5) Դավութ գափի, 6) Չատլատի գափի, 7) Ախրու գափի, 8) Բաղչէ գափի, 9) Բալլըքլի բաղար գափի, 10) Զընտան գափի, 11) Օտան գափի, 12) Այազմա գափի, 13) Ունգափան, 14) Ծիպլալի գափի, 15) Այա գափի, 16) Ենի գափի, 17) Փեթրո գափի, 18) Ֆէնէր գափի, 19) Պալատ գափի, 20) Այվանսարայ, 21) Էզրի գափի, 22) Էտիրնն գափի, 23) Թոփ գափի, 24) Ենի գափի, 25) Սիլիվրի գափի, 26) Ետի գուլէ գափի:

³³ Երուսաղեմի նո. 464 ձեռագիր «Պատմութիւնը» (խորագիր՝ «Համառօտ եւ ստուգադոյն պատմութիւնք օսմանցոց թագաւորութեան Ալի Օսման կոչեցելոյ») նույնպես հեղինակային բնագրից կատարված ընդօրինակութիւնն է՝ Ստեփանոս քարտուղար Կոստանդնուպոլսեցու կողմից Կ. Պոլսում, 1781-1782 թ. «Շարագրեցեալ յԵրեմիայ դպրէ Կոստանդնուպոլսեցոյ Քէօմիւրճեան գարմէ ի թուականիս հայոց ՌձԽԸ (1699), իսկ այժմ վերստին օրինակեցեալ եղև ի բուն հեղինակէ շարագրողին Ստեփանոս քարտուղարէ Կոստանդնուպոլսոյ ի թուականիս հայոց ՌՄԼԱ (1231-1782) հոկտեմբեր 19-ի ի տիեզերահռչակ քաղաք Կոստանդնուպոլիս» [1, Երուս. ձեռ. 464]; Սա հենց Քյոմուրճյանի առանձին մեկ աշխատութեան ընդօրինակութիւնն է, որը Երեմիան ակնարկում է թիվ 910-ում:

³⁴ Միկրոժապավինը ունենք ձեռքի տակ շնորհիվ Մատենադարանի գիտաշխատող Փայլակ Այնթապյանի, որը մեր խնդրանքով բերեց Երուսաղեմից, հանձնված է Մատենադարանին:

³⁵ Թյուրիմացաբար այս երկի մի երկրորդ օրինակ է մատնացույց արվել Երուսաղեմի մատենադարանյան նո. 14 գրչագիրը՝ «Պատմութիւն Օսմանեան թագաւորաց յօրինուած Հաճի Խալիֆա Քեաթիպ Չէլէպիէն»: Սակայն, ինչպես բերված խորագիրն է հուշում եւ ձեռագրի հիշատակարանն է հաստատում, այն 17-րդ դարի թուրք պատմագիր Քեաթիպ Չէլէպիի «Թէօհֆթ իւլ ֆի էֆսար իւլ պուհար» (Ընծայ մեծամեծաց յորում են ծանուցմունք ծովուց) աշխատութիւնն է, որը 1765 թվականին Երուսաղեմի հայոց վանքի միաբան Հովհաննես վրդ. Կեսարացին վերարտադրել է հայատառ, «գի մերայնոցն դիւրին լիցի ընթերցումն» [Տե՛ս 1, Երուս. Ա. Սուրմէեան, հատ. Ա, էջ 101-103; հմտ. 1, Ն. Պող., հատ 1, էջ 92-95: Նաեւ 244, էջ 544]:

³⁶ Երեմիա Քյոմուրճյանի եւ թուրք պատմիչ Մյուննեջիմ Բաշիի հնարավոր համագործակցութեան մասին նկատել է Ա. Տեր-Ղեւոնդյանը իր «Երեմիա Չելեպիին որպես Մուննեջիմ Բաշիի աղբյուր» հոդվածում [143. «Տեղեկագիր».

էջ 143-150]:

³⁷ Երեմիա Քէօմիւրճեան, Պատմութիւն Համառօտ Դձ տարւոյ ..., այս եւ Հաջորդ օրինակներում նշվում է ըստ այս Հրատարակութեան բնագրի տողա-համարները:

³⁸ Ե. Քյոմուրճյանի օգագործած թուրքերէն բառերը եւ տերմինները բացատրված են մեր Հրատարակած սույն Պատմութեան կից «Օտար բառերի եւ տերմինների բառարանում» [60, էջ 342-373] եւ մասամբ այս ուսումնասիրութեան «Օտար բառերի բառարան»-ում:

³⁹ Ըստ թուրքական աղբյուրներում տեղ գտած անվավեր գրույցի՝ թուրքերը սերում են Նոյի որդի Հաբեթից՝ Յաֆիս բին Նուհի (Jafes bin Nuh) որդիներից եւ կոչվում են «թորքիման, թորքման: Օսմանյան տան ազգաբանութունը տե՛ս Մեհմեդ Նեշրի [225, էջ 17, 55]; Աշքբ փաշա [197, էջ 2-3, 7]; Մյուլեհջլիմ Բաշի [228, էջ 53]; Նիշանջի զագե [231, էջ 376]; Լյութֆի փաշա [223, էջ 17]; Շարաֆ Նամե [172, էջ 42]:

Երեմիա Քյոմուրճյանը ճիշտ նշելով, որ թուրքերը ցեղակից են ուզբեկներին եւ թուրքմեններին, սակայն, տուրք տալով գրույցին, յուրովի է ընկալել այս անվանումները՝ թուրքերին ծագած համարելով Հաբեթի տոհմից եւ նրանց կապելով վերջինիս որդի Թորգոմի Հետ յանվանում է Թորգոմյան [տ. 3, 5, 15-16]:

⁴⁰ Ե. Քյոմուրճյանը իր արձակ «Համառօտ պատմութիւն թագաւորաց օսմանցոց»-ում թուրքական աղբյուրներից չի շեղվում եւ Հանգամանորեն տալիս Սուլեյմանի եւ Էրզորուլի առաջնորդութեամբ թուրքերի Փոքր Ասիա գալը [1, Մատ. ձեռ. 1876, 1բ]:

⁴¹ Հմմտ. Լյութֆիի [223] 23-26 էջերը «Պատմութիւն Համառօտ Դձ տարւոյ ...» 55-90 տողերի Հետ: Պատմութեանում բաց է թողնված նաեւ Բուրսայի գրավման Լյութֆիի հաղորդած, հավանաբար, ոչ ճիշտ 1316 թ. տ.85, սակայն Հետագայում ճիշտը չի լրացվել: Տե՛ս եւ Սոլաքզագե [239, էջ 14]; Ուզունչարչլը [243, Հտ. 1, էջ 137]:

⁴² Վիպական այս պատմութեանները Հայ գրականագիտութեան մեջ դիտվել են Երեմիա Քյոմուրճյանի երկի գեղարվեստական արժեքներից, որ այդ Հատվածներում «Հեղինակը աշխատում է նմանվել մեր պատմիչների ոճին եւ գրելաձեւին» եւ Լենկ Թամուրի ու սուլթան Բայազետի երկխոսութեանը Հիշեցնում է Շապուհի եւ Վասակի երկխոսութեանը: Նկատելով իհարկե ժողովուրդների վիպական պատմութեաններում հարագատ եզրերի հնարավորութեանները, կոնկրետ գեպքում նյութը քաղված է թուրքական աղբյուրներից: Այստեղ միայն նկատի ունենալով Բայազետի արքայական մեծութեանից դափեսին արժանի դառնալու փաստը՝ Երեմիա Քյոմուրճյանը ավելացնում է փառքի եւ կործանման հակադրութեան, մարդու ճակատագրի մասին իր մտորումները [տ. 361-365]: Նման գնահատական է տրված Մախաչի ճակատամարտում

(1526 թ.) սպանված Հունգարիայի թագավոր Լայոշ 2-րդի (1516-1526 թթ.) դիակի մեծարման եւ թագավորական պատիվներով թագուհուն Հանձնելու գեղարվեստական նկարագրութանը: Այս հատվածը եւս որոշ Հավելումներով քաղված է Թուրքական աղբյուրներից:

⁴³ Լյուծֆֆիից չի ծագում Անկարայի ճակատամարտի նկարագրություններում տեղ գտած հետեւյալ անճշտությունը: Ըստ Եր. Քյոմուրճյանի՝ Անկարայի ճակատամարտում Բայազետի բանակում իր զորախմբով կռվել է Էֆլազ օղլին (Վալախիայի իշխանը): Լյուծֆֆին ընդհանրապես լռում է այս մասին: Պատմագրության մեջ Հայտնի փաստ է, որ Բայազեդին օգնական է եղել Անկարայի ճակատամարտում Սերբիայի թագավոր Ստեփան Լազարեւիչը (1381-1427) 20 հազարանոց ուժով [231, էջ 419; 236, հտ. 1, էջ 169]: Այս անճշտությունը առաջացել է Հավանաբար այն պատճառով, որ աղբյուրը լռում է այդ մասին, երկրորդ՝ մուծված կարող է լինել հիշողությունը՝ այդ մասին ընթերցած կամ լսած լինելով:

